1	Ալեքսանդրի անվան Սպորտիկ տեխնոլոգիական համալսարան (Հունաստան)	2 ուսանող	2 ուսանող	-	2 ուսանող
2	Ռեզեկնեի համալսարան (Լատվիա)	1 ուսանող	-	-	1 հետազոտող 1 ուսանող
3	Ռուսենի համալսարան (Բուլղարիա)		1 հետազոտող	-	1 դասախոս
4	Վիանա դո Կաստելոյի սրլիտեխնիկական ինստիտուտ (“Պորտուգալիա)	-	1 ուսանող 1 դասախոս		-
5	Տուշցիայի համալսարան (Իտալիա)	1 դասախոս	-	-	
6	Ֆոռմի Սասիենսա համալսարան		-	-	1 հետազոտող
7	Սուանսի մետրոպոլիտենի համալսարան		-	-	1 ուսանող
8	Պարմայի համալսարան (Իտալիա)	-	-	-	-
9	Ի. Գոգերազվիլու անվան թեոլոգիական պետական համալսարան	-	-	-	-
ՀՈՒՇԱԳԻՐ ՄԻՋՐՈՒՀԱԿԱՆ ԿՈՆՍՈՐՑԻՈՒՄ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ					
1	Խ. Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարան	✓	✓	✓	✓
2	Գյումրիի Ա. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ	✓	✓	✓	✓
3	Վանանդրի Հովի. Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ	✓	✓	✓	✓

ԳՊԴ 2011-2012 ուսումնական տարվա գործունեության հաշվետվություն

4	Ֆիզիկական կուլտուրայի Հայկական պետական ինստիտուտ		✓	✓	✓	✓
5	Գորիսի պետական համալսարան		✓	✓	✓	✓
6	Արցախի պետական համալսարան		-	✓	✓	✓
7	ՀՀ ԿԳ նախարարության կրթության ազգային ինստիտուտ		✓	✓	✓	✓
ՀԱՄԱՋԱՅՆԱԳԻՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԼԵՁՎԱՔԱՆԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱՆԱՑՄԱՆ ԵՎ ԼԵՁՎԱՔԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՄԱՆ ԲԱՐՉՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆՑԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԿՈՆՍՈՐՑԻՈՒՄԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ						
1	Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարան	Լեզվաբանական կրթության իրականացմանը և լեզվաքաղաքականության մշակմանը միտված համագործակցություն	-	✓	✓	✓
2	Գյումրիի Ա. Նալբանդյանի անվան պետական ծանկավարժական ինստիտուտ		-	✓	✓	✓
3	Վանանդորի Դովի. Թուվանյանի անվան պետական ծանկավարժական ինստիտուտ		-	✓	✓	✓
ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԵՎ ՍԱՄԱԿԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ						
1	Սևանի պետական քոլեջ	Շարունակական ծանազիտական կրթության ապահովում	✓	✓	✓	✓
2	Սարտունու պետական քոլեջ		✓	✓	✓	✓
3	Վարդենիսի պետական քոլեջ		-	✓	✓	✓
4	Երևանի պետական գյուղատնտեսական քոլեջ		✓	✓	✓	✓
5	Գավառի ակադեմիկոս Ա. Թամամչևի անվան գյուղատնտեսական քոլեջ		-	-	✓	✓
6	Չարենցավանի պետական քոլեջ		-	-	✓	✓
7	Կապանի պետական բժշկական քոլեջ		-	-	✓	✓
8	Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջ		-	-	✓	✓
9	Երևանի Ա. Բակունցի անվան պետական ծանկավարժական քոլեջ		-	-	✓	✓
10	Երևանի գրոսաշրջության, սպասարկման և սննդի արդյունաբերության հայ- հունական պետական քոլեջ					✓
11	Դիլիջանի պետական քոլեջ					✓
12	Լոռու տարածաշրջանային պետական քոլեջ					✓
13	Արարատի տարածաշրջանային պետական քոլեջ					✓

ԳՊԴ 2011-2012 ուսումնական տարվա գործունեության հաշվետվություն

14	Կապանի պետական քոլեջ					V
15	Երևանի պետական հումանիտար-տեխնիկական քոլեջ					V
16	Վայոց ձորի տարածաշրջանային պետական քոլեջ					V
ՀԱՆԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՈՉ ՈՒՍՈՒՄԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ						
1	ՄԱԿ-ի փախտականների հարցերով գերագույն հանձնարկատարի գրասենյակ	Կողմերի ծիջև ինստիտուցիոնալ համագործակցություն		V		V
2	Ջինիշյան հիշատակի հիմնադրամ	Համագործակցություն "Քաղաքացիական երկխոսություն և Գործնական Քայլեր" 2010-2012 թթ. ծրագրի շրջանակներում՝ ուսանողների քաղաքացիական ակտիվության և իրազեկության բարձրացման նպատակով		V	V	V
3	Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն	Բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրերի որակի համապատասխանության ապահովում՝ պետական կրթական և եվրոպական չափորոշիչներին, կրթության որակի բարելավում և ծիջազգային ասպարեզում ՀՀ մասնագիտական կրթության որակի ճանաչում: "Մասնագիտության ինքնավերլուծության ձևաչափ" փաստաթղթի դրույթների կիրառելիության փորձարկում		-	V	V
4	Փոխըմբռնման հուշագիր. Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության երկրորդ բանակային գործառնադրման հետ	ուսանողների ռազմա-հայրենասիրական դաստիարակության ապահովման, զին-ծառայողների համար կրթական, տեղեկատվական, ճանաչողական, ծախսային ծրագրերի իրականացման նպատակով		-		V
5	«Կրթության որակ և համապատասխանություն» երկրորդ վարկային ծրագրի շրջանակներում «Որակի ապահովման ներբուհական համակարգի ներդրում կամ դրանց հետագա բարելավում» դրամաշնորհային ծրագիր	համալսարանում ներդնելու և կատարելագործելու որակի գնահատման և ապահովման ներբուհական համակարգ և ճոնիթորինգային ստորաբաժանում				V
6	«Վորլդ-Վիժն ինթերնեյշնլ» ծիջազգային բարեգործական կազմակերպության հաստատման մասնաճյուղ	Գեղարքունիքի մարզի Վարդենիսի և Գավառի տարածաշրջաններում իրականացվող ծրագրեր				V

ԳՊԴ 2011-2012 ուսումնական տարվա գործունեության հաշվետվություն

ՈՒՍՈՒՆՈՒՆԵՐԻ ՍԱՆԿԱՎԱՐՔԱԿԱՆ, ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ, ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԴՐԱԿՏԻԿԱՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ						
1	Գեղարքունիքի մարզի Կարմիրգյուղի թիվ 1 միջնակարգ դպրոց	Ուսանողների ուսումնական, արտադրական և մախաավարտական արակտիկաների անցկացում, մասնագիտական առարկաների գծով ակնարկային դասախոսությունների և սեմինար - քննարկումների կազմակերպում, համատեղ հետազոտական աշխատանքների և այլ ծրագրերի իրականացում				✓
2	Գեղարքունիքի մարզի Կարմիրգյուղի թիվ 2 միջնակարգ դպրոց					✓
3	Գեղարքունիքի մարզի Եմսբարակ քաղաքի ավագ դպրոց					✓
4	Գեղարքունիքի մարզի Վարդենիս քաղաքի ավագ դպրոց					✓
5	Գեղարքունիքի մարզի Սևանի իս. Աբովյանի անվան ավագ դպրոց					✓
6	Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքի ավագ դպրոց					✓
7	Գեղարքունիքի մարզի Նորատուս գյուղի թիվ 3 միջնակարգ դպրոց					✓
8	Գեղարքունիքի մարզի Նորատուս գյուղի Ա. Սողոմոնյանի անվան թիվ 2 միջնակարգ դպրոց					✓
9	Գեղարքունիքի մարզի Նորատուս գյուղի թիվ 1 միջնակարգ դպրոց					✓
10	«Դ-Տելեկոմ» ՓԲԸ					✓
11	«Արմենթել» ՓԲԸ					✓
12	«Հայթիզմեսբանկ» ՓԲԸ					✓
13	«Սևան ազգային պարկ» ՊՈԱԿ			✓	✓	✓
14	Գավառի երկրագիտական թանգարան			✓	✓	✓
15	Գավառի ուսուցողական կենտրոն			✓	✓	✓
16	«Օրամե Արմենիա» ՓԲԸ					
17	ՀՀ «ԱՆ ՊԻՅՏ Գեղարքունիքի մարզային փորձագիտական կենտրոն»					✓
18	ՀՀ ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի Գեղարքունիքի մարզային գործակալություն					✓
19	«ՇԱՀ » ՍՊԸ					✓

ԳՊԴ 2011-2012 ուսումնական տարվա գործունեության հաշվետվություն

20	«Գեղամա ֆարմ» ՍՊԸ					✓
21	Գեղարքունիքի մարզ- այե տարածքի Գյուղատնտեսության և Բնապահպանության բաժիններ					✓
22	«ՄՈՆՏԵՏՈՒՐ» ՍՊԸ					✓
23	«Ծովածոց» հանգստյան գոտի					✓
24	«Խալդի» հյուրանոց					✓
25	«ԷՂ ԵՎ ԿԱՐ» ՍՊԸ					✓
26	«Երեք առյուծներ» ՍՊԸ					✓
27	«Գեղամա 96» ՍՊԸ					✓
28	«Զյավառի Դոյս» ՍՊԸ					✓
29	«Զյավառ» հեռուստաընկերություն					✓
30	Հայաստանի անշարժ գույքի կարաստրի այե տական կոմիտեի Փավառի տարածքային ստորաբաժանում					✓
31	Հայաստանի անշարժ գույքի կարաստրի այե տական կոմիտեի Վարդենիսի տարած- քային ստորաբաժանում					✓
32	«Եյ ԸՆԴ Դի Թոյդինգ» ՍՊԸ					✓
33	«Արմուս» ՍՊԸ					✓
34	Հայաստանի անշարժ գույքի կարաստրի այե տական կոմիտեի Ճամբարակի տարած- քային ստորաբաժանում					✓
35	Գեղարքունիքի գյուղատնտեսության ա- ջակցության մարզային կենտրոն					✓
36	ՀՀ ԳԱԱ Բունիայանի անվան կենսաքիմիայի ինստիտուտ					✓
37	ՀՀ ԳԱԱ Օրգանական և դեղագործական քի- միայի գիտատեխնոլո- գիական կենտրոն					✓
38	«Ռադիո» ՓԲԸ					✓
39	«Հայպետհիդրոմետ» ՊՈԱԿ					✓
40	«Կոմպաս» ՍՊԸ					✓
41	«Զակինտուրդանս» հայ-ռուսական ՍՊԸ					✓

ԳՊԴ 2011-2012 ուսումնական տարվա գործունեության հաշվետվություն

42	«Տոտո» տուրիստական ընկերություն					✓
43	Հայաստանի անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե					✓
44	«Ձի էն Աի-Ալֆա»-փակ բաժնետիրական ընկերություն		-	-	✓	✓

2011-2012 ուսումնական տարում Գավառի պետական համալսարանը «ERASMUS MUNDUS Action 2. Partnership for Georgia, Armenia and Azerbaijan» ծրագրի շրջանակներում շարունակել է համագործակցությունը ծրագրի մասնակից եվրոպական բուհերի հետ՝ ապահովելով բակալավրիատի և մագիստրատուրայի կրթական աստիճաններում սովորող լավագույն ուսանողների 10-ից 20-ամսյա ուսումնառությունը ներքոհիշյալ եվրոպական բուհերում.

Խ/Ի	Մասնակցի անունը, ազգանունը	Ճանաչիտությունը	աժիս	կրթական աստիճանը	Ընդունող համագործակից բուհը
1	Սարիամ Հովեյան	Ֆինանսներ	10	բակալավր	Սալոնիկի Ալեքսանդրի անվան համալսարան, Հունաստան
2	Բաբկեն Ղարաբաղյան	Ֆինանսներ	10	բակալավր	Սվանսեա մետրոպոլ համալսարան, Անգլիա
3	Սարիամ Սուսոյան	իրավագիտություն	10	բակալավր	Ռեգեկների համալսարան, Լատվիա
4	Անի Սազմանյան	Ֆինանսներ	20	մագիստրատուրա	Սալոնիկի Ալեքսանդրի անվան համալսարան, Հունաստան
5	Ռուզաննա Սարգսյան	օտար լեզու	10	հետազոտող	Հոմի Սապիենսա համալսարան, Իտալիա
6	Սաթենիկ Սարգսյան	օտար լեզու	10	հետազոտող	Ռեգեկների համալսարան, Լատվիա
7	Արսեն Ապրոյան	իրավագիտություն	1	դասախոս	Ռուսեի համալսարան, Բուլղարիա

2011-2012 ուսումնական տարում Գավառի պետական համալսարանը շարունակել է համագործակցությունը Վրաստանի Թելավիի, Թբիլիսիի և Բաթումիի պետական համալսարանների հետ:

Գավառի պետական համալսարանի դասախոսներն ու աշխատակիցները մասնակցել են միջբուհական շարժունության տարբեր ծրագրերի, գիտական զեկուցումներ ներկայացրել համագործակից բուհերի տարեկան գիտական ժողովներում:

ԳՊՀ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԾՐԱԳԻՐԸ

2012 թվականին միջազգային ծրագրերի 12 հայտեր են ներկայացվել, որոնցից 6-ով եվրոպական բարձրագույն կրթության բնագավառում իրականացվող համագործակցության և շարժունության ծրագրերի ԳՊՀ անդամակցության հուշագրեր են կնքվել:



ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆ ԷՐԱՍՄՈՒՄ ՄՈՒՆԴՈՒՍ ԾՐԱԳԻՐԸ

✓ **Էրասմուս Մունդուսը** բարձրագույն կրթության բնագավառում իրականացվող համագործակցության և շարժունության ընդլայնմանն ուղղված ծրագիր է, որի նպատակն է բարելավել եվրոպական բարձրագույն կրթության որակը և համագործակցության միջոցով խթանել երկխոսություն, ապահովել փոխըմբռնում հասարակությունների և մշակույթների միջև:

Էրասմուս Մունդուս ծրագիրը աջակցում է՝

- **Բարձրագույն ուսումնական հաստատություններին՝** համատեղ ծրագրեր իրականացնել կամ համագործակցություն հաստատել եվրոպայի և թիրախային երրորդ երկրների հաստատությունների հետ:

- **Ուսանողներին, հետազոտողներին կամ բուհերի դասախոսներին,** ովքեր ցանկանում են համատեղ ծրագրերի կամ համագործակցությունների շրջանակներում անցնել ուսուցում, իրականացնել հետազոտություններ կամ դասավանդման իրենց հմտությունները զարգացնել մեկ այլ բուհում:

- **Բարձրագույն կրթության բնագավառում գործունեություն իրականացնող ցանկացած կազմակերպության,** որը պատրաստ է ծրագրեր մշակել՝ ուղղված միջազգային ասպարեզում եվրոպական բարձրագույն կրթության գրավչության, համբավի և մատչելիության բարելավմանը:



ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆ ՏԵՄՊՈՒՄ ԾՐԱԳԻՐԸ

- **Տեմպուսն** աջակցում է բարձրագույն կրթության բնագավառում կրթական, ուսումնական ծրագրերի վերանայմանն ու զարգացմանը, կրթօջախների արդիականացմանը և համալսարանական կառավարման համակարգի կատարելագործմանը:

- Ծրագիրն ունի երեք հիմնական բաղադրիչ՝
 1. Կրթական ծրագրային բարեփոխումներ,
 2. Բուհերի կառավարման համակարգի բարեփոխումներ,
 3. Բարձրագույն կրթություն և հասարակություն կապի ամրապնդմանն ուղղված գործողություններ:

ԳՊՀ 2012Թ. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐ

- Էրասմուս Մունդուս – EuroEast
- Էրասմուս Մունդուս – Tempo

ԳՊՀ Տեմպուս ծրագրերը.

1. Բարձրագույն կրթության փոփոխության նախաձեռնումն ու կառավարումը,
2. Բարձրագույն կրթական ցանց՝ ուղղված Հայաստանում մարդկային կապիտալի գնահատմանն ու շրջանավարտների աշխատունակության բարձրացմանը,
3. Կայուն և ինքնավար բարձրագույն կրթական համակարգերի խթանումը Արևելյան հարևանության տարածքում,
4. Հայկական համակարգման գործակալություն՝ «համալսարան-գործատու» կապի ամրապնդման նպատակով:

ԷՐԱՍՄՈՒՍ ՄՈՒՆԴՈՒՍ 1 ERASMUS MUNDUS EUROEAST

- Ծրագրի համակարգող՝ Տորինոյի պոլիտեխնիկական համալսարան, Իտալիա,
 - Ծրագրի տևողությունը՝ 48 ամիս,
 - Ծրագրի ընդհանուր բյուջեն՝ 3.958.000 եվրո,
 - ԳՊՀ-ին հատկացված է՝

Բակլավրի կրթական ծրագրով՝ 4 տեղ	
Մագիստրոսի կրթական ծրագրով՝ 4 տեղ	
Գիտությունների թեկնածուի համար՝ 3 տեղ	
Դոկտորական՝ 3 տեղ	
Դասախոսների համար՝ 3 տեղ	

ԷՐԱՍՄՈՒՄ ՍՈՒՆԴՈՒՄ 2 ERASMUS MUNDUS TEMPO

- Ծրագրի համակարգող՝ Լիսաբոնի տեխնիկական համալսարան, Պորտուգալիա,
- Ծրագրի տևողությունը՝ 48 ամիս,
- Ծրագրի ընդհանուր բյուջեն՝ 3.508.975 եվրո,
- ԳՊԴ-ին հատկացված է՝

Բակալավրի կրթական ծրագրով՝ 4 տեղ
Մագիստրոսի կրթական ծրագրով՝ 3 տեղ
Գիտությունների թեկնածուի համար՝ 1 տեղ
Ղեկտորական՝ 1 տեղ
Դասախոսների համար՝ 2 տեղ

ԳՎՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՏԵՄՊՈՒՄ ԾՐԱԳԻՐ 1 – LaManche

Ծրագրի անվանումը	Բարձրագույն կրթության փոփոխության նախաձեռնումն ու կառավարումը
Ծրագրի համակարգող	Միջազգային համալսարանական քոլեջ, Բուլղարիա,
Ծրագրի տևողությունը	24 ամիս,
Ծրագրի բյուջեն	837.652,06 եվրո:

ԳՎՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՏԵՄՊՈՒՄ ԾՐԱԳԻՐ 2 – Almalauera

Ծրագրի անվանումը	Բարձրագույն կրթական ցանց՝ ուղղված Հայաստանում մարդկային կապիտալի գնահատմանն ու շրջանակարտների աշխատունակությանը
Ծրագրի համակարգող	Միջ-համալսարանական կոնսորցիում Ալմալաուերա, Իտալիա,
Ծրագրի տևողությունը	36 ամիս,
Ծրագրի բյուջեն	804,743.44 եվրո:

**ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ՏԵՄՊՈՒՄ ԾՐԱԳԻՐ 3 – ATHENA**

Ծրագրի անվանումը	Կայուն և ինքնավար բարձրագույն կրթական համակարգերի խթանումը Արևելյան հարևանության տարածքում
Ծրագրի համակարգող	Եվրոպական համալսարանական ասոցիացիա, Բելգիա,
Ծրագրի տևողությունը	36 ամիս,
Ծրագրի բյուջեն	1.072.140,98 եվրո:

**ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ՏԵՄՊՈՒՄ ԾՐԱԳԻՐ 4 – ARARAT**

Ծրագրի անվանումը	Հայկական համակարգման գործակալություն «համալսարան-գործատու»
Ծրագրի համակարգող	Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան,
Ծրագրի տևողությունը	36 ամիս,
Ծրագրի բյուջեն	813.483,78 եվրո:

2011-2012 ուսումնական տարում ԳՊԴ դասախոսները և ուսանողները գործուղվել են հետևյալ հայրենական և արտասահմանյան գիտահետազոտական և ուսումնական հաստատություններ ու մասնակցել գիտաժողովների.

• **Հակոբյան Հրանուշ Հրանտի**

1. 2011թ. սեպտեմբերի 4-5 - Լիբանան, Բեյրութ, «Հայաստանի Հանրապետություն- Սփյուռք գործակցություն. երեկ, այսօր, վաղը» խորագրով գիտաժողով Հայկազյան համալսարանում,
2. 2011թ. սեպտեմբերի 7-8 - ՀՀ, Երևան, «Հայերի հետքերը Բրազիլիայում» գիտական կոնֆերանս ՀՀ ԳԱԱ - ում,
3. 2011թ. սեպտեմբերի 18-19 - ՀՀ, Երևան, Սփյուռքի կազմակերպությունների ղեկավարների և ներկայացուցիչների համահայկական համաժողով,
4. 2011թ. սեպտեմբերի 23-24 - ԱՄՆ, Լոս Անջելես, ՀՀ անկախության 20-ամյակին նվիրված գիտաժողով,
5. 2011թ. հոկտեմբեր- ՀՀ, Երևան, «Սփյուռքի հիմնախնդիրները և սփյուռքահայ երիտասարդությունը» թեմայով գիտաժողով,
6. 2011թ. հոկտեմբեր - ՀՀ, Երևան, Հայ ֆերմերների I համաշխարհային «Հայագրոֆորում» համաժողով,
7. 2011թ. հոկտեմբերի 10 - ՀՀ, Երևան, Վիեննայի Մխիթարյան Միաբանության 200-ամյակին նվիրված միջազգային գիտաժողով, ՀՀ ԳԱԱ-ում,
8. 2011թ. հոկտեմբերի 29-30 - ՀՀ, Երևան, «Սրտաբանության եվրակովկասյան 3-րդ համաժողով»,
9. 2011թ. նոյեմբերի 15 - ՀՀ, Երևան, «Ճարտարապետաքաղաքաշինական մտավոր ժառանգության պահպանության խնդիրներն ու զարգացման հեռանկարները» խորագրով գիտաժողով,
10. 2011թ. դեկտեմբեր - ՀՀ, Երևան, «Հեռուստատեսությունը և հասարակությունը» խորագրով գիտաժողով,
11. 2011թ. դեկտեմբերի 15 - ՀՀ, Երևան, «Գարեգին Նժդեհի գործունեությունը Սփյուռքում» խորագրով գիտաժողով,
12. 2012թ. փետրվարի 21 - ՀՀ, Երևան, «Հեռուստատեսությունը և հասարակությունը» խորագրով գիտաժողով,
13. 2012թ. ապրիլի 13 - ՀՀ, Երևան, «Հասարակություն, ընտանիք, դեռահաս. արդիական խնդիրներ Հայաստանում և Սփյուռքում» խորագրով հոգեվերլուծաբանների միջազգային գիտագործնական համաժողով,
14. 2012թ. ապրիլի 20-23 - ՀՀ, Երևան, Հայ գրողների 6-րդ համահայկական համաժողով,
15. 2012թ. օգոստոսի 10-14 - ՀՀ, Երևան, Համահայկական կրթական 5-րդ խորհրդաժողով,

16. 2012թ. հոկտեմբերի 4-6 - ՀՀ, Երևան, Աղավնաձոր, «Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցին ընդառաջ» խորագրով լրագրողների համահայկական 6-րդ համաժողով,

17. 2012թ. հոկտեմբերի 20 - ՀՀ, Երևան, «Այլակրոն հայերի հիմնախնդիրները Սփյուռքում» խորագրով աշխատաժողով,

18. 2012թ. նոյեմբերի 16-18 - ՌԴ, Ռոստով, ԱՊՀ երկրների հայկական երիտասարդական կազմակերպությունների ղեկավարների և ներկայացուցիչների առաջին համաժողով,

19. 2012թ. նոյեմբերի 19-20 - ՀՀ, Երևան, «XXI դարի մարտահրավերները և Հայաստանի անվտանգության հիմնախնդիրները» խորագրով քաղաքագետների և միջազգայնագետների համահայկական համաժողով:

• **Հակոբյան Ռուզաննա Խաչիկի**

1. 2011թ. սեպտեմբերի 8-9 - ՀՀ, Երևան, «Բարձրագույն կրթության ֆինանսավորման հիմնախնդիրները» թեմայով միջազգային համաժողով, կազմակերպիչներ՝ ՀՀ կրթության և գիտության նախարարություն, Եվրահանձնաժողովի կրթության և մշակույթի գլխավոր վարչություն, Համաշխարհային բանկ, Մազնու Մալնես՝ Ակադեմիական հարցերի հանձնաժողով,

2. 2011թ. սեպտեմբերի 18-19 – ՀՀ, Երևան, Սփյուռքի կազմակերպությունների ղեկավարների և ներկայացուցիչների համահայկական հանձնաժողով,

3. 2011թ. սեպտեմբերի 30 - հոկտեմբերի 1, ՀՀ, Ծաղկաձոր, «Հայաստանի իրավական համակարգը. ծագումը, ներկա վիճակը, առկա խնդիրները, անցում դեպի կայուն զարգացում» թեմայով գիտաժողով՝ նվիրված ՀՀ անկախության 20-ամյակին, կազմակերպիչներ՝ ՀՀ Արդարադատության նախարարություն, Իրավաբանական դպրոց, ԵԱՀԿ Երևանյան գրասենյակ,

4. 2011թ. դեկտեմբերի 10 - ՀՀ, Երևան, «Հայաստանի Հանրապետության բուհական համակարգի արդի հիմնախնդիրները» թեմայով աշխատաժողով, կազմակերպիչ՝ ՀՀ կրթության և գիտության նախարարություն,

5. 2012թ. հունիսի 26 - ՀՀ, Երևան, «Կրթության կառավարման բարեփոխումներ» թեմայով աշխատաժողով,

6. 2012թ. օգոստոսի 10-14 - ՀՀ, Երևան, Համահայկական կրթական 5-րդ խորհրդաժողով:

• **Հակոբյան Ռուզաննա Խաչիկի, Միրիբյան Արթուր Աշոտի, Սիրականյան Կարեն Սաշայի, Բաղալյան Մարինե Միքայելի, Զարգարյան Հայրիկ Խաչատուրի**

2011թ. սեպտեմբերի 12-14 - ՀՀ, Դիլիջան, «Ինստիտուցիոնալ կառու-

ցում և մարդկային ռեսուրսների զարգացում էլեկտրոնային ուսուցման ոլորտում` Կովկասում 2011-2014թթ» թեմայով աշխատաժողով:

- **Հակոբյան Ռուզաննա Խաչիկի, Սիդելնիկովա Ռիտա Վյաչեսլավի**

2012թ. ապրիլի 16-18 - ՀՀ, Երևան - Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում` «Փոխակերպվող հասարակության զարգացման առանձնահատկությունները և միջմշակութային հաղորդակցության հիմնախնդիրները» թեմայով միջազգային գիտաժողով:

- **Կուտուզյան Նելլի Ալբերտի**

2012թ. հունիսի 11 - ՀՀ, Հայաստանի ամերիկյան համալսարան, «Հետազոտական հենքով կրթություն բակալավրի, մագիստրոսի և ասպիրանտուրայի մակարդակներում» թեմատիկ սեմինար, կազմակերպիչներ` ՀՀ-ում Տեմպուս ծրագրի ազգային գրասենյակ, Հայաստանի Բարձրագույն կրթության բարեփոխումների փորձագետներ (ԲԿԲՓ):

- **Կուտուզյան Նելլի Ալբերտի, Մելիքյան Արմինե Էդիկի**

2011թ. դեկտեմբերի 15-17 - ՀՀ, Աղվերան, «Որակի ներքին ապահովումը ՀՀ մասնագիտական կրթության ոլորտում. մարտահրավերներ ու հեռանկարներ» թեմայով վերապատրաստում-սեմինար, կազմակերպիչ` ՀՀ-ում Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն:

- **Կուտուզյան Նելլի Ալբերտի, Բադալյան Մարինե Միքայելի**

2012թ. հունիսի 2 - ՀՀ, Գյումրի, Գյումրու պետական մանկավարժական ինստիտուտ, «Հավատարմագրման կարգը, հավատարմագրման գործընթացը, ներքին որակի ապահովումը համալսարաններում» թեմայով խորհրդակցություն-սեմինար, կազմակերպիչ` ՀՀ-ում Տեմպուս ծրագրի ազգային գրասենյակ, Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն:

- **Ամիրխանյան Սամվել Գրիգորի**

2012թ. մայիսի 24-25 - ՀՀ, Երևան, «Բարձրագույն կրթության համաշխարհային միտումները» խորագրով գիտաժողով, կազմակերպիչներ` ՀՀ կրթության և գիտության նախարարություն, «Մայքրոսոֆթ» նորարարական կենտրոն:

- **Ամիրխանյան Սամվել Գրիգորի, Մուրադյան Պապին Օնիկի**

2011թ. հոկտեմբերի 5-7 - ՀՀ, Երևան, Հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման հիմնահարցերին նվիրված միջազգային խորհրդաժողով, կազմակերպիչներ՝ ՀՀ կրթության և գիտության նախարարություն, ԵԱՀԿ Երևանյան գրասենյակ:

- **Մուրադյան Պապին Օնիկի**

1. 2011թ սեպտեմբերի 8-9 - ՀՀ, Ադվերան, «Ուսանողների մասնակցությունը բարձրագույն կրթության կառավարմանը» միջազգային խորհրդաժողով,

2. 2011թ. հոկտեմբերի 5-7 – ՀՀ, Երևան, «Բուհերում հակակոռուպցիոն ռազմավարություններ» թեմայով սեմինար, կազմակերպիչներ՝ ՀՀ կրթության և գիտության նախարարություն և ԵԱՀԿ Երևանյան գրասենյակ,

3. 2011թ. հոկտեմբերի 21 - ՀՀ, Երևան, «Հմտություններ և ոչ միայն դիպլոմ» խորագրով աշխատաժողով,

4. 2011թ. հոկտեմբերի 28 – ՀՀ, Երևան, «Խաչմերուկ» բանավեճի ակումբը «Եվրասիա» համագործակցության հիմնադրամի և Շվեդիայի միջազգային զարգացման գործակալության աջակցությամբ հայկական բուհերում անցկացրած «Գրագողությունը հայաստանյան բուհերում, ինչպե՞ս քանդել թնջուկը» խորագրով հետազոտության արդյունքների ներկայացում-քննարկում,

5. 2011թ. նոյեմբերի 17-18 - ՀՀ, Երևան, «Փիլիսոփայության համաշխարհային օրը Հայաստանում» թեմայով երկօրյա սիմպոզիում,

6. 2012թ. փետրվարի 2 – ՀՀ, Երևան, Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնում ՀՀ բարձրագույն կրթության համակարգը ներկայացնող անգլալեզու կայքի աշխատանքների վերաբերյալ կազմակերպված աշխատաժողով:

- **Մուրադյան Պապին Օնիկի, Աթեյան Գեղամ Լևիկի**

2011թ. դեկտեմբերի 8-9 - ՀՀ, Ադվերան, Հայաստանի և Լեհաստանի Բոլոնիայի գործընթացի համանախագահության շրջանակներում սեմինար՝ «Ուսանողների մասնակցությունը բարձրագույն կրթության կառավարմանը Բոլոնիայի գործընթացի շրջանակում» թեմայով գիտաժողով, կազմակերպիչներ՝ ՀՀ Կրթության և գիտության նախարարություն, Ուսանողների եվրոպական միություն և Եվրախորհուրդ:

• **Աթեյան Գեղամ Լևիկի, Սկրտչյան Հայարփի Էդիկի, Տոնոյան Սարինե Հրաչի**

2012թ. ապրիլի 20 - ՀՀ, Գյումրի, հանրապետական ուսանողական գիտաժողով, կազմակերպիչ՝ Գյումրու Ս. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ:

• **Աթեյան Գեղամ Լևիկի, Սկրտչյան Հայարփի Էդիկի, Տոնոյան Սարինե Հրաչի, Խաչատրյան Շուշան Սպարտակի, Հովեյան Սարիամ Մամվելի**

2012թ. մայիսի 11 – ՀՀ, Վանաձոր, Ուսանողական գիտական ընկերության 3-րդ հանրապետական գիտաժողով, կազմակերպիչ՝ Վանաձորի Հովի. Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ:

• **Աթեյան Գեղամ Լևիկի, Ավագյան Սաթիկ Գարեգինի**

2012թ. սեպտեմբերի 6 – ՀՀ, Երևան, «ԱՊՀ - ԵՎՐՈՍՏՈՒԴԵՆՏ» խորհրդաժողովի բացման նիստ, կազմակերպիչ՝ Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարան:

• **Աթեյան Գեղամ Լևիկի, Քոչարյան Պայծառ Հովհաննեսի**

2012թ. հոկտեմբերի 27 – ՀՀ, Երևան, Եվրոպական ուսանողական միության ղեկավարության հետ աշխատաժողով:

• **Փանոսյան Հովիկ Հարությունի**

1. 2012թ. մարտի 1-ից - մայիսի 31-ը, ԱՄՆ, Լաս Վեգաս, Նեվադայի համալսարան UNLV,

2. Մասնակցություն միջազգային կոնֆերանսին գիտական զեկույցով “Modern State of Biotechnological Developments and Ways of Commercialization” Yerevan, Armenia, ՀՀ ԳԱԱ Կենսատեխնոլոգիայի ինստիտուտ,

3. Մասնակցություն FEBS Workshop - ուսումնական դպրոցին՝ նախատեսված ասպիրանտների, հայցվորների, երիտասարդ գիտնականների և դասախոսների համար:

• **Մարգարյան Անահիտ Սամվելի**

Մասնակցություն FEBS Workshop – ուսումնական դպրոցին՝ նախատեսված ասպիրանտների, հայցվորների, երիտասարդ գիտնականների և դասախոսների համար:

- **Հակորյան Արսեն Աշոտի**

1. 2011թ. հոկտեմբեր-դեկտեմբեր - Գերմանիա, Թյուբինգենի համալսարան, DAAD,
2. 2011թ. հուլիս-օգոստոս - Մեծ Բրիտանիա, Քեմբրիջի համալսարան,
3. 29.10.2011թ.-01.11.2011թ.- ՌԴ, Մոսկվա, «20 տարի անց. Տարածքի և ինքնության վերաիմաստավորում», Ազգությունների ուսումնասիրության ասոցիացիայի (ASN) տարեկան գիտական նստաշրջան:

- **Ղուլոյան Հակոբ Մելսիկի**

2011թ. փետրվար-մարտ – ՀՀ, Երևան, ՀՀ ֆինանսների նախարարության «Ուսուցման կենտրոն» ՊՈԱԿ, «Ծրագրերի կառավարում» թեմայով սեմինար դասընթաց:

- **Մարկոսյան Սևակ Մեսրոպի**

2011թ. մարտ-ապրիլ – ՀՀ, Երևան, Հայկական ժրագրեր ընկերությունում «ՀԾ»-ի ուսումնասիրություն և ուսուցանում:

- **Թադևոսյան Նարինե Հակոբի**

2011թ. հոկտեմբերի 13 – ՀՀ, Երևան, Ֆիլիպ Կոտլեր. «Մարքեթինգ 3-Նոր դարաշրջան տարածաշրջանում» թեմայով սեմինար:

- **Մալոյան Անի Գևորգի**


2012թ. փետրվարի 1 - ապրիլի 1 – ՀՀ, Երևան, «Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներ» թեմայով դասընթաց «Այ-Էյ-Բի կենտրոնում»:

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
2011-2012 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՈՒՍՈՒՄՆԱԳԻՏԱԿԱՆ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ
ԵՎ 2012-2013 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ
ՉԱՐԳԱՅՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ

2011-2012 ուսումնական տարին Գավառի պետական համալսարանում հայտարարված էր «Կրթության որակի ապահովման» տարի, ըստ որի ողջ ուսումնական տարվա ընթացքում իրականացվեցին աշխատանքներ տարբեր ուղղություններով՝ մշտապես նպատակակետ ունենալով կրթական ծրագրերի իրականացման որակը: Հաշվետու ուսումնական տարում ռեկտորատի ամենշաբաթյա նիստերի օրակարգային հարց դարձնելով բուհի ենթակառուցվածքային և ծրագրային ինքնավերլուծությունը՝ ՀՀ կառավարության որոշմամբ հաստատված չափորոշիչների և չափանիշների ուղղություններով, բոլոր ֆակուլտետներում նախնական տարբերակով իրականացվել են ինքնավերլուծություններ: Հաշվետու ուսումնական տարվա հայեցակարգում որակի մշակույթի տարածմանը առաջնային տեղ հատկացնելը՝ թելադրեց փոփոխություններ կրթության որակի հետ առնչվող բոլոր ստորաբաժանումների գործառույթներում, ինչպես նաև իրականացվող գործընթացների որակի վերահսկման ուղղությամբ: Հետևողական աշխատանքներ ծավալվեցին բուհում իրականացվող կրթական ծրագրերի գիտական ու մեթոդական, ընդհանուր ռեսուրսային ապահովվածության ուղղությամբ: Ակադեմիական որակի բարելավման նպատակով շարունակվեցին աշխատանքները՝ միտված ուսանողների ակադեմիական առաջադիմության բարձրացմանը, ստեղծագործական ունակությունների զարգացմանը, գեղագիտական ճաշակի ձևավորմանը: Համակարգված աշխատանքներ են իրականացվել նաև հանրության հետ կապերի ընդլայնման, միջազգային համագործակցության ակտիվացման, գիտական և ակադեմիական նոր կապերի հաստատման ուղղությամբ:

Հաշվետու ուստարում ընդհանուր կրթական բարեփոխումների ծրագրով հանրակրթական դպրոցների 12-ամյա ուսումնառությամբ պայմանավորված՝ 2011թ. առկա ուսուցման համակարգում համալսարանն ունեցավ ընդամենը 5 դիմորդ: Հեռակա ուսուցման համակարգում բակալավրի որակավորման աստիճանով 7 մասնագիտությունների գծով դիմած 167 դիմորդից համալսարան ընդունվեց 156-ը: 2011թ. մագիստրատուրայի ընդունելության առաջին փուլով դիմեցին 125 բակալավրի շրջանավարտ, նրանցից 112-ը ստացավ ընդունող հանձնաժողովի դրական կարծիքը, երկրորդ փուլում՝ 39-ը: Արդյունքում՝ 2011 թվականին համալսարանի մագիստրատուրայի համապատասխան բաժիններում ընդունվեց 151 ուսանող, որից 4-ը՝ անվճար, տարկետման իրավունքով, 9-ը՝ անվճար, առանց տարկետման իրավունքի, 2-ը՝ բանակից զորացրված, իսկ 136-ը՝ վճարովի, առանց տարկետման իրավունքի տեղերում:

Հաշվետու ուստարում ուսանողական համակազմի համալրման ցուցանիշները



Շարունակվել է Գավառի պետական համալսարանի հետ պայմանագրեր ունեցող ՀՀ միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների բարձր առաջադիմություն ցուցաբերած 2011թ. շրջանավարտների ընդունելության գարծընթացը՝ Սևանի, Մարտունու պետական քոլեջներից, Երևանի պետական գյուղատնտեսական, Վարդենիսի պետական, Գավառի ակադեմիկոս Ա. Թամանյանի անվան պետական գյուղատնտեսական, Չարենցավանի, Կապանի պետական բժշկական, Կոտայքի տարածաշրջանային պետական, Երևանի Ա. Բակունցի անվան պետական մանկավարժական քոլեջներից :

Հաշվի առնելով շարունակական կրթություն ստացող ուսանողների բուհական առաջադիմությունը, համալսարանի ներքին կարգապահական կանոնների պահպանումը, հանրության շրջանում զգալի պահանջարկը, ՀՀ կառավարության կողմից հաստատված «Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների բարձր առաջադիմություն ցուցաբերած շրջանավարտների համապատասխան բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսումը շարունակելու» կարգին համապատասխան՝ հաշվետու ուստարում պայմանագրեր են կնքվել նաև Դիլիջանի պետական, Լոռու տարածաշրջանային, Վայոց ձորի տարածաշրջանային, Արարատի տարածաշրջանային, Կապանի պետական, Երևանի զբոսաշրջության, սպասարկման և սննդի արդյունաբերության հայ-հունական, Երևանի պետական հումանիտար-տեխնիկական քոլեջների հետ: 2011-2012 ուստարում քոլեջներից ԳՊԴ-ում շարունակական կրթություն է ստանում 8


ԳՊԴ 2011-2012 ուսումնական տարվա գործունեության հաշվետվություն

ուսանող: Համալսարանում երկրորդ մասնագիտություն ստացողների թիվը կազմում է 39 ուսանող (նախորդ ուստարում՝ 20), ինչը առաջ է բերել ուսանողական համակազմի նոր կառուցվածք, հատկապես հեռակա ուսուցման համակարգում: Նրանց կրթական, ուսումնական պահանջունքները բավարարելու համար համալսարանում մշակվում են գործընթացներ՝ ներդնելու և արդյունավետ իրականացնելու ուսուցման և դասավանդման նոր ձևեր, ինչպես նաև նրանց առաջարկությունները հաշվի են առնվում կրթության կազմակերպման բոլոր փուլում՝ ուսումնական պլանների, առարկայական ծրագրերի պլանավորման ու մշակման, գիտելիքների ստուգման և գնահատման մեթոդների ընտրության գործընթացներում: Հանրապետության և արտերկրի պետական բուհերից հաշվետու տարում Գավառի պետական համալսարան է տեղափոխվել 20 ուսանող, ԳՊԴ-ից այլ բուհ՝ 1 ուսանող, իրենց ուսանողական իրավունքները վերականգնել են 183 ուսանող:

Հաշվետու ուստարում ուսանողների ակադեմիական առաջադիմության ցուցանիշներն են.


ա) առաջին կիսամյակում առկա բակալավրիատում և մագիստրատուրայում՝ 73,4% (նախորդ ուստարում՝ 61,6%), հեռակա ուսուցման համակարգում՝ 78,7% (նախորդ ուստարում՝ 77,2%),

2011-2012 ուսումնական տարվա առաջին կիսամյակի քննաշրջանի արդյունքների վերաբերյալ ֆակուլտետային տվյալները՝ տոկոսներով




ԳՊԴ 2011-2012 ուսումնական տարվա գործունեության հաշվետվություն

Ուսանողների առաջադիմության համեմատումը՝ հաշվետու և նախորդ ուստարիների առաջին կիսամյակներում




բ) Երկրորդ կիսամյակում՝ համապատասխանաբար 72,5% և 60,5% (նախորդ ուստարում՝ 66,9%, և 58,0%),

2011-2012 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի քննաշրջանի արդյունքների վերաբերյալ ֆակուլտետային տվյալները՝ տոկոսներով




ԳՊԴ 2011-2012 ուսումնական տարվա գործունեության հաշվետվություն

Ուսանողների առաջադիմության համեմատումը՝ հաշվետու և նախորդ ուստարիների երկրորդ կիսամյակներում



2011-2012 ուստարում համալսարանի առկա բակալավրիատի ավարտական կուրսերի 321 ուսանողներից բուհն ավարտեց 306-ը, այսինքն՝ 95%-ը, նախորդ տարվա 96,2%-ի դիմաց, 15 ուսանող ամփոփիչ ատեստավորման քննություններից անբավարար գնահատական ստանալու և չներկայանալու պատճառով հեռացվեց համալսարանից: Բակալավրիատի շրջանավարտներից 78-ը բուհն ավարտեց գերազանցությամբ, այսինքն՝ 25,4%-ը (2010-2011 ուստարում՝ 18%-ը), մագիստրատուրայի ավարտական կուրսերի 68 ուսանողներից 67-ը մագիստրոսական թեզերի հաջող պաշտպանության արդյունքում ստացան մագիստրոսի որակավորում: Համալսարանի բոլոր մասնագիտությունների գծով մագիստրատուրան ավարտեց ավարտական կուրսի ուսանողների 98,5%-ը (նախորդ ուստարում՝ 96%-ը), նրանցից 52-ը՝ գերազանցությամբ: Հեռակա ուսուցման համակարգում ավարտական կուրսերի 145 ուսանողներից 38-ը անբավարար գնահատական ստանալու և չներկայանալու պատճառով չավարտեց համալսարանը:

Գավառի պետական համալսարանի 2011-2012 ուսումնական տարվա ամփոփիչ ատեստավորման արդյունքների վերաբերյալ տվյալները տոկոսներով՝ ըստ ֆակուլտետների



Սահմանված կարգի համաձայն՝ 2012թ. շրջանավարտների ամփոփիչ ատեստավորումն անցկացվեց գործատուների, համապատասխան ոլորտի կազմակերպությունների մասնագետների, գիտական հիմնարկների, այլ բուհերի մասնագետների մասնակցությամբ: Ապահովվեց բակալավրի կրթական ծրագրով ամփոփիչ ատեստավորման և մագիստրոսական թեզերի պաշտպանության արդյունքների քննարկումը ֆակուլտետների և համալսարանի գիտական խորհուրդներում, միջոցներ ձեռնարկվեցին մասնագետների պատրաստման որակի վերաբերյալ հանձնաժողովների կողմից նկատված թերությունները վերացնելու ուղղությամբ: Ամփոփիչ ատեստավորման ողջ ընթացքը բոլոր մասնագիտությունների գծով ձայնագրվեց, և ձայնագրությունն օգտագործվեց գնահատականների բողոքարկման ժամանակ:

2012 թվականին Գավառի պետական համալսարանում բակալավրիատի 306 շրջանավարտների շնորհվեց ԶԶ կառավարության որոշմամբ հաստատված համակարգային նմուշի դիպլոմի հավելված՝ հայերեն և անգլերեն լեզուներով, իսկ մագիստրատուրայում՝ 67 ուսանողի:

Հաշվետու ուստարում ևս շարունակվեցին ուսանողներին ֆինանսական աջակցության ցուցաբերման աշխատանքները համալսարանի միջոցներից, պետական բյուջեից, գործընկեր կազմակերպություններից, առանձին բարերարներից և հիմնադրամներից՝ թե՛ առկա, թե՛ հեռակա ուսուցման համակարգերում:

Հաշվետու ուստարվա ակադեմիական առաջադիմության արդյունքներով՝ ըստ հաստատված կարգի ուսման վճարի լրիվ փոխհատուցմամբ անվճար և վճարովի տեղերի փոխատեղման մրցույթի արդյունքում, առկա բակալավրիատի 6 և մագիստրատուրայի 2 ուսանողներ փոխեցին իրենց կարգավիճակը:

Ուսանողների շրջանում կարգապահության բարձրացման, ուսանողների կողմից գիտելիքների գնահատման բազմագործոնային համակարգի յուրաքանչյուր գործոնի արժևորման, առավելապես կրթության որակի կարևորման, համալսարանում սահմանված ժամկետների, կարգապահական նորմերի ճշգրիտ պահպանման նպատակով, ռեկտորատի որոշմամբ փոփոխություն կատարվեց «Գավառի պետական համալսարանի առկա ուսուցման համակարգում բակալավրի և մագիստրոսի կրթական աստիճաններում կրեդիտային համակարգով ուսումնական գործընթացի կազմակերպման և ուսանողների գիտելիքների գնահատման կարգ»-ում: Հաճախումներին նախկինում տրված 20 միավորի փոխարեն ընդունվեց 10-ը, և այսուհետ այն ողջ ուսումնառության ընթացքում կկիրառվի 2012-2013 ուստարվա առաջին և հետագա տարիներին ընդունված ուսանողների համար:

ԶԶ կառավարության կողմից ընդունված որոշումներին, ԶԶ կրթության և գիտության նախարարության համապատասխան նորմատիվ փաստաթղթերին, ինչպես նաև կրթության որակի ապահովման ազգային և միջազգային պահանջներին համապատասխան՝ ԳՊԶ կանոնակարգերում և ընթացակարգերում կատարվեցին փոփոխություններ: ԳՊԶ գիտական խորհրդի կողմից ընդունվեցին նոր կանոնակարգեր, համապատասխանաբար վերանայվեցին, լրամշակվեցին գործող որոշ կանոնակարգեր և նրանցից բխող ընթացակարգերը:

1. Ուժը կորցրած ճանաչվեց «Գավառի պետական համալսարանի մագիստրատուրայի ընդունելության կանոնակարգը», և հաստատվեց «Գավառի պետական համալսարանում մագիստրատուրայի ընդունելության և ուսուցման կարգը»,

2. Ուժը կորցրած ճանաչվեց «Գավառի պետական համալսարանի ուսանողների փոխադրման կարգը», և հաստատվեց «Գավառի պետական համալսարանում սովորողների ակադեմիական շարժունության կարգը»,

3. Ուժը կորցրած ճանաչվեց «Գավառի պետական համալսարանի շրջանավարտների ավարտական որակավորման կարգը», և հաստատվեց «Գավառի պետական համալսարանի շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման անցկացման կարգը»,

4. Ուժը կորցրած ճանաչվեց «Բակալավրի կրթական աստիճանում ավարտական աշխատանքի (բակալավրի թեզերի), կուրսային աշխատանքների կատարման կանոնակարգը», և հաստատվեց «Մագիստրոսական թեզերի, ավարտական աշխատանքների կատարման կանոնակարգը»,

5. Ուժը կորցրած ճանաչվեց «Գավառի պետական համալսարանի ուսանողներին ակադեմիական արձակուրդի տրամադրման, ազատման, հեռացման, վերականգնման կարգը», և հաստատվեց «Գավառի պետական համալսարանում ուսանողների հեռացման (ազատման) և վերականգնման կարգը»,

Գիտական խորհրդի կողմից հաստատվեցին.

1. ԳՊԴ հանրության հետ կապերի և լրատվության բաժնի գործունեության կանոնակարգը (փոփոխություններով),

2. ԳՊԴ պրոֆեսորադասախոսական կազմի ձևավորման և խրախուսման կանոնակարգը (փոփոխություններով),

3. Գավառի պետական համալսարանում դասալսույնների անցկացման և քննարկման կազմակերպման կարգը (փոփոխություններով),

4. Գավառի պետական համալսարանում դասավանդման որակի և ուսումնական գործընթացի կազմակերպման աշխատանքների ադյունավետության վերաբերյալ ուսանողական հարցման կանոնակարգը,

5. Գավառի պետական համալսարանում կրթության որակի ապահովման քաղաքականության մշակման և իրականացման, կրթության որակի ներքին ապահովման ընթացակարգը (փոփոխություններով),

6. Գավառի պետական համալսարանի կողմից առաջավոր փորձի ուսումնասիրման, վերլուծության և համադրման (բենչմարկինգի) ընթացակարգը,

7. Շահակիցների պահանջների հաշվառմամբ ուսումնառության ակնկալվող արդյունքների վերանայման ընթացակարգը,

8. Գավառի պետական համալսարանի ուսանողների և շրջանավարտների կրթությունը շարունակելու և կարիերայի հնարավորությունների զարգացման ուղեցույցը:

Նոր ընդունված կամ լրամշակված կանոնակարգերը թղթային և էլեկտրոնային տարբերակներով տրամադրվել են համալսարանի բոլոր կառուցվածքային ստորաբաժանումներին, տեղադրվել բուհի պաշտոնական կայքում՝ արտաքին

ԳՊՀ 2011-2012 ուսումնական տարվա գործունեության հաշվետվություն

և ներքին շահառուներին հնարավորություն տալով ծանոթանալու ներհամալսարանական իրավական ակտերին: ԳՊՀ-ում իրականացվող կրթական ծրագրերի վերաբերյալ հանրությանը տեղեկատվություն տրամադրելու, բուհում իրականացվող ուսումնական, կրթական գործընթացների հրապարակայնությունը ապահովելու նպատակով մշակվեցին և տպագրվեցին ԳՊՀ դիմորդի, ԳՊՀ բակալավրիատի ուսանողի, ԳՊՀ մագիստրատուրայի ուսանողի ուղեցույցերը, որոնք համառոտ տեղեկատվություն են պարունակում ընդունելության պահանջների, կանոնների, համալսարանի ֆակուլտետների կողմից առաջարկվող կրթական ծրագրերի, ուսանողների իրավունքների և պարտականությունների, ԳՊՀ վարչական և ուսումնական կառույցների վերաբերյալ: Բոլոր մասնագիտությունների գծով մշակվեցին բակալավրի և մագիստրոսի կրթական աստիճանների ուսանողների ուսումնառության ուղեցույցերը և դասընթացների տեղեկագրքերը, կրթական ծրագրերի հայեցակարգերը, որոնք սահմանում են կրեդիտային համակարգի հիմնադրույթները, բովանդակում ուսումնական գործընթացի կազմակերպման և ուսանողների գնահատման կարգերը, առաջարկվող կրթական ծրագրերի կառուցվածքը, բովանդակությունը, ակնկալվող կրթական վերջնարդյունքները, գնահատման մեթոդները և չափանիշները, շրջանավարտների կարիերայի և աշխատանքի անցնելու հնարավորությունները:

Հաշվետու ժամանակահատվածում գործարկվեց ԳՊՀ շրջանավարտների միության և կարիերայի կենտրոնի պաշտոնական կայքէջը՝ www.career.gsu.am հասցեով, իսկ հետադարձ կապի ապահովման նպատակով բացված aro@gsu.am պաշտոնական էլեկտրոնային հասցեով ուղղարկված, շրջանավարտներին հետաքրքրող ցանկացած հարցի տրվեց սպառիչ պատասխան: Կայքում նաև հնարավորություն է տրված նորավարտ շրջանավարտներին՝ ծանոթանալու աշխատանքի տեղավորման գործակալությունների առաջարկած թափուր տեղերի վերաբերյալ գործատուների ներկայացրած տվյալներին:

2011-2012 ուսումնական տարում մշակվեց և ներդրվեց համալսարանում փաստաթղթաշրջանառության «Mulberry» էլեկտրոնային համակարգը, որն առավել արդյունավետ է դարձրել բուհում իրականացվող կազմակերպչական, տեղեկատվական շատ գործընթացներ:

«Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան՝ մշակվեց և ՀՀ ԿԳ նախարարություն ներկայացվեց փաստաթղթային փաթեթ՝ առկա և հեռակա ուսուցման համակարգերում բակալավրի որակավորման աստիճանով «Դեղագործական քիմիա», «Քարտեզագրություն և կադաստրային գործ», «Սերվիս», իսկ հեռակա ուսուցման համակարգում՝ «Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա», «Կենսաբանություն», «Բնապահպանություն և բնօգտագործում» մասնագիտությունների գծով գործունեության թույլտվություն ստանալու նպատակով: ՀՀ կրթության և գիտության նախարարի հրամանով մշակված մասնագիտությունների գծով գործունեության թույլտվություն տրվեց, և 2012թ. առկա ուսուցման ընդունելություն կազմակերպվեց 16, իսկ հեռակա ուսուցման համակարգում՝ 13 կրթական ծրագրերի գծով:

Համալսարանը շարունակում է անդամակցել Հայաստանի Հանրապետու-

թյունում լեզվաբանական կրթության իրականացման և լեզվաքաղաքականության մշակման բարձրագույն ուսումնական հաստատությունների ցանցային համագործակցության կոնսորցիումին՝ Երևանի Վ. Բրյուսովի անվան լեզվաբանական համալսարանի, Գյումրու Մ. Նալբանդյանի և Վանաձորի Հովհաննես Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտների հետ, ինչպես նաև մանկավարժական բարձրագույն կրթություն իրականացնող բուհերի միջբուհական կոնսորցիումին:

Ուսանողների ուսումնական, արտադրական, նախաավարտական պրակտիկաների անցկացման, գիտական, ուսումնական և կրթական տարաբնույթ միջոցառումների համատեղ իրականացման նպատակով համալսարանը շարունակեց համագործակցությունը Գեղարքունիքի մարզի, ինչպես նաև հանրապետության գիտական, կրթական, մշակութային, հասարակական կազմակերպությունների հետ: Կրթական և գործնական հարաբերությունների ձևավորման ու զարգացման նպատակով համագործակցության հուշագիր կնքվեց համալսարանի և «Օրանժ. Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության հետ՝ հինգ տարի ժամկետով: Հուշագրի նպատակներից է նաև ուսանողներին կրթաթոշակների հատկացումը, «Օրանժ. Արմենիա» ընկերության գրասենյակներ ուսանողների այցելությունների, պրակտիկաների կազմակերպումը, կրթական ծրագրերի պլանավորման գործընթացում ընկերության մասնագետների ներգրավումը՝ որպես խորհրդատուներ: Հուշագրի վավերացումից անմիջապես հետո ուսանողներին ցուցաբերվեց էական ֆինանսական աջակցություն: Պայմանագրեր կնքվեցին նաև ՀՀ ԳԱԱ Բուհիայանի անվան կենսաքիմիայի ինստիտուտի, ՀՀ ԳԱԱ Օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոնի, «Հայպետհիդրոմետ» ՊՈԱԿ-ի, Գեղարքունիքի մարզի Կարմիրգյուղի թիվ 1, Կարմիրգյուղի թիվ 2, Նորատուս գյուղի թիվ 1, Ա. Սողոմոնյանի անվան թիվ 2 և 3 միջնակարգ դպրոցների, Ճամբարակ քաղաքի ավագ, Վարդենիս քաղաքի ավագ, Սևանի Խ. Աբովյանի անվան ավագ, Գավառի ավագ դպրոցների, Դիլիջանի պետական, Լոռու տարածաշրջանային պետական, Վայոց ձորի տարածաշրջանային պետական, Արարատի տարածաշրջանային պետական, Կապանի պետական, Երևանի պետական հումանիտար-տեխնիկական, Երևանի զբոսաշրջության, սպասարկման և սննդի արդյունաբերության հայ-հունական պետական քոլեջների, Հայքիզնեսբանկի, «Քյավառ» հեռուստաընկերության, ՀՀ ԱՆ ՊՀՀՏ Գեղարքունիքի մարզային փորձագիտական կենտրոնի, Հայաստանի անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Գավառի, Վարդենիսի, Ճամբարակի տարածքային ստորաբաժանումների, ՀՀ ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի Գեղարքունիքի մարզային գործակալության, Գեղարքունիքի մարզպետարանի Գյուղատնտեսության և Բնապահպանության բաժինների, Գեղարքունիքի գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոնի, «Վորլդ Վիժն ինթերնեյշն» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի, «Գեղամա 96», «Քյավառի Հույս», «Էյ Ընդ Դի Թրեյդինգ», «ՇԱՀ», «Գեղամա ֆարմ», «ՍՈՆՏԵՏՈՒՐ», «Ծովածոց» հանգստյան գոտի, «Խալդի» հյուրանոց, «ԷԴ ԵՎ ԿԱՐ», «Կոմպաս», «Ձակինտուրտրանս»

հայ-ռուսական, «Արմուս», «Երեք առյուծներ» ՍՊԸ-ների, «Ռադիո» ՓԲԸ-ի, «Տոտո» տուրիստական ընկերության հետ:

Համալսարանի կրթական միջավայրը բարենպաստ է կրթական ծրագրերի իրականացման համար և այն մշտապես արդիականացվում ու համալրվում է: Տեղեկատվական դարաշրջանում կարևորելով կրթության հանդեպ ուշադրությունը՝ «ՎիվաՍել-ՄՏՍ»-ի գլխավոր տնօրենի անմիջական մասնակցությամբ համալսարանում բացվեց տեխնիկապես հագեցած կրթական լաբորատորիա՝ Wi-Fi անկյունով, նոր սերնդի համակարգիչներով, բազմագործառնությամբ լազերային տպիչով և այլ անհրաժեշտ սարքավորումներով:

«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը Տարածքային զարգացման ծրագրի տեղական քաղաքացիական հասարակության հզորացման միջոցառումների շրջանակում համալսարանին տրամադրեց կահույք, ֆինանսապես աջակցեց ամենամյա գիտաժողովի նյութերի տպագրության հարցում, իսկ Վարդենիսի և Գավառի տարածաշրջաններում բնապահպանական ծրագրի շրջանակներում կազմակերպությունը աջակցեց համալսարանում ուսուցողական կենտրոնի ստեղծմանը, թվով 60 երեխաների համար բնապահպանական թեմաներով դասընթացների կազմակերպմանը, աջակցեց՝ հիմնելու փորձադաշտ ջերմոցային տնտեսություն՝ համալսարանում բնապահպանական դասընթացների գործնական աշխատանքները արդյունավետ կազմակերպելու նպատակով: Համալսարանը տրամադրեց լսարան ուսուցողական կենտրոնի համար (համալսարանի դասախոսների միջոցով մշակվեցին թափոնների կառավարման և բնապահպանական դեգրադացիայի նվազեցմամբ գյուղատնտեսության տնտեսական արդյունավետության աճի թեմաներով դասընթացների ծրագրեր և հաջողությամբ իրականացվեցին), ինչպես նաև պարտավորվեց ապահովելու ուսուցողական կենտրոնի և ջերմոցի հետագա պահպանումը, կատարելագործումը և շահագործումը:

Հաշվետու ուստարում համալսարանում կազմակերպվեց ամենամյա 14-րդ գիտաժողովը՝ նվիրված Հայաստանի Հանրապետության անկախության 20-ամյակին: Գիտաժողովի ընթացքում զեկույցներով հանդես եկան և՛ համալսարանի պրոֆեսորադասախոսական անձնակազմի, և՛ համագործակից բուհերի ներկայացուցիչներ: Երկօրյա գիտաժողովի նյութերը՝ 104 գիտական աշխատանքներ (7-ը Վրաստանի Թելավիի համալսարանի դասախոսների գիտական հոդվածներն են) տպագրվեցին:

Դասախոսական կազմի մանկավարժական որակների կատարելագործման, առաջավոր փորձի փոխանակման և լավագույն փորձի տարածման նպատակով հաշվետու ուստարում պարբերաբար իրականացվել են սեմինար-խորհրդատվություններ՝ նոր կրթական տեխնոլոգիաների, ինտերակտիվ, փոխներգործուն մեթոդների, ուսուցման և ուսումնառության ժամանակակից մեթոդների, դասընթացների արդյունավետ պլանավորման և այլ ուղղություններով: Շարունակվել են ԳՊՀ դասախոսների հեղինակությամբ ուսումնական, մեթոդական աշխատանքների տպագրումը: Հաշվետու ժամանակաշրջանում ԳՊՀ գիտխորհրդի կողմից տպագրության երաշխավորվել են հետևյալ ուսումնամեթոդական ձեռ-

նարկները.

1. Սամվել Խաչատրյան՝ «Հայկական գրադաշտական իրավունքը»,
2. Սամվել Խաչատրյան՝ «Հաճախապատում ճառքը» որպես հայկական գրադաշտական (և քրիստոնեությունը) իրավունքի ճանաչման աղբյուր»,
3. Հենրիկ Մելիքյան՝ «Ինֆորմացիոն համակարգեր, ինֆորմացիոն տեխնոլոգիաներ»,
4. Հենրիկ Մելիքյան՝ «Ինֆորմատիկայի և հաշվողական տեխնիկայի մաթեմատիկական հիմունքներ»,
5. Մամիկոն Հակոբյան՝ «Միկրոէլեկտրոնիկայի հիմունքներ»,
6. Մամիկոն Հակոբյան, Լալա Սկրտչյան՝ «Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը ընդհանուր կրթական համակարգում»,
7. Մամիկոն Հակոբյան, Մաքսիմ Հակոբյան՝ «Էլեկտրատեխնիկայի հիմունքներ»,
8. Անահիտ Սարգսյան՝ «Շրջակա միջավայրը և մարդու ժառանգականությունը»:

Դասախոսները, ուսանողները մասնակցել են տարբեր վերապատրաստումների ծրագրերի, միջազգային և հանրապետական գիտաժողովների, սեմինարների, սակայն դասախոսական կազմի մասնագիտական զարգացման քաղաքականությունը վերանայման կարիք ունի:

ՀՀ կրթության և գիտության նախարարության տրամադրած դրամաշնորհային ծրագրի միջոցներով Բարձրագույն կրթության ռազմավարական կենտրոնի կողմից պատրաստված «Հայաստանի բարձրագույն կրթության բարեփոխումների առկա վիճակը և հեռանկարները Բոլոնիայի գործընթացի համատեքստում» վերլուծական զեկույցում, որտեղ ներկայացված են Բոլոնիայի գործընթացի հիմնական արդյունքները և բացթողումները ՀՀ պետական 16 բուհերում և նոր տասնամյակի ուղենիշները Եվրոպական բարձրագույն կրթության տարածքում, ԳՊԴ-ն ըստ ուսանող/դասախոս հարաբերակցության՝ երկրորդ տեղում է՝ 16, 21 ցուցանիշով, ՀՀ բուհերում այդ հարաբերակցությունը միջինում 13,64 է, իսկ Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության անդամ երկրների բուհերում այդ ցուցանիշը կազմում է 15,8: Որակի ներքին ապահովման համակարգը ուսումնասիրված բուհերի 56,3%-ում դեռևս ներդրված չէ, իսկ ԳՊԴ-ում ներդրված է: Թեև Գավառի պետական համալսարանում լուրջ քայլեր են արվել կրթության որակի ներքին ապահովման բնագավառում, բայց դեռևս շատ անելիքներ կան որակի ապահովման քաղաքականության և ընթացակարգերի ձևավորման ու կիրառման առումներով: Անհրաժեշտ են հետադարձ կապի ճկուն կառուցակարգեր, տեղեկատվության հավաքման, վերլուծման և կիրառման գործընթացների գնահատման մեխանիզմներ: Համակարգված չեն կրթական ծրագրերի որակի վերահսկման կառուցակարգերը:

Ընթացիկ ուստարում համալսարանը նպատակադրվել է ներդնելու կայուն և արդյունավետ կառուցակարգեր, տարբեր մեթոդներ ու գործիքներ, որոնց միջոցով հնարավոր կլինի բացահայտել ուսանողների, շրջանավարտների, դասախոսների, վարչական և ուսումնաօժանդակ կազմի պահանջները, բուհի կարիք-

ները տարբեր ուղղություններով՝ եվրոպական որակի ներքի ապահովման չափանիշներին համապատասխան:

Կրթության որակի ուսումնասիրման, վերահսկման և շարունակական բարձրացման, ինչպես նաև կրթական ծրագրերի իրականացման գործընթացում բուհի ուժեղ և թույլ կողմերի բացահայտման, եվրոպական բարձրագույն կրթության տարածքի որակի ապահովման չափանիշներին և ուղենիշներին համապատասխան որակի ապահովման բուհական համակարգի ստեղծման, ինքնավերլուծության անցկացման, բուհի կրթական ծրագրերի ենթակառուցվածքային և ծրագրային հավատարմագրմանը նախապատրաստվելու նպատակով, մշակվեց և հայտ ներկայացվեց Համաշխարհային բանկի «Կրթության որակ և համապատասխանություն» երկրորդ վարկային ծրագրի շրջանակներում ԿԳ նախարարության կողմից հայտարարված «Որակի ապահովման ներբուհական համակարգի ներդրում կամ դրանց հետագա բարելավում» դրամաշնորհային ծրագրին: Մրցույթի արդյունքում համալսարանի կողմից ներկայացված հայտը շահեց, որի կատարման ժամկետը 2 տարի է, բյուջեն՝ 17,768,307 ՀՀ դրամ: Դրամաշնորհի իրականացման աշխատանքները համակարգված անցկացնելու նպատակով այն պլանավորվեց ըստ ժամանակացույցի, համապատասխան ուղղությունների, կատարման մեթոդների: Դրամաշնորհը զգալի նյութական, բովանդակային և մեթոդական օժանդակություն է բուհին՝ ինչպես կահույքի, համակարգիչների և սարքավորումների, գրեմական պիտույքների, ուսումնամեթոդական գրականության, համակարգչային ծրագրերի և էլեկտրոնային ռեսուրսների ձեռքբերման, այնպես էլ տեղական և միջազգային խորհրդատվական ծառայությունների գնման, սեմինարների, խորհրդակցությունների, վերապատրաստումների կազմակերպման գործում: Դրամաշնորհի միջոցներով կկատարվեն նաև փորձի ձեռքբերման նպատակով հանրապետական և եվրոպական ուսումնական հաստատություններ որակի ապահովման մասնագետների գործուղումներ, ինչպես նաև նախատեսված են բուհի իրականացրած կրթական ծրագրերի որակի, ուսումնական այլ գործընթացների վերաբերյալ հանրության շրջանում տեղեկատվության տարածման, հրապարակայնության ապահովման նկատառումներով տպագրության, եթերաժամի կամ տպագիր մամուլում տարածքի գնման աշխատանքներ:

Դրամաշնորհային ծրագիրը կծառայի ԳՊՀ որակի ապահովման ներբուհական կառույցի ձևավորմանը և զարգացմանը, կրթության որակի ապահովման արդյունավետ կառուցակարգերի մշակմանն ու կիրառմանը:

Դրամաշնորհային ծրագրի նպատակներն են.

- ԳՊՀ որակի ապահովման ներբուհական կառույցի (ՈԱՆԿ-ի) ձևավորում, այն է՝ համալսարանի որակի ապահովման բաժնից բացի որակի ապահովման ֆակուլտետային ենթաբաժինների ստեղծում,
- ՈԱՆԿ-ի կողմից համալսարանի ենթակառուցվածքային և ծրագրային հավատարմագրման նպատակով ինքնավերլուծության անցկացում, ինքնավերլուծության արդյունքների հիման վրա բուհում որակի բարելավմանն ուղղված քաղաքականության մշակում,

• ՈԱՆԿ-ի գործունեության կառուցակարգերի կատարելագործում, ուղղորդող ընթացակարգերի ներդրում, նոր գործիքակազմի մշակում և կիրառում,

• Կրթության որակի վերահսկման, կրթական ծրագրերի մշտադիտարկման, որակի ներքին գնահատման և ակադեմիական էլեկտրոնային կառավարման, միասնական տեղեկատվական համակարգի ստեղծում,

• Կրթության որակի ապահովման նպատակով ՈԱՆԿ-ի և ուսանողների, դասախոսների, շրջանավարտների, գործատուների, ծնողական համայնքի միջև հետադարձ կապի ապահովում, ԳՊԴ-ում որակի մշակույթի ձևավորում:

Նշված նպատակների իրականացման արդյունքում բուհում եվրոպական որակի ապահովման համապատասխան չափանիշների ուղղությամբ ակնկալում ենք հետևյալը.

1. Որակի ապահովման քաղաքականության և գործընթացների ոլորտում`

- ԳՊԴ ՈԱՆԿ-ի ստեղծում, մասնագետներով համալրում, նրանց վերապատրաստում, ՈԱՆԿ-ի տեխնիկական վերազինում, կրթության որակի ապահովման ներբուհական կառուցակարգերի կատարելագործում, որակի ապահովման նոր գործիքների մշակում և ներդրում, որակի շարունակական բարձրացման ռազմավարության մշակում և իրագործում` մշտապես կարևորելով ուսանողների և բարձրագույն կրթության գործընթացի այլ մասնակիցների դերը, հետադարձ կապերի ակտիվացմանը միտված կառուցակարգերը:

- Ակնկալում ենք ՈԱՆԿ-ի կողմից իրականացվող գործառույթների արդյունքներով վերանայել և բարեփոխել ԳՊԴ-ում որակի ապահովման քաղաքականությանը վերաբերող փաստաթղթերը, կիրառել նոր գործիքներ ու աշխատանքներ, ՈԱՆԿ-ի կողմից հետևողականորեն մշտադիտարկման ենթարկել ուսումնական գործընթացը, գնահատել, լրամշակել և բարելավել ԳՊԴ կանոնակարգերը` պարտադիր կարգով ապահովելով որակի ապահովման ընթացակարգերի պարբերաբար վերանայում ու կատարելագործում:

2. Ծրագրերի ու շնորհումների վավերացման, վերահսկման և պարբերական վերանայման ոլորտներում`

- ԳՊԴ-ում կրթական ծրագրերի մոնիթորինգի, ներքին գնահատման, շարունակական բարելավման համապատասխան փաստաթղթային, մեթոդական, դիդակտիկ հիմքերի բարելավում, առարկայական ծրագրերի և թեմատիկ պլանների, էլքային կրթական արդյունքների վերանայում, դրանց հնարավորինս լիարժեք ամրագրում, մասնագիտությունների կրթական ծրագրերի չափորոշիչների պահանջների պահպանման և որակի ապահովման, դասավանդման, հետազոտական աշխատանքների, ուսումնառությանն աջակցող ծառայությունների, աշխատաշուկայի հետ համագործակցության վերաբերյալ անհրաժեշտ տվյալների հավաքագրման, մշակման վերլուծության կառուցակարգերի ներդրում:

- ՈԱՆԿ-ը կնպաստի, որպեսզի կրթական ծրագիրը մշակելիս և վավերացնելիս` հաշվի առնվեն մասնագիտության կրթական չափորոշիչը, որակավորումների եվրոպական և ազգային շրջանակները, համալսարանի առաքելությունը և նպատակները, կրթության որակի ապահովմանն ուղղված պահանջները, շրջանավարտ մասնագետներին ներկայացվող պահանջները, գործատուների սպա-

ԳՊՀ 2011-2012 ուսումնական տարվա գործունեության հաշվետվություն

սելիքները, մասնագիտության նկատմամբ ժամանակակից գիտագործնական մոտեցումները, կրթական ծրագրի ակնկալվող ելքային արդյունքները՝ սովորողների գիտելիքների, հմտությունների և կարողությունների անհրաժեշտ համակցությունը:

3. Ուսանողների գնահատման ոլորտում՝

- ԳՊՀ ուսանողների գնահատման նոր ձևերի, գիտելիքների և կարողությունների ստուգման արդի մեթոդների կիրառում՝ ըստ կրթական ծրագրերում, ինչպես նաև առարկայական ծրագրերում նախապես սահմանված կրթական վերջնարդյունքների: Ակնկալում ենք ուսանողների գիտելիքների բազմագործոնային գնահատումը կատարել նաև էլեկտրոնային եղանակով, իսկ ամփոփիչ գնահատումը՝ թեստային և բանավոր եղանակների համադրմամբ:

4. Դասախոսական կազմի որակի ապահովման ոլորտում՝

- Ակնկալում ենք ԳՊՀ դասախոսական կազմի մասնագիտական որակների գնահատման և որակավորման շարունակական բարձրացման քաղաքականության մշակման ու իրականացման կառուցակարգերի բարելավում, նոր կարգերի և ընթացակարգերի ընդունում, դասախոսների մասնագիտական և մանկավարժական հմտությունների զարգացման նպատակով վերապատրաստողների վերապատրաստման և որակավորման բարձրացման ծրագրերի իրականացում՝ անձնակազմի անդամների լայն աշխարհայացքի, մասնագիտական, ինչպես նաև լեզվական, տեխնիկական, համակարգչային գրագիտության մակարդակի բարձրացման, մանկավարժական հաղորդակցման, արդի տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման հմտությունների զարգացման նպատակով: Պարբերաբար անցկացվող ուսանողական հարցումների արդյունքների, թիրախային խմբերի արձագանքի, ինչպես նաև բազմագործոն գնահատման արդյունքների հաշվառմամբ՝ ՈԱՆԿ-ի կողմից դասախոսների գնահատում, որի իրականացումը միտված կլինի դասախոսների արդյունավետ աշխատանքի շահադրդմանը (մոտիվացմանը):

5. Ուսումնական ռեսուրսների բարելավման և ուսանողներին աջակցության ոլորտներում՝

- ներդնել ակադեմիական կառավարման էլեկտրոնային համակարգ, ինչի շնորհիվ կրթական ծրագրերի արտոնման, հաստատման և մոնիթորինգի փուլերում կբացահայտվեն և կգնահատվեն կրթական ծրագրերի արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսային կարիքները՝ միտված դասավանդման և ուսումնառության գործընթացների որակի ապահովմանը,

- արդիական ուսումնական ռեսուրսների բազայի ձևավորում, ԳՊՀ ՈԱՆԿ-ի էլեկտրոնային գրադարանի ստեղծում և էլեկտրոնային ռեսուրսներով համալրում,

- ԳՊՀ ՈԱՆԿ-ի ենթակառուցվածքների ապահովում նորագույն տեխնիկայով, մեթոդական, տեղեկատվական, դիդակտիկ նյութերով, ԳՊՀ ՈԱՆԿ-ի էլեկտրոնային կառավարման համակարգի մշակում և ներդրում,

- ԳՊՀ ՈԱՆԿ-ի առնվազն 6 մասնագետների վերապատրաստում,

- համալսարանում կրթական ծրագրերի իրականացման համար անհրա-

Ժեշտ ռեսուրսների ապահովման և ուսումնամեթոդական բազայի բարելավման, ինչպես նաև համալսարանում ուսանողների ակադեմիական ինտեգրման ընթացակարգերի, համալսարանում ակադեմիական խորհրդատուների աշխատանքային գործունեության վերահսկման մեխանիզմների լրամշակում և բարելավում:

6. Տեղեկատվական համակարգերի արդիականացման ոլորտում`

- Ակնկալում ենք համալսարանական կառավարման և վերահսկման էլեկտրոնային համակարգի ներդրում` ինչպես ուսանողների ակադեմիական տվյալների մշակման, դրանց հավաստիության և օբյեկտիվության ապահովման, համալսարանի ակադեմիական կառավարման, կրթական ծրագրերի իրականացման, ուսումնական գործընթացին վերաբերող անհրաժեշտ տվյալների մշակման, այնպես էլ ուսանողների, շրջանավարտների, գործատուների շրջանում համալսարանում ուսումնառությունից բավարարվածության վերաբերյալ հարցումների էլեկտրոնային կազմակերպման և արդյունքների մշակման համար:

7. Հանրային տեղեկատվության ապահովման ոլորտում`

- Մասնագիտական կրթական ծրագրերի որակի, դրանցում սահմանված ելքային արդյունքների, ակադեմիական ծանրաբեռնվածության և այլ ցուցանիշների, ինչպես նաև ուսումնական գործընթացի վերաբերյալ ՈԱՆԿ-ի կողմից տեղեկատվության պարբերաբար տրամադրում, պարբերական և էլեկտրոնային մամուլում հանրությանը իրազեկող նյութերի տպագրություն, հեռուստաեթերի միջոցով հաճախակի լուսաբանում:

Հաշվետու ուստարում, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և Գավառի պետական համալսարանի կանոնադրությամբ սահմանված մրցութային կարգով, ընթացակարգային բոլոր նորմերի պահպանմամբ իրականացան համալսարանի խորհրդի նախագահի և ռեկտորի ընտրությունները, ապա նաև համալսարանում գործող ֆակուլտետների դեկանների ընտրության ընթացակարգին համապատասխան` իրականացվեց Բանասիրական, Բնագիտական, Հումանիտար և Տնտեսագիտական ֆակուլտետների դեկանների ընտրության գործընթացը: Համալսարանում գործող «Գավառի պետական համալսարանի ամբիոնի վարիչի ընտրության ընթացակարգին» համապատասխան և սահմանված կարգով իրականացվեց Ֆիզիկամաթեմատիկական և քիմիական գիտությունների, Ձեռնարկությունների տնտեսագիտության և կառավարման, Հաշվապահական հաշվառման, Ընդհանուր գրականության, Պատմության, Աշխարհագրության, Ինֆորմատիկայի և հաշվողական տեխնիկայի, Ռուսաց լեզվի և գրականության, Կենսաբանության, Էկոլոգիայի և առողջ ապրելակերպի, Հասարակական գիտությունների ամբիոնների վարիչների ընտրության գործընթացը: Թե՛ դեկանների պաշտոնների հավակնորդները, թե՛ համապատասխան ամբիոնների վարիչների պաշտոնի հավակնորդ թեկնածուները ներկայացրեցին համապատասխան ֆակուլտետի, ամբիոնների զարգացման հայեցակարգեր, որոնք բխում են ԳՊԴ զարգացման և բարեփոխման 2011-2016 թթ. հայեցակարգի դրույթներից և ընտրվելուց հետո ձեռնամուխ են եղել մշակելու կառուցակարգեր, միջոցառումների աշխատանքային պլաններ, որոնց հետևելու են հետագա

ԳՊՀ 2011-2012 ուսումնական տարվա գործունեության հաշվետվություն

տարիներին:

Հաշվետու ուստարում ԳՊՀ գիտխորհրդի երաշխավորմամբ՝ ՀՀ բարձրագույն որակավորման հանձնաժողովի կողմից դոցենտի գիտական կոչում է շնորհվել Կենսաբանության, էկոլոգիայի և առողջ ապրելակերպի ամբիոնի դասախոս, կենսաբանական գիտությունների թեկնածու Անահիտ Մարգարյանին, իրավագիտության ամբիոնի դասախոս, իրավաբանական գիտությունների թեկնածու Սամվել Խաչատրյանին: Համալսարանի նկատմամբ ցուցաբերած շարունակական աջակցության և մշտական հոգածության, բարեգործական և մարդասիրական գործունեության համար «ՎիվաՍել-ՄՏՍ»-ի գլխավոր տնօրեն Ռալֆ Յիրիկյանին և «Օրանժ-Արմենիա» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն Բրունո Դուբուային շնորհվել են «ԳՊՀ պատվավոր բարերարի» կոչումները:

Համալսարանի դասախոսների և վարչական աշխատակիցների համար շարունակվել են անգլերեն լեզվի անվճար ուսուցման դասընթացները:

2011-2012 ուստարում հանրության հետ կապերի և լրատվության բաժնի, ուսանողական խորհրդի, ինչպես նաև ուսանողական գիտական ընկերության կողմից իրականացվել են բազմաբովանդակ աշխատանքներ: Ուսանողական ինքնակառավարման մարմինները համագործակցել են տարածաշրջանի և հանրապետության երիտասարդական կառույցների, հասարակական կազմակերպությունների հետ: Բուհում կազմակերպվել են ուսանողական գիտաժողովներ, գեղարվեստական միջոցառումների շարք՝ նվիրված ՀՀ անկախության 20-ամյակին, ազգային տոներին, անվանի գրողներին, քաղաքական գործիչներին: Ուսանողներն ակտիվորեն մասնակցել են հանրապետության այլ բուհերում կազմակերպվող ուսանողական գիտաժողովներին, մասնավորապես, Վանաձորի Հոլի. Թումանյանի անվան, Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտներում կայացած ուսանողական գիտաժողովներին: Ամբողջ ուսումնական տարվա ընթացքում համալսարանը համագործակցել է տեղական հեռուստաընկերության հետ: Հանրության շրջանում համալսարանի գործունեության վերաբերյալ տեղեկատվության տարածման նպատակով «Համալսարանական ժամի» շրջանակներում առանձին ֆակուլտետները ներկայացել են հաղորդաշարերով՝ տրամադրելով իրականացվող կրթական ծրագրերի վերաբերյալ հանրությանը հետաքրքրող տեղեկատվություն: Համալսարանի դասախոսները, ինչպես նաև համալսարանում ակնարկային դասախոսություններ անցկացնող անվանի գիտնականները հանդես են եկել գիտական արժեքավոր տեղեկատվությամբ հարուստ դասախոսությունների շարքերով՝ «Դասը վարում են համալսարանականները» խորագրով հաղորդաշարերում:

**2012-2013 ուսումնական տարում
ԳՊՀ ուսումնագիտական զարգացման հայեցակարգը**

ԳՊՀ զարգացման և բարեփոխման 2011-2016թթ. հայեցակարգին համապատասխան՝ 2012-2013 ուստարում ծրագրում ենք իրականացնել հետևյալ աշխատանքները.

1. Շարունակել աշխատանքները կրթական ծրագրերի բովանդակային և կա-

ռուցվածքային փոփոխությունների իրականացման ուղղությամբ՝ ուղենիշ ունենալով որակավորումների ազգային շրջանակի չափանիշները: Հաշվի առնել ուսանողների, շրջանավարտների, գործատուների շրջանում նախորդ ուստարում կատարված հարցումների արդյունքները: Շահառուների պահանջները, գործատուների կողմից արված առաջարկությունները ներառել ուսումնական պլաններում և առարկայական ծրագրերում՝ կրթության արդիականացման, շրջանավարտների մասնագիտական առաջխաղացման հնարավորությունների ընդլայնման նպատակով:

2. Շարունակել կրթական գործունեության բոլոր ոլորտներին վերաբերող էլեկտրոնային արխիվի համալրման աշխատանքները, նոր ուսումնական նյութերով համալրել էլեկտրոնային գրադարանը:

3. Ներդնել և գործարկել ուսանողական պորտալը, մշտապես համալրել նոր ուսումնական նյութերով, օգտակար հղումներով, հասանելի դարձնել առկա և հեռակա համակարգերում սովորող բոլոր ուսանողներին:

4. Շարունակել ուշադրության կենտրոնում պահել մագիստրոսական աստիճանում իրականացվող գիտական սեմինարը և գիտահետազոտական պրակտիկաները, ուսանողական գիտական կոնֆերանսներին մագիստրոսների գիտական զեկուցումները:

5. Շարունակել անգլերենի ուսուցման և համակարգչային դասընթացները բակալավրիատում և մագիստրատուրայում բարձր առաջադիմությամբ սովորող ուսանողների համար:

6. 15-րդ ամենամյա գիտաժողովը նվիրել համալսարանի հիմնադիր ռեկտոր, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հրանտ Խաչատուրի Հակոբյանի ծննդյան 85-ամյակին, իրականացրել հետևողական աշխատանք՝ հանրապետության և արտերկրի բուհերից գիտնականների մասնակցությունն ապահովելու նպատակով:

7. Շարունակել դասախոսական և վարչական անձնակազմի վերապատրաստումները՝ անգլերենի ուսուցման, համակարգչային, էլեկտրոնային ուսուցման, կրթական նոր տեխնոլոգիաներին տիրապետելու և ուսումնական գործընթացում ներդնելու հմտությունների ձևավորման, մասնագիտական աճի նպատակով:

8. Շարունակել համագործակցությունը տարածաշրջանում գործող ավագ և հիմնական դպրոցների հետ, ակտիվացնել աշակերտների կապը համալսարանի հետ, լուսաբանել համալսարանում իրականացվող կրթական ծրագրերը աշակերտների շրջանում, օգնել նրանց՝ մասնագիտական կողմնորոշման հարցում:

9. Որակի ապահովման մշակույթի շարունակական տարածման, որակի ապահովման ենթակառուցվածքի հնարավորությունների ընդլայնման նպատակով մեթոդական, խորհրդատվական ծառայությունների մատուցում որակի ներքին ապահովման եվրոպական ուղենիշներին համապատասխան հետևյալ աշխատանքների իրականացում.

9.1. Որակի ապահովման քաղաքականության հետևողական իրականացում.

9.1.1. Որակի ապահովման ֆակուլտետային ենթաբաժինների ստեղծում, նրանց գործունեության պայմանների ապահովում, ԱԲՎ որակի ապահովման

բաժնի գործառույթների ընդլայնում՝ ընդգրկելով ֆակուլտետային բաժինները և որպես ինքնուրույն գործող անկախ ստորաբաժանման առանձնացում՝ Որակի ապահովման ներբուհական կառույց՝ ռեկտորի անմիջական ենթակայությամբ,

9.1.2. ՈԱՆԿ-ի արդյունավետ գործունեության համար անհրաժեշտ կանոնակարգային, մեթոդական բազայի ստեղծում, նյութատեխնիկական ռեսուրսների և ՈԱՆԿ-ի ենթաբաժինների համար նորագույն տեխնիկայի, մեթոդական, տեղեկատվական, դիդակտիկ նյութերի, ուղեցույցերի ձեռքբերում,

9.1.3. ԳՊՀ ՈԱՆԿ-ի կողմից որակի ապահովման ներքին համակարգի ձեռնարկի մշակում և կիրառում,

9.1.4. Հանրապետական և եվրոպական առաջատար բուհերի փորձի ուսումնասիրության, նմանատիպ կառույցների գործունեության վերլուծական համադրության իրականացման նպատակով տեղական և միջազգային խորհրդատվական ծառայությունների զնում, ՈԱՆԿ-ի աշխատակազմի գործնական իրազեկությունների զարգացման նպատակով գործուղումների և վերապատրաստումների կազմակերպում:

9.2. Ծրագրերի ու շնորհումների վավերացում, վերահսկում և պարբերական վերանայում.

9.2.1. ԳՊՀ ՈԱՆԿ-ի կողմից ուսանողների, շրջանավարտների, գործատուների շրջանում համալսարանի կրթական ծրագրերից բավարարվածության վերաբերյալ հարցումների արդյունքների մշակման համակարգչային ծրագրերի ներդրում,

9.2.2. ԳՊՀ ՈԱՆԿ-ի կողմից համալսարանի ենթակառուցվածքային և ծրագրային հավատարմագրման նպատակով ինքնավերլուծության անցկացում, կրթական ծրագրերի որակի ներքին գնահատման կառուցակարգերի մշակում, դրանց կիրառում, շարունակական բարելավում:

9.3. Ուսանողների գնահատում.

Ուսանողների գիտելիքների բազմագործոնային գնահատման ձևերի և մեթոդների կիրառման ընթացքի վերահսկողություն, մշտադիտարկում և բարելավում՝ հաշվի առնելով թե՛ դասընթացներում նախապես սահմանված կրթական ելքային արդյունքները, թե՛ ուսանողների, դասախոսների շրջանում անցկացվող հարցումների արդյունքների վերլուծությունը, թե՛ տարբեր եղանակներով գնահատման արդյունքների համադրումը:

9.4. Դասախոսական կազմի որակի ապահովում.

9.4.1. ԳՊՀ դասախոսական կազմի որակի ապահովման նպատակով ուսանողական հարցումների կազմակերպման էլեկտրոնային ձևերի մշակում, հարցումների կազմակերպում, արդյունքների հաշվառում,

9.4.2. ՈԱՆԿ-ի կողմից ԳՊՀ դասախոսների գնահատման ձևաչափերի սահմանում, գնահատման իրականացում:

9.5. Ուսումնական ռեսուրսներ և աջակցություն ուսանողներին.

9.5.1. ՈԱՆԿ-ի կողմից՝ մասնագիտական կրթական ծրագրերի իրականացման չափորոշիչային պահանջների և ուսումնական առկա ռեսուրսների համապատասխանության գնահատում, ռեսուրսների բազայի բարելավման գործըն-

թացի վերահսկում,

9.5.2. ՈԱՆԿ-ի կողմից՝ ուսանողներին ուսումնական ռեսուրսների հասանելիության գնահատում,

9.5.3. ԳՊՀ խորհրդատուների կողմից ուսանողներին մատուցվող ակադեմիական աջակցությունից բավարարվածության գնահատում:

9.6. Տեղեկատվական համակարգեր.

Կրթության որակի վերահսկման, մշտադիտարկման, որակի ներքին գնահատման, ակադեմիական կառավարման և միասնական տեղեկատվական էլեկտրոնային համակարգի ներդրում:

9.7. Հանրային տեղեկատվություն.

Հասարակությանը լիարժեք և պատշաճ իրազեկում՝ բուհում իրականացվող կրթական ծրագրերի որակի, ուսումնական, կազմակերպչական գործընթացների, ուսանողական ինքնակառավարման մարմինների գործունեության վերաբերյալ:

10. Համալսարանը հավատարմագրման գործընթացին նախապատրաստելու նպատակով ենթակառուցվածքային ինքնավերլուծության անցկացում, ինքնվերլուծության նախնական զեկուլյցի պատրաստում:

Ն. Ա. ԿՈՒՏՈՒԾՅԱՆ

Ուսումնագիտական գծով պրոռեկտոր

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Դեկան՝ *Կատվալյան Վիկտոր Լիպարիտի,
բանասիրական գիտությունների թեկնածու,
դոցենտ, ԳՊԴ պրոֆեսոր*

Դեկանի տեղակալ՝ *Քաղայան Մարինե Միքայելի*

ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՈՒՄՆԵՐԸ

Դասիչ	Մասնագիտություն
031000	Հայոց լեզու և գրականություն
032400	Ռուսաց լեզու և գրականություն
031300	Անգլերեն լեզու և գրականություն

Մասնագիտացումներ՝

բակալավր՝ բանասիրության բակալավր

մագիստրոս՝ բանասիրության մագիստրոս

Ուսանողների թիվը՝ 269

Շրջանավարտների թիվը՝ 93

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ
2011-2012 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ 2012-2013 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ
ՉԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ

2011-2012 ուսումնական տարին ԳՊԴ զարգացման մի նոր փուլի սկիզբ նշանավորեց, եթե նկատի ունենանք ռեկտորատի կողմից այն որակի տարի հռչակելու իրողությունը, ուսումնական տարվա ընթացքում բուհում ծավալված բազմակողմանի և նպատակամղված գործընթացները, բուհի գիտակրթական գործունեությունը դեպի եվրոպական չափանիշներ ուղղորդելու ջանքերը: Բնականաբար, հիշյալ գործընթացները ներառեցին նաև բանասիրական ֆակուլտետը և դրսևորվեցին՝ ըստ ֆակուլտետի հնարավորությունների և յուրահատկությունների: Ուսումնական տարվա սկզբում բանասիրական ֆակուլտետի խորհուրդը, նկատի ունենալով բուհի զարգացման հայեցակարգը և սկսված գործընթացները, քննարկեց և հաստատեց ֆակուլտետի՝ ուսման որակի բարձրացման 2011-2012 ուստարվա ծրագիր-կառուցակարգը, որի իրագործման ուղղությամբ ուսումնական տարում ձեռնարկվեցին համապատասխան քայլեր:

Ուսումնական գործընթացի բարեփոխումը, բնականաբար, նախ և առաջ ենթադրում է ուսումնական պլանների և ծրագրերի շարունակական թարմացում և նորագույն պահանջներին համապատասխանեցում: Ուսումնական տարվա ընթացքում ֆակուլտետի ամբիոններում, դեկանատում, խորհրդի նիստերում տեղի են ունեցել առաջարկությունների քննարկումներ, և այդ առաջարկություններից մի քանիսը իրենց արտահայտությունը գտել են ուսումնական պլաններում: Ամբիոնները աշխատանքներ են ծավալել ուսումնական ծրագրերի թարմացման ուղղությամբ և, ընդհանրապես, հաշվետու ժամանակաշրջանում զգալիորեն ակտիվացրել են իրենց աշխատանքները տարբեր ուղղություններով: Յուրաքանչյուր ամբիոն կազմել է ուսումնամեթոդական, գիտական, դաստիարակչական ուղղություններով իր գործողությունների տարեկան պլանը և առաջնորդվել դրանով. ամբիոններում պարբերաբար ծավալվել են ուսումնական, գիտամեթոդական, ծրագրային քննարկումներ, կազմակերպվել են գիտական սեմինարներ, կատարվել և ապա հրատարակության են ներկայացվել արժեքավոր գիտական աշխատանքներ, կարդացվել են զեկուցումներ միջազգային և հանրապետական գիտաժողովներում, համակարգված աշխատանք է ընթացել ուսման մեջ հետմնացող ուսանողների հետ, խրախուսվել են ուսանողների, երիտասարդ աշխատակիցների հետազոտական, գիտական հետաքրքրությունները, տեղի են ունեցել փոխադարձ դասալսումներ և դասերի քննարկումներ: Բավարար հիմքերի վրա է միջամբիոնային համագործակցությունը: Հիշատակելի են Հայոց լեզվի և Ընդհանուր գրականության ամբիոնների սեմինար - քննարկումները՝ նվիրված գրականագիտական և լեզվաբանական տարբեր հարցերի, լեզվական ամբիոնների համատեղ քննարկումները: Ընդհանրության մեջ արձանագրելով ամբիոններում եղած դրական տեղաշարժերը, այնուամենայնիվ պետք է նշել, որ նրանք

իրենց ներուժը դեռևս լիովին չեն օգտագործում: Դրական գնահատելով Ռուսաց լեզվի և գրականության ամբիոնի գործունեությունը՝ փաստում ենք, որ մյուս ամբիոնների աշխատանքը դեռևս ամբողջովին գոհացուցիչ համարել չենք կարող. նրանք պետք է բարելավեն ուսանողների հետ տարվող աշխատանքները, անցկացնեն համակարգված դասալուսմներ, պատրաստեն մեթոդական ձեռնարկներ, կազմակերպեն տարաբնույթ միջոցառումներ, ավելի արդյունավետ դարձնեն աշխատակիցների գիտական աշխատանքների քննարկումները, ի վերջո՝ հանդես գան նոր նախաձեռնություններով: Ամբիոնները խնդիրներ ունեն նաև գրագրության, փաստաթղթերի ամբողջականացման, տնտեսության վարման առումներով: Նշենք նաև, որ եթե ֆակուլտետի դեկանատը արդյունավետորեն աշխատում է ուսանողների հետ, կարողանում է հստակորեն կազմակերպել դասատվության գործընթացը, ապահովել ուսումնական պլանների լիարժեք կատարումը, ըստ արժանվույն ներկայացնել ֆակուլտետը համալսարանական կառույցներում, ապա դեռևս անելիքներ ունի ամբիոնների աշխատանքները համակարգելու, ուսանողական կառույցների ակտիվ գործունեություն ապահովելու, ուսումնառության և դասատվության գործընթացների արդյունավետ վերահսկողություն իրականացնելու, խորհրդատուների համակարգը ակտիվորեն աշխատեցնելու և մի շարք այլ ուղղություններով:

Նկատելի է ֆակուլտետում դասատվության արդյունավետության բարձրացման ուղղությամբ տարվող աշխատանքների որակական աճ: Ֆակուլտետում ակտիվացել են դասատվության նորագույն եղանակներին վերաբերող քննարկումները, դրանց գործադրումը բուն դասատվության գործընթացում, արդյունավետորեն օգտագործվում են ժամանակակից տեխնոլոգիական հնարավորությունները, դրանց միջոցով նաև կազմակերպվում են անհատական աշխատանքների շնորհանդեսներ, բաց դասեր: Ի դեպ, նույններ ամսին բանասիրական ֆակուլտետը հանդես եկավ նախաձեռնությամբ՝ սկսելով ուսուցման նորագույն եղանակների համահամալսարանական քննարկումների շարք, ինչը շարունակվեց ողջ ուսումնական տարվա ընթացքում՝ ընդգրկելով բոլոր ֆակուլտետների տարբեր ամբիոնների դասախոսների: Ուսման որակը բարձրացնելու նպատակով ներդրել ենք նախաքննական տարբերակված ստուգումների անցկացում չորրորդ կուրսերում, ինչպես նաև՝ բոլոր կուրսերում հանձնարարված գրականության ընթերցվածության ստուգումներ յուրաքանչյուր կիսամյակի ավարտին:

Կրթության որակի բարձրացման առումով մեր օրերում շատ կարևոր է ուսման գործընթացի և գիտելիքների նկատմամբ ուսանողների հետաքրքրության աճի ապահովումը: Այս առումով անցած ուստարում կատարվել են զգալի աշխատանքներ, մասնավորապես՝ կազմակերպվել են գրական երկերի քննարկումներ, հանդիպումներ մեր հայրենակից բանաստեղծ Յովհաննես Միրիբյանի, ԳՊԴ կենսաբանության, էկոլոգիայի և առողջ ապրելակերպի ամբիոնի վարիչ պրոֆեսոր Ա. Սիմոնյանի հետ: Մենք կարևորում ենք նախաձեռնությունների շարունակականությունը, և այս առումով հատկանշական է Ռուսաց լեզվի և գրականության ամբիոնի օրինակելի փորձը: Ամբիոնը ռուսաց լեզվին և գրականու-

թյանը նվիրված միջոցառումների շարք ծավալեց երկու կիսամյակների ընթացքում՝ կազմակերպելով միջոցառումներ՝ նվիրված Լոնոնոսովին, Գրիբոյեդովին, Պարույր Սևակին, անցկացրեց ռուսաց լեզվի օլիմպիադա համակարգչային թեստավորման եղանակով: Ֆակուլտետի տարբեր բաժինների մասնակցությամբ անցկացվել են ուսանողական գիտաժողովներ, բակալավրիատի և մագիստրատուրայի մեր ուսանողները հաջողությամբ մասնակցել են միջազգային և հանրապետական գիտաժողովների Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանում, Գյումրու և Վանաձորի մանկավարժական ինստիտուտներում: Հայոց լեզու և գրականություն բաժնի ուսանողների հետ ձեռնարկել ենք Գեղարքունիքի մարզի բարբառային համայնապատկերը կազմելու աշխատանքները, ընթացքի մեջ են բարբառային և բանահյուսական նյութերի հավաքման աշխատանքները: Մեր ուսանողները հանդես են եկել նաև բարեգործական ձեռնարկներով. իբրև ավանդույթ՝ դարձյալ գրքեր են նվիրաբերել ԳՊԴ գրադարանին, հայոց լեզու և գրականություն բաժնի 3-րդ կուրսի ուսանողները այցելել են Գավառի թիվ մեկ հատուկ դպրոց՝ սաների համար տանելով հագուստ ու քաղցրավենիք և կազմակերպելով միջոցառում: Նշենք նաև, որ մեր ֆակուլտետը իր միջոցառումներում ներգրավում է նաև այլ ֆակուլտետների ուսանողների: Մեր ուսանողները ակտիվորեն մասնակցում են համահամալսարանական միջոցառումներին: Իրենց գործունեությունը զգալիորեն ակտիվացրել են ֆակուլտետի ուսխորհուրդը և ուսանողական գիտական ընկերությունը: Այս ամենը, իհարկե, նպաստում է ուսանող երիտասարդության բարոյահոգեբանական, մշակութային որակների զարգացմանը:

Ուսումնական տարվա ընթացքում տարվեցին նաև որոշակի աշխատանքներ՝ շահակիցների հետ հետադարձ կապի ապահովման, համագործակցության ակտիվացման առումներով: Օգոստոսին կազմակերպեցինք հանդիպում բանասիրական ֆակուլտետի շրջանավարտների հետ, և ձևավորվեց ԳՊԴ շրջանավարտների միությունը: Համագործակցության հրավերով դիմեցինք մարզի դպրոցների տնօրեններին և առաջատար մանկավարժներին ու ստացանք բավականին դրական արձագանքներ:

Բնականաբար, ֆակուլտետում տեղի ունեցող գործընթացների արդյունավետությունը այս կամ այն կերպ իր արտահայտությունը պետք է գտնի քննաշրջանների ընթացքում ուսանողների հանդես բերած առաջադիմության ցուցանիշներում:

Ուսումնական տարվա ծնեռային քննաշրջանի արդյունքներով բանասիրական ֆակուլտետի՝ բակալավրիատի կրթակարգով սովորող ուսանողների ուսման բացարձակ առաջադիմությունը կազմել է 70 տոկոս, իսկ զարմանալի քննաշրջանի արդյունքներով՝ 74,10 տոկոս, այսինքն՝ ուսումնական տարվա ընթացքում, ըստ տոկոսային ցուցիչների, նկատելի է առաջադիմության աճ: Սակայն իրականում գարնանային քննաշրջանում ծնեռայինի համեմատությամբ առաջադիմության ցուցանիշները, կարելի է ասել, կայուն պահպանվել են և ոչ թե աճել: Այսպես, ֆակուլտետի երկրորդ կուրսերը ծնեռային քննաշրջանի 70,31 տոկոս առաջադիմության դիմաց ունեցել են զարմանալի քննաշրջանի

ԳՊԴ 2011-2012 ուսումնական տարվա գործունեության հաշվետվություն

69,84 տոկոս առաջադիմություն, երրորդ կուրսերն ունեցել են համապատասխանաբար 81,58 և 77,63 տոկոս առաջադիմություն: Խնդիրն այն է, որ հաշվարկից դուրս են եկել չորրորդ կուրսերը, որոնք ձմեռային քննաշրջանում ունեցել են առաջադիմության ցածր ցուցանիշներ /58,11 տոկոս/: Իրենց ցուցանիշները բարելավել են վեց խմբերից երեքը /ուլ 2-րդ, 3-րդ, ալ 2-րդ/: Ուսումնական տարվա ավարտին լավագույն ցուցանիշ են ունեցել Ռուսաց լեզու և գրականություն բաժնի երկրորդ կուրսի ուսանողները՝ 83,33 տոկոս առաջադիմությամբ և Հայոց լեզու և գրականություն բաժնի երրորդ կուրսի ուսանողները՝ 82,86 տոկոս առաջադիմությամբ: Վատագույն ցուցանիշ հանդես են բերել հայկական և անգլիական բաժինների երկրորդ կուրսերի ուսանողները՝ 66,67-ական տոկոս առաջադիմությամբ:

Ընդհանուր առմամբ բակալավրիատի բոլոր կուրսերում էլ առկա է սովորողների բավարար առաջադիմություն, և կարող ենք արձանագրել, որ նախորդ տարիների որոշակի տատանումներից հետո այժմ ունենք կայուն վիճակ, որը պետք է հիմք դառնա հետագա առաջընթացի համար:

Անդրադառնալով գարնանային քննաշրջանի արդյունքներին՝ նշենք, որ բակալավրիատի 139 ուսանողներից 31-ը քննությունները հանձնել են միայն «գերազանց» գնահատականներով, 47-ը՝ «գերազանց» և «լավ» գնահատականներով, 25-ը՝ խառը գնահատականներով: 10 ուսանողներ էլ վաստակել են անբավարար գնահատականներ:

Ուսումնական տարվա ընթացքում ֆակուլտետի ուսանողներից երեքը ազատվել են համալսարանից, տասնմեկը՝ հեռացվել, տարկետում են ստացել երկու ուսանողներ, այլ ֆակուլտետ են տեղափոխվել տասներկու ուսանողներ: Իրենց ուսանողական իրավունքները վերականգնել են ինը ուսանողներ, այլ ֆակուլտետից բանասիրական ֆակուլտետ են տեղափոխվել 15 ուսանողներ: ԵՊՀ-ից մեր ֆակուլտետ է տեղափոխվել մեկ ուսանող: Ներկայումս ֆակուլտետի բակալավրիատում ուսանում են 192 ուսանողներ, իսկ մագիստրատուրայում՝ 64 ուսանողներ, ընդամենը՝ 256 ուսանողներ:

2011-2012 ուսումնական տարում բակալավրիատի ամփոփիչ ատեստավորման քննություններին մասնակցեցին ԳՊԴ բանասիրական ֆակուլտետի 72 ուսանողներ, որոնցից 18-ը վաստակեցին միայն «գերազանց» գնահատականներ, իսկ 13-ը արժանացան գերազանցության դիպլոմի: Մագիստրատուրայում գարնանային քննաշրջանի արդյունքներով առկա է 82,35 տոկոս առաջադիմություն՝ ձմեռային քննաշրջանի 68,42 տոկոսի դիմաց: Անցած ուսումնական տարում բանասիրական ֆակուլտետի մագիստրատուրան ունեցավ 21 շրջանավարտ, որոնցից 18-ը մագիստրատուրան ավարտեց գերազանցության դիպլոմով: Մագիստրատուրայի շրջանավարտների ցուցաբերած արդյունքները հիմնականում գոհացուցիչ էին, այնուամենայնիվ մագիստրատուրայի կրթական համակարգը կատարելագործելու առումով դեռևս որոշակի անելիքներ ունենք:

Անցած ուսումնական տարում ունեցել ենք նաև թերացումներ: Ֆակուլտետում դեռևս սովորում են ակադեմիական առումով ակնհայտորեն հետ մնացող ուսանողներ, որոնք գրեթե բոլոր քննաշրջաններում ունենում են առարկայական պարտքեր, որոշակի քանակություն են կազմում նաև շարունակաբար միջին

առաջադիմություն ունեցողները: Առանձին դեպքերում դասախոսները դեռևս չեն կիրառում դասատվության նորագույն եղանակներ: Հարկավոր է բոլոր ուսանողների հանդեպ ցուցաբերել անհատական մոտեցում, մագիստրատուրայում մեծ ուշադրություն դարձնել սովորողների ստեղծագործական, գիտահետազոտական ունակությունների զարգացման և դրսևորման հարցերին: Ուսանողների ինքնուրույն աշխատանքների կատարումը և ստուգումը առանձին դեպքերում կրում էր ձևական բնույթ՝ թերևս գնահատման ճշգրիտ չափանիշներ չունենալու պատճառով, ամբիոնները պարբերաբար չէին կազմակերպում փոխադարձ դասալսումներ, քիչ էին տեղի ունենում գրական երկերի քննարկումներ, գրականագիտական ու լեզվաբանական բանավեճեր: Այդպես էլ անկատար մնաց բանասիրական և հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետների ուսանողների մասնակցությամբ գրական երկերի համատեղ քննարկման նախագիծը, ռուսաց լեզվի և գրականության ամբիոնի օրինակին չհետևեցին օտար լեզուների և հայագիտական ամբիոնները՝ կազմակերպելու անգլերենին և հայերենին նվիրված շարունակական միջոցառումներ:

Բանասիրական ֆակուլտետը նոր ուսումնական տարում ուսումնական գործընթացի բոլոր ուղղություններով թերացումները ըստ հնարավորին շտկելու, նորանոր ծրագրեր ներդնելու, աշխատանքի արդյունավետությունը բարձրացնելու, բարձրորակ ուսումնակրթական ծառայություն մատուցելու համար նոր քայլեր ձեռնարկելու խնդիր է դրել իր առջև, և նախատեսված աշխատանքները ներկայացվում են 2012-2013 ուսումնական տարվա՝ ֆակուլտետի զարգացման հայեցակարգում:

Ելնելով առաջադրված նպատակից՝ բանասիրական ֆակուլտետի 2012-2013 ուստարվա զարգացման հայեցակարգը նախատեսում է աշխատանքների ծավալում հետևյալ ուղղություններով.

1. Ուսումնական պլանների և ծրագրերի վերանայում և բարելավում,
2. Ամբիոնային աշխատանքների արդյունավետության բարձրացում,
3. Ուսումնական գործընթացի պատշաճ կազմակերպում,
4. Դասատվության կազմակերպման նորագույն մեթոդների կիրառում,
5. Ուսումնական գործընթացի, գիտելիքների նկատմամբ ուսանողների հետաքրքրության խթանում,
6. Ցածր առաջադիմություն ունեցող ուսանողների հետ տարվող աշխատանքների ակտիվացում,
7. Ուսումնական արդյունքների ստուգում, մշտադիտարկում, վերլուծություն, գնահատում և եզրահանգումների կատարում,
8. Ուսանող երիտասարդության բարոյահոգեբանական, մշակութաբանական բարձր որակների դաստիարակում,
9. Արտաֆակուլտետային գործունեության ակտիվացում,
10. Մասնակցություն համահամալսարանական ծրագրերին ու զարգացման գործընթացներին:

Ֆակուլտետի զարգացման սույն հայեցակարգը հանգամանորեն ներկայացվում է ԳՊԴ բանասիրական ֆակուլտետի՝ 2012-2013 ուսումնական տարվա գործողությունների ծրագիր-կառուցակարգում:

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՓԱԿՈՒՏԵՏԻ՝
ՈՒՍԱՆ ՈՐԱԿԻ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ 2012-2013 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ
ԾՐԱԳԻՐ-ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳ

h /h	Որակի աճին միտված գործողություն	Գործողության մեխանիզմներ	Ակնկալվող արդյունք	Ժամկետ
1	Ուսումնական պլանների և ծրագրերի շարունակական բարձրացում, նորագույն առարկաների համաաբառասխանացում	<p>1.1. ուսումնական պլանների քննարկում ամբիոնների նիստերում, առաջարկությունների ձևակերպում, ապա ներկայացում և հիմնավորում ֆակուլտետի խորհրդի նիստերում</p> <p>1.2. ուսումնական ծրագրերում գիտության առաջընթացի արդյունքների արտահայտում, թեստերի, հարցացուցակների, անհատական և կուրսային աշխատանքների թեմաների, հանձնարարվող գրականության ցանկի բարձրացում, էլեկտրոնային կայքերի ներառում</p> <p>1.3. ամբիոնների նիստերում առարկայական ծրագրերի պարբերական քննարկում, անհրաժեշտության դեպքում աշխատանքային խմբի ստեղծում՝ ուսումնական ծրագիրը վերամշակելու համար</p> <p>1.4. ֆակուլտետի մեթոդական խորհրդի աշխատանքների ակտիվացում</p>	1. ըստ հնարավորին արդիական և ճանաչափաբան ներկա պահանջներին բավարարող, հետագայում և շարունակական բարեփոխումների ենթակա ուսումնական պլանների և ծրագրերի առկայություն	1.1. ճինչև ուսումնական տարվա ավարտ 1.2. ճինչև նոյեմբերի վերջ 1.3., 1.4. ողջ ուս. տարվա ընթացքում
2	Ամբիոնային աշխատանքի արդյունավետության բարձրացում	<p>2.1. ամբիոնի՝ ուսումնամեթոդական, գիտական, դաստիարակչական ուղղություններով աշխատանքների տարեկան պլանի ձևավորում, ամբիոնի նիստում հաստատում և ֆակուլտետի խորհրդի նիստում ներկայացում</p> <p>2.2. բոլոր դասընթացների համար ուսումնամեթոդական</p>	2. բուհում բարձր համարում և պատշաճ գիտական ժակարդակ ունեցող ամբիոնների առկայություն, որոնք արդյունավետորեն համատեղում են ուսումնամեթոդական և գիտական աշխատանքները, ապահովում են շարունակական,	2.1. ճինչև նոյեբերի կեսը 2.2. շարունակական 2.3. ամեն շաբաթ 2.4. , 2.8. ճիշտ 2.5. ողջ ուստարում

ԳՊԴ 2011-2012 ուսումնական տարվա գործունեության հաշվետվություն

2		<p>ծնունդների և ուղեցույցների պատրաստում</p> <p>2.3. գիտական սեմինարների պարբերական անցկացում, աշխատակիցների գիտական աշխատանքների քննարկում</p> <p>2.4. գիտամեթոդական, խորհրդատվական աջակցություն երիտասարդ աշխատակիցներին</p> <p>2.5. ամբիոն-ուսանող կապի ամրապնդում, ուսանողներին էսենների, ռեֆերատների պարբերական հանձնարարում, հետազոտական աշխատանքներում գիտական հետաքրքրություններ ունեցող ուսանողների ներգրավում, ամբիոնում լավագույն ուսանողական աշխատանքների ներկայացում, քննարկում և արժևորում, նաև՝ տպագրության երաշխավորում</p> <p>2.6. փոխադարձ դասատուների պարբերական կազմակերպում, դրանց քննարկում, առաջավոր փորձի տարածում, բացթողումների վերհանում և շտկում</p> <p>2.7. համապատասխան բաժնի ուսանողների առաջադիմության ցուցանիշների քննարկում, ցածր առաջադիմություն ունեցող ուսանողների հետ անհատական և արդյունավետ աշխատանքի կազմակերպում</p> <p>2.8. ծագիստրատուրայի ուսանողների հետ տարվող աշխատանքների բարելավում, ծագիստրատուրայի ստեղծագործական ունակությունների խթանում</p>	<p>գիտական աճ, յուրացում են բնագավառի գիտական նվաճումները և դրանք ծառայում ուսանողությանը, ակտիվորեն ծասնակցում են բուհական ուսումնական ողջ գործընթացին</p>	<p>2.6. ամեն շաբաթ</p> <p>2.7. յուրաքանչյուր ծիջանկյալ և ամփոփիչ ստուգումից հետո</p>
---	--	--	---	--

ԳԴԴ 2011-2012 ուսումնական տարվա գործունեության հաշվետվություն

3	<p>Ուսումնական գործընթացի կազմակերպման արդյունավետության բարձրացում</p>	<p>3.1. տարբեր կուրսերի, նույն դասընթացը տարբեր ժրագրերով ուսումնասիրող խմբերի միացյալ դասատվության բացառում</p> <p>3.2. անհրաժեշտության դեպքում դասատվության գործընթացին երիտասարդ մասնագետների, մագիստրոսների ներգրավում՝ անցած նյութը ամրապնդելու, նորագույն մեթոդներ կիրառելու պայմանով</p> <p>3.3. որևէ ուսումնական խմբում նույն օրվա ընթացքում միևնույն դասախոսի երկրորդ և հաջորդական ճուշտերի ըստ հնարավորին բացառում</p> <p>3.4. դասաժամի լիարժեք և արդյունավետ անցկացում</p> <p>3.5. սեմինար և գործնական պարապմունքները ըստ հնարավորին փոքր խմբերով կազմակերպում</p> <p>3.5.1. սեմինար և գործնական պարապմունքներին ուսանողների մասնակցության գնահատման միասնական եղանակի ներդրում</p> <p>3.6. ամբիոնների աշխատանքի և միջամբիոնային համագործակցության համակարգում</p> <p>3.7. ֆակուլտետի խորհրդի և դեկանատի նիստերի պարբերական գումարում, որոշումների կատարման վերահսկում</p> <p>3.7.1. ֆակուլտետի խորհրդում ԳԴԴ հաստատված կանոնակարգերի, ընթացակարգերի շարունակական քննարկումների կազմակերպում, այդ կարգերին համապատասխան</p>	<p>3. յուրաքանչյուր ուսումնական խմբում ուսումնական պլանով և դասացուցակով նախատեսված բոլոր դասընթացների թեմատիկ պլանների անխափան և արդյունավետ կատարում, ուսումնական գործընթացում ծագող խնդիրների լուծման ճկունություն և օպերատիվություն</p>	<p>3. ողջ ուսումնական տարվա ընթացքում</p>
---	---	--	---	---

ԳՊԴ 2011-2012 ուսումնական տարվա գործունեության հաշվետվություն

		<p>գործողությունների իրականացում, անհրաժեշտության դեպքում կարգերի վերափոխման վերաբերյալ առաջարկությունների պատրաստում և ներկայացում</p> <p>3.7.2. Բանասիրական բարձրագույն կրթական ծառայություն ճատուցող հանրապետական և արտերկրյա առաջատար բուհերի փորձի ուսումնասիրում և ֆակուլտետի գործունեության բարելավման ծրագրերում այդ փորձի հաշվառում</p> <p>3.7.3. Դեկանատի, ֆակուլտետի խորհրդի, ամբիոնների կողմից մասնագիտական կրթական ծրագրերի իրականացման ընթացքի ու արդյունքների, որակի մշտադիտարկում և ուսումնասիրություն, ուժեղ և թույլ կողմերի բացահայտում, ինքնավերլուծության կատարում, անհրաժեշտ միջոցների ձեռնարկում՝ կրթության որակի հետազատական ապահովելու նպատակով</p> <p>3.8. ուսումնական խմբերի ավագների հետ աշխատանքների համակարգում, դասաճատյանների վարման գործում բացթողումների և անճատությունների բացառում</p>		
4	Դասավորության արդյունավետության բարձրացում	<p>4.1. դասախոսության թելադրման պրակտիկայի իսպառ բացառում</p> <p>4.2. չբացառելով գիտելիքի մատուցման գործունը՝ դասի ընթացքում ուսանողի ստեղծագործական, վերլուծական, դատողական ունակությունների զարգացման կարևորում,</p>	4. ուսումնական ծրագրում ընդգրկված յուրաքանչյուր թեմայի համակողմանի ըմբռնում և խորը իմացություն, թեմայի շուրջ դատողությունների անելու ունակություն, ձեռք բերված	4. ողջ ուսումնական տարում

ԳՊԴ 2011-2012 ուսումնական տարվա գործունեության հաշվետվություն

		<p>նոր գիտելիքներ ձեռք բերելու և եղած գիտելիքը օգտագործելու կարողությունների ու հմտությունների ձևավորում՝ դասը վարելով քննարկումներով, հարց ու պատասխանով, խնդիրներ առաջադրելով ու դրանց լուծումները գտնելով և այդ ամենը զուգորդելով հանգամանակից ճեկնաբանություններով</p> <p>4.2.1. ուսանողների ծոտ գլխավորը երկրորդականից զատելու, ծիտքն արտահայտելու, ինչպես նաև բանավոր ու գրավոր խոսքը ճիշտ կառուցելու, տրամաբանական եզրահանգումներ կատարելու ունակությունների ձևավորում</p> <p>4.3. դասատվության ընթացքում դիդակտիկ նյութերի, ինչպես նաև նորագույն տեխնոլոգիական միջոցների օգտագործում</p> <p>4.4. Ֆակուլտետում բազմալեզու միջավայրի ստեղծում, տարբեր լեզուներով հաղորդակցում իրականացնելու, այլալեզու գրականությունից օգտվելու կարողությունների խորախուսում մասնագիտական երեք բաժիններում:</p>	<p>գիտելիքները գործնականում գործադրելու հմտություն</p>	
5	<p>Ուսումնական գործընթացի, գիտելիքների նկատմամբ ուսանողների հետաքրքրության աճի ապահովում</p>	<p>5.1. առարկայական օլիմպիադաների, վիկտորիաների, բանավեճերի կազմակերպում</p> <p>5.2. ուսանողական գիտական կոնֆերանսների կազմակերպում</p> <p>5.3. ուսումնական յուրաքանչյուր խմբում որևէ գրողի ստեղծագործությունների համակողմանի քննարկումների անցկացում</p>	<p>5. ուսանողների՝ ավելի շատ գիտելիքներ ունենալու և դրանք դրսևորելու ձգտում, գիտելիքի դերի և կարևորության ըմբռնում</p>	<p>5.1. յուրաքանչյուր ամիս 5.2., 5.3., 5.4. կիսամյակում ձեկ անգամ 5.5. այս կիսամյակից սկսած 5.6., 5.7. միշտ</p>

ԳՊԴ 2011-2012 ուսումնական տարվա գործունեության հաշվետվություն

		<p>5.4. բնագավառի հայտնի գիտնականների հրավիրում և հրապարակային դասախոսությունների կազմակերպում</p> <p>5.5. դասախոս-ուսանող էլեկտրոնային հաղորդակցման մշակույթի զարգացում</p> <p>5.6. ինքնուրույն գիտելիքներ ձեռք բերելու հարցում ուսանողին մեթոդական հիմնավոր աջակցության ցուցաբերում</p> <p>5.7. մարզի բանասիրական արժեքների ուսումնասիրության գործում ուսանողների ներգրավում</p>		
6	Ցածր առաջադիմություն ունեցող ուսանողների հետ տարվող աշխատանքների արդյունավետության բարձրացում	<p>6.1. յուրաքանչյուր առարկայի գծով թերացող ուսանողների հետ անհատական աշխատանքների կազմակերպում և նրանց ուսման գործընթացի մշտադիտարկում ամբիոնների և դեկանատի կողմից</p> <p>6.2. թերացող ուսանողներին հետաքրքրաշարժ, գիտահանրամատչելի բնույթի առաջադրանքների հանձնարարում</p> <p>6.3. անհրաժեշտության դեպքում ուսանողի առաջադիմության հարցի քննարկում նրա ծնողի հետ</p>	6. թերացող ուսանողների մոտ ուսման հանդեպ անտարբերության վերացում, պատասխանատվության զգացումի և ուսումնական հետաքրքրությունների ձևավորում	6. ողջ ուս. տարվա ընթացքում
7	Ուսումնական արդյունքների ստուգման և գնահատման արդյունավետության բարձրացում	<p>7.1. յուրաքանչյուր դասընթացի բնույթից ելնելով՝ ստուգման տարբեր եղանակների /թեստ, գրավոր աշխատանք, բանավոր հարցում/ կիրառում և արդյունքների համադրում</p> <p>7.2. անհատական աշխատանքների դերի մեծացում՝ դրանց պաշտպանության անցկացման միջոցով</p> <p>7.2.1. անհատական աշխատանքների գնահատման</p>	7. գիտելիքների ստուգման և գնահատման օբյեկտիվություն, ուսանողի կատարած աշխատանքի արդարացի արժեքում, գործընթացի թափանցիկություն, կոռուպցիոն ռիսկերի բացակայություն	7.1.-7.5. ողջ ուսումնական տարվա ընթացքում 7.6. երկրորդ կիսամյակի սկզբում

ԳՊՀ 2011-2012 ուսումնական տարվա գործունեության հաշվետվություն

		<p>արդյունավետ համակարգի ներդրում</p> <p>7.3. ծիջանկյալ ստուգումների անցկացում թեստային եղանակով, իսկ գրավոր աշխատանքի ձևով անցկացնելու դեպքում՝ հարցացուցակներում տրամաբանական, վերլուծական բնույթի հարցերի ընդգրկումով</p> <p>7.4. ամփոփիչ ստուգումների օբյեկտիվությունն ապահովելու նպատակով այդ գործընթացում նաև ճազիստրատորայի ուսանողների ընդգրկում</p> <p>7.5. ավարտական աշխատանք կատարող ուսանողների համար տվյալ առարկայից բուհական ավարտական բանավոր քննության անցկացում</p> <p>7.6. ԳՊՀ ակադեմիական ազնվության հայեցակարգի դրույթների հետևողական ծանոթացում և կիրառում</p>		
8	<p>Ուսանողների տասարդության բարոյահոգեբանական, ճշակութաբանական որակների զարգացում</p>	<p>8.1. գիտահանրամատչելի, գրական-գեղարվեստական, երաժշտական, հումորային տարաբնույթ ծիջոցառումների կազմակերպում</p> <p>8.2. բարեգործական ձեռնարկումների անցկացում</p> <p>8.3. հանրապետության և հատկապես մարզի նշանավոր մարդկանց հետ հանդիպումների կազմակերպում</p>	<p>8. ուսանողի ճոտ մարդկային բարձր որակների, լայն աշխարհայացքի, հարուստ ներաշխարհի, կիրթ վարվելակերպի ձևավորում</p>	<p>8. ուս. տարվա ընթացքում</p>
9	<p>Արտաֆակուլտետային գործունեության ծավալում</p>	<p>9.1. Համահամալսարանական, ինչպես նաև ԳՊՀ առանձին ֆակուլտետների ուսանողության համար բանասիրական բնույթի գիտահանրամատչելի, գրական-գեղարվես-</p>	<p>9. ուսանողների պատասխանատվության աճ, գիտելիքների, ճշակույթի կրողի հոգեբանության ձևավորում, կրթական որակի բարձրացման ուղ-</p>	<p>9.1.-9.2., 9.6. ուսումնական տարվա ընթացքում 9.3. կիսամյակում</p>

ԳՊՀ 2011-2012 ուսումնական տարվա գործունեության հաշվետվություն

		<p>տական, ճրգութային ծիջոցառումների կազմակերպում</p> <p>9.2. ծարգի և հանրապետության այլ ուսումնական, գիտակրթական ու ծշակութային հաստատությունների, լրատվության ծիջոցների հետ համագործակցության ծավալում /փոխադարձ այցելություններ, համատեղ ծիջոցառումներ, գիտաժողովներ, ելույթներ/</p> <p>9.3. ուսանողների ծնողների հետ պարբերական հանդիպումների կազմակերպում, ուսումնական գործընթացի բարելավման ուղղությամբ ծնողական խորհրդի առաջարկությունների քննարկում ֆակուլտետի խորհրդի նիստում</p> <p>9.4. ֆակուլտետի շրջանավարտների խորհրդի ձևավորում, ուսման որակի բարձրացման ուղղությամբ այդ խորհրդի առաջարկների քննարկում</p> <p>9.5. Հանդիպումներ գործատուների հետ, ամփոփիչ ատեստավորման քննություններին գործատուների մասնակցության ապահովում</p> <p>9.6. դպրոցների հետ կապի ամրապնդում</p>	<p>ղությամբ հասարակական կարծիքի և պահանջարկի հաշվառում</p>	<p>երկու անգամ 9.4. նոյեմբերի կեսերին 9.5. ապրիլ-մայիս ամիսների ընթացքում</p>
--	--	---	--	---

Վ. Լ. ԿԱՏՎԱԼՅԱՆ
ԳՊՀ բանասիրական ֆակուլտետի դեկան

ՔՆՆԱՇՐՋԱՆԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ
ՉՄԵՌԱՅԻՆ ՔՆՆԱՇՐՋԱՆ

Սասնագիտություն, կրթական աստիճան, կուրս	Քննաշրջանին մասնակցել են	Անբավարար զնահատական ստացած ուսանողների թիվը	Գերազան- ցիկների թիվը	Առաջադիմու- թյան %-ը
Բակլավորիատ				
Հայրց լեզու և գրականություն				
2-րդ	26	-	8	80.77
3-րդ	35	-	16	94.29
4-րդ	31	-	6	80.65
Ռուսաց լեզու և գրականություն				
2-րդ	11	2	2	72.73
3-րդ	17	1	7	58.82
4-րդ	14	-	2	50.00
Անգլերեն լեզու և գրականություն				
2-րդ	27	5	4	59.26
3-րդ	24	-	4	79.17
4-րդ	29	3	9	37.93
ԸՆդամենը	214	11	58	70.09
Մագիստրատուրա				
Հայրց լեզու և գրականություն				
1-ին	12	-	11	91.67
2-րդ	7	-	7	100
Ռուսաց լեզու և գրականություն				
1-ին	11	-	4	45.45
2-րդ	9	1	2	22.22
Անգլերեն լեզու և գրականություն				
1-ին	13	2	2	69.23
2-րդ	5	-	5	100
ԸՆդամենը	57	3	31	68.42

ԱՄՍՈՒՅԻՆ ՔՆՆԱՇՐՋԱՆ

Սասնագիտություն, կրթական աստիճան, կուրս	Քննաշրջանին մասնակցել են	Անբավարար գնահատական ստացած ուսանողների թիվը	Գերազան- ցիկների թիվը	Առաջադիմու- թյան %-ը
Բակալավրիատ				
Հայոց լեզու և գրականություն 2-րդ 3-րդ	24 35	3 -	2 9	66.67 82.86
Ռուսաց լեզու և գրականություն 2-րդ 3-րդ	12 17	1 3	2 9	83.33 76.47
Անգլերեն լեզու և գրականություն 2-րդ 3-րդ	27 24	3 -	4 5	66.67 70.83
Ընդամենը	139	10	31	74.10
Մագիստրատուրա				
Հայոց լեզու և գրականություն 1-ին	11	-	6	63.64
Ռուսաց լեզու և գրականություն 1-ին	11	1	7	90.91
Անգլերեն լեզու և գրականություն 1-ին	12	1	3	91.67
Ընդամենը	34	2	16	82.35

2011/2012 ՈՒՍ. ՏԱՐՈՒՄ ՀՐԱՏԱՐԱԿՎԵԼ ԵՆ

Դասագիրք	Անագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Ձեկուցումների թեզիս
2	5	-	4	56	4

Ֆակուլտետում գործող ամբիոնների թիվը՝ 4

ՀԱՅՈՑ ԼԵՉՎԻ ԱՄԲԻՈՆ

Ամբիոնի վարիչ՝ *Համբարձումյան Վազգեն Գուրգենի, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր*

ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԸ

1. Կատվայան Վիկտոր Լիպարիտի - ԲՖ դեկան, բանասիրական գիտ. թեկնածու, դոցենտ, ԳՊՀ պրոֆեսոր
2. Ասոյան Թաթուլ Արտիկի - բանասիրական գիտ. թեկնածու, դոցենտ
3. Խանդանյան Սիրանուշ Կառլենի - ասիստենտ
4. Վարդանյան Գայանե Լևիկի - ասիստենտ
5. Սարգսյան Ռուզաննա Մարատի - ասիստենտ
6. Ղազարյան Օլգա Ալբերտի - դասախոս

ՀԱՄԱՏԵՂՈՂՆԵՐ

1. Ալեքսանյան Թամարա Կարապետի - մանկավարժական գիտ. թեկնածու
2. Ասատրյան Ծովինար Ժորայի - բանասիրական գիտ. թեկնածու
3. Իսկանդարյան Նաիրա Մանվելի - բանասիրական գիտ. թեկնածու, դոցենտ
4. Ներսիսյան Վարսիկ Արմենի - բանասիրական գիտ. թեկնածու

ԱՄԲԻՈՆՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Հայոց լեզվի գրական ձևերի ուսուցման, գրական լեզվի աղավաղումների դեմ պայքարելու ուղղությամբ գործնական աշխատանքների ապահովում:

ԳՊԴ 2011-2012 ուսումնական տարվա գործունեության հաշվետվություն

2. Գրական արևմտահայերենի նպատակային ուսուցում՝ համապատասխան գրականությունն ընթերցելու, թարգմանություններ կատարելու նպատակով:
3. Գրական լեզվից կատարվող անհարկի շեղումների, աղավաղումների մերժման տեսական հիմնավորում՝ լեզվի պատմության փաստերի հիման վրա:
4. Լեզվական սխալներից և վրիպակներից խուսափելու վարժությունների անցկացում գործնական պարապմունքների ձևով:
5. Բարբառների, ժամանակակից հայերենի կառուցվածքին, ինչպես նաև հայոց լեզվի դասավանդման ընթացքում նորագույն մեթոդների կիրառությանը առնչվող հարցերի ուսումնասիրություն:

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ծեռնարկ	Ուսումնամեթոդական ծեռնարկ	Գորված	Ձեկուցումների թեզիս
2	3	-	2	14	1

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՍԵԹՈՂԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

1. **Համբարձումյան Վ. Գ.** Զնդեվրոպական ծագման հայերեն արմատի տարբերակային վերականգնման խնդիրները // «Հայկազուններ» ժողովածու, ԳԱԱ Պատմության ինստիտուտ (հանձնված է տպագրության):
2. **Համբարձումյան Վ. Գ.** Հայերենի և միլերենի ծագումնային առնչությունների հարցը // Պատմաբանասիրական հանդես, N 2, Երևան, 2012 (հանձնված է տպագրության):
3. **Համբարձումյան Վ. Գ.** Նկատառումներ Սայաթ-Նովայի հայերեն խաղերի մի քանի բառի վերաբերյալ // ԳԱԱ Արվեստի ինստիտուտ, Սայաթ-Նովայի ծննդյան 300-ամյա հոբելյանին նվիրված գիտաժողովի նյութեր (հանձնված է տպագրության):
4. **Համբարձումյան Վ. Գ.** Նոր դիտարկումներ Եր. Մեղրեցու «Բառգիրք հայոցի» մի քանի բառի վերաբերյալ // ԳԱԱ Հր. Աճառյանի անվ. լեզվի ինստիտուտի «Ձահուկյանական ընթերցումներ» գիտաժողովի նյութեր (հանձնված է տպագրության):
5. **Կատվայան Վ. Լ.** «Ա» ձայնավորի դրսևորումները Բայազետի բարբառում և «Աճառյանի օրենքը» // Բանբեր Երևանի համալսարանի, Բանասիրություն, 2012, հ. 2, էջ 48-64:
6. **Կատվայան Վ. Լ.** «Եմ» բայը Բայազետի բարբառում // Բանբեր Երևանի Վ. Բրյուսովի անվ. պետական լեզվաբանական համալսարանի, Հայագիտություն և զուգադրական լեզվաբանություն, 2012, հ. 2, էջ 94-99:
7. **Ասոյան Թ. Ա., Վարդանյան Ն. Կ.** Միակազմ նախադասությունները և նրանց ոճական արժեքը Կ. Ջարյանի «Նավը լեռան վրա» վեպում // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, 2012, հ. 14:

8. Ներսիսյան Վ. Ա. Դարձվածքի ըմբռնումը հայ քերականագիտության մեջ. դարձվածքի ուսուցումն իբրև կրտսեր դպրոցականների խոսքի զարգացման միջոց // Խ. Աբովյանի անվ. հայկական պետական մանկավարժական համալսարանի հայոց լեզվի և տարրական ուսուցման մեթոդիկայի ամբիոնի 40-ամյակին նվիրված գիտաժողովի նյութեր (հանձնված է տպագրության):

9. Ներսիսյան Վ. Ա. Գրական արևելահայերենի **կարող եմ** հարադրության ձևաբանական արժեքի հարցը // ԳԱԱ Հր. Աճառյանի անվ. լեզվի ինստիտուտի «Ջահուկյանական ընթերցումներ» գիտաժողովի նյութեր (հանձնված է տպագրության):

10. Ներսիսյան Վ. Ա. Նորակազմ գոյականների գործածությունը և բառակազմական կաղապարները Հոլի. Օձնեցու երկերում // ԳՊԴ գիտական հոդվածների ժողովածու, 2012, հ. 14:

11. Ալեքսանյան Թ. Կ., Գյուրջինյան Դ., Գալստյան Ա., Մայրենի 6. դասագիրք հանրակրթական դպրոցի 6-րդ դասարանի համար // Երևան, «Էդիթ պրինտ», 2012, 240 էջ:

12. Ալեքսանյան Թ. Կ., Գյուրջինյան Դ., Գալստյան Ա., Մայրենի 5-6. Ուսուցչի ձեռնարկ (երկրորդ վերամշակված հրատարակություն) // Երևան, «Էդիթ պրինտ», 2012, 95 էջ:

13. Ալեքսանյան Թ. Կ. Խոսքի ուսուցումը միջին դպրոցում // Երևան, «Էդիթ պրինտ», 2012, 192 էջ:

14. Ալեքսանյան Թ. Կ. Պատմվածքի ուսուցումը միջին դպրոցում // «Լեզվաշխարհ», պրակ 5, 2011, էջ 39-42:

15. Ալեքսանյան Թ. Կ. Ռաֆայել Իշխանյանը՝ մանկավարժ, «Անկախ» շաբաթաթերթ, 29 մայիսի, 2012:

16. Իսկանդարյան Ն. Մ. Արժաթե երկրի դուստրը // ԳՊԴ գիտական հոդվածների ժողովածու, հ. 14:

17. Ասատրյան Ծ. Ժ., Ջաքարյան Լ. Ս., Ներսիսյան Ա. Ռ. // Որակի ապահովման մեթոդական ուղեցույց, Երևան, 2011, 164 էջ:

18. Խանդանյան Ս. Կ. Հայոց լեզվի գործնական աշխատանքների ձեռնարկ, Ձևաբանություն, Երևան, 2011, 280 էջ:

19. Խանդանյան Ս. Կ. Հայոց լեզվի գործնական աշխատանքների ձեռնարկ, Շարահյուսություն, Երևան, 2011, 152 էջ:

20. Խանդանյան Ս. Կ. Հայոց լեզվի գործնական աշխատանքների ձեռնարկ, Հնչյունաբանություն, բառագիտություն, Երևան, 2012, 176 էջ:

21. Խանդանյան Ս. Կ. Ածական որոշչի արտահայտությունը արդի հայերենի գոյականական բառակապակցություններում // ԳՊԴ գիտական հոդվածների ժողովածու, հ. 14:

22. Սարգսյան Ռ. Մ. Պատճառի և հիմունքի երկրորդականների փոխակերպման լեզվաոճական արժեքը // ԳԱԱ Հր. Աճառյանի անվ. լեզվի ինստիտուտի «Երիտասարդ լեզվաբանների հանրապետական գիտաժողովի նյութեր» (հանձնված է տպագրության):

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

Ամբիոնի վարիչ՝ **Գրիգորյան Վաչագան Ռաֆիկի,**
բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԸ

1. Ղազարյան Նորայր Կարապետի - բանասիրական գիտ. թեկնածու, ԳՊՀ դոցենտ
2. Ղարիբյան Ալինա Ամբիկի - ասիստենտ
3. Ղեջյան Լուսինե Խաչատուրի - բանասիրական գիտ. թեկնածու
4. Բագոյան Ալլա Սահակի - դասախոս
5. Փոշոտյան Լիլիթ Սարգսի - ասիստենտ

ՀԱՄԱՏԵՂՈՂՆԵՐ

1. Եղիազարյան Ազատ Կոմունարի - բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր
22. Бойнагрян В. Р., Гагинян П. Х., Давтян Л. Г., Бойнагрян А. В. Оценка опасности и риска формирования селей северных областях Армении. Селевые потоки: катастрофы, риск, защита // Труды II конференции, посвященной 100-летию со дня рождения С. М. Флейшмана, М., МГУ, 2012.

23. Ոսկանյան Ա. Ա. ՀՀ Գեղարքունիքի մարզի սահմանամերձ բնակավայրերի բնակչության միգրացիոն երևույթների վերլուծությունը // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, Երևան, 2012, N 14:

24. Մկրտչյան Լ. Ա. Զբոսաշրջության նորագույն ձևերի զարգացման միտումները Գեղարքունիքի մարզում // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, Երևան, 2012, N 14:

**ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱՅԻ
ԵՎ ՀԱՇՎՈՂԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ԱՄԲԻՈՆ**

Ամբիոնի վարիչ՝ **Մելիքյան Հենրիկ Աշոտի,**
տեխնիկական գիտությունների թեկնածու,
ԳՊՀ պրոֆեսոր

ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԸ

1. **Հակոբյան Մամիկոն Զալիբեկի** - տեխնիկական գիտությունների թեկնածու, ԳՊՀ պրոֆեսոր
2. **Հակոբյան Մաքսիմ Ասատուրի** - տեխնիկական գիտությունների թեկնածու, ավագ գիտաշխատող, ԳՊՀ դոցենտ
3. **Սուսախանյան Վիկտոր Վարդգեսի** - ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու, դոցենտ
4. **Մկրտչյան Լալա Արշալույսի** - լաբորանտ
5. **Կարաթյան Սուսաննա Սուրենի** - լաբորանտ
6. **Գևորգյան Գնել Գագիկի** - լաբորանտ

ՀԱՍԱՏԵՂՈՂՆԵՐ

1. **Արտեմյան Ռոբերտ Նորիկի** - տեխնիկական գիտությունների թեկնածու, դոցենտ, ԳՊՀ պրոֆեսոր
2. **Խուրշուդյան Արմեն Կորյունի** - տեխնիկական գիտությունների թեկնածու, դոցենտ
3. **Դարբինյան Ալբերտ Սարգսի** - ԳՊՀ պրոֆեսոր
4. **Ղուկասյան Ելենա Արարատի** - դասախոս

**ԱՄԲԻՈՆՈՒԽ ԿԱՏԱՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

1. Ինֆորմացիոն տեխնոլոգիաներ
2. Կառավարման ավտոմատացված համակարգեր
3. Ծրագրային ապահովման մշակում
4. WEB-տեխնոլոգիաներ

ՀՐԱՏԱՐԱՎԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Պատասխան	Սենագրություն	Ուսումնական ծեղնարկ	Ուսումնամեթոդական ծեղնարկ	Հողված	Ձեկուցումների թեզիս
-	-	-	1	9	-

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱՎԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

1. Հակոբյան Մ. Զ. Միկրոկլիմայական պայմանների հետազոտումը LAB-VIEW միջավայրում // ԵՊԾՀ գիտական հոդվածների լրաբեր, սերիա S, Երևան, 2012, էջ 217-222:

2. Հակոբյան Մ. Զ. Միկրոկլիմայական պայմանների հետազոտումը LAB-VIEW փաթեթի կիրառմամբ // Գործնական աշխատանքների կատարման մեթոդական ցուցումներ, Երևան: Ճարտարագետ, 2012, էջ 42:

3. Մելիքյան Յ. Ա. Ավանդական քննական համակարգից անցում համակարգչային թեստավորման համակարգին // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, Երևան: Իրավունք, 2012, N 14:

4. Մելիքյան Յ. Ա. Գիտելիքների համակարգչային թեստավորման որոշ հարցեր // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, Երևան: Իրավունք, 2012, N 14:

5. Մելիքյան Յ. Ա. Համակարգչային թեստային առաջադրանքների որակի գնահատման մեթոդիկա // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, Երևան: Իրավունք, 2012, N 14:

6. Մելիքյան Յ. Ա. Թեստային առաջադրանքների մշակման սկզբունքների և փուլերի մասին // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, Երևան: Իրավունք, 2012, N 14:

7. Մելիքյան Յ. Ա., Ղուկասյան Ե. Ա., Ավետիսյան Վ. Կ., Նավոյան Ռ. Լ., Կռոյան Ա. Վ. Examination-GSU համակարգի կառուցվածքը, ֆունկցիաները և գործառության սկզբունքները // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, Երևան: Իրավունք, 2012, N 14:

8. Մուսախանյան Վ. Վ., Ամիրխանյան Ս. Յ., Եղիազարյան Բ. Ա. Ռեյատիվիստական լիցքավորված մասնիկը խաչվող էլեկտրամագնիսական դաշտերում: Դասական և քվանտային տեսակետներ // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, Երևան: Իրավունք, 2012, N 14:

9. Ավետիսյան Վ. Կ. EXAMINATION-GSU համակարգի ցանցային ադմինիստրատորի գործառույթները // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, Երևան: Իրավունք, 2012, N 14:

10. Բաղդոյան Շ. Գ. Մոնիտորների հիմնական տեսակների համեմատական վերլուծություն // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, Երևան: Իրավունք, 2012, N 14:

ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Դեկան՝ **Ղաջոյան Համլետ Գրիշայի**, փիլիսոփայական
գիտությունների թեկնածու, ԳՊՀ պրոֆեսոր
Դեկանի տեղակալ՝ **Գևորգյան Գոհար Վոլոդյայի**

ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՈՒՄՆԵՐԸ

Դասիչ	Մասնագիտություն
030400	Պատմություն
030500	Իրավագիտություն
051100	Մանկավարժություն և մեթոդիկա /տարրական կրթության/

Մասնագիտացումներ՝ (բակալավրի աստիճան)	մանկավարժություն իրավագիտություն պատմություն
--	--

(մագիստրոսի աստիճան)	մանկավարժություն իրավագիտություն պատմություն
----------------------	--

Ուսանողների թիվը՝ 239
Շրջանավարտների թիվը՝ 92

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ
2011-2012 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ 2012-2013 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ
ՉԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԵՏԱԿԱՐԳԸ

2011-2012 ուսումնական տարվա ընթացքում նախապատրաստվել ենք ԳՊԴ ենթակառուցվածքային հավատարմագրմանը և այդ նպատակով իրականացրել ենք ինքնավերլուծության աշխատանքներ, բացահայտել ֆակուլտետի ուժեղ ու թույլ կողմերը, թե՛ ներքին և թե՛ արտաքին հնարավորությունները, չօգտագործված ռեսուրսները: Որպես մեթոդաբանական հիմք՝ ամրագրում ենք այն դրույթը, որ զարգացման հայեցակարգը, ինքնավերլուծությունը, հավատարմագրմանը նախապատրաստվելը և ամենօրյա պրակտիկ աշխատանքներն ունեն մեկ միտում և ուղղվածություն, այն է՝ ուսման արդյունավետության բարձրացում, կրթության որակի ապահովում: «Ուսման արդյունավետություն» հասկացությունը բովանդակային առումով ավելի նեղ հասկացություն է, քան ուսման որակը, սակայն ավելի առարկայական, շոշափելի ու չափելի է: «Որակը» չափազանց լայն ու ընդհանրական հասկացություն է, որը հանդես է գալիս որպես գլխավոր նպատակակետ և գտնվում է բոլոր աշխատանքների առանցքում: Միայն համախմբված ու նվիրված աշխատանքի ընթացքում է զգացվում, որ ուսման որակին միտված ջանքերն ունեն ներգործուն ուժ, շարունակական պահպանվող աշխատանքային ռիթմ, որի վրա էլ հենց շեշտադրումը կատարում ենք ընթացիկ տարում: Հաշվետու տարում որակի բարելավմանը ուղղված գործունեության ծավալը ցույց տվեց, որ այն համախմբված, միաժամանակ պատվախնդիր ու լուրջ աշխատանք է: Հենց նման մոտեցումն էլ մեզ ստիպեց մի շարք հարցերի նկատմամբ առավել ուշադիր լինել, խորքայինը տեսնել, հատկապես այն, ինչը նախկինում այնքան էլ լուրջ մտահոգության տեղիք չէր տվել, կամ էլ ինքնին լուծված էր համարվել: Այդպիսի հարցերից մեկը, որը հավատարմագրման գործընթացում առանցքային տեղ է գրավում, հասարակության հանդեպ բուհի ֆակուլտետների պատասխանատվությունն է, որն ունի երկակի բնույթ. ձևավորվում է հասարակական կարծիքի միջոցով և ձևավորում է հասարակական կարծիք, ինչը շատ կարևոր է: Մյուս խնդիրը ուսանողների պատշաճ մասնագիտական գիտելիքներն են և հարկ եղած դեպքում դրանք ցուցաբերելը, «մնացորդային գիտելիքների» առկայությունը: Այս առումով Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետը 2 թիրախային խնդիր ունի, նախ զուտ մասնագիտական գիտելիքներ հաղորդելը պատմությունից, իրավագիտությունից և մանկավարժությունից, մյուսը՝ ընդհանուր աշխարհայացքային գիտելիքներ ապահովելն է: Մենք պարտավոր ենք համակողմանի կրթություն տալ, որը ֆակուլտետի պարագայում կնշանակի պատմության դեպքերն ու ընթացքը, կամ իրավական նորմերն ու ինստիտուտներն իմացող և տեղին կիրառող մասնագետներ, սկսած դասատվության ընթացքը լավագույն ձևով ավարտին հասցնող մանկավարժներ, որոնք

կցուցաբերեն նաև պատշաճ վարք: Այդ հատկանիշներից մեկի թերի լինելու դեպքում կտուժի շրջանավարտի որակը: Նախորդ տարի պարտավորվեցինք 70% առաջադիմություն ապահովել, ինչը կատարված է: Այժմ պարտավորվում ենք պահպանել 70%-ի սահմանը: Առաջին կիսամյակի առաջադիմությունը կազմեց 63%, իսկ 70%-ի սահմանագիծը ակնկալում էինք հաղթահարել 2-րդ կիսամյակում: Հայեցակարգում այդ տարբերակումը ըստ կիսամյակների շեշտադրված էր: Արդյունքն ակնհայտ է՝ 78% առաջադիմություն, ընդ որում՝ ամենաբարձր ցուցանիշը վերջին տարիների ընթացքում: Չի կարելի անտեսել կազմակերպչական այն աշխատանքները, որոնք իրենց ազդեցությունը ունեցան նման ցուցանիշի հասնելու համար: Այսպիսով, 70%-ի սահմանագիծը պահելը մեծ ջանքեր ու աշխատանք է պահանջում: Դրա ռեալ երաշխիքը ֆակուլտետում այն դրական, ոգևորիչ միտվածությունն ու շարժումն է, որ ցուցաբերում են 100% առաջադիմությամբ և նույն ոգին պահպանած 3 կուրսեր՝ իրավաբանություն, պատմություն և մանկավարժություն բաժինների 3-րդ կուրսերը: Նույնատիպ ձգտում նկատվում է նաև պատմության բաժնի 4-րդ կուրսում:

2011-2016թթ. զարգացման հայեցակարգում ամրագրել ենք, որ ընդհանուր առաջադիմության ցուցանիշի բարձրացմանը զուգահեռ պետք է բարձրացնենք նաև գերազանց և լավ գնահատականների տեսակարար կշիռը ընդհանուր ցուցանիշի մեջ, այն տեղայնացնելով 2012-2013 ուսումնական տարվա հայեցակարգում, որտեղ նշված է, որ այդ ցուցանիշը չպետք է ցածր լինի 50% սահմանագծից: 2011-2012 ուսումնական տարում այն կազմեց 47%:

Հաշվետու ժամանակահատվածում քննություններին մասնակցել են 275 ուսանողներ, հարգելի պատճառով չեն ներկայացել 18-ը, անհարգելի պատճառով՝ 36-ը: Սա մտահոգիչ է, և ուսումնասիրությունը ցույց է տվել, որ դրա պատճառը քննություններին ոչ բավարար նախապատրաստվելն է: Դա հաստատվում է հետևյալ փաստով. 36 ուսանողներից 23-ը առաջին լուծարային շրջանում ստացան անբավարարներ, մյուսները՝ միայն բավարարներ: Անգամ այս պարագայում անբավարար ստացած ուսանողների թիվը 4 անգամ պակաս է նախորդ տարվա ցուցանիշից: Ամփոփիչ քննությանը անհարգելի չներկայանալու դեպքերն ազդում են ուսման ընդհանուր առաջադիմության վրա, դա ակնհայտ դրսևորվեց հաշվետու ժամանակաշրջանի առաջին կիսամյակում, երբ պատմություն բաժնի 4-րդ կուրսը ունեցավ 46,6 % առաջադիմություն, այն դեպքում, երբ քննաշրջանի ընթացքում ոչ մի անբավարար գնահատական չկար, քանի որ 15 ուսանողներից քննաշրջանին մասնակցել էին միայն 7-ը, 3-ը հարգելի պատճառով չէին ներկայացել, 5-ը՝ անհարգելի: Վերջիններս 1-ին լուծարային շրջանում կրկին ստացան անբավարար գնահատականներ, այսինքն՝ գործ ունենք թաքնված անբավարարներ երևույթի հետ, որի հետևանքով քննաշրջանի արդյունքները բաց դռներից ու լուծարքից առաջ դառնում են ոչ այնքան հավաստի ու ամբողջական: Ընթացիկ տարում մինչ քննաշրջանը կազմակերպչական ու բացատրական լուրջ աշխատանքներ են տարվել: Միայն գերազանց գնահատականներ են ստացել 67 ուսանողներ, գերազանց և լավ՝ 61-ը, ինչը կազմում է 47%: Նախորդ տարիների հետ համեմատած, այն էական փոփոխություն չի կրել,

մինչդեռ բավարար ստացածների թիվը խիստ կրճատվել է՝ ի հաշիվ խառը գնահատականներ ստացած 9 ուսանողների:

Նախորդ տարվա համեմատ դրական տեղաշարժ նկատվեց անհատական աշխատանքների կատարման որակը բարձրացնելու և նշված ժամկետում ներկայացնելու առումով: Տարեկան կտրվածքով նախորդ ժամանակաշրջանում գրանցված 30 ուշացրած անհատական աշխատանքների փոխարեն եղան 17-ը: Աշխատանք է տարվել ուսանողի մեջ հետազոտական և ստեղծագործական աշխատանքներ կատարելու հետաքրքրություն առաջացնելու ուղղությամբ: Հաշվետու տարում թեստային եղանակով ամփոփիչ քննություն կազմակերպվել է 3 դասընթացից: Վերլուծությունից պարզվում է, որ թեստային քննությունը ունի թերություն. այն չի նպաստում ուսանողների ստեղծագործական և տրամաբանական մտածողության բացահայտմանը: Աշխատանքներ են տարվել ակտիվության գործոնը գնահատելու գործընթացի բարելավման ուղղությամբ: Հաշվետու ժամանակաշրջանում դասախոսների մի մասը օգտվեց ժամանակակից տեսահամակարգչային միջոցներից՝ դասը հետաքրքրիչ և մատչելի անցկացնելու նպատակով: Սակայն սեմինար պարապմունքները ժամանակակից մեթոդներով ու տեխնոլոգիաներով ոչ միշտ են անցկացնում պատմության ամբիոնի դասախոսները:

Ամբիոններում դեռևս թերություններ կան անհատական աշխատանքների ժամանակին ընդունման և հաշվառման գործընթացներում, ինչից էլ օգտվում են անբարեխիղճ ուսանողները:

Ամբիոնների պրոֆեսորադասախոսական անձնակազմի մասնակցությամբ կատարվել են կրթության որակի բարելավման աշխատանքներ: Ուսանողների հարցումների արդյունքների վերլուծությունից ելնելով՝ մեկ դասախոսի ծառայությունից հրաժարվեցինք: Իրավագիտության ամբիոնում դասախոսական կազմը համալրվել է ևս 1 դասախոսով, ով ունի իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: Դասախոսները մասնակցել են հանրապետական և միջազգային գիտաժողովների: Պաշտպանվել է 1 դոկտորական ատենախոսություն՝ իրավագիտություն մասնագիտությամբ: Դասախոսների կողմից կատարվել են նաև հետազոտություններ, վերլուծություններ, տպագրության են ներկայացվել գիտահետազոտական, ուսումնամեթոդական աշխատանքներ:

Ֆակուլտետը պարբերաբար կազմակերպում է հանդիպումներ շրջանավարտների հետ՝ քննարկելով նրանց առաջարկություններն ու դիտողությունները:

Հաշվետու ժամանակահատվածում դասերից անհարգելի բացակայությունների պատճառով բազմաթիվ ուսանողներ ստացել են կարգապահական տույժեր: Դրանց մեծ մասը իրավագիտություն բաժնի 4-րդ կուրսի ուսանողներն էին, որոնցից 25-ը ստացավ նկատողություն, իսկ 20-ը՝ խիստ նկատողության: Նախորդ տարվա համեմատ էական փոփոխություն չի կրել զինվորական ծառայության զորակոչվողների թիվը՝ 29 ուսանող, նախորդ տարում՝ 32 ուսանող: Զինվորական ծառայությունից վերադարձել է 5 ուսանող (նախորդը՝ 8): Տարբեր պատճառներով հեռացվել են 10 ուսանողներ: Հանրապետության այլ բուհերից

և ԳՊԴ այլ ֆակուլտետներից Յունանիտար մասնագիտությունների ֆակուլտետ են տեղափոխվել 22 ուսանողներ, նախորդ տարում՝ 13: Տեղափոխվածների գերակշռող մասը բաժին է ընկնում իրավագիտություն մասնագիտությանը: Նախորդ տարիներին տարբեր պատճառներով ուսումը ընդհատողներից վերականգնվել է 6 ուսանող, իսկ ամփոփիչ ատեստավորմանը մասնակցելու թույլտվություն են ստացել 2-ը:

Հաշվետու ուսումնական տարում ակտիվորեն աշխատել են ֆակուլտետի ուսանողական խորհուրդն ու ուսանողական գիտական ընկերությունը: Ուսանողական գիտական ընկերության կողմից կազմակերպած կոնֆերանսին գիտական վերլուծություններով հանդես եկան մանկավարժություն և մեթոդիկա (տարրական կրթության) մասնագիտության մագիստրոսները: Իրավագիտության բաժնի 25 ուսանողներ մասնակցեցին Ամերիկյան իրավաբանների ընկերակցության կազմակերպած աշնանային և գարնանային դպրոցների դասընթացներին: Ֆակուլտետում կազմակերպվել են գրական - գեղարվեստական բազմաթիվ միջոցառումներ:

ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ 2012-2013 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ

Յունանիտար մասնագիտությունների ֆակուլտետի 2012-2013 ուսումնական տարվա զարգացման հայեցակարգը նախատեսում է աշխատանքներ՝ հետևյալ ոլորտներում.

1. Ուսման գործընթացի կազմակերպման և կրթության որակի բարելավման ոլորտում.

1.1. Հանրային վստահության բարձրացումը և սոցիալական պատասխանատվությունը համարել ֆակուլտետի գործունեության կարևոր խնդիրներից մեկը:

1.2. Ֆակուլտետում բոլոր կարգի աշխատանքների կազմակերպման և միջանձնային հարաբերությունների ձևավորման հիմքում դնել հրապարակայնության, թափանցիկության և հաշվետվողականության սկզբունքների ապահովումը՝ դրանք դիտելով որպես կրթության ոլորտում ժողովրդավարական արժեքների արմատավորման երաշխիք:

1.3. Ուսման որակի բարձրացմանը նպատակաուղղել ֆակուլտետի և ամբիոնների ողջ գործունեությունը:

1.4. Ուսանողների մեջ ամրապնդել ուսման կարևորության գիտակցում, որակյալ գիտելիքի արժևորում, ուսման նկատմամբ անձնական պատասխանատվություն:

1.5. 2012-2013 ուսումնական տարում կիսամյակային և տարեկան ցուցանիշներով ուսման առաջադիմությունը պահել 70%-ի սահմաններում:

1.6. Ուսման ընդհանուր առաջադիմության ցուցանիշի բարձրացմանը զուգահեռ հիմնական ուշադրությունը դարձնել միայն գերազանց և գերազանց ու լավ գնահատականների տեսակարար կշռի ավելացմանը՝ այն պահելով 50%-ի սահ-

մաններում:

1.7. Ֆակուլտետում ստեղծել մրցակցային կայուն մթնոլորտ ուսման բարձր՝ 100%-անոց առաջադիմության ձգտող խմբերի միջև: Հասնել այն բանին, որ յուրաքանչյուր կիսամյակում առնվազն 2-3 խմբեր ունենան նմանատիպ ցուցանիշ: 100%-անոց առաջադիմություն ունեցող խմբերին ներկայացնել դրամական և բարոյական խրախուսանքի:

1.8. Որակի ապահովումը համարել Հունանիտար բարձրագույն կրթության ընդհանուր կողմնորոշիչ, ֆակուլտետի խորհրդում և ամբիոնների նիստերում պարբերաբար քննարկել ուսման որակի բարելավմանը ուղղված հարցեր:

1.9. «Որակ» հասկացության տարբեր ըմբռնումներն ու իմաստները համատեղել՝ մեկ ընդհանուր ըմբռնման հանգելու նկատառումներով, դասախոսական անձնակազմի, ինչպես նաև առաջատար ու շահագրգիռ ուսանողների մասնակցությամբ կազմակերպել քննարկումներ «Որակ հասկացության առանձնահատկությունները ուսումնական հաստատությունում», «Հունանիտար մասնագիտությունների առարկաների որակ» թեմաներով:

1.10. Հավատարմագրման գործընթացին պատշաճ նախապատրաստվել և ինքնավերլուծության չափորոշիչների յուրաքանչյուր դասի համալսարանական ու ֆակուլտետային քննարկումները նպատակաուղղել գործնական, պրակտիկ խնդիրների աստիճանական լուծմանը, ուսման որակի բարելավմանը, ֆակուլտետի գործունեության մեջ ուժեղ և թույլ կողմերի բացահայտմանը, ներքին և արտաքին հնարավորությունների ու չօգտագործված ռեսուրսների հայտնաբերմանը, ինչպես նաև խոչընդոտող հանգամանքների հաղթահարմանը և հնարավոր վտանգներից խուսափելուն: Աշխատանքներին հնարավորինս ներգրավել դասախոսական անձնակազմին և ուսանողությանը, առավել արդյունավետ օգտագործել վերջիններիս ներուժը:

1.11. Ֆակուլտետը հենվելու է ուսումնական գործունեության երկբևեռ համակարգի վրա՝ խուսափելով «դասախոսակենտրոն» և «ուսանողակենտրոն» համակարգի միակողմանի ընդունումից: Մի բևեռում դասախոսն է, մյուս բևեռում՝ ուսանողը, ընդ որում՝ ուսանողների ակտիվությունը մշտապես բարձրացնելու նպատակաուղղվածությամբ:

1.12. Դասատվության ողջ գործընթացը կազմակերպել ժամանակակից մեթոդներով՝ բանավեճի, մտագրոհի, փոխներգործուն մեթոդների, կլոր սեղանի, համեմատական վերլուծության և ավանդական ձևերի արդյունավետ համադրմամբ: Նորարարությունը և կրթական արդի տեխնոլոգիաների արդյունավետ կիրառումը նպատակաուղղել ուսման որակի բարձրմանը:

1.13. Ելնելով պատմության մասնագիտության առանձնահատկություններից՝ դասապրոցեսում հաճախակի օգտագործել արխիվային փաստաթղթերի պատճեններ և ցուցադրել վավերագրական տեսաֆիլմեր:

1.14. Կարևորել ուսանողներին՝ պրոֆեսորադասախոսական անձնակազմի կողմից գիտելիքների փոխանցման, իսկ ուսանողների կողմից՝ նոր գիտելիքների ձեռքբերման գործառույթները, ինչպես նաև չանտեսել սոցիալական փորձի փոխանցման անհրաժեշտությունը:

1.15. Ուսումնական պլանների և առարկայական ծրագրերի պարբերաբար լրամշակումներն ու բարեփոխումները նպատակաուղղել գիտելիքների «պիտանելիությանը», բացառել ժամանակավրեպ, «բարոյապես մաշված» գիտելիքների մատուցումը:

1.16. Պարբերաբար ուսումնասիրել Հայաստանի Հանրապետության պետական բուհերի և արտերկրի առաջատար բուհերի համանման մասնագիտությունների առաջավոր փորձը և համադրել:

1.17. Աստիճանաբար անցնել դասապրոցեսում ժամանակակից տեխնիկական միջոցների առավելագույն օգտագործմանը՝ դասաժամերը ավելի աշխույժ և հրապուրիչ դարձնելու նպատակով:

1.18. Հսկողական և բացատրական աշխատանքների զուգակցմամբ, ինչպես նաև բացակայությունների պատճառների պարբերաբար ուսումնասիրման և վերլուծության շնորհիվ հասնել դասաժամերին առավելագույն հաճախելիության ապահովմանը: Դասերի հաճախելիությունը դիտել իբրև ուսանողների գիտակցական մակարդակի դրսևորման ձև:

1.19. Հետևողական և նպատակասլաց աշխատանքի շնորհիվ հասնել նրան, որ հատկապես իրավագիտություն մասնագիտական խմբերում վերացվի տարբերությունը ընդգծված «առաջատար» և «հետնապահ» ուսանողների միջև: Ակադեմիապես թույլ, ինչպես նաև ծուլություն դրսևորող ուսանողների հետ տանել հետևողական աշխատանք: Բարձր առաջադիմություն ունեցող և աշխատասեր ուսանողներից կազմել խմբեր՝ մշտապես անբավարար և ցածր գնահատական ստացող ուսանողներին օգնելու համար:

1.20. Մասնագիտական և ոչ մասնագիտական բոլոր առարկաների կիսամյակային և տարեկան արդյունքներով կատարել մշտադիտարկում՝ պարզելու, թե որ առարկաներից են մշտապես ստանում անբավարար և ցածր գնահատականներ, ըստ այդմ ձեռնարկել համապատասխան միջոցներ, ընդհուպ մինչև առարկայական ծրագրերի լրացուցիչ քննարկումներ, հատկացված դասաժամերի վերանայումներ, ինչպես նաև կատարել դասալսումներ, հաշվի առնել նաև ուսանողների դիտարկումները:

1.21. Կատարողական կարգապահության բարձրացման նպատակով ուժեղացնել վերահսկողությունը ուսանողներին տրվող առաջադրանքների (անհատական, կուրսային, դիպլոմային աշխատանքների) սահմանված ժամկետներում կատարման, ինչպես նաև ընդունման, գնահատման, արդյունքների հրապարակման, տեղեկագրում գրանցման աշխատանքների նկատմամբ:

1.22. Միջանկյալ քննությունների կազմակերպման և անցկացման ձևերը համարել կրեդիտային ուսուցման համակարգում խոցելի ու կատարելագործում պահանջող գործընթաց և ակադեմիական քաղաքականության վարչության հետ համագործակցված փնտրել առավել արդյունավետ և օպտիմալ տարբերակներ:

1.23. Մագիստրատուրայում ուսումը շարունակել ցանկացողների նկատմամբ ցուցաբերել առանձնակի մոտեցում, երաշխավորել բացառապես բարձր և միջին որակավորման գնահատական ունեցող, հասարակական ակտիվ դիրքորոշում ցուցաբերած ուսանողներին: Մագիստրոսական կրթական ծրագրերում

կարևորել հետազոտական աշխատանքի բաղադրիչի դերը:

1.24. Ֆակուլտետի գործունեության արդյունավետության լավագույն երաշխիքը համարել բարձր, միաժամանակ կայուն աշխատանքային ռիթմի և առողջ բարոյահոգեբանական մթնոլորտի պահպանումը:

1.25. Չանտեսել սերնդափոխության խնդիրը, ուշադրության կենտրոնում պահել երիտասարդ կադրերով աշխատակազմի համալրումը: Բազմափորձ անձանց ուժերը նպատակամղել երիտասարդ աշխատակիցների մասնագիտական աճը ապահովելուն, ինչպես նաև վերջիններիս թեկնածուական ատենախոսությունների ղեկավարների պարտականությունները ստանձնելու համար:

1.26. Ամփոփիչ ատեստավորմանը ուսանողներին նախապատրաստելու առավելագույն ջանքերի գործադրման և չօգտագործված հնարավորությունների արդյունավետ օգտագործման շնորհիվ հասնել ամփոփիչ ատեստավորման դրական արդյունքների:

1.27. Ֆակուլտետի գիտամանկավարժական կազմի մշտական մասնակցության ապահովումը միջազգային, հանրապետական և ներբուհական գիտաժողովներին, ինչպես նաև հանրապետության առաջատար և միջազգային գիտական պարբերականներում հոդվածների հրատարակումը համարել ամբիոնների ու ղեկնատի հոգածության առարկան, ըստ այդմ` ԳՊԴ տարեկան գիտական հոդվածների ժողովածուում առնվազն 1 հոդվածի տպագրումը դիտարկել որպես բուհի հանդեպ պատվախնդրության դրսևորման ձևերից մեկը:

1.28. Հասարակական գիտությունների ամբիոնի գործունեությունը նպատակամղել ուսանողների աշխարհայացքի խորացմանն ու ընդլայնմանը, արագ փոփոխվող հասարակական հարաբերություններում կողմնորոշմանն ու ճիշտ որոշումների կայացմանը:

1.29. Կարևորել «մնացորդային գիտելիքը» որպես գիտելիքների կուտակման և հետագա պրակտիկ օգտագործման հուսալի հենք և փնտրել այն ամրակայելու և ստուգելու նոր ձևեր ու մեթոդներ:

1.30. Ելնելով ֆակուլտետում դասավանդվող մասնագիտությունների բնույթից` սերտ համագործակցություն ապահովել տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև հանրապետական ու տեղական իրավապահ մարմինների հետ, ինչպես պրակտիկաների անցկացման, այնպես էլ ապագա գործատուների շահադրդման նկատառումներով:

1.31. ՀՀ Գեղարքունիքի մարզի տարածքում գտնվող դպրոցներ շարունակական այցելություններ կազմակերպել, պրոֆեսորադասախոսական անձնակազմի ուժերով տարբեր մասնագիտությունների գծով ուսուցիչներին հետաքրքրող թեմաներով դասախոսություններ անցկացնել:

1.32. Ելնելով ժամանակի ու իրադրության պահանջներից` ֆակուլտետի խորհրդի միստերում հաճախակի քննարկել և վերանայել բազմագործոն գնահատման համակարգի յուրաքանչյուր գործոնին տրվող արժեքը, այն նպատակաուղղել ուսման որակի ապահովմանը, այս առումով սերտորեն համագործակցել ԳՊԴ ակադեմիական քաղաքականության վարչության հետ:

1.33. Ուսանողների գիտելիքների և կարողությունների ամրապնդմանը նպա-

տակաուղղել մասնագիտական պրակտիկաների արդյունավետ անցկացումը, այդ առումով պայմանագրեր կնքել հանրապետության, մարզի և քաղաքի տարածքում գործող իրավապահ, կրթական և մշակութային հաստատությունների հետ, որոնք պոտենցիալ հնարավորություն ունեն շրջանավարտներին, օբյեկտիվ գնահատելուց զատ, ապահովել աշխատանքով:

1.34. Ամփոփիչ ատեստավորման գործող նոր կարգի՝ հանձնաժողովների կազմի առնվազն 50%-ը այլ կազմակերպություններից պահանջի պայմաններում լուրջ ուշադրություն դարձնել հանձնաժողովների կազմի ընտրությանը՝ նկատի ունենալով ոչ միայն մասնագիտական բարձր որակները, այլև բարոյականային հատկանիշները:

2. Գիտելիքների նկատմամբ ուսանողների հետաքրքրությունն ու շահագրգռվածությունը ապահովելու ոլորտում.

2.1. Ֆակուլտետում պահպանել կրթությունն ու գիտելիքը արժևորող կայուն միջավայր, ուսման նկատմամբ գիտակից և պատասխանատու վերաբերմունք:

2.2. Խրախուսել ուսանողների և դասախոսների նախաձեռնողականությունը, ստեղծագործական մոտեցումները, նորարարությունը:

2.3. Ուսումնասիրել և փորձարկել այն բոլոր ժամանակակից մեթոդները, որոնք կրթությունը դարձնում են առավել գրավիչ ու հետաքրքիր:

2.4. Կատարել համապատասխան բացատրական և կազմակերպչական աշխատանք՝ ուսանողներին ՀՀ ազգային գրադարանից և ազգային արխիվից օգտվելու համար:

2.5. Առավելագույնս օգտագործել իրավաբանական կլինիկայի հնարավորությունները, «Ամառային» և «Զմեռային» դպրոցներին ապահովել իրավագիտության բաժնի լավագույն ուսանողների առավելագույն մասնակցություն:

2.6. Ուսանողների տարաբնույթ խնդիրների և կրթական կարիքների ուսումնասիրում, սոցիալական օժանդակության հասցեագրված ծրագրերից օգտվելու հնարավորության ընձեռում:

2.7. Դասախոսությունների, ուսումնական այլ նյութերի էլեկտրոնային տարբերակներից օգտվելու հնարավորությունների օգտագործում, դրանց մատչելիության ապահովում:

3. Ուսանողական առօրյան հետաքրքիր դարձնելուն, գիտահետազոտական հմտություններ ձևավորելուն և զեղագիտական ճաշակը բարձրացնելուն ուղղված աշխատանքների ոլորտում.

3.1. Ֆակուլտետային բոլոր գործընթացներում ապահովել ուսանողության ակտիվ դերակատարությունը՝ հատկապես ուշադրության կենտրոնում պահելով առաջին կուրս ընդունված ուսանողներին:

3.2. Ուսանողական խորհրդի և ուսանողական գիտական ընկերության դերի բարձրացումը նպատակաուղղել ուսման որակի բարելավմանը, ուսանողներին գիտահետազոտական աշխատանքների մեջ ներգրավմանը:

Հ. Գ. ՂԱԶՈՅԱՆ

ԳՊԴ հումանիտար մասնագիտությունների
ֆակուլտետի ղեկավար

ՔՆՆԱՇՐՋԱՆԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ
ՁՄԵՌԱՅԻՆ ՔՆՆԱՇՐՋԱՆ

Մասնագիտություն, կրթական աստիճան, կուրս	Քննաչրջանին մասնակցել են	Անբավարար գնահատական ստացած ուսանողների թիվը	Գերազան- ցիկների թիվը	Առաջադիմու- թյան %-ը
Բակլավրիատ				
Իրավագիտություն				
2-րդ	21	2	7	71
3-րդ	32	1	8	75
4-րդ	43	10	8	39.5
Պատմություն /իրավունքի հիմունքներ/				64.7
2-րդ	17	-	4	100
3-րդ	18	2	7	66.6
4-րդ	15	-	4	46.6
Սանկվարժություն և մեթոդիկա /տարրական կրթության/				
2-րդ	6	-	1	100
3-րդ	5	-	1	80
4-րդ	16	5	2	62.5
Ընդամենը	173	20	42	63
Մագիստրատուրա				
Իրավագիտություն				
1-ին	30	5	4	66.6
2-րդ	10	-	2	50
Պատմություն /իրավ. հիմ./				
1-ին	4	-	2	100
2-րդ	5	-	5	100
Սանկ. և մեթոդ. /տարր. կրթ./				
1-ին	2	-	1	100
2-րդ	1	-	1	100
Ընդամենը	52	5	15	71

ԱՄԱՌԱՅԻՆ ՔՆՆԱՇՐՋԱՆ

Մասնագիտություն, կրթական աստիճան, կուրս	Քննաչրջանին մասնակցել են	Անբավարար գնահատական ստացած ուսանողների թիվը	Գերազանցիկների թիվը	Առաջադիմության %-ը
Բակալավրիատ				
Իրավագիտություն 2-րդ	22	-	6	100
3-րդ	32	-	8	56
Պատմություն/իրավունքի հիմունքներ/ 2-րդ	16	-	5	100
3-րդ	18	5	4	56
Մանկավարժություն և մեթոդիկա /տարրական կրթության/ 2-րդ	6	2	-	67
3-րդ	4	-	1	100
Ընդամենը	98	7	24	78
Մագիստրատուրա				
Իրավագիտություն 1-ին	26	3	7	85
Պատմություն /իրավ. հիմ./ 1-ին	4	-	4	100
Ման. և մեթոդ. /տարր. կրթության/ 1-ին	2	-	2	100
Ընդամենը	15	3	13	88

2011/2012 ՈՒՄ. ՏԱՐՈՒՄ ՀՐԱՏԱՐԱԿԿԵԼ ԵՆ

Դասագիրք	Սենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հորված	Ձեկուցումների թեզիս
-	1	-	-	58	-

Ֆակուլտետում գործող ամբիոնների թիվը` 3

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄԲԻՈՆ

Ամբիոնի վարիչ՝ **Քուրքյան Լուսիկ Ներսեսի,**
մանկավարժական գիտությունների թեկնածու,
դոցենտ, ԳՊԴ պրոֆեսոր

ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԸ

1. Օհանյան Հայկ Հեքիմի- մանկավարժական գիտությունների թեկնածու,
ԳՊԴ պրոֆեսոր
2. Կոտոլկյան Թամարա Հակոբի- դասախոս
3. Պետրոսյան Նաիրա Ֆահրադի- դասախոս
4. Ղազարյան Օլգա Ալբերտի- լաբորանտ

ՀԱՄԱՏԵՂՈՂՆԵՐ

1. Ղաջոյան Համլետ Գրիշայի- փիլիսոփայական գիտությունների
թեկնածու, ԳՊԴ պրոֆեսոր
2. Բարսեղյան Պարգև Աշոտի- փիլիսոփայական գիտությունների
թեկնածու, դոցենտ
3. Սարգսյան Հովհաննես Լավրենտի- փիլիսոփայական գիտությունների
թեկնածու, դոցենտ
4. Վարդանյան Կամո Երեմի- հոգեբանական գիտությունների թեկնածու,
դոցենտ
5. Զարգարյան Արփինե Հրանտի- դասախոս
6. Թովմասյան Լիլիթ Սպարտակի- դասախոս
7. Սաֆարյան Ալիտա Սոսի- դասախոս
8. Սիդեյնիկովա Ռիտա Վյաչեսլավի- դասախոս
9. Դավթյան Արմինե Վահրամի- դասախոս
10. Համբարձումյան Արմինե Եփրեմի- դասախոս
11. Օհանջանյան Ռուբեն Սամվելի- դասախոս
12. Գարեյան Մելանյա Վարդանի- դասախոս

ԱՄԲԻՈՆՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Երեխայի իմացական ոլորտի, անձնային հատկությունների և վարքի ձևավորման ու զարգացման հոգեբանամանկավարժական հիմնախնդիրները:

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ծեռնարկ	Ուսումնամեթոդական ծեռնարկ	Հոդված	Զեկուցումների թեզիս
-	-	-	-	10	-

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՍԵԹՈՂԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

1. **Ղաջոյան Յ. Գ.** Հեգելի և Կ. Մարքսի հիստորիցիզմը ըստ Կ. Պոպերի // ԳՊԴ գիտական հոդվածների ժողովածու, Երևան: Իրավունք, N 14, 2012:
2. **Քուրքչյան Լ. Ն., Հարությունյան Ն. Ս.** Ընտանիքում երեխաների նկատմամբ բռնությունների օբյեկտիվ անբարենպաստ գործոնները // ԳՊԴ գիտական հոդվածների ժողովածու, Երևան: Իրավունք, N 14, 2012:
3. **Куркчян Л. Н., Апреян А. Г.** Некоторые проблемы пенитенциарной профилактики преступности несовершеннолетних / Հոգեբանության և իրավունքի խաչմերուկները, Միջազգային գիտաժողովի նյութեր, Հայաստանի Ամերիկյան համալսարան և ՀՀ պետական կառավարման ակադեմիա, Երևան, 2012, էջ 358-369:
4. **Օհանյան Յ. Յ., Աբրահամյան Ջ. Ա.** Համագործակցային մեթոդների կիրառումը տարրական դպրոցում՝ կոնկրետ դասի օրինակով // ԳՊԴ գիտական հոդվածների ժողովածու, Երևան: Իրավունք, N 14, 2012:
5. **Քարսեղյան Պ. Ա.** Մոզական հավատալիքները հայ իրականության մեջ // Տարեգիրք 2011, Աստվածաբանության ֆակուլտետ, Երևան, ԵՊՀ հրատ., 2011, էջ 243-253:
6. **Դավթյան Ա. Վ.** Սոցիալ-մանկավարժական կանխարգելիչ տեխնոլոգիաների ձևավորման մանկավարժահոգեբանական մեխանիզմները ավագ դպրոցում, ԿԱԻ, Մանկավարժություն ԳՄԱ - 8, Երևան, 2012:
7. **Դավթյան Ա. Վ.** Հավատի և կրոնական հոգեբանության դերը հոգևոր դաստիարակության գործընթացում, Կրոնները Հայաստանում կայք, Անալիտիկայի բաժին, 2012թ., <http://religions.am/index.php/analitika/19402-2012-06-28-10-41-21.html>:
8. **Սիդելնիկովա Ռ. Վ.** Մանկատան սաների անբարենպաստ փոխհարաբերությունների կարգավորման եվ կանխարգելման ուղիներ // Մանկավարժություն, ՀՀ ԿԳՆ կրթության ազգային ինստիտուտ, 2011, էջ 23-26:
9. **Սիդելնիկովա Ռ. Վ.** Որբության հիմնախնդրի հետազոտությունը տարիքային և մանկավարժական հոգեբանության մեջ // Մանկավարժական միտք, Երևան, Ջանգակ հրատարակչություն, հ. 1-2, 2012, էջ 243-247:
10. **Саргсян О. Л.** Методологический пласт в истории философской мысли // Сборник научных статей, Пятая годовичная конференция РАУ, Ереван, 2011:

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

Ամբիոնի վարիչ՝ **Հարությունյան Համլետ Մալխասի,**
պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱՄՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԸ

1. **Ավետյան Վարչամ Վահանի** - պատմական գիտությունների թեկնածու, ԳՊՀ պրոֆեսոր
2. **Թևոսյան Բաղդասար Մանուցի** - պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ, ԳՊՀ պրոֆեսոր
3. **Կիրակոսյան Գասպար Լևոնի** - պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ, ԳՊՀ պրոֆեսոր
4. **Ղարաբյոզյան Արմեն Հայկազի** - պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ
5. **Հակոբյան Արսեն Աշոտի** - պատմական գիտությունների թեկնածու, ԳՊՀ դոցենտ
6. **Պողոսյան Աշխունջ Ամիրխանի** - պատմական գիտությունների թեկնածու, ԳՊՀ դոցենտ
7. **Հայրապետյան Քանաքարա Խաչիկի** - լաբորանտ

ՀԱՄԱՏԵՂՈՂՆԵՐ

1. **Զոհրաբյան Էդուարդ Լենդրուշի** - պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ
2. **Խաչատրյան Արմենակ Սուրենի** - պատմական գիտությունների թեկնածու

ԱՄԲԻՈՆՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գեղարքունիքի Գավառը 1920 թվականից մինչև 1940 թվականը:

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Պասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Զեկուցումների թեզիս
-	1	-	-	26	-

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՍԵԹՈՂԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

1. **Հարությունյան Յ. Մ.** Հայ Յեղափոխական Դաշնակցությունը Արցախի համար մղվող պայքարում 1917-1920թթ. // Հայ Յեղափոխական Դաշնակցության հիմնադրման 115 և 120-ամյակին նվիրված գիտաժողովների նյութեր, Երևան, 2011:
2. **Հարությունյան Յ. Մ.** 1920թ. մայիսյան ապստամբությունը Նոր Բայազետի գավառում // ՊԲՀ, թիվ 3, 2011:
3. **Հարությունյան Յ. Մ.** Հանրապետական գիտաժողով՝ նվիրված 1921թ. Մոսկվայի և Կարսի պայմանագրերի 90-ամյակին /համահեղինակ/, ՊԲՀ, թիվ 3, 2011:
4. **Հարությունյան Յ. Մ.** Ղազախեցյան Վլադիմիր Նահապետի, Կենսագրությունը և գիտական գործունեությունը, Երևան, 2011:
5. **Հարությունյան Յ. Մ.** Նոր Բայազետի գավառը 1914-1920թթ., Երևան, 2012:
6. **Հարությունյան Յ. Մ.** Թուրք-թաթարական խռովությունները Նոր Բայազետ գավառում 1918-1920թթ. // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, Երևան: Իրավունք, N 14, 2012:
7. **Հարությունյան Յ. Մ.** Ձեռնսովորներ ստեղծելու գործընթացը Անդրկովկասում և Երևանի նահանգում 1917-1920թթ. // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, Երևան: Իրավունք, N 14, 2012:
8. **Ավետյան Վ. Վ.** Լորուտի հին և հնագույն մշակույթը // Երևան, «Վան Արյան», 2012, 99 էջ:
9. **Ավետյան Վ. Վ.** Խաղաղության տաճար Հայաստանում // Գեղամա աշխարհ, 2012, թիվ 1-25 հուլիսի, էջ 4:
10. **Ավետյան Վ. Վ., Քեչիշյան Մ. Ս.** Վելիքուխի երկրի ուսումնասիրողը /Սեդրակ Բարխուդարյան/ // Գեղամա աշխարհ, 2011, թիվ 25, 26, էջ 5:
11. **Ավետյան Վ. Վ.** Գավառի պետական համալսարանը կունենա պատմության թանգարան // Գեղամա աշխարհ, 2012, թիվ 4, էջ 8:
12. **Ավետյան Վ. Վ.** Հեռավոր դարերի գաղտնիքների թարգմանը, պեղողը և վերծանողը // Գեղամա աշխարհ, 2011, թիվ 29, էջ 4:
13. **Ղարաբյոզյան Ա. Հ.** Նախիջևանի երկրամասի XIV-XVII դարերի պատմության հարցեր // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, Երևան: Իրավունք, N 14, 2012:
14. **Ղարաբյոզյան Ա. Հ.** Թեգարանա (Թոգարմա) քաղաքի տեղորոշման հարցի շուրջ // ԼՀԳ, 2011, N 4:
15. **Ղարաբյոզյան Ա. Հ.** Տորք Անգեղեայ. ստուգաբանական դիտողություններ // ՎԷՄ, 2012, N 4:
16. **Խաչատրյան Ա. Ս.** Հովսեփ Էմին. Ազգային ազատագրական շարժման բուրժուադեմոկրատական գաղափարաբանական սաղմերը հայոց միջավայրում // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, Երևան: Իրավունք, N 14, 2012:

17. Պողոսյան Ա. Ա. Արցախյան գորգագործական մշակույթի ավանդույթները հյուսիսարևելյան Այսրկովկասում //ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, Երևան: Իրավունք, N 14, 2012:

18. Պողոսյան Ա. Ա. Հայաստանի ժողովրդական արվեստի թանգարանի գորգերի հավաքածուն // «Հայոց գորգագործական մշակույթը», հանրապետական առաջին գիտաժողովի նյութերի ժողովածու, Երևան, 2011, էջ 61-68:

19. Պողոսյան Ա. Ա. Դերսիմի հայոց գորգագործական մշակույթի մասին, պատմաագագրական ակնարկ // «Էջմիածին», 2012 , Ա, էջ 51-70:

20. Թևոսյան Բ. Մ. Ագրարային գերբնակչության խնդիրը և դրա լուծման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումները Հայաստանում 1920-1930թթ. // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, Երևան: Իրավունք, N 14, 2012:

21. Չոհրաբյան Է. Լ. Անիի խնդիրը Կարսի 1921թ. բանակցություններում և պայմանագրում // Միջազգային գիտաժողով, Անիի միջնադարյան Հայաստանի քաղաքական և քաղաքակրթական կենտրոն. Ձեկուցումների դրույթներ, Երևան, 2011, էջ 41-43:

22. Չոհրաբյան Է. Լ. Հայ-ռուսական փոխհարաբերությունները 1920թ. և թուրքական գործոնը // Պատմություն և մշակույթ հայագիտական հանդես, գիտական հոդվածների ժողովածու Բ, Երևան, 2011, էջ 44-59:

23. Չոհրաբյան Է. Լ. Անիի խնդիրը Կարսի 1921թ. բանակցություններում և պայմանագրում // Միջազգային գիտաժողով, Անիի միջնադարյան Հայաստանի քաղաքական և քաղաքակրթական կենտրոն. Գիտական հոդվածների ժողովածու, Երևան, 2012, էջ 124-133:

24. Акобян А. А. Периферия Территории и Приграничье Идентичности. Вале 2010 - Полевые Заметки (Ред. В. Воронков, О. Бредникова, Т. Зурабишвили) // Тбилиси, Центр Исследования Социальных Практик, 2011:

25. Акобян А. А. Народная дипломатия во время карабахского конфликта: обмен селами Керкендж и Кызил-Шафаг // Caucasus Studies: Migration, Society and Language. Papers from the conference, Malm University (Sweden), 2011.

26. Akobyan A. A. Anthropology of Ethnic Conflict in the context of everyday life // Acta Ethnographica Hungarica: Aninternational journal of ethnography, N 2 (56), 2011.

27. Akobyan A. A. The Orthodox-Chalcedonian Armenians from the Caucasus to the Balkans (An Outline of their History and Identity) // The Balkans and Caucasus: Parallel Processes on the Opposite Sides of the Black Sea, Cambridge Scholars Publishing, 2012:

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԸ

1. Խաչատրյան Սամվել Արտաշեսի - իրավաբանական գիտությունների թեկնածու, ԳՊԴ պրոֆեսոր
2. Մուրադյան Մկրտիչ Արշավիրի - ԳՊԴ դոցենտ
3. Աֆրիկյան Արևիկ Տելենակի - ասիստենտ
4. Ղազարյան Քրիստինե Վարդանի - լաբորանտ

ՀԱՄԱՏԵՂՈՂՆԵՐ

1. Հակոբյան Հրանուշ Հրանտի - իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
2. Հակոբյան Ռուզաննա Խաչիկի - իրավաբանական գիտությունների դոկտոր, ԳՊԴ պրոֆեսոր
3. Խաչատրյան Աշոտ Հայկի - իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
4. Ապրոյան Արսեն Հրաչիկի - իրավաբանական գիտությունների թեկնածու
5. Լազարյան Վարդան Գերասիմի - դասախոս
6. Վարդանյան Մարգարետունի Գոռի - ասիստենտ
7. Հովհաննիսյան Օլգա Արտյոմի - ԳՊԴ դոցենտ
8. Մուրադյան Պապին Օնիկի - ասիստենտ
9. Գրիգորյան Տարոն Վրեժի - ասիստենտ
10. Հովհաննիսյան Էդուարդ Սարգսի - ասիստենտ
11. Բախտիկյան Լուսինե Վանիկի - դասախոս

ԱՄԲԻՈՆՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Քաղաքացիական հասարակության ձևավորման, ժողովրդավարական, իրավական, սոցիալական պետության կայացման պայմաններում քաղաքացիական, քրեական և սահմանադրական օրենսդրության բարեփոխման հեռանկարները Հայաստանի Հանրապետությունում:

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամթողական ձեռնարկ	Հոդված	Ձեկուցումների թեզիս
-	-	-	-	22	-

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՌԻՍՈՒՄՆԱՍԵԹՈՂԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

1. Հակոբյան Յ. Յ. ՀՀ Ազգային ժողովի մշտական և ժամանակավոր հանձնաժողովները որպես պառլամենտական մարմիններ // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, Երևան: Իրավունք, N13, 2011:

2. Հակոբյան Յ. Յ. Պետական իշխանության մարմինների փոխհարաբերությունները ՀՀ-ում, ուսումնական ձեռնարկ, Երևան, 2011:

3. Հակոբյան Յ. Յ. Հայաստան-Սփյուռք գործակցության պետական քաղաքականության հիմնական ուղենիշները // «Հայաստան-Սփյուռք գործակցություն. երեկ, այսօր և վաղը» միջազգային գիտաժողովի նյութեր, Հայկազյան համալսարան, Լիբանան, 2011:

4. Հակոբյան Յ. Յ. Նկատառուները ՀՀ Ազգային ժողովի պատգամավորի մանդատի վերաբերյալ // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, Երևան: Իրավունք, N14, 2012:

5. Հակոբյան Յ. Յ. Հայոց ցեղասպանության 100-ամյակին ընդառաջ, Իտալիա, Տրիեստ, 2012:

6. Հակոբյան Յ. Յ. Հայ գրատպության 500-ամյակը // Ձեկուցում հայ գրողների համահայկական համաժողովում, ՀՀ, Երևան, 2012:

7. Հակոբյան Ռ. Խ. Սահմանադրական պատասխանատվության օրենսդրական աղբյուրները ՀՀ-ում // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, Երևան: Իրավունք, N 13, 2011, էջ 557-570:

8. Հակոբյան Ռ. Խ. Սահմանադրական պատասխանատվությունը՝ որպես իրավաբանական պատասխանատվության ինքնուրույն տեսակ // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, Երևան: Իրավունք, N14, 2012:

9. Հակոբյան Ռ. Խ. Երդումը որպես պոզիտիվ սահմանադրական պատասխանատվություն ստանձնելու միջոց // Օրենք և իրականություն, Երևան, 2012, N 1, էջ 1-5:

10. Հակոբյան Ռ. Խ. Փոխակերպվող հասարակության և անցումային պետաիրավական համակարգի առանձնահատկությունները // Մանկավարժական և հոգեբանական հիմնախնդիրներ, Երևան, 2012, էջ 111-119:

11. Հակոբյան Ռ. Խ. Սահմանադրական պատասխանատվության ինստիտուտի կայացումը՝ ժամանակի հրամայական պահանջ // Օրենք և իրականություն, Երևան, 2012, N 11:

12. Հակոբյան Ռ. Խ. Սոցիալական պատասխանատվության ինստիտուտի հասկացությունը և նշանակությունը // Գիտական զեկուցում՝ ներկայացված Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի 90-ամյակին նվիրված գիտաժողովին, ղեկտեմբեր, 2012:

13. Խաչատրյան Ա. Հ. Իրավունք և քաղաքականություն. հարաբերակցության հիմնախնդիրները և զարգացման միջազգային միտումները // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, Երևան: Իրավունք, N 14, 2012:

14. Хачатрян А. Г. Модернизация парадигмального мышления о соотношении

“политизации права” и “партизации власти” в контексте культуры власти // Материалы международной конференции, М., МГУ, 2012.

15. Хачатрян А. Г. Аппроксимация национального законодательства с *acquis communautaire*: проблемы и современные тенденции развития // Конституционное правосудие, N 4, 2012.

16. Խաչատրյան Ս. Ա. Նորից հայկական այբուբենի ստեղծման հարցի շուրջ // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, Երևան: Իրավունք, N 14, 2012:

17. Խաչատրյան Ս. Ա. «Հաճախապատում ճառքի» հեղինակության հարցի շուրջ // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, Երևան: Իրավունք, N 14, 2012:

18. Սուրադյան Մ. Ա. Ոսկերարյան Հայաստանի իրավաքաղաքական միտքը // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, Երևան: Իրավունք, N 14, 2012:

19. Aproyan A. H. Welfare law minor role in modern society // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, Երևան: Իրավունք, N 14, 2012:

20. Aproyan A. H. Concept and Some of the Problems of Juvenile Law // The Proceedings of University of Rousse, University of Rousse, Bulgaria, Volume 50, book 7, Law Sciences, 2011, էջ 39-43:

21. Апроян А. Г. Нормативная основа формирования правового статуса ребенка в Республике Армения // Հոգեբանության և իրավունքի խաչմերուկները, Միջազգային գիտաժողովի նյութեր, Հայաստանի Ամերիկյան համալսարան և ՀՀ պետական կառավարման ակադեմիա, Երևան, 2012, էջ 138-152:

22. Апроян А. Г., Куркчян Л. Н. Некоторые проблемы пенитенциарной профилактики преступности несовершеннолетних, Հոգեբանության և իրավունքի խաչմերուկները, Միջազգային գիտաժողովի նյութեր, Հայաստանի Ամերիկյան համալսարան և ՀՀ պետական կառավարման ակադեմիա, Երևան, 2012, էջ 358-369:

ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Դեկան՝ **Ամիրխանյան Սամվել Գրիգորի,**
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ, ԳՊՀ պրոֆեսոր

Դեկանի տեղակալ՝ **Հերզոյան Մարիամ Նորիկի,**
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՈՒՄՆԵՐԸ

Դասիչ	Մասնագիտություն
080300	Ֆինանսներ
081500	Հաշվապահական հաշվառում
080600	Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում

Մասնագիտացումներ՝ տնտեսագետի

Ուսանողների թիվը՝ 286
Շրջանավարտների թիվը՝ 111

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ
2011-2012 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ 2012-2013 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ
ՉԱՐԳԱՅՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ

2011-2012 ուսումնական տարին Գավառի պետական համալսարանում ընթացավ դեպի ուսման որակ շրջվելու հստակ նպատակադրմամբ: Ուսումնական գործընթացների որակի ապահովման պահանջները բարձրացնում են նաև տնտեսագիտական ֆակուլտետի պատասխանատվությունը:

Անցած ուսումնական տարում դեկանատը, ամբիոնները համադրեցին ջանքերը՝ կրթությունը աշխատաշուկայի պահանջներին համապատասխանեցնելու ուղղությամբ, որակյալ տնտեսագետ մասնագետի պատրաստման նպատակով:

Շուկայական հարաբերությունների պայմաններում, երբ բարձրագույն կրթության առջև ծառայել են լուրջ մարտահրավերներ, տնտեսագիտական ֆակուլտետում ուսուցումը խարսխվում է ուսանողների կողմից գիտելիքների արժեքի գիտակցման հիմքերի վրա, սակայն այս ճանապարհին դժվարությունների հաղթահարումը դեռևս տևական ժամանակ, բավական ռեսուրսներ է պահանջում: Հաշվետվությունը ոչ միայն կատարածի ամփոփումն է, այլև կրթական գործընթացների արդյունավետության բարձրացման ուղիների և կառուցակարգերի հետազոտությունը, նոր ծրագրերի նախանշումը:

Համալսարանի ընդհանուր գործունեության մեջ կարևորվում է ուսումնական գործընթացի ճշգրիտ կազմակերպումը: Տնտեսագիտական ֆակուլտետի դեկանատը, ամբիոնները հետևում են կրթական ծրագրերի պահանջներին, ուսուցման նորագույն մեթոդներին, դասավանդման գործընթացում գիտական հետազոտությունների արդյունքների օգտագործմանը:

Դեկանատը ամբիոնների ուժերը կենտրոնացրել է պարբերաբար նորացվող տեղեկատվության ձեռքբերմանն ու ուսանողներին տրամադրմանը, նպաստող ռեսուրսների ապահովմանը, որակի ապահովմանը: Գնալով ավելի հստակեցվում են գնահատման մեթոդները և դրանցից սպասվող ուսումնառության արդյունքները: Կրթության յուրաքանչյուր փուլ, հանդիսանալով մշտադիտարկման առարկա, բնութագրվում է իր արդյունքային ցուցանիշներով:

Ֆակուլտետում ուսման առաջադիմության ցուցանիշներն այսպիսին են.

2011-2012 ուստարում ֆակուլտետի՝ բակալավրիատի կրթակարգով սովորող ուսանողների ուսման բացարձակ առաջադիմությունը կազմել է առաջին կիսամյակում 78%, երկրորդում՝ 60,8% կամ նվազել է 17,2%-ով: Մագիստրատուրայում այն 90%-ից դարձել է 67%, նվազել է 23%-ով: Նախորդ տարվա համեմատությամբ նույն ցուցանիշները նվազել են՝ բակալավրիատում՝ 2,6%-ով, իսկ մագիստրատուրայում՝ 33 %-ով:

Այսպիսով, ֆակուլտետի ընդհանուր առաջադիմությունը առաջին կիսամյակում կազմեց 80,2%, երկրորդ կիսամյակում՝ 61%, նախորդ կիսամյակի համեմատությամբ այն նվազել է 19,2%-ով, իսկ նախորդ տարվա երկրորդ կիսամյակի

համեմատությամբ՝ 5,7%-ով:

Առաջադիմությունը վերլուծենք ըստ կուրսերի:

Երկրորդ կուրսերում առաջադիմությունը երկրորդ կիսամյակում երեք մասնագիտություններում տատանվել է 63,3-100% սահմաններում, նախորդ կիսամյակի 79,3-90%-ի դիմաց, իսկ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատությամբ «Հաշվապահական հաշվառում» և «Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում» (ՁՏԿ) բաժիններում աճել է 10-35%-ով, «Ֆինանսներ» բաժնում նվազել է 4,3%-ով: Երրորդ կուրսերում առաջադիմությունը կազմել է 36,8-62,5%, որը ցածր է նախորդ կիսամյակից՝ ֆինանսներ՝ 18%, հաշվապահական հաշվառում՝ 52,7% և ՁՏԿ-ում՝ 32,3%:

Մագիստրատուրայի բաժնում 2011-2012 ուսումնական տարում երկրորդ կիսամյակում, առաջինի համեմատությամբ, ուսման առաջադիմությունը նվազել է 23%-ով, իսկ նախորդ տարվա համեմատությամբ՝ 33%-ով: Հարկ է նկատի ունենալ, որ արդյունքները որակական առումով ավելի իրական են և չունեն ձևական բնույթ: Մագիստրատուրայի բաժնում գնահատման մեթոդները երբեմն ճիշտ չէին ընտրվում: Այս ուսումնական տարվանից սերտացվում է գնահատման մեթոդների կապը ուսումնառության արդյունքների հետ, գնահատումը դառնում է ճշգրիտ:

Ըստ մասնագիտությունների միջին առաջադիմությունը առաջին կիսամյակում ֆինանսներ մասնագիտությունում կազմել է 75,5%, հաշվապահական հաշվառում մասնագիտությունում՝ 78% և ՁՏԿ-ում՝ 78%:

Առաջադիմությունը երկրորդ կիսամյակում բարձր է եղել. ՁՏԿ-ում՝ 72,5%, այնուհետև ֆինանսներ բաժնում՝ 62,9% և հաշվապահական հաշվառում բաժնում՝ 55,9%:

Միջին ցուցանիշի նվազումը ֆինանսներ բաժնում հուշում է, որ համապատասխան ամբիոնը պետք է ձգտի վերականգնել այս բաժնի առաջադիմությունը:

Ցուցանիշը ցածր է նաև նախորդ տարվա համեմատությամբ: Այս գործում մեղքի բաժին ունեն հատկապես չորրորդ կուրսեցիները, որոնք, ինչպես փորձն է ցույց տալիս, կարծելով, թե բավականին ձեռքբերումներ ունեն, աշխատում են իներցիայով, այն դեպքում, երբ բակալավրիատի ծրագրի ավարտին քիչ ժամանակ է մնում, ուսումնառությունը էլ ավելի ակտիվություն է պահանջում: Ցածր ցուցանիշների հետևում «թաքնված» են դասախոսների ոչ հետևողական աշխատանքը, մեթոդական տեղատվությունը, գործնական անհատական աշխատանքների հանդեպ ոչ հետևողական մոտեցումը:

Ուսանողին չպետք է թույլ տալ ուսումնական ծանրաբեռնվածությունից խուսափել կամ այն թեթևացնել:

Հաշվետվության մեջ ներկայացնում ենք միջին որակավորման գնահատականները (ՄՈԳ), ինչը կրեդիտային համակարգի պահանջն է:

ԳՊԴ 2011-2012 ուսումնական տարվա գործունեության հաշվետվություն

2011-2012 ուս. տարում ըստ մասնագիտությունների և կուրսերի ձևավորման ՄՈԳ-ը համապատասխան սանդղակով

	ուսանողների թիվը	1,7-2,9		3,0-3,5		3,6-4,0	
		ուսանողների թիվը	տոկոս	ուսանողների թիվը	տոկոս	ուսանողների թիվը	տոկոս
Ֆինանսներ 2-րդ	29	11	37.9	4	13.8	14	48.3
Ֆինանսներ 3-րդ	32	9	28.1	2	6.3	21	65.6
Հաշվապահական հաշվառում 2-րդ	21	3	14.3	8	38.1	10	47.6
Հաշվապահական հաշվառում 3-րդ	20	9	45	5	25	6	30
Ձեռնարկությունների տնտ. և կառ. 2-րդ	9	2	22.2	1	11.1	6	66.7
Ձեռնարկությունների տնտ. և կառ. 3-րդ	20	10	50	9	45	1	5

Միջին որակավորման գնահատականի բարձր ցուցանիշ (3.6-4.0) ապահովել է ՁՏԿ 2-րդ կուրսի և Ֆինանսներ 3-րդ կուրսի ուսանողների համապատասխանաբար 66.7 և 65.6%-ը: ՁՏԿ 3-րդ կուրսի ուսանողների միայն 5%-ն է ապահովել բարձր ցուցանիշ, որը մտահոգիչ է: Գրեթե բոլոր կուրսերում, բացառությամբ հաշվապահական հաշվառում 2-րդ կուրսի, 1.7-2.9 ՄՈԳ ունեցող ուսանողների տեսակարար կշիռը կազմում է 30%-50%:

Այժմ անդրադառնանք ցածր առաջադիմության պատաճառներին, որոնք հանգեցնում են նաև բացասական այլ հետևանքների: Այսպես, այս և նախորդ քննաշրջանները ցույց են տալիս, որ ֆակուլտետում սովորում են ակադեմիական առումով հետ մնացող ուսանողներ, որոնք գրեթե բոլոր քննաշրջաններում ունենում են առարկայական պարտքեր, որոշակի քանակություն են կազմում նաև միջին առաջադիմություն ունեցողները:

Լուծարային շրջանում պարտքերը հանձնեցին, սակայն այդ վերահանձնումները միշտ չէ, որ ընթանում են պատասխանատվության բարձր զգացումով: Կան ուսանողներ, ովքեր վարժվել են լուծարքին, և քննությունները հանձնեցին ձգձգվող ժամկետներում: Եզրակացությունն այն է, որ դեկանատը, ամբիոնները, դասախոսները պետք է միջոցներ ձեռնարկեն և ուսանողի մոտիվացիոն համակարգում ու վարքագծում փոփոխություններ մտցնեն: Առանձին դեպքերում դասախոսները ուսանողների հանդեպ չեն կիրառում նոր մոտեցումներ, ուսուցման

ԳՊՀ 2011-2012 ուսումնական տարվա գործունեության հաշվետվություն

նոր մեթոդներ: Առաջարկում ենք հուլիս ամսին կազմակերպել մասնագիտական խորհրդատվություն հետմապահ ուսանողների համար:

Այս դեպքում դասախոսներն ազատ կլինեն ուսանողի հետ աշխատելու համար, կունենան ժամանակ խորհրդատվություն մատուցելու, և սեպտեմբերին հնարավոր է ուսանողներից ակնկալել բավարար պատասխաններ: Հակառակ դեպքում՝ սեպտեմբերյան զբաղվածությունը, դասերից հետո կամ դասերի ընթացքում խորհրդատվությունը լինելու է հապճեպ:

Այսինքն, ակադեմիապես թույլ ուսանողների հետ պետք է տանենք անհատական աշխատանք: Ամբիոններում պետք է քննարկել գիտելիքների ստուգման յուրաքանչյուր փուլի արդյունքները: Ցավալի է, որ ուսանողները հաճախ են դիմում քննություններին, այսպես ասած, հարգելի պատճառներով չներկայանալու պրակտիկային:

Անցած ուսումնական տարում լուրջ ուշադրություն է դարձվել մագիստրատուրայում ինքնուրույն աշխատանքների կատարմանը, դրանց ստուգման հարցերին:

Մագիստրատուրայի ուսանողի ուղեցույցում այս տարի նախատեսվեց թե՛ բանավոր և թե՛ գրավոր ընթացիկ ստուգում, ինչը կբարձրացնի ուսանողների պատասխանատվությունը:

Ուսանողների շարժը (կուրսից կուրս անցման ցուցանիշները, փոխադրումներ, տեղափոխություններ, հեռացումներ, վերականգնումներ)

Հաշվետու ուսումնական տարում տնտեսագիտական ֆակուլտետում սովորել են 286 ուսանողներ, այդ թվում՝ բակալավրիատ՝ 236, մագիստրատուրա՝ 50:

2011-2012 ուսումնական տարում ուսանողների շարժը տնտեսագիտական ֆակուլտետում.

	բակալավր	մագիստրատուրա	ընդամենը
Չորակոչվել է բանակ	15	1	16
Չորացրվել է բանակից	12	4	16
Վերականգնվել է	14	2	16
Ստացել է տարկետում	-	1	1
Հեռացվել է ԳՊՀ-ից	15	15	30
Ազատվել է ՊՀ-ից	2	1	3
Տեղափոխվել է ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետ այլ ֆակուլտետներից	17	-	17
Տեղափոխվել է ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետից այլ ֆակուլտետ	5	-	5
Տեղափոխվել է այլ բուհից/քոլեջից/ ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետ	5	-	5
Տեղափոխվել է նույն ֆակուլտետի այլ մասնագիտությունից	2	-	2

Այլ ֆակուլտետներից տնտեսագիտական ֆակուլտետ է տեղափոխվել 17 ուսանող, Երևանի ճարտարագիտական համալսարանից՝ 1, տարբեր քոլեջներից՝ 4 հոգի: Տեղափոխվածները ցուցաբերում են աշխատասիրություն և ինտելեկտի են կուրսերին: Տնտեսագիտական ֆակուլտետից 5 ուսանող տեղափոխվել է հեռակա ուսուցման ֆակուլտետ: Բանակից զորացրված ուսանողները ցուցաբերում են կարգապահություն և հիմնականում ներգրավվում են ուսումնական գործընթացում, ձգտում են աշխատել (դասերից դուրս), ունեն հասարակական ակտիվություն:

Կրթական ծրագրի զարգացումներն ու բարելավման միտումները

Ուսումնական գործընթացի բարեփոխումը և զարգացումները ենթադրում են կրթական ծրագրերի նորացում և դրանց համապատասխանեցում ժամանակակից պահանջներին: Ֆակուլտետի խորհուրդը, ամբիոնները հնարավորինս ուժեղացնում են հետազոտական ներուժը՝ կրթական ծրագրերի և ուսումնական պլանների զարգացումներն ապահովելու, գիտության նոր միտումները կռահելու և կիրառելու նպատակով:

Ծրագրերի զարգացման գործընթացում հաշվի են առնվում դասախոսների, ուսանողների և գործատուների առաջարկությունները, եթե դրանք քննարկվում և արժանանում են ամբիոնների հավանությանը: Հաշվետու ժամանակաշրջանում ամբիոնների վարիչների հաշվետվություններում բավականին առաջարկություններ եղան ծրագրերի նորացման առումով: Կարևորն այն է, որ արվել են ուսուցման արդի տեխնոլոգիաների ներդրումներին վերաբերող առաջարկություններ:

Դասախոսական կազմը հիմնականում համապատասխանում է մասնագիտական ծրագրերի իրականացման պահանջներին: Սակայն նոր կադրերի պահանջ կա: Նկատի ունենք նորագույն կրթական տեխնոլոգիաներին տիրապետող մասնագետներին: Ամբիոնները մշակում են յուրաքանչյուր կրթական ծրագրի դասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող պահանջներ, սակայն այդ պահանջներին համալիր մոտեցում է հարկավոր:

Դասախոսական կազմի համալրումը և փոփոխությունները մշտապես նպաստում են մասնագիտական խմբերում ուսման որակի բարելավմանը:

Հաշվետու ժամանակաշրջանում Հաշվապահական հաշվառում ամբիոնը համալրվեց նոր դասախոսներով. «Կառավարչական հաշվառում», «Աուդիտ» առարկաների գծով՝ Մարկոսյան Սևակ (տ.գ.թ.), «Հաշվապահական հաշվառման ստանդարտները» առարկայի գծով՝ Մալոյան Անի: Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում ամբիոնը ևս համալրվեց նոր դասախոսով՝ Կիրակոսյան Էդգար՝ «Տուրիստական բիզնեսի կազմակերպում» առարկայի գծով:

Բուհական համակարգը համատեղում է կրթությունը և գիտությունը, ուստի մեր խնդիրներից մեկն էլ համարում ենք ամբիոններում գիտամեթոդական աշխատանքների շարունակական ընթացքի ապահովումը և խթանումը:

Հաշվետու ժամանակաշրջանում ֆակուլտետի դասախոսները կատարել են գիտահետազոտական աշխատանք, տպագրել գիտական հոդվածներ, հանդես եկել միջազգային և հանրապետական գիտաժողովներում:

Հաշվետու տարում տպագրվել է ՁՏԿ ամբիոնի վարիչ Հ. Ջաքոյանի հոդվածը, որը ներկայացվել է Տաշքենդի պետական ագրարային համալսարանի գիտական կոնֆերանսում՝ «Գյուղացիական տնտեսությունների գործունեության վիճակը և բարելավման հնարավորությունները» թեմայով: «Հայաստան. Ֆինանսներ և էկոնոմիկա» ամսագրում տպագրվել է Ֆինանսներ ամբիոնի դասախոս Գ. Խաչատրյանի հոդվածը՝ «Արդյունավետ հարկային բեռի սահմանման հիմնահարցերը ՀՀ-ում» թեմայով: Գ. Խաչատրյանը, ով ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի շրջանավարտ է, հաջողությամբ պաշտպանեց թեկնածուական ատենախոսություն:

Վերջին երեք տարիների վիճակագրությունը հետևյալն է. 2011-2012 ուսումնական տարում, նախորդ տարիների համեմատ, ֆինանսներ ամբիոնում նվազել է գիտական հոդվածների քանակը, իսկ հաշվապահական հաշվառում և ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում ամբիոններում մնացել է նույնը: Ուստի, դասախոսները պետք է ծավալեն հետազոտական աշխատանք, ավելացնեն գիտական հոդվածների քանակը և մասնակից դառնան հանրապետական ու արտերկրի գիտաժողովներին:

Հարկ է անդրադառնալ նաև հետևյալ հարցին. ամբիոններն ունեն գիտահետազոտական թեմա, սակայն դրանց քննարկումներին և կատարման ընթացքին ուսանողներին մասնակից չեն դարձնում, հանրապետության առաջատար մասնագետներին հիմնախնդրի հետազոտության ընթացքում չեն դիմում՝ մնալով հետազոտության սահմանափակ շրջանում: Կարևորելով այդ համգամանքը ամբիոնի ընդհանուր գործունեության մեջ, կարևոր ենք համարում գիտահետազոտական թեմաներով լուրջ հետազոտություններ իրականացնելը:

Բավականին անելիքներ ունենք պրակտիկաների կազմակերպման և անցկացման գործում: Տնտեսագիտական ֆակուլտետի դեկանատը, ամբիոնների հետ միասին, պրակտիկայի կազմակերպումը նպատակաուղղում են ուսանողների մասնագիտական ունակությունների հետևողական զարգացմանը՝ աշխատաշուկայի պահանջներին համապատասխան՝ այն համարելով ամենաշատ տարածված բուհ-գործարար համայնք կապող օղակը, որի միջոցով ապահովվում է պահանջարկի և առաջարկի համապատասխանեցումը:

Կրթության որակի ապահովման գործընթացը

Հաշվետու տարում մշակվել են տնտեսագիտական ֆակուլտետում կրթության որակի բարձրացման կառուցակարգեր, որոնք գործի են դրվել և այժմ էլ հետևում ենք դրանց կատարմանը: Համալսարանում և մեր ֆակուլտետում որակի բարձրացման շարժում է ծավալվել: Որակի ապահովման հիմքերն ամրապնդվում են, քանի որ գործադրվում են որակավորումներին համապատասխան չափորոշիչներ: Որպես թերություն պետք է նշենք տեղեկատվական համակարգերից ոչ լիարժեք օգտվելը:

Դասախոսությունների տեքստերը էլեկտրոնային և թղթային տարբերակով մատուցում ենք ուսանողներին, բայց պարզվում է, որ ոչ բոլորն են վաղօրոք ծանոթանում դրանց և ունանք բավարար չեն տեղեկանում բաշխված նյութերին:

Գտնում ենք, որ ուսանողներին պետք է օժանդակենք՝ տիրապետելու համա-

ցանցին, որպեսզի յուրաքանչյուրը մասնակից դառնա ինտերակտիվ մեթոդով տարվող դասախոսություն-քննարկումներին: Համակարգչին տիրապետող, բարձր առաջադիմություն ունեցողները պետք է օգնեն այս գործում պասիվ ընկերներին՝ ուսման մեջ հետ մնացողներին: Մինչդեռ նկատելի է, որ խմբի շահերը ոչ բոլորին են հետաքրքրում:

Կարևոր խնդիր է գերազանցիկների և գերազանցության հավակնողների գիտելիքի ռեալության հարցը:

Ուսման որակի փոփոխությունների ցուցանիշ են տարեցտարի առաջադիմությունը բարձրացնող գերազանցիկ ուսանողները:

Բարձր է բակալավրիատի Ֆինանսներ մասնագիտության գերազանցիկների տեսակարար կշիռը. ֆինանսներ 3-րդ կուրսում՝ 53%, իսկ 4-րդ կուրսում՝ 50%: Այն բարձր է նաև ՁՏԿ 3-րդ կուրսում՝ 67%: Սակայն, 4.0 ՄՈԳ ունեցողները հիմնականում ֆինանսներ մասնագիտության ուսանողներն են: Մագիստրատուրայում մեծամասնությունը սովորում են բարձր առաջադիմությամբ, սակայն 4.0 ՄՈԳ ունի 5 մագիստրոս:

Ուսանողները որակյալ կրթություն կստանան, եթե գիտելիքները լոկ տեսական չլինեն, այլև շաղկապվեն գործնական ունակությունների և մասնագիտական կարողությունների հետ: Ինչ է արվել այս ուղղությամբ:

1. Վերանայվել են պրակտիկայի ծրագրերը:

2. Պրակտիկան անցկացնող մասնագետները մասնակցում են ուսանողների պրակտիկ հմտությունները հետազոտող և վերլուծող փաստաթղթերի մշակման աշխատանքներին: Համագործակցությունն ակտիվ է բանկերի («Յունիբանկ», «Անելիք» բանկ), վարկային կազմակերպությունների («Արեգակ» ՈւՎԿ), արտադրական կազմակերպությունների (Թիվ 28 ՇՄՇ, Գավառի ճՇՇ) հետ: Ուսանողների համար կարևոր նշանակություն է ձեռք բերում պրակտիկայի վայրի մասնագետների կարծիքը, որոնք իրենց հնարավոր գործատուներն են:

Ֆակուլտետում տարեցտարի ակտիվանում է ուսանողակենտրոն դասատվության պրակտիկան, ինչն ապահովում է որակական աճ: Նոր եղանակներով դասատվությունը ակտիվացել է, արդյունավետորեն օգտագործվում են համակարգչային լսարանները, համացանցային հնարավորությունները: Որակի ապահովմանը նպաստեց նաև ուսուցման նորագույն մեթոդների համալսարանական վերապատրաստումների շարքը:

Ուսման որակը բարձրացնելու նպատակով չորրորդ կուրսերում անցկացվում են նախաքննական ստուգումներ:

Մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների որակ չենք ապահովի, եթե ղեկավար դասախոսը ցուցաբերի ոչ շահագրգիռ մոտեցում: Նա պարտավոր է համապատասխան աջակցություն ցույց տալ թեզի հետազոտական, մշակման, վերլուծման և ամփոփման աշխատանքներին: Մագիստրոսական թեզի մեջ ինքնուրույն հետազոտական բաղադրիչը պետք է ընդլայնվի, միայն այս ցուցանիշով պետք է մոտենալ աշխատանքի գնահատմանը:

Լուրջ ուշադրություն է դարձվում ուսանողների հաճախումներին ինչպես ռեկտորատի, այնպես էլ ղեկանատի և դասախոսների կողմից: Ամենօրյա հաշվառ-

ման արդյունքում որոշ ուսանողներ ենթարկվել են վարչական պատասխանատվության (նկատողություն, խիստ նկատողություն): Այս հանգամանքը նպաստում է կարգապահության ամրապնդմանն ու բարձրացմանը: Շատ ուսանողներ փոխել են իրենց վարքագիծը՝ ապահովելով կարգապահություն և առաջադիմության բարձրացում: Բարձր կուրսերում հաճախելիությունը նախորդ տարվա համեմատ բարձրաձել է 10-15%-ով, ինչը դրական երևույթ է:

Արտասահմանում սովորող ուսանողները

ԳՊԴ ուսանողների ակադեմիական շարժունության շրջանակներում տնտեսագիտական ֆակուլտետի 3 ուսանողներ 2011-2012 ուսումնական տարում ուսանել են արտերկրում: Անգլիայի Շեֆիլդ համալսարանի Հունաստանի մասնաճյուղի միջազգային ֆակուլտետում սովորում է մագիստրատուրայի «Ֆինանսներ» 2-րդ կուրսի ուսանողուհի Անի Մազմանյանը, Հունաստանի Սալոնիկի տեխնոլոգիական համալսարանում՝ «Ֆինանսներ» 2-րդ կուրսի ուսանողուհի Մարիամ Հովեյանը, Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ թագավորության Սվանսի մետրոպոլիտենի համալսարանում՝ «Ֆինանսներ» 3-րդ կուրսի ուսանող Բաբկեն Ղարաբաղյանը:

Անվճար տեղերում սովորող ուսանողների առաջադիմության ցուցանիշները

2011-2012 ուսումնական տարվա երկու կիսամյակների քննաշրջանների արդյունքներով ֆակուլտետի բակալավրիատի երկրորդ կուրսի և մագիստրատուրայի առաջին կուրսի երեք բաժիններում, համաձայն գործող կարգի, կատարվեց անվճար տարկետման իրավունքով տեղերի փոխատեղման մրցույթի արդյունքների ամփոփում: Բակալավրիատի հաշվապահական հաշվառման 2-րդ կուրսի ուսանողները ցուցաբերել են համապատասխան առաջադիմություն, և փոխատեղում չի իրականացվել, իսկ ֆինանսներ, ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում բաժինների 2-րդ կուրսերում փոխատեղման արդյունքում բարձր առաջադիմություն ցուցաբերած ուսանողները մրցույթային կարգով զբաղեցրին անվճար տարկետման իրավունքով տեղերը: Անվճար տեղերում ուսուցումը սկսվել է 2010-2011 ուսումնական տարվանից և խթանում է բարձր առաջադիմության ուղղությամբ ծավալված մրցույթը:

Ամփոփիչ ատեստավորման գործընթացը

Ավարտական աշխատանքների, մագիստրոսական թեզերի պաշտպանությունը, ինչպես նաև ավարտական ամփոփիչ ատեստավորումը անցկացվել է 2012թ. մայիս ամսին՝ սահմանված կարգով:

Ամփոփիչ ատեստավորմանը մասնակցել են բակալավրիատի բաժնի 92 ուսանողներ, որոնցից 10-ը՝ նախորդ տարիների շրջանավարտներ: Այդ թվում՝ Ֆինանսներ մասնագիտությամբ՝ 32 ուսանող, Հաշվապահական հաշվառում մասնագիտությամբ՝ 34 ուսանող, Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում մասնագիտությամբ՝ 16 ուսանող: Հաշվետու տարում բակալավրիատի «Ֆինանսներ» բաժինն ավարտեց 37 ուսանող, այդ թվում՝ գերազանցության դիպլոմով՝ 16 ուսանող: «Հաշվապահական հաշվառում» բաժինն ավարտեցին 37 ուսանողներ, այդ թվում՝ գերազանցության դիպլոմով՝ 14 ուսանող: «Ձեռ-

ԳՊԴ 2011-2012 ուսումնական տարվա գործունեության հաշվետվություն

նարկությունների տնտեսագիտություն և կառավարում» բաժինն ավարտեց 18 ուսանող, որից գերազանցության դիպլոմով՝ 5 ուսանող:

Այս տարվա շրջանավարտներից հաշվապահական հաշվառում բաժնի 1 և ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում բաժնի 2 ուսանողներ չեն մասնակցել ամփոփիչ ատեստավորմանը:

Սագիստրատուրան ավարտել են 19 մագիստրանտներ, այդ թվում՝ Ֆինանսներ մասնագիտությամբ՝ 4 ուսանող, Հաշվապահական հաշվառում մասնագիտությամբ՝ 8 ուսանող, ՉՏԿ մասնագիտությամբ՝ 7 ուսանող:

Սագիստրատուրան գերազանցությամբ ավարտել են 17 մագիստրոսներ:

Ամփոփիչ ատեստավորման արդյունքները հետևյալն են.

Բաժինը		Ուսանողների թիվը	A+	A	A-	B+	B	B-	C+	C	C-	F
Ֆինանսներ և վարկ /բակալավոր/	Ամփոփիչ քննություն I	32	6	7	4	3	-	1	2	3	6	-
	Ամփոփիչ քննություն II	9	-	-	-	-	-	1	-	2	-	-
	Ավարտական աշխատանք	23	10	4	3	1	3	-	1	1	-	-
Ֆինանսներ /մագիստրա տուրա/	Սագիստրոսական թեզ	4	1	2	1	-	-	-	-	-	-	-
Հաշվապահ ական հաշվառում և աուդիտ /բակալավոր/	Ամփոփիչ քննություն I	35	7	6	5	1	-	4	3	8	-	1
	Ամփոփիչ քննություն II	15	-	-	-	-	-	3	3	6	2	1
	Ավարտական աշխատանք	20	8	7	3	2	-	-	-	-	-	-
Հաշվապահ ական հաշվառում /մագիստրա տուրա/	Սագիստրոսական թեզ	8	1	7	-	-	-	-	-	-	-	-
Ձեռնարկությ ունների տնտեսագիտ ություն և կառավարում /բակալավոր/	Ամփոփիչ քննություն I	18	2	2	4	1	2	-	-	-	5	2
	Ամփոփիչ քննություն II	10	-	2	1	1	-	-	1	1	4	-
	Ավարտական աշխատանք	8	2	4	1	1	-	-	-	-	-	-
Ձեռնարկությ ունների տնտեսագիտ ություն և կառավարում /մագիստրա տուրա /	Սագիստրոսական թեզ	7	4	1	-	2	-	-	-	-	-	-

Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի դիտողությունները և առաջարկությունները քննարկվել են համապատասխան ամբիոններում, մշակվել են միջոցառումներ՝ թերությունները վերացնելու և ամփոփիչ ատեստավորումը պատշաճ ձևով կազմակերպելու համար:

Համալսարանի խորհուրդը, ռեկտորատը, դեկանատը մշտապես մտահոգվում են ուսանողների սոցիալական խնդիրներով: Ներկայումս 20 ուսանողներ օգտվում են Հայ օգնության ֆոնդի «Ժիրայր Նիշանյան» հիմնադրամի կրթաթոշակից: Երկու ուսանողներ օգտվել են «Բարեպաշտ սերունդ» հիմնադրամի կրթաթոշակից և մեկ ուսանող՝ «Թրփանճեան ընտանեկան» հիմնադրամի կրթաթոշակից: 4 ուսանողներ «Օրանժ Հայաստան» և 5 ուսանողներ «VIVA CELL-MTS» ընկերությունների կրթաթոշակառուներ են:

ԳԴՅ-ն ընդարձակում է հանրապետության առաջատար գիտակրթական կազմակերպությունների հետ իր համագործակցության սահմանները, ինչն օգնում է մեր ֆակուլտետին՝ կազմակերպելու սեմինարների և դասախոսությունների շարք՝ հանրապետության ճանաչված մասնագետների մասնակցությամբ: Տարվա առաջին կիսամյակում անցկացվել է դասախոսություն «Ֆինանսական համակարգը, Կենտրոնական բանկի և առևտրային բանկերի գործառնությունները», «Սպառողների շահերի պաշտպանության անհրաժեշտ պայմանների ստեղծումը», «Դրամավարկային քաղաքականության առանձնահատկությունները ՀՀ-ում» թեմաներով՝ ՀՀ կենտրոնական բանկի աշխատակիցների կողմից (Միքայելյան Սևակ՝ ՀՀ ԿԲ սպառողների շահերի պաշտպանության և շուկայի վարվելակերպի վերլուծաբան, Ջանվելյան Վահրամ՝ ՀՀ ԿԲ դրամավարկային քաղաքականության վարչության մասնագետ): «Հայաստանի մանուկներ» հիմնադրամի տնօրեն, կրթության ազգային ինստիտուտի, ԵՊՀ և մանկավարժական համալսարանների սոցիոլոգիայի և փիլիսոփայության դասախոս Սերոբ Խաչատրյանի կողմից անցկացվել է զեկուցում՝ նվիրված գյուղական համայնքների զարգացման մոդելներին: Երկրորդ կիսամյակում «Օրանժի» վաճառքի գծով մասնագետներն անցկացրել են դասախոսություն-սեմինար՝ «Արդյունավետ վաճառքի հմտությունները» թեմայով:

Մեր ուսանողները դուրս են եկել մրցույթի հանրապետական հարթակ, ինչն, անշուշտ, համալսարանի և ֆակուլտետի հաջողությունների, ուսանողների ինքնուրույն հետազոտական կարողությունների վկայությունն է: Տնտեսագիտական ֆակուլտետի 13 ուսանողներ մասնակցել են ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից հայտարարած «Բիզնես գրավչության իմ բանաձևը» մրցույթին և նրանցից 3-ը գրավել են 1-ին (Բոստանյան Խաչիկ, ՁՏԿ3), 3-րդ (Ղազարյան Էդվարդ, ՄՁՏԿ1) և 7-րդ (Ամիրխանյան Նունե, ՁՏԿ 2) մրցանակային տեղերը:

Ուսումնական տարվա ավարտին ուսանողները հանդիպում ունեցան «Վորդ Վիժենի» տնօրեն Հուսիկ Սարգսյանի հետ, որից հետո տնտեսագետների ակումբի անդամները քննարկեցին բիզնես հիմնելու ծրագրային փաթեթը և ընտրեցին կարի արտադրությունը: Ամռան ամիսներին շահած ծրագրով ձեռք են բերվել կարի մեքենաներ, հուլիս և կազմակերպվել է փոքր արտադրություն: Որպես ու-

սանողական արտադրական ձեռնարկություն, այն ուսանողությանը կապահովի արտադրական և բիզնեսային ոլորտի անհրաժեշտ գիտելիքներով ու կարողություններով:

2011 թվականի նոյեմբերի 16-ին ֆակուլտետում ուսանողական խորհրդի կողմից անցկացվեց ինտելեկտուալ մրցույթ «Ունիվերսալ տնտեսագետ» խորագրով: Մրցույթը կրում է շարունակական բնույթ:

Այսպիսով, կարևոր ենք համարում խթանել գիտելիքներ ձեռք բերելու ուսանողների հակումը, ինչին կարող են նպաստել տարաբնույթ միջոցառումները, մրցույթները, ցերեկույթները և այլ ձեռնարկները:

Գավառի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետի 2012-2013 ուսումնական տարվա զարգացման հայեցակարգը

Գավառի պետական համալսարանում կարևորվում են որակի ապահովման եվրոպական չափորոշիչներին և ուղենիշներին ուսուցումը համապատասխանեցնելու խնդիրները: Տնտեսագիտական ֆակուլտետն իր հերթին առանձնացնում է եղած ձեռքբերումները և դեռ չօգտագործված ռեսուրսները, արտաքին հնարավորությունները, սահմանում ուժեղ և թույլ կողմերը, հնարավոր վտանգները:

ԳՊԴ-ն ունի զարգացման և բարեփոխման հայեցակարգ, որը ծրագրային է յուրաքանչյուր ֆակուլտետի համար:

Տնտեսագիտական ֆակուլտետի 2012-2013 ուսումնական տարվա զարգացման հայեցակարգի կարևորագույն ուղղությունը բխեցնում ենք որակի ապահովման եվրոպական չափորոշիչների և ուղենիշների առաջադրած պահանջներից: Հայեցակարգը մշակվել է՝ հիմքում ունենալով ուսումնական ծրագրերի լիարժեք իրականացման համալիր կառուցակարգերը և վերջնարդյունքների հնարավորինս լիարժեք ամրագրումն ու դրանց իրականացումը: Հայեցակարգը միտված է ծրագրային վերջնարդյունքների ապահովմանը, մրցունակ մասնագետների պատրաստմանը: Հայեցակարգում դիտարկվում են դեպի բարձր չափորոշիչներ և ուղենիշներ ընթանալու իրական միջոցները: Ֆակուլտետի դեկանատի, ամբիոնների համար կրթության ասպարեզում հստակ ուղղություններ են առանձնացվում՝ որակի ապահովումը՝ իր ընթացակարգերով, ծրագրերի մշտադիտարկումը և պարբերական վերանայումը, դասախոսական կազմի որակի ապահովումը, տեղեկատվական համակարգերի օգտագործումը, կրթության գործընթացի հրապարակայնության ապահովումը և ուսումնական ռեսուրսների համալրումը: Ելնելով այս գլխավոր ուղղություններից, զարգացման հայեցակարգում նախատեսում ենք կոնկրետ, տեսանելի հատույց ապահովող գործընթացներ ու միջոցառումներ, որոնք կոչված են իմի բերելու ուսանողության, դասախոսների և գործատուների նպատակներն ու ջանքերը: Այս ամենը ենթադրում է մոտեցումների փոփոխություն դասավանդման, ուսումնառության, օբյեկտիվ գնահատման մեթոդներում: Այսպիսով.

• 2012-2013 ուստարվա համար գլխավոր խնդիրներից ենք համարում ուսումնական գործընթացի իրական վերահսկողությունը, կոնկրետ ժամանակում կոնկրետ ձեռքբերումների ապահովումը: Պետք է արվի հնարավորը՝ ապագա մասնագետների կայացումը ապահովելու կոնկրետ ժամանակի մեջ՝ աստիճանական զարգացմամբ:

• Մասնագետի կայացումը միայն ուսումնական վերջին տարում հնարավոր չէ: Այն յուրաքանչյուր ուստարվա և յուրաքանչյուր կիսամյակի խնդիր է:

Այս գործում կարևորում ենք ուսանողի կողմից պատասխանատվության ստանձնումը իր հետագա գործունեության համար, ինչը ենթադրում է դասախոսի կողմից ուսանողին ակտիվացնելու, նրա մեջ գիտելիքների պահանջ ձևավորելու ջանադիր աշխատանք: Դասախոսները պետք է արդիական պահանջներ առաջադրեն և ուսանողների մտքի սեփականությունը դարձնեն նոր, արդիական գիտության ձեռքբերումները: Տեսական գիտելիքներ, գործնական կարողություններ, մասնագիտության աստիճանական ձեռքբերում. սա է մեր պահանջը ուսանողից: Այդ պահանջը պետք է միասնական լինի բոլոր դասախոսների և ամբիոնների կողմից:

Հայեցակարգը ելնում է այն իրողությունից, որ այսուհետ տնտեսական համակարգը վերածում է գիտելիքների տնտեսության, հասարակությունը դառնում է տեղեկատվական, ինչը թելադրում է բուհական կրթությունը նպատակաուղղել դեպի նոր տեխնոլոգիաները, շուկայի պահանջարկը, նոր գիտելիքներ ձեռք բերելու կարողության ձևավորումը: Շրջանավարտը պետք է ձևավորվի որպես կյանքի տարաբնույթ մարտահրավերներին դիմակայող, արագ փոփոխվող իրավիճակներում ճիշտ կողմնորոշվող, ինքնուրույն մտածող անհատ: Մագիստրատուրայի բաժնում ուսուցումը անհրաժեշտ է զուգորդել ուսանողների գիտահետազոտական արդյունավետ աշխատանքի հետ:

- Ամբիոնների առջև դրվում են հետևյալ խնդիրները.
 - դասախոսներին տեղյակ պահել եվրոպական համալսարաններում որակի ապահովման կառուցակարգերին,
 - բարձր առաջադիմությամբ սովորող ուսանողներին աջակցել գիտական հոդվածների նախապատրաստման գործում,
 - ուսանողների գիտական օրինակելի աշխատանքները քննարկել և հրատարակել,
 - ամբիոնների գործունեության վարկանշային գնահատման համալիր հետազոտություն իրականացնել,
 - ապահովել դասախոսներին ներկայացվող չափանիշների հստակությունը և կոնկրետությունը,
 - ամբիոնների ջանքերը կենտրոնացնել դասավանդման ընթացքում գիտելիք ձևավորելու գործընթացի արդյունավետության ու հուսալիության ապահովմանը:

• Ամբիոնները անհրաժեշտ հետևողականություն պետք է հանդես բերեն դասախոսների տեսական գիտելիքների արդիականացման գործում, նրանց տրամադրեն նոր գրականություն: Դասախոսները պետք է ապահովեն շնորհվող կրե-

դիտների վավերականություն, դրանց թափանցիկություն և օբյեկտիվություն:

- Կրթական ծրագրերի և գործընթացների իրականացման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով պահանջված մակարդակով հավաքագրել տեղեկատվական համակարգերում առկա տեղեկությունները և ըստ հարկի վերլուծել:

- Պահանջ է առաջադրվում՝ ամբիոնների կողմից հաճախ կազմակերպել դասալսումներ ու դրանց քննարկումներ, դասախոսների աշխատանքին տալ տարբերակված գնահատական:

Նախատեսվում են նաև՝

- հանրապետության տարբեր բուհերի դասախոսների և միջազգային տարբեր ծրագրերում ընդգրկված խորհրդատուների փորձի ուսումնասիրում,

- նոր մեթոդների օգտագործում, ըստ այդմ՝ պարապմունքները վարել քննարկումներով, հարց ու պատասխանով, խնդիրների լուծումներով, այս ամենը ուղղորդելով անհրաժեշտ մեկնաբանություններով:

- Դասախոսությունը պետք է ունենա տրամաբանական կառուցվածք, հարուստ բովանդակություն: Ամբիոնների ուշադրությունը այսուհետ ևս կուղղվի դեպի դասախոսությունների ակտիվ ձևերի կիրառմանը: Դրանք են.

- հիմնախնդիրային դասախոսություն,

- դասախոսություն՝ կոնկրետ իրավիճակների քննարկմամբ,

- դասախոսություն - երկխոսություն, բանավեճ,

- դասախոսություն՝ գործնական ուսուցման մեթոդների հետ համակցված:

- Վերջնարդյունքների ձեռքբերման նպատակով խիստ կարևոր է.

- ուսանողների մեջ ինքնավերահսկման հմտություններ ձևավորելը,

- ֆակուլտետի ուսանողներին մղել ավելի լիարժեք օգտվելու համալսարանի համակարգչային կաբինետներից, համացանցից:

- Ֆակուլտետի ցածր առաջադիմություն ունեցող ուսանողների հետ հարկավոր է կատարել անհատական աշխատանք, կազմակերպել լրացուցիչ պարապմունքներ և խորհրդատվություն:

- Պրակտիկաներն անցկացնել արդյունավետ տնտեսավարող սուբյեկտներում, որտեղ առկա են պրակտիկ գործունեության անհրաժեշտ պայմաններ և համապատասխան կադրեր:

- Նոր հիմքերի վրա դնել բուհ-գործարար համայնք միմյանց կապող օղակների դերը՝

- գիտակ ձեռներեցներին ներգրավելով որպես դասավանդող, իսկ դասավանդողներին՝ որպես բիզնես մասնագետներ,

- գործատուներին և շրջանավարտներին ներգրավելով կրթական ծրագրերի մշակման և բարելավման գործում,

- ակտիվացնելով կրթության որակի գնահատման գործում մասնավոր հատվածի դերակատարությունը:

Ուսման որակի բարձրացման խնդիրը պահանջում է լարված աշխատանք: Տնտեսագիտական ֆակուլտետի նշանաբանն է՝ ուսանողներին տալ իրական գիտելիքներ և գործնական կարողություններ: Ապագա մասնագետը պետք է

ԳՊՀ 2011-2012 ուսումնական տարվա գործունեության հաշվետվություն

ձևավորվի օր-օրի, կրթական բարեփոխումների հատույցը պետք է ճշգրիտ հաշվարկվի:

Տնտեսագիտական ֆակուլտետի զարգացման հայեցակարգի հիման վրա դեկանատը, ամբիոնները կմշակեն միջոցառումներ, կսահմանվեն ժամկետներ հայեցակարգից բխող դրույթներն իրականացնելու համար:

Ս. Գ. ԱՄԻՐԻԱՆՅԱՆ
ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի դեկան

ՔՆՆԱՇՐՋԱՆԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

ՁՄԵՌԱՅԻՆ ՔՆՆԱՇՐՋԱՆ

Սասնագիտություն, կրթական աստիճան, կուրս	Քննաշրջանին մասնակցել են	Անբավարար զնահատական ստացած ուսանողների թիվը	Գերազան- ցիկների թիվը	Առաջադիմու- թյան %-ը
Բակալավրիատ				
Ֆինանսների				
2-րդ	29	4	9	79.3
3-րդ	32	5	20	81.3
4-րդ	34	4	16	82.4
Հաշվ. հաշվառում				
2-րդ	19	4	5	78.9
3-րդ	19	2	5	89.5
4-րդ	35	12	14	65.7
Ձեռնարկ. տնտ. և կառ.				
2-րդ	10	1	4	90.0
3-րդ	22	4	6	77.3
4-րդ	18	6	3	66.7
ԸՆԴԱՄԵՆՆԸ	218	42	82	78.0
Մագիստրատուրա				
Ֆինանսների				
1-ին	12	-	8	83.3
2-րդ	6	-	5	100
Հաշվ. հաշվառում				
1-ին	7	-	3	71.4
2-րդ	8	-	7	100
Ձեռն. տնտես. և կառ.				
1-ին	5	-	3	100
2-րդ	7	-	5	100
ԸՆԴԱՄԵՆՆԸ	45	-	31	90.9

ԱՄԱՌԱՅԻՆ ՔՆՆԱՇՐՋԱՆ

Սասնագիտություն, կրթական աստիճան, կուրս	Քննաշրջանին մասնակցել են	Անբավարար գնահատական ստացած ուսանողների թիվը	Գերազան- ցիկների թիվը	Առաջադիմու- թյան %-ը
Քակավալորիատ				
Ֆինանսներ 2-րդ	30	2	10	63.3
3-րդ	32	5	17	62.5
Հաշվ. հաշվառում 2-րդ	20	4	6	75.0
3-րդ	19	6	5	36.8
Ձեռն. տնտես. և կառ. 2-րդ	9	-	3	100
3-րդ	20	6	5	45
Ընդամենը	130	23	46	60.8
Մագիստրատուրա				
Ֆինանսներ 1-ին	10	-	5	70
Հաշվ. հաշվառում 1-ին	6	-	2	50
Ձեռն. տնտես. և կառ. 1-ին	5	-	4	80
Ընդամենը	21	-	11	67.0

2011/2012 ՈՒՄ. ՏԱՐՈՒՄ ՀՐԱՏԱՐԱԿԿԵԼ ԵՆ

Դասագիծը	Մեծագրություն	Ուսումնական ծեռնարկ	Ուսումնամեթոդական ծեռնարկ	Հոդված	Ձեկուցումների թեզիս
-	-	-	-	22	-

Ֆակուլտետում գործող ամբիոններ թիվը` 3

ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԱՄԲԻՈՆ

Ամբիոնի վարիչ՝ **Կարապետյան Վարազդատ Ազատի,**
տնտեսագիտության թեկնածու, ԳՊՀ դոցենտ

ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԸ

1. Զերգնյան Մարիամ Նորիկի - տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
2. Սովսեայան Դավիթ Մերուժանի - տնտեսագիտության թեկնածու,
ԳՊՀ դոցենտ
3. Խչեյան Մակիչ Համլետի - տնտեսագիտության թեկնածու, ԳՊՀ դոցենտ
4. Մուրադյան Գուրգեն Գևորգի - ասիստենտ
5. Խաչատրյան Գայանե Արտիկի - լաբորանտ

ՀԱՄԱՏԵՂՈՂՆԵՐ

1. Հարությունյան Հարություն Սարգսի - տնտեսագիտության թեկնածու,
դոցենտ
2. Խաչատրյան Հակոբ Հայկի - տնտեսագիտության թեկնածու,
ԳՊՀ պրոֆեսոր
3. Սերգոյան Գեղամ Պարույրի - դասախոս
4. Ծատրյան Քրիստինե Վլադիկի - դասախոս
5. Քալոյան Մանվել Խաչիկի - դասախոս

ԱՄԲԻՈՆՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Տեղական և տարածքային տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները:

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դասագիրք	Սենագրություն	Ուսումնական ծեռնարկ	Ուսումնամեթոդական ծեռնարկ	Գորված	Ձեկուցումների թեզիս
-	-	-	-	7	-

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՌԻՍՈՒՄՆԱՍԵԹՈՂԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

1. **Հերզոյան Մ. Ն., Մանուկյան Ա. Մ.** Բանկային ռիսկերի կառավարումը որպես բանկային գործունեության արդյունավետության բարձրացման գրավական // ԳՊԴ Գիտական հոդվածների ժողովածու, Տնտեսագիտություն, N 14, 2012:

2. **Խաչատրյան Գ. Ա.** Հարկային բեռի դրսևորման առանձնահատկությունները ՀՀ-ում ըստ տնտեսության առանձին ճյուղերի // ԳՊԴ Գիտական հոդվածների ժողովածու, Տնտեսագիտություն, N 14, 2012:

3. **Հերզոյան Մ. Ն., Մանուկյան Է. Պ.** Փոքր և միջին բիզնեսի դերն աշխատանքային ռեսուրսների օգտագործման արդյունավետությունն ապահովելու գործում // ԳՊԴ Գիտական հոդվածների ժողովածու, Տնտեսագիտություն, N 13, 2011, էջ 235-242:

4. **Խաչատրյան Գ. Ա.** Հարկային բարեփոխումների դերը պետական բյուջեի եկամուտների ձևավորման համատեքստում // ԳՊԴ Գիտական հոդվածների ժողովածու, Տնտեսագիտություն, N 13, 2011, էջ 246-251:

5. **Սերգոյան Գ. Պ.** Բանկերի և ապահովագրական ընկերությունների համագործակցությունը // ԳՊԴ Գիտական հոդվածների ժողովածու, Տնտեսագիտություն, N 13, 2011, էջ 242-246:

6. **Խաչատրյան Գ. Ա.** Արդյունավետ հարկային բեռի սահմանման հիմնահարցերը ՀՀ-ում // Հայաստան. Ֆինանսներ և էկոնոմիկա, N 12 (138), Երևան, «Տիգրան Մեծ», 2011, էջ 40-42:

7. **Հարությունյան Հ. Ս.** Քաղաքային հնացած հատվածների վերանորոգման և բարեկարգման հարցում մասնակցային արժեթղթերի միջոցով ներքին ներդրումների ազդեցության քննարկումը // Հայաստան. Ֆինանսներ և էկոնոմիկա, N 12 (138), Երևան, «Տիգրան Մեծ», 2011, էջ 55-59:

ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԱՄԲԻՈՆ

Ամբիոնի վարիչ՝

Ղուլոյան Հակոբ Մելսիկի,

*տնտեսագիտության թեկնածու, դոցենտ,
ԳՊԴ պրոֆեսոր*

ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԸ

1. **Խլղաթյան Իշխան Երեմի** - տնտեսագիտության թեկնածու, պրոֆեսոր

2. **Առաքելյան Վալերի Հովհաննեսի** - տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

3. **Ղաջոյան Կարինե Համլետի** - դասախոս

4. **Քոլոզյան Արմինե Ռաֆիկի** - լաբորանտ

ՀԱՄԱՏԵՂՈՂՆԵՐ

1. Ամիրխանյան Սամվել Գրիգորի - տնտեսագիտության թեկնածու, դոցենտ, ԳՊՀ պրոֆեսոր
2. Այրումյան Իրինա Գագիկի - տնտեսագիտության թեկնածու, դոցենտ, ԳՊՀ պրոֆեսոր
3. Մարկոսյան Սևակ Մեսրոպի-տնտեսագիտության թեկնածու
4. Մարգարյան Պարզև Սուրիկի - դասախոս
5. Եղիազարյան Սամվել Ռադիկի - դասախոս
6. Հակոբյան Անահիտ Ալեքսանի - դասախոս
7. Մարգարյան Հասմիկ Անդրանիկի - ասիստենտ
8. Մալոյան Անի Գևորգի- դասախոս
9. Օհանյան Այծեմիկ Վաղարշակի -դասախոս
10. Խանդանյան Նաիրա Մելիքի - դասախոս

ԱՄԲԻՈՆՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ա) Ձեռնարկությունների (կազմակերպությունների) տնտեսական գործունեության տնտեսագիտական վերլուծության և ֆինանսական պլանավորման մեթոդիկաների մշակման և կատարելագործման հիմնախնդիրները:

բ) Ձեռնարկությունների (կազմակերպությունների) կառավարման մեթոդների, մեխանիզմների, գործիքների և տեխնոլոգիաների մշակման և կատարելագործման հիմնական ուղղությունները:

գ) Կազմակերպություններում հաշվապահական հաշվառման, հարկային հաշվառման և աուդիտի մեթոդոլոգիայի և կազմակերպման կատարելագործման հիմնահարցերը:

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դասագիրք	Սենագրություն	Ուսումնական ծեռնարկ	Ուսումնամեթոդական ծեռնարկ	Գողված	Ձեկուցումների թեզիս
-	-	-	-	6	-

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՍԵԹՈՂՎԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

1. Առաքելյան Վ. Հ., Մարգարյան Հ. Ա., Սուրբասյան Հ., Սիմոնյան Մ. Վենչուրային ֆիրմաների դերը նորամուծությունների կառավարման գործընթացում

ԳՊՀ 2011-2012 ուսումնական տարվա գործունեության հաշվետվություն

// ԳՊՀ Գիտական հոդվածների ժողովածու, Հունանիտար գիտություններ, N 13, 2011, էջ 264:

2. Առաքելյան Վ. Հ., Սուքիասյան Հ., Դռնոյան Ա., Սիմոնյան Մ. Նորամուծական գործընթացի ֆինանսական աղբյուրների ձևավորման մի քանի հարցեր // ԳՊՀ Գիտական հոդվածների ժողովածու, Հունանիտար գիտություններ, N 13, 2011, էջ 260:

3. Առաքելյան Վ. Հ., Սարգսյան Ա. Ա., Մելքոնյան Ա. Ա. Կազմակերպության մրցակցային ռազմավարության մշակման արդի հիմնախնդիրները // ԳՊՀ Գիտական հոդվածների ժողովածու, Տնտեսագիտություն, N 13, 2011, էջ 251:

4. Դանիելյան Ն. Ռ. Ներքին աուդիտի դերը պետական ներքին ֆինանսական հսկողության համակարգում // ԳՊՀ Գիտական հոդվածների ժողովածու, Տնտեսագիտություն, N 13, 2011, էջ 275:

5. Խլղաթյան Ի. Ե., Ամիրխանյան Ս. Գ. Տնտեսագիտության տեսության զարգացման հիմնական ուղղությունները // ԳՊՀ Գիտական հոդվածների ժողովածու, Տնտեսագիտություն, N 14, 2012:

6. Ամիրխանյան Ս. Գ., Օհանյան Ն. Հ. Պետական միջնաժամկետ ծախսային ծրագիրը: ՀՀ 2012-2014թթ. միջնաժամկետ ծախսային ծրագրի մասին. // ԳՊՀ Գիտական հոդվածների ժողովածու, Տնտեսագիտություն, N 14, 2012:

**ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՄԲԻՈՆ**

Ամբիոնի վարիչ՝ **Զաքոյան Հրաչյա Սամվելի,**
տնտեսագիտության թեկնածու, ԳՊՀ պրոֆեսոր

ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԸ

1. Հովակիմյան Ռազմիկ Ռուբենի - տեխ. գիտ. թեկնածու, դոցենտ, ԳՊՀ պրոֆեսոր
2. Շահինյան Վարդուհի Էդիկի - ասիստենտ
3. Թադևոսյան Նարինե Հակոբի - ասիստենտ
4. Բազոյան Սոնա Սահակի - ասիստենտ
5. Հովեյան Աստղիկ Գագիկի - դասախոս
6. Հակոբյան Սաթենիկ Վարդանի – լաբորանտ

ՀԱՍԱՏԵՂՈՂՆԵՐ

1. Կիրակոսյան Էդգար Սամվելի - դասախոս
2. Կիրակոսյան Երեմ Լյովայի - դասախոս
3. Ենգիբարյան Աննա Մարտունու - դասախոս

4. Սարգսյան Հուսիկ Հայկի- դասախոս

**ԱՄԲԻՈՆՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Աշխատանքային ռեսուրսների օգտագործման արդյունավետության բարձրացման հնարավորությունները ՀՀ մարզերում:

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դասագիրք	Սենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Ձեկուցումների թեզիս
-	-	-	-	9	-

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՍԵԹՈՂԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

1. **Закоян Г. С.** Нынешнее состояние и возможности улучшения деятельности фермерских хозяйств Республики Армения, Материалы конференции Ташкентского государственного аграрного университета, Ташкент, 2011, УД 631.15.017.3:

2. **Հակոբյան Ս. Վ.** ՀՀ վճարային հաշվեկշռի ազդեցությունը գնաճի և տնտեսության մրցունակության վրա 1999-2010թթ. // ԳՊՀ Գիտական հոդվածների ժողովածու, Տնտեսագիտություն, N 13, 2011, էջ 292-299:

3. **Հակոբյան Ս. Վ.** Դրամավարկային քաղաքականության մոդելների արդյունավետության գնահատումը ՀՀ-ում` տնտեսության իրական հատվածի հետ կապի տեսանկյունից // ԳՊՀ Գիտական հոդվածների ժողովածու, Տնտեսագիտություն, N 13, 2011, էջ 299-304:

4. **Թադևոսյան Ն. Հ.** Ջարգացող երկրների տնտեսությունների վրա ձեռնարկատիրության և հասարակության փոխազդեցության գնահատումը և այն կատարելագործելու ուղիները // ԳՊՀ Գիտական հոդվածների ժողովածու, Տնտեսագիտություն, N 13, 2011, էջ 279-287:

5. **Թադևոսյան Ն. Հ.** Հայկական օղու շուկայի զարգացումները և առկա հիմնախնդիրները // ԳՊՀ Գիտական հոդվածների ժողովածու, Տնտեսագիտություն, N 13, 2011, էջ 287-292:

6. **Հակոբյան Ս. Վ.** Տնտեսության իրական հատվածի և բանկային վարկավորման փոխազդեցության գնահատումը ՀՀ-ում // ԳՊՀ Գիտական հոդվածների ժողովածու, Տնտեսագիտություն, N 14, 2012:

7. **Բազդոյան Ս. Ս.** Արժեթղթերի պորտֆելի ձևավորման փուլերը և «օրացուցային» օրինաչափությունները // ԳՊՀ Գիտական հոդվածների ժողովածու, Տնտեսագիտություն, N 14, 2012:

ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Պատասխանատու՝ Կուտուզյան Նելլի Ալբերտի,
ֆիզիկամաթեմատիկական գիտությունների
թեկնածու, դոցենտ

ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՈՒՄՆԵՐԸ

Դասիչ	Մասնագիտություն
031000	Հայոց լեզու և գրականություն
032400	Ռուսաց լեզու և գրականություն
030400	Պատմություն (իրավունքի հիմունքներ)
020400	Աշխարհագրություն
051100	Մանկավարժություն և մեթոդիկա (տարրական կրթության)
030500	Իրավագիտություն
081500	Հաշվապահական հաշվառում

Մասնագիտացումներ՝	Բանասեր. Հայոց լեզվի և գրականության ուսուցիչ
	Բանասեր. Ռուսաց լեզվի և գրականության ուսուցիչ
	Պատմաբան. Պատմության ուսուցիչ
	Աշխարհագրագետ. Աշխարհագրության ուսուցիչ
	Տարրական դասարանների ուսուցիչ
	Իրավագիտություն Տնտեսագետի

Ուսանողների թիվը՝ 1125

Շրջանավարտների թիվը՝ 107

ԳՎԿԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ
ՖՆԿՈՒՆԵՏԻ 2011-2012 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ
ԳՈՐԾՈՒՄԵՆՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ 2012-2013
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՉԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ

2011-2012 ուսումնական տարում ԳՊԴ հեռակա ուսուցման ֆակուլտետում կրթական գործընթացը կազմակերպվել է՝ համաձայն ուսումնական պլանների, համալսարանում գործող կանոնակարգերի, նախապես հաստատված ժամանակացույցերի, դասացուցակների: 2011-2012 ուսումնական տարվա զարգացման հայեցակարգային 14 ուղղություններից իրականացվել է 10-ը, այսինքն՝ պլանավորված աշխատանքների 71%-ը: Հաշվետու ուստարում ծրագրված գործողություններից չկատարվեցին կամ թերկատարվեցին ներքոհիշյալ աշխատանքները.

1. *Ուսանողների համար անգլերեն լեզվի և համակարգչային դասընթացների կազմակերպում:*

2. *Ուսանողների համար էլեկտրոնային ուսուցման դասընթացների կազմակերպում:*

Այս աշխատանքները չեն իրականացվել՝ կապված ուսանողների շրջանում դասընթացներին մասնակցելու ցանկության բացակայության հետ, սակայն, երբ պատրաստ լինի և գործարկվի ԳՊԴ ուսանողական պորտալը, էլեկտրոնային ուսուցման անհրաժեշտությամբ պայմանավորված՝ հեռակա համակարգում կտարվեն աշխատանքներ հիշյալ դասընթացների կազմակերպման ուղղությամբ:

3. *Արտադրական, ուսումնական պրակտիկաների կարևորում, պրակտիկաների բազաների ընդլայնում, ուսումնական պլաններում պրակտիկաների համաչափ բաշխում:* այս ուղղությամբ աշխատանքները թերկատարված են: Թեև պրակտիկաների բազաները ընդլայնվել են, կնքվել են պայմանագրեր հանրապետության տարբեր գիտական, կրթական, արտադրական հաստատությունների հետ, հատկապես նոր բացվող մասնագիտությունների գծով, սակայն ուսումնական պլաններում պրակտիկաները համաչափ չեն բաշխվել՝ պայմանավորված այն հանգամանքով, որ 2012-2013 ուսումնական տարում բակալավրիատի առաջին կուրսերում ներդրվելու է կրեդիտային համակարգ, որի պայմաններում արդեն իսկ ուսումնասարտադրական պրակտիկաները կբաշխվեն նորովի:

4. *Հաշվի առնելով հեռակա ուսուցման համակարգում ուսանողների տեղափոխությունների, երկրորդ մասնագիտություն ստացողների ինտենսիվ աճը՝ հեռակա ուսուցման համակարգում կրթական ծրագրերում նախատեսված դասընթացների գծով ուսանողների մուտքային գիտելիքների ստուգման նպատակով առարկայական տարբերությունների հանձնումը կատարել համակարգչային եղանակով:*

Ֆակուլտետում ուսանողների գնահատման գործընթացը բարեփոխելու, սովորողների գիտելիքների գնահատումը առավել օբյեկտիվ անցկացնելու նպա-

ԳՊԴ 2011-2012 ուսումնական տարվա գործունեության հաշվետվություն

տակով հաշվետու ուսումնական տարվա 2-րդ կիսամյակում համակարգչային եղանակով թեստային քննություններ են անցկացվել «Բարձրագույն մաթեմատիկա», «ՀՀ սահմանադրական իրավունք», «Հոգեբանություն» առարկաներից: Քննական գործընթացը վերահսկվել է մասնագետ չհանդիսացող և միայն տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց կողմից՝ համալսարանի կողմից ընդունված «Ակադեմիական ազնվության հայեցակարգի» սկզբունքների և պահանջների համաձայն: Սակայն ուսանողների մուտքային գիտելիքների ստուգումը, առարկայական տարբերությունների հանձնումը դեռևս չի անցկացվում համակարգչային եղանակով, ինչը շատ է կարևորվում:

Հաշվետու ուսումնական տարվա 1-ին կիսամյակում ուսանողների առաջադիմությունը նախքան լուծարային շրջանը կազմել է 78,7 % (նախորդ ուստարում՝ 77,1%), իսկ 2-րդ կիսամյակում՝ 60,5% (նախորդ ուստարում՝ 58%): Նկատվել է ընթացիկ առաջադիմության աճ, ինչն արդյունք է հաշվետու ուստարում կրթության որակի բարձրացման նպատակով դեկանատի և մասնագիտական ամբիոնների կողմից իրականացված հետևողական աշխատանքի, ինչպես նաև ուսանողների կողմից կրթության որակի արժևորման: Առաջադիմության ամենացածր ցուցանիշ առաջին կիսամյակում գրանցվել է տարրական կրթության մանկավարժություն և մեթոդիկա 6-րդ կուրսում՝ 35,3%, ամենաբարձր ցուցանիշ՝ մանկավարժություն և մեթոդիկա /տարրական կրթության/ բաժնի 1-ին և 5-րդ կուրսերում՝ 100%, իսկ երկրորդ կիսամյակում առաջադիմության ամենացածր ցուցանիշ գրանցվել է իրավագիտություն բաժնի 1-ին կուրսում՝ 17,3%, ամենաբարձր ցուցանիշ՝ աշխարհագրություն բաժնի 5-րդ կուրսում՝ 100%:

Մասնագիտական ամբիոնները դեկանատի կողմից ստացել են շրջաբերական՝ ներկայացնելու համապատասխան գործողությունների, միջոցառումների իրականացման ծրագրեր՝ ուսանողների ուսման առաջադիմությունը բարձրացնելու նպատակով:

2011-2012 ուսումնական տարում հեռակա ուսուցման ֆակուլտետի 7 մասնագիտությունների գծով ընդունվել է 156 ուսանող, որոնցից նպատակային տեղերում ընդունվել է 4 ուսանող, նրանցից 2-ը Գեղարքունիքի մարզից են, 1-ը՝ Տավուշի մարզից, 1-ը՝ ԼՂՀ-ից: Նրանց հետ կնքվել են եռակողմ պայմանագրեր: Ուսանողների շրջանում բարձր ակադեմիական առաջադիմություն ապահովելու, հաճախումները բարձր մակարդակի վրա պահելու նպատակով դեկանատի կողմից կատարվել են կանոնակարգված աշխատանքներ:

Հաշվետու ուսումնական տարում ֆակուլտետում սովորել է 1074 ուսանող, նրանցից 136-ը՝ աշխարհագրություն, 264-ը՝ պատմություն, 155-ը՝ մանկավարժություն և մեթոդիկա /տարրական կրթության/, 115-ը՝ ռուսաց լեզու և գրականություն, 157-ը՝ հայոց լեզու և գրականություն, 64-ը՝ հաշվապահական հաշվառում, 183-ը՝ իրավագիտություն բաժիններում: 2011-2012 ուսումնական տարում այլ ուսումնական հաստատություններից հեռակա ուսուցման ֆակուլտետ է տեղափոխվել 15 ուսանող, երկրորդ մասնագիտություն ստանալու նպատակով հեռակա ուսուցման ֆակուլտետում հաշվետու ուստարում սովորում է 57 ուսանող, միջին մասնագիտական ուսումնական հաստատություններից ուսումնառություն-

ըն շարունակում է 13 ուսանող:

2011-2012 ուսումնական տարում անհարգելի բացակայությունների պատճառով նկատողություն են ստացել 372 (նախորդ ուստարում՝ 229), խիստ նկատողություն՝ 102 (նախորդ ուստարում՝ 56) ուսանողներ, դասերից անհարգելի բացակայելու պատճառով համալսարանից հեռացվել է 127 ուսանող (նախորդ ուստարում՝ 34):

Ջեռակա ուսուցման ֆակուլտետի ուսանողները ամփոփիչ ատեստավորման քննություններին ցուցաբերեցին 68,5% առաջադիմություն: Այս ցուցանիշը մտահոգիչ է և թե՛ դեկանատին, թե՛ ամբիոններին լուրջ հետևություններ անելու, համակարգված աշխատանքներ ծրագրելու և իրականացնելու պահանջ է ներկայացնում: Ամփոփիչ ատեստավորման գործընթացի արդյունքներով գերազանցության դիպլոմ շնորհվեց 5 շրջանավարտի, 38 ուսանող (նախորդ ուստարում՝ 39) ամփոփիչ ատեստավորման քննություններին բավարար գիտելիքներ չդրսևորելու կամ չներկայանալու պատճառով հեռացվեց համալսարանից:

Ուսումնական տարվա ընթացքում տարվել են աշխատանքներ ուսանողներին ակադեմիական և ֆինանսական աջակցություն ցուցաբերելու ուղղությամբ, կազմակերպվել են հավելյալ մասնագիտական խորհրդատվություն և անհատական աշխատանքներ՝ ստուգողական, կուրսային առաջադրանքների կատարմանն աջակցելու նպատակով:

«ՎիվաՍել-ՄՏՄ» կրթական ֆոնդ ծրագրից և «Օրանժ Հայաստան» բարեգործական կազմակերպության «Օրանժ» հիմնադրամի կողմից ուսանողներին ցուցաբերվեց զգալի ֆինանսական աջակցություն: 2011-2012 ուսումնական տարում ուսման զեղչերից օգտվել է 12 ուսանող: ՀՀ պետական ուսումնական հաստատություններում ՀՀ օրենսդրությամբ սահմանված համապատասխան արտոնություններից օգտվելու կարգի համաձայն՝ ֆակուլտետում անվճար սովորում է 16 ուսանող:

Հաշվետու ուստարում շարունակվել են հարցումները ուսանողների և շրջանավարտների շրջանում: Դրանք վերաբերվել են գիտելիքների գնահատման չափանիշներին, մեթոդներին, անցկացման օբյեկտիվությանը, կրթական ծրագրերի ուսումնամեթոդական ապահովվածությանը, ռեկտորատի, դեկանատի, վարչատնտեսական անձնակազմի աշխատանքների գնահատմանը: Արդյունքները քննարկվել են ռեկտորատում, դեկանատում, համապատասխան ամբիոններում:

Դասախոսական կազմը համալրվել է որակյալ մասնագետներով: 2011-2012 ուսումնական տարում ֆակուլտետը համալրված էր այնպիսի պրոֆեսորադասախոսական անձնակազմով, որն ուներ պատշաճ մասնագիտական իրազեկություններ՝ կրթական ծրագրերի նպատակների իրագործման համար, ինչպես նաև սովորողների մոտ զարգացնելու հմտություններ՝ կրթական ծրագրերի վերջնարդյունքներին տիրապետելու համար: Ֆակուլտետում աշխատում էին 79 դասախոսներ, նրանցից 8-ը՝ գիտության դոկտորներ (10%), 38-ը՝ գիտության թեկնածուներ (48%), այսինքն՝ ֆակուլտետում աշխատող դասախոսների 58%-ը ունի գիտական աստիճան:

Ուսման որակը բարձրացնելու կարևոր գործոններից է նաև ուսումնամեթո-

դական բազայի ապահովումը և դրա հետևողական համալրումը: Շարունակվում է հեռակա ուսուցման համակարգում սովորողների համար ուսումնամեթոդական ձեռնարկների պատրաստման և հրատարակման գործընթացը:

Ուսումնասիրելով հանրության շրջանում հեռակա ուսուցման համակարգին ներկայացվող կրթական պահանջները՝ ֆակուլտետի և մասնագիտական ամբիոնների նախաձեռնությամբ մշակվեց և ԿԳՆ լիցենզավորման գործակալություն ներկայացվեց նոր մասնագիտությունների գծով գործունեության թույլտվություն ստանալու համար անհրաժեշտ փաստաթղթային փաթեթը, և 2012 թվականին դիմորդների գործերի ընդունելություն կատարվեց 13 մասնագիտությունների գծով: Այսպիսով, ֆակուլտետում գործող 7 մասնագիտությունների ցանկը համալրվեց ևս 6 ներքոհիշյալ մասնագիտություններով.

- Կենսաբանություն,
- Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա,
- Բնապահպանություն և բնօգտագործում,
- Դեղագործական քիմիա,
- Քարտեզագրություն և կադաստրային գործ,
- Սերվիս:

Ֆակուլտետի համալրումը նոր կրթական ծրագրերով, սովորողների թվի ավելացումը, կրթության որակին ներկայացվող ժամանակակից եվրոպական չափանիշները, աշխատաշուկայի՝ օրըստօրե փոփոխվող, խստացող պահանջները, սոցիալ-տնտեսական, մշակութային զարգացումները անհրաժեշտություն են դարձնում 2012-2013 ուսումնական տարում իրականացնելու ֆակուլտետի զարգացման և կրթության որակի բարելավման համալիր գործողություններ:

Հեռակա ուսուցման ֆակուլտետի 2012-2013 ուսումնական տարվա զարգացման հայեցակարգը ներառում է հետևյալ ուղղություններով պլանավորված աշխատանքներ.

1. ուսումնական պլանների, առարկայական ծրագրերի, թեմատիկ պլանների նորացում՝ ուսանողների, շրջանավարտների, գործատուների շրջանում անցկացված հարցումների արդյունքների, մասնագիտություններում ժամանակակից գիտատեխնիկական առաջընթացի, գիտության արդի նվաճումների հաշվառմամբ,

2. «Գավառի պետական համալսարանի հեռակա ուսուցման համակարգում բակալավրի կրթական աստիճանում կրեդիտային համակարգով ուսումնական գործընթացի կազմակերպման և ուսանողների գիտելիքների գնահատման կարգի» մշակում և գիտխորհրդի հաստատման ներկայացում,

3. ֆակուլտետում իրականացվող բոլոր կրթական ծրագրերի ուսումնական պլանների կրեդիտային համակարգի պահանջներին համապատասխան մշակում, կրեդիտների բաշխում՝ ըստ դասընթացների և այլ կրթական մոդուլների՝ համաձայն համապատասխան կարգի, ինչպես նաև հանրապետության այլ առաջավոր բուհերի նմանատիպ ծրագրերի համադրական վերլուծության,

4. ֆակուլտետում իրականացվող բոլոր կրթական ծրագրերի առաջին կուր-

սերում կրեդիտային համակարգի ներդրում,

5. կրեդիտային համակարգով սովորող բակալավրիատի ուսանողի և դասախոսի ուղեցույցերի մշակում և հրապարակում,

6. բուհ-ուսանող-շրջանավարտ-գործատու հարաբերություններում հետադարձ կապի ապահովման աշխատանքների շարունակում, համալսարանում ստացած կրթությունից բավարարվածության վերաբերյալ հարցումների անցկացում՝ պրակտիկաներից վերադարձած, ինչպես նաև իրենց մասնագիտությամբ աշխատող ուսանողների և շրջանավարտների շրջանում,

7. հեռակա ուսուցման համակարգում կրթության որակի վերաբերյալ ամբիոնների հաշվետվությունների կարևորում, կրթության որակի վերաբերյալ ամբիոնային քննարկումների անցկացում, զարգացման հայեցակարգային խնդիրների ձևակերպում,

8. ամբիոններում հեռակա ուսուցման համակարգում կրթական ծրագրերի իրականացման մեթոդական, ուսումնական անհրաժեշտ փաստաթղթային բազայի ամենամյա մշտադիտարկում և բարելավում,

9. ուսանողների գործնական հմտությունների ձևավորում ու զարգացում, դասավանդման նոր, ինտերակտիվ մեթոդների, ուսուցման արդի մոտեցումների ներդրում, գործնական հմտությունների ուսուցման նոր մեթոդիկայի կիրառում,

10. մանկավարժի որակավորմամբ մասնագիտությունների գծով մանկավարժական կրթության որակի բարելավման, ուսումնական պլանների, առարկայական ծրագրերի նորացման, սեմինարների կազմակերպման նպատակով՝ ՀՀ ԿԳՆ կրթական ծրագրերի կենտրոնի, Կրթության ազգային ինստիտուտի, դպրոցների տնօրենների հետ համագործակցության շարունակական աշխատանքների իրականացում, ՀՀ-ում մանկավարժական կրթության բարեփոխումների ծրագրերին մասնակցության ապահովում և հետևողական աշխատանքների իրականացում,

11. ԳՊՀ հեռակա ուսուցման համակարգում կրթական ծրագրերում նախատեսված դասընթացների գծով ուսանողների գիտելիքների մուտքային և ընթացիկ ստուգման նպատակով քննական թեստերի մշակման, համակարգչային եղանակով քննությունների անցկացման շարունակական աշխատանքների իրականացում,

12. ԳՊՀ հեռակա ուսուցման համակարգում իրականացվող կրթական ծրագրերով շրջանավարտների թողարկման համար նախապատրաստական աշխատանքների պլանավորում և հետևողական իրականացում, ամփոփիչ ատեստավորման գործընթացի պատշաճ կազմակերպում:

Ն. Ա. ԿՈՒՏՈՒԾՅԱՆ
ԳՊՀ ուսումնագիտական գծով պրոռեկտոր

ՔՆՆԱՇՐՋԱՆԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

ՁՄԵՌԱՅԻՆ ՔՆՆԱՇՐՋԱՆ

Սասնագիտություն, կրթական աստիճան, կուրս	Քննաշրջանին մասնակցել են	Անբավարար գնահատական ստացած ուսանողների թիվը	Գերազանցիկ- ների թիվը	Առաջադիմության %-ը
Հայոց լեզու և գրականություն				
1-ին	12	-	-	100
2-րդ	16	5	-	68,8
3-րդ	36	6	4	77,8
4-րդ	27	2	-	85,2
5-րդ	36	-	2	94,4
6-րդ	24	-	3	91,7
Ռուսաց լեզու և գրականություն				
1-ին	16	4	-	43,75
2-րդ	17	-	-	94,1
3-րդ	24	3	3	79,2
4-րդ	22	4	3	81,8
5-րդ	19	-	-	89,5
6-րդ	14	-	5	92,9
Պատմություն /իրավունքի հիմ./				
1-ին	24	1	-	87,5
2-րդ	42	2	1	66,7
3-րդ	51	4	5	68,6
4-րդ	49	5	14	77,6
5-րդ	46	1	11	97,8
6-րդ	32	-	7	87,5
Աշխարհագրություն				
1-ին	11	-	-	81,81
2-րդ	25	5	4	64
3-րդ	19	4	2	68,4
4-րդ	24	-	-	87,5
5-րդ	31	-	-	100
6-րդ	21	-	2	95,2
Մանկավարժություն և մեթոդիկա /տարր. կրթ./				
1-ին	16	-	2	100
2-րդ	26	1	1	96,2
3-րդ	34	1	4	91,2
4-րդ	22	-	5	95,5
5-րդ	33	-	2	100
6-րդ	17	4	1	35,3
Իրավագիտություն				
1-ին	55	14	7	43,63
2-րդ	115	10	-	71,3
Հաշվապահական հաշվառում				
1-ին	20	4	2	40
2-րդ	38	-	-	71,1
ԸՆԴԱՄԵՆԸ	1014	80	90	78,69

ԱՄՈՒԱՅԻՆ ՔՆՆԱՇՐՋԱՆ

Մասնագիտություն, կրթական աստիճան, կուրս	Քննաշրջանին մասնակցել են	Անբավարար գնահատական ստացած ուսանողների թիվը	Գերազան- ցիկների թիվը	Առաջադի- մության %-ը
Հայր լեզու և գրականություն				
1-ին	12	4	-	66,6
2-րդ	16	6	-	62,5
3-րդ	32	11	-	43,8
4-րդ	27	-	4	92,6
5-րդ	36	1	3	97,2
Ռուսաց լեզու և գրականություն				
1-ին	15	-	-	80
2-րդ	16	6	-	56,3
3-րդ	23	1	1	73,9
4-րդ	20	1	3	70
5-րդ	19	-	-	78,9
Պատմություն /իրավունքի հիմ./				
1-ին	29	14	-	34,4
2-րդ	43	9	1	44,2
3-րդ	47	18	-	27,7
4-րդ	49	4	2	46,9
5-րդ	46	-	-	97,8
Աշխարհագրություն				
1-ին	12	-	-	83,3
2-րդ	20	2	1	80
3-րդ	19	1	-	78,9
4-րդ	24	3	2	75
5-րդ	30	-	3	100
Մանկավարժություն և մեթոդիկա /տարր. կրթ./				
1-ին	18	-	1	94,4
2-րդ	27	4	-	44,4
3-րդ	34	8	2	67,6
4-րդ	23	-	-	87
5-րդ	33	-	7	93,9
Իրավագիտություն				
1-ին	52	35	-	17,3
2-րդ	108	19	-	25
Հաշվապահական հաշվառում				
1-ին	18	-	-	77,7
2-րդ	40	3	3	65
ԸՆԴՀԱՄԵՆՆԸ	888	149	33	60,47

ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

2011-2012 ուսումնական տարում Գավառի պետական համալսարանի Ակադեմիական քաղաքականության վարչությունը /այսուհետ՝ ԱՔՎ/ որպես ուսումնավարչական կառուցվածքային ստորաբաժանում իր գործունեությունը ծավալել է հետևյալ հիմնական խնդիրների լուծման ուղղություններով՝ ուսումնական գործընթացի համակարգում, կազմակերպում, մշտադիտարկում և բարելավում, որակի մշակույթի ձևավորում, կանոնակարգային (ընթացակարգային) հենքի մշտական բարելավում, ուսումնակազմակերպչական մասով բուհի հաշվետվողականության ապահովում, մինչբուհական կապերի ամրապնդում և զարգացում, ուսանողական կազմակերպությունների աշխատանքների խրախուսում:

Նշված խնդիրների լուծման նպատակով ԱՔՎ-ն իրականացնում է մի շարք գործառույթներ, որոնց հստակ և լիարժեք կատարմամբ է պայմանավորված բուհի անխափան ուսումնական գործունեությունը:

Ուստի, ԱՔՎ-ի գործառույթները կանոնակարգված են և ենթակա արդյունավետ ու նպատակային կատարման:

Հաշվետու ժամանակահատվածում կառույցը ուսումնական գործընթացի կազմակերպման և համակարգման ուղղություններով իրականացրել է հետևյալ աշխատանքները.

- երկաստիճան կրթական համակարգում՝ (բակալավրիատ, մագիստրատուրա) իրականացվող կրթական ծրագրերի ուսումնական պլանների և առարկայական ծրագրերի վերանայման, թարմացման գործընթացների և կատարման վերահսկում, ինչի շնորհիվ հաշվետու տարում Գավառի պետական համալսարանը ուսումնական գործընթացը մեկնարկեց բակալավրիատի և մագիստրատուրայի բարելավված ուսումնական ծրագրերով և պլաններով,

- ամբիոնային ծանրաբեռնվածությունների ստուգում և կատարման վերահսկում,

- ժամավճարային հիմունքներով աշխատող դասախոսների ձևակերպման ներկայացում և ամենամսյա կատարված ժամաքանականների ներկայացում վճարման,

- բակալավրիատի և մագիստրատուրայի դասատախտակների ստուգում և ուսումնական գործընթացը լսարանային ֆոնդով ապահովում,

- ուսումնական գործընթացի ժամանակացույցի և դասատախտակների լավարկում (օպտիմալացում),

- դասերի կայացման գործընթացի վերահսկում,

- ընթացիկ և հանրագումարային քննությունների անցկացման վերահսկում,

- ուսումնական, արտադրական և մանկավարժական պրակտիկաների կազմակերպում և վերահսկում,
- ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների աշխատանքների կազմակերպում,
- ուսանողների ավարտական փաստաթղթերի նախապատրաստում և հաշվառում,
- քննական ու ավարտական որակավորման մատյանների պատրաստում,
- ուսումնական գործընթացի փաստաթղթային գործավարության ապահովում և վերահսկում,
- երկրորդ մասնագիտության գծով ընդունելության կազմակերպում,
- ներքուհական և միջբուհական տեղափոխությունների կազմակերպում,
- ուսանողների շարժի հետ կապված /հեռացման, ուսանողական իրավունքների վերականգնման, տեղափոխության, տարկետման/ հրամանների նախագծերի նախապատրաստում և հաշվառում,
- ԳՊԴ գիտական խորհրդում ուսումնական գործընթացին վերաբերող հարցերի նախապատրաստում և ներկայացում,
- ԳՊԴ ուսումնական աշխատանքների հաշվարկի նորմերի մշակում,
- ֆակուլտետների և ամբիոնների կողմից ուսումնական գործընթացի կազմակերպմանը վերաբերող ԳՊԴ հրամանների և նորմատիվային փաստաթղթերի կատարման վերահսկում,
- վարչական կազմի համար «Համակարգչային գործ» և «Անգլերեն լեզու» լրացուցիչ կրթական ծառայությունների կազմակերպում և այլն:
Ուսումնական գործընթացի մշտադիտարկման և բարելավման խնդիրների լուծման ուղղություններով կառույցը հաշվետու ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ գործառնությունները.
- դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցումների կազմակերպում,
- ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների հաշվետվություններում նշված առաջարկությունների մշակում,
- գործընկեր կազմակերպությունների կողմից պրակտիկաների վերաբերյալ առաջարկությունների մշակում,
- ֆակուլտետային մեթոդական խորհուրդների աշխատանքների կոորդինացում և ակտիվացում,
- դիպլոմների երկլեզու հավելվածների պատրաստման աշխատանքների համակարգում,
- առարկայական ծրագրերում հարցաշարերի, հանձնարարված գրականության ցանկերի, դասավանդման մեթոդների ներդրման, թարմացման և բարելավման գործընթացների իրականացում և վերահսկում:
Բուհում որակի մշակույթի ձևավորման ուղղությամբ կարևորվում է ԱԹՎ-ի կազմում գործող որակի ապահովման բաժնի աշխատանքը, որի գործառնությունները հատկապես նպաստում են բուհում բոլորնյան սկզբունքների ներդրման, բուհի հավատարմագրման նախապատրաստման գործընթացներին:

ԳՊՀ 2011-2012 ուսումնական տարվա գործունեության հաշվետվություն

Կառույցի կողմից բուհի հաշվետվողականությունն ապահովվել է հետևյալ աշխատանքներով.

- կիսամյակային և տարեկան հաշվետվությունների նախապատրաստում,
- ՀՀ Կրթության և գիտության նախարարության համար ուսումնական գործընթացին վերաբերող տեղեկատվական-վիճակագրական տվյալների նախապատրաստում,
- ԳՊՀ ուսանողների տարեկան շարժի համակարգում և ներկայացում /հեռացում, ուսանողական իրավունքների վերականգնում, տարկետում, տեղափոխություն/:

2011-2012 ուսումնական տարում գրանցվել է ուսանողների հետևյալ շարժը.

1	Այլ բուհերից ԳՊՀ են տեղափոխվել	20
2	ԳՊՀ-ից այլ բուհ են տեղափոխվել	1
3	Երկրորդ մասնագիտություն ստացողներ	39
4	Քոլեջից ԳՊՀ են ընդունվել	8
5	Առկա ուսուցման ֆակուլտետից տեղափոխվել են հեռակա	19
6	Հեռակա ուսուցման ֆակուլտետից տեղափոխվել են առկա	39
7	Ներֆակուլտետային տեղափոխություն	40
8	Տարկետում են ստացել`	121
	> առողջական վիճակի պատճառով	7
	> գինժառայության մեկնելու հիմքով	114
9	ԳՊՀ-ից հեռացվել են	217
10	ԳՊՀ-ից ազատվել են	25
11	Վերականգնվել են ԳՊՀ`	183
	> գորացրումից հետո	71
	> հեռացումից հետո	37
	> տարկետումից հետո	22
	> պետական քննություններին թույլատրվածներ	53
	Ընդհանուր շարժ	712

Մինչբուհական կապերի ամրապնդման ոլորտում կարևորվել են`

- համալսարան-դպրոց կապի ամրապնդման աշխատանքները` փոխադարձ այցելությունների և դպրոցներում հանդիպումների ձևաչափերով,
- դպրոցներին համալսարանի մասնագիտությունների, ընդունելության, ուսումնական գործընթացի տարբեր ուղղությունների մասին համապատասխան տեղեկատվության տրամադրումը,
- նախապատրաստական դասընթացների կազմակերպումը և այլն:

Ուսանողական կառույցների հետ աշխատանքներում ԱԲՎ-ն հանդես է գալիս հիմնականում համակարգողի դերում: Կատարվել են հետևյալ աշխատանքները.

ԳՊԴ 2011-2012 ուսումնական տարվա գործունեության հաշվետվություն

- ուսանողների տվյալների /անձնական գործերի, ՄՈԳ-երի, վճարովի և անվճար համակարգում սովորողների մասին/ բազայի ստեղծում,
- անհրաժեշտ տեղեկատվության տրամադրում,
- ուսանողների ուսման վարձի զեղչման հիմքերի ուսումնասիրում,
- ուսանողների համար լրացուցիչ կրթական ծառայությունների /«Համակարգչային գործ», «Օտար լեզու» և այլ դասընթացներ/ կազմակերպում և այլն:

2012-2013 ուսումնական տարում ԳՊԴ Ակադեմիական քաղաքականության վարչությունը, իր իրավասությունների շրջանակներում նախատեսված աշխատանքներից բացի, ծրագրում է կատարել աշխատանքներ, որոնք կապահովեն որակի ամրապնդման, գնահատման և բարելավման ներհամալսարանական համակարգը՝ առաջնորդվելով ԳՊԴ ռազմավարական ծրագրում առաջադրված նպատակներով, խնդիրներով և եվրոպական բարձրագույն կրթական տարածքի չափանիշներով:

2012-2013 ուսումնական տարում ԳՊԴ Ակադեմիական քաղաքականության վարչությունը կրթական ծրագրերի իրականացման գործընթացներում կրթության որակի ապահովման, վերահսկման, մշտադիտարկման և բարելավման նպատակով նախատեսում է կատարել հետևյալ աշխատանքները.

- ամբիոնների հետ համատեղ դասալուսնների կազմակերպում, ամբիոններում և ԱԲՎ-ում արդյունքների քննարկում և առաջարկությունների ներկայացում /կարգ 23, կետ 1.2/,

- ուսանողության շրջանում մինչև քննաշրջանների սկիզբը (դեկտեմբեր, մայիս ամիսներին, շրջանավարտների շրջանում մինչև երկրորդ քննաշրջանի սկիզբը) դեկանատների օժանդակությամբ հարցումների անցկացում, արդյունքների մշակում և պահպանում ԱԲՎ-ում /կարգ 30, կետ 2,2, 3.1/,

- ուսանողների և շրջանավարտների շրջանում կրթական ծրագրերից բավարարվածության գնահատում /հարցումների անցկացում, առաջարկությունների ներկայացում և այլն/ /կարգ 34, կետ 7/,

- կրթական և առարկայական ծրագրերի բովանդակային և կառուցվածքային նորացման փուլային գործընթացի նախաձեռնում՝ կրթական ելքային արդյունքների և բուհի առաքելության համապատասխանության տեսանկյունից /կարգ 34, կետ 7/,

- ուսումնական և առանձին առարկայական ծրագրերի արտաքին փորձաքննության ապահովում /կարգ 34, կետ 5/,

- ուսումնական գործընթացի մեթոդական ապահովում, ուսումնամեթոդական հիմքերի ամրապնդում /կարգ 35, կետ 3/,

- ամբիոններում ուսումնամեթոդական բազայի ամենամյա հաշվեգրում և մշտադիտարկում, որոնց արդյունքներով գնահատվում և բարելավվում է կրթական միջավայրը՝ հաշվի առնելով գիտական առաջընթացը /կարգ 35, կետ 5/,

- ԱԲՎ-ն նախատեսում է դասախոսների որակավորման բարձրացման և մասնագիտական վերապատրաստման գործընթացների իրականացում, որոնք միտված են համալսարանում կրթության որակի, արդիականության, արդյունավետության ապահովմանը /կարգ 36, կետ 20/,

ԳՊԴ 2011-2012 ուսումնական տարվա գործունեության հաշվետվություն

- դասախոսների մանկավարժական հմտությունների և մեթոդական իրազեկության մակարդակի բարձրացման նպատակով նախատեսվում է կազմակերպել «Նոր կրթական տեխնոլոգիաներ», «Կրթական բարեփոխումներ» դասընթացներ, որոնց կարող են մասնակցել հանրակրթական դպրոցների և միջին մասնագիտական հաստատությունների մանկավարժներ /կարգ 36, կետ 22, 35/,

- համալսարանում ուսման արդյունավետության և գնահատման օբյեկտիվության բարձրացման նպատակով ԱԲՎ-ն նախատեսում է միջանկյալ քննությունների թեստային եղանակի ներդրում /կարգ 46, կետ 13/,

- կրթական ծրագրերի արդիականության և աշխատաշուկայում պահանջարկի գնահատման նպատակով հարցումների անցկացում շրջանավարտների, դասախոսների և գործատուների շրջանում /կարգ 49, կետ 15/,

- ուսուցման տեխնիկական միջոցների և ուսանողների ակադեմիական տվյալների գրանցման էլեկտրոնային համակարգի շահագործում ու սպասարկում և այլն:

ԳՊԴ Ակադեմիական քաղաքականության վարչության որակի ապահովման բաժինը 2012-2013 ուսումնական տարում նախատեսում է հետևյալ աշխատանքների իրականացումը.

- համալսարանում որակի ապահովման ներքին մշակույթի զարգացում,
- որակի գնահատման խնդիրների և մեթոդների վերաբերյալ վարչական, պրոֆեսորադասախոսական անձնակազմի և ուսանողների իրազեկության բարձրացում,

- կրթական ծրագրերի և բուհի որակի ներքին և արտաքին գնահատման գործընթացներում միջազգային համագործակցության առկայության ապահովում,

- որակի գնահատման և բարձրացման նոր կառուցակարգերի ներդրում և այլն:

ԱԲՎ-ն շարունակում է ակտիվ համագործակցությունը համալսարանի այլ կառուցվածքային ստորաբաժանումների, նաև հանրապետական այլ բուհերի համանման կառույցների հետ՝ նպաստելով բուհում ուսումնական, կազմակերպչական գործընթացների բարելավմանը, կրթության որակի ապահովմանն ու շարունակական բարձրացմանը, քանի որ 2012-2013 ուսումնական տարին Գավառի պետական համալսարանում հայտարարված է բարեփոխումների և որակի մշակույթի արմատավորման տարի:

Ա. Ա. ՂԱՐԻԲՅԱՆ

Ակադեմիական քաղաքականության վարչության պետ

ԳՎԿԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

Գրքային ունեցվածքը՝	38.450	Բաժին՝	2
ընթերցողները՝	3.000	ընթերցասրահ՝	2
հաճախումը՝	400.000	աշխատողների թիվը՝	3
գրքատացքը՝	500.000		

ԳՊՀ գիտական գրադարանը համալսարանի կարևոր կառուցվածքային ստորաբաժանումներից է, որի գործունեության հիմնական նպատակը գիտաուսումնական գործընթացի տեղեկատվական ապահովումն է, անհրաժեշտ մասնագիտական գրականություն, գիտահետազոտական տեղեկատվական աղբյուրներ տրամադրելը: Գրադարանի խնդիրը կրթական գործընթացում արդի գիտական հետազոտությունների արդյունքների օգտագործմանը նպաստելն է, դասախոսների և ուսանողների, ինչպես նաև այլ շահակիցների գիտակրթական, տեղեկատվական կարիքներն ուսումնասիրելն ու հնարավորինս դրանք բավարարելը: Ուստի, անհրաժեշտ է բուհի գրադարանային գործառնությունների ավտոմատացում, տեղեկատվական ռեսուրսների հայթայթման, ստեղծման, պահպանման, տրամադրման և ղեկավարման համակարգի բարեփոխում: Աշխատանքներ են կատարվել գրքերի և անհրաժեշտ այլ տեղեկատվության պատվիրման էլեկտրոնային համակարգի մշակման և մերդրման, ըստ մասնագիտությունների՝ հայերեն և օտար լեզուներով համացանցային տեղեկատվական շտեմարանների ձևավորման, դրանց շարունակական թարմացման, ամբիոններին էլեկտրոնային կրթական ռեսուրսների տրամադրման, տեղեկատվական և հաղորդակցական ժամանակակից տեխնոլոգիաների նպատակային օգտագործման և այլ ուղղություններով: Թեև արագ զարգացող աշխարհում էլեկտրոնային տեղեկատվական միջոցներն ունեն լայն տարածում, սակայն մեզանում դեռևս կարևորվում է գիտաուսումնական պահանջները բավարարող գրքային պաշարի առկայությունը, ուստի և գրքային ֆոնդի համալրումը:

Հաշվետու ժամանակաշրջանում ԳՊՀ գրադարանը կատարել է գրքային ֆոնդի համալրման, մշակման, դասավորման, գրքերի վերանորոգման ու պահպանման աշխատանքներ, համալրվել են տեղեկատվական գրացուցակները և քարտարանները:

Գրադարանային ֆոնդի համալրումը: ԳՊՀ գրադարանի գրքային ունեցվածքը կազմում է 38.450 միավոր գրականություն: Հաշվետու տարում գրադա-

րանի գրքային ֆոնդ է մուտքագրվել շուրջ 850 միավոր մասնագիտական և գեղարվեստական գրականություն: Գրականության համալրումը կատարվել է՝ ելնելով ուսումնական ծրագրերի և համալսարանի գիտական գործընթացի պահանջներից, համալսարանի կողմից պարբերաբար կատարվող գնումների, հեղինակների ու անհատների նվիրատվությունների, ինչպես նաև բաժանորդագրությունների շնորհիվ: Հաշվետու տարվա ընթացքում գրադարանը նվիրատվության կարգով գրքեր է ստացել ՀՀ սփյուռքի նախարարությունից, ՀՀ գրողների միությունից, Ազգային գրադարանից, «Ռոսստորոդնիչեստվո» հայաստանյան ներկայացուցչությունից և «Միտք» վերլուծական կենտրոնից: Ընթերցասրահում կազմակերպվել են նոր ստացված գրքերի ցուցադրություններ, որից հետո՝ գրքերը դասավորվել են գրապահոցում:

Գրքային ֆոնդի մշակում: Ընթացիկ տարում կատարվել է մասնագիտական գրականության գտում, գրքերի ստուգում և վերանորոգում: Իրականացվել է նաև մասնագիտական գրականության վերադասավորում և համակարգում, շարունակվել են գրքային ֆոնդի համակարգչային մուտքագրումը, նկարագրումը և դասակարգումը՝ ըստ գրադարանային մատենագիտական դասակարգումների: Գրադարանում ընթանում են գրքային ֆոնդի էլեկտրոնային այբբենական և կարգային գրացուցակների ձևավորման և գործարկման շարունակական աշխատանքներ: Մասնագիտական գրականության ֆոնդերի գրացուցակները տրամադրվել են համապատասխան ամբիոններին՝ կուրսային, անհատական և ավարտական աշխատանքները պատրաստելիս՝ ուսանողներին գրականությանը աջակցելու նպատակով:

Մասնագիտական-տեղեկատվական բազա: Գրադարանի աշխատանքներն ուղղված են մասնագիտական-տեղեկատվական հարուստ բազայի ձևավորմանն ու դրա նպատակային օգտագործմանը: Գրադարանի ամենօրյա աշխատանքի բաղկացուցիչ մասն է կազմում ուսանողներին խորհրդատվությունը՝ տեղեկատվական տարբեր աղբյուրների որոնման և ընտրության հարցում: Վերանայվել և կարգի են բերվել քարտարանները, որոնց միջոցով ուսանողներին լիարժեք տեղեկություն է տրվում գրադարանի հավաքածուների մասին: Բազմաթիվ մատենագիտական ցանկերով, գիտական հոդվածների գրացուցակներով հարստացվել է գրադարանային տեղեկատվական համակարգը: Գրադարանում առկա «Գարուն», «Գրական թերթ», «Լրաբեր հասարակական գիտությունների», «Պատմա-բանասիրական հանդես», «Բանբեր Երևանի Համալսարանի», «Գիտության աշխարհում», «Օրենք և իրականություն», «Հանրային կառավարում», «Արդարադատություն», «Մանկավարժության և հոգեբանության հիմնախնդիրներ», «ԵՊՀ Աստվածաբանության ֆակուլտետ. Տարեգիրք», «ԵՊՀ Աստվածաբանության ֆակուլտետ. Հայ աստվածաբան», «Ազրոգիտություն» և այլ պարբերականներից, գիտական հանդեսներից ու հոդվածների ժողովածուներից մշակվել և կազմվել է 76 բաժին պարունակող «Գիտական հոդվածների մատենագիտություն», որը պարբերաբար լրացվում է նոր հոդվածների ցանկերով և առաջարկվում է ուսանողներին ու պրոֆեսորադասախոսական անձնակազմին՝ համալրված տարբերակով:

Վերոհիշյալից զատ, կազմվել և տարեցտարի համալրվում է ԳՊԴ գիտական հոդվածների ժողովածուների ամբողջական փաթեթի՝ 14 համարների մատենագիտական ցանկը, բաղկացած 12 բաժնից: Այն, բացի գրադարանում առկա թղթային տարբերակից, տեղադրված է նաև www.gsu.am ինտերնետային կայքի գրադարանի բաժնում: Այսպիսով համացանցից օգտվող ուսանողները և դասախոսները տեղեկանում են ԳՊԴ գիտական հոդվածների ժողովածուների մատենագիտական ցանկին՝ առանց գրադարան այցելելու:

Գրադարանի համագործակցությունը: ԳՊԴ գրադարանը, լինելով «Հայաստանի գրադարանային ասոցիացիայի» անդամ, համագործակցում է ՀՀ Ազգային գրադարանի, ՀՀ գրողների միության, ինչպես նաև այլ բուհերի գրադարանների հետ: ԳՊԴ գրադարանից գրքեր են տրամադրվել ԳՊԴ նորաբաց պատմագիտական թանգարանին, Գեղարքունիքի մարզի երկրագիտական թանգարանին և համալսարանի հյուրերին:

Միջոցառումները: Ընթացիկ ուսումնական տարվա ընթացքում գրադարանում կազմակերպվել են բազմաբնույթ միջոցառումներ՝ ակտիվ ուսանողների մասնակցությամբ: Շարունակական աշխատանքներ են կատարվել ուսանողների շրջանում գրքի նկատմամբ սեր և հետաքրքրություն առաջացնելու համար, կազմակերպվել են գրքերի ընթերցումներ և քննարկումներ: Նմանատիպ միջոցառումներ կազմակերպելիս՝ գրադարանը համագործակցել է ԳՊԴ բանասիրական ֆակուլտետի ամբիոնների, ուսանողական գիտական ընկերության և ուսանողական խորհրդի անդամների հետ: Հիշարժան միջոցառումներից է Բաֆֆու «Սամվել» վեպի տպագրության 125-ամյակին նվիրված միջոցառումը, որին ներկա էին Հայաստանի գրողների միության նախագահը և անդամներ, «Ռոսստորոդնիչեստվո» հայաստանյան ներկայացուցչության պատվիրակությունը, այլ պաշտոնատար անձիք, մտավորականներ: Այս միջոցառումները նպաստել են նաև գրքերի տացքի, գրադարան ուսանողների հաճախելիության բարձրացմանը: ԳՊԴ գրադարանը, կազմավորվելով 1993 թվականին, իր տարածքը ընդարձակել է 2002 թվականին՝ նոր գրադարան և ընթերցասրահ ունենալով Բնագիտական ֆակուլտետի մասնաշենքում: Սակայն գրադարանը, լինելով մշտապես համալրվող և ընդարձակվող կառույց, կարիք ունի նոր սենյակների և գրապահարանների, ինչպես նաև գործող գրապահոցի գույքի և դարակաշարերի թարմացման:

2009 թվականից սկսած ուսումնական տարվա ընթացքում գրադարանի աշխատակազմը ձեռնարկել էր էլեկտրոնային գրադարանի ստեղծման աշխատանքներ՝ ինտերնետային կայքերից բեռնելով շուրջ 300 էլեկտրոնային գիրք: Այս գրքերի դասակարգումը, նկարագրումը և նոր գրքերի ներբեռնման աշխատանքները ընթացքի մեջ են, սակայն էլեկտրոնային գրադարանի շահագործումը պահանջում է գրադարանի գործառույթների իրականացման ավտոմատացված համակարգ, համապատասխան ծրագրային միջոցներ և գործիքակազմ: Նշված միջոցներին չտիրապետելու պատճառով հաշվետու տարվա ընթացքում էլեկտրոնային գրականությունը ուսանողներին տրամադրվել է էլեկտրոնային կրիչներով: Էլեկտրոնային մասնագիտական գրականության համալրման նպա-

ԳՊՀ 2011-2012 ուսումնական տարվա գործունեության հաշվետվություն

տակով գրադարանի աշխատակազմը նախատեսում է համագործակցություն բոլոր ֆակուլտետների ամբիոնների հետ՝ ամբիոններում առկա էլեկտրոնային գրականությունը կենտրոնացնելով գրադարանում:

Այսպիսով, գրադարանը աշխատում է հնարավորինս լավ կատարել Գավառի պետական համալսարանի գիտական-տեղեկատվական և մշակութային-դաստիարակչական կենտրոնի իր առաքելությունը:

Ն. Ֆ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
ԳՊՀ գրադարանի վարիչ

ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐԻ ԵՎ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ

ԳՊՀ հասարակության հետ կապերի և լրատվության ոլորտը բուհի զարգացման ռազմավարական ուղղություններից է, ինչն արտացոլված է ԳՊՀ զարգացման ռազմավարական ծրագրի համապատասխան դրույթներում: Հասարակության հետ տարվող աշխատանքները համակարգվում են ԳՊՀ Հանրության հետ կապերի և լրատվության բաժնի կողմից:

Հիմնադրման օրվանից Հանրության հետ կապերի և լրատվության բաժինը սերտորեն համագործակցում է ԳՊՀ ուսանողական խորհրդի, ուսանողական գիտական ընկերության, ուսանողական ծրագրային թիմի, շրջանավարտների և կարիերայի կենտրոնի, բուհի մյուս կառուցվածքային ստորաբաժանումների հետ, կազմակերպում դիմորդների և այլ շահառուների հետ տարվող աշխատանքները:

2011-2012 ուսումնական տարում վերանայվել է բաժնի ռազմավարական ծրագիրը, նրանում ներառվել են բուհի ներքին և արտաքին կապերին վերաբերող հայեցակարգային նոր ուղղություններ:

2011-2012 ուսումնական տարվա ընթացքում Հանրության հետ կապերի և լրատվության բաժնին աշխատանքներ է իրականացրել հետևյալ ուղղություններով՝

- ✓ Ձանգվածային լրատվության միջոցների հետ աշխատանք,
- ✓ Համագործակցություն կրթական ոլորտի պետական և հասարակական կազմակերպությունների հետ,
- ✓ Դիմորդների հետ տարվող աշխատանքներ,
- ✓ Շրջանավարտների միության և կարիերայի կենտրոնի գործունեության կազմակերպում,
- ✓ ԳՊՀ www.gsu.am պաշտոնական ինտերնետային կայքի համալրում,
- ✓ Ծրագրավորման, ինֆորմացիոն համակարգերի զարգացման և սպասարկման աշխատանքների կազմակերպում,
- ✓ Համացանցային տիրույթում ԳՊՀ-ի վերաբերյալ տեղեկատվության և տեսանյութերի տարածում:

Ձանգվածային լրատվության միջոցների հետ աշխատանքներ.

- Գեղարքունիքի մարզի «Գեղամա մեդիա հոլդինգ» ՍՊԸ-ի, Գավառի «Քյավառ», Սևանի «STV1», Մարտունու «Ձանգակ» հեռուստաընկերությունների, «Գեղամա աշխարհ» թերթի և «Արմենպրես» լրատվական գործակալության հետ շարունակվում է ակտիվ համագործակցությունը:

ԳՊՀ 2011-2012 ուսումնական տարվա գործունեության հաշվետվություն

- Հաշվետու ժամանակահատվածում Գավառի պետական համալսարանի և «Քյավառ» հեռուստաընկերության միջև կնքվեց համագործակցության հուշագիր:

- ԳՊՀ-ում տեղի ունեցող միջոցառումները պարբերաբար լուսաբանվել են ինչպես մարզային լրատվամիջոցների, այնպես էլ հանրապետական ՁԼՄ-ների կողմից:

- ԳՊՀ-ի վերաբերյալ տեղեկություններն էլեկտրոնային փոստով ուղարկվել են հայաստանյան լրատվամիջոցների հասցեներով: ԳՊՀ գործունեությանը պարբերաբար անդրադարձել են «Արմենպրես» լրատվական գործակալությունը, «Հայաստանի Հանրապետություն», «Առավոտ», «Ազգ», «Ժողովուրդ» օրաթերթերը, «Կրթություն» շաբաթաթերթը և մի շարք էլեկտրոնային պարբերականներ:

- Շաբաթը մեկ անգամ «Գեղամա» հեռուստաընկերությամբ եթեր է հեռարձակվել «Համալսարանական ժամ» հաղորդաշարը, որում ներկայացվել են բուհի առօրյային վերաբերող տեղեկատվություն: Այդ տեսագրությունները տեղադրվում են ԳՊՀ ինտերնետային պաշտոնական վիդեոբլոգում:

- «Գեղամա» հեռուստաընկերության «Վեկտոր» հաղորդաշարում պարբերաբար հյուրընկալվել են ԳՊՀ պրոֆեսորադասախոսական անձնակազմի ներկայացուցիչներ, ովքեր, որպես փորձագետներ, ներկայացրել են իրենց տեսակետները քննարկվող հարցի շուրջ, առանձին դեպքում ներկայացվել է նաև ԳՊՀ դիրքորոշումը:

- Հայաստանյան տպագիր մամուլում, էլեկտրոնային թերթերում և լրատվական գործակալություններում տեղ գտած ԳՊՀ-ին վերաբերող նյութերն առանձնացվել և տեղադրվել են «Մամուլը ԳՊՀ-ի մասին» ալբոմ-ժողովածուում:

- Մարզային ՁԼՄ-ներից ԳՊՀ-ի գործունեությունն առավել հաճախ լուսաբանել են «Քյավառ» հեռուստաընկերությունն ու «Գեղամա աշխարհ» թերթը:

- «Քյավառ» հեռուստաընկերությունից վերցվել են ԳՊՀ-ին վերաբերող արխիվային նյութերը, և համալրվել է ԳՊՀ տեսանյութերի արխիվը:

- Հայաստանյան տեղեկատվական ծառայություններին տրամադրվել է ԳՊՀ պատմությանն ու գործունեությանը, վարչական ու ֆակուլտետային ստորաբաժանումներին, ինչպես նաև մատուցվող կրթական ծառայություններին վերաբերող նոր տեղեկատվություն:

- Թվանշանացվել և արխիվացվել են ԳՊՀ հիմնադրման օրվանից մինչ այժմ լուսանկարված թղթային լուսանկարները, և ԳՊՀ մեծ դահլիճի նախասրահում բացվել է բուհի պատմությանն ու առօրյային վերաբերող լուսանկարների ցուցահանդես, որոնք տեղադրվել են ԳՊՀ www.gsu.am պաշտոնական ինտերնետային կայքի «Տեսասրահ» բաժնում:

- ԳՊՀ միջոցառումների ընթացքում լուսանկարված էլեկտրոնային լուսանկարներն արխիվացվել են և անհրաժեշտության դեպքում օգտագործվում են տեղեկատվական գրքույկներ և թերթումներ պատրաստելիս:

**Համագործակցություն կրթական ոլորտի պետական
և հասարակական կազմակերպությունների հետ.**

- ՀՀ կառավարության աշխատակազմի Գնահատման եւ թեստավորման կենտրոնի առաջարկով ԳՊՀ առաջին եւ երկրորդ կուրսերում սովորող 15 ուսանողներ մասնակցել են 2012թ-ի ավարտական միասնական քննություններին՝ որպես կազմակերպիչներ:
- ՀՀ զինված ուժերի զորամասերում զինծառայողների կրթության կարիքների գնահատման հետազոտության եւ կրթական ծրագրի իրականացման նպատակով ներկայացվել է ԳՊՀ 20 ուսանողի թեկնածությունը:
- Հայաստանի երիտասարդական հիմնադրամի հայտարարած կրթաթոշակների մրցույթում ապահովվել է ԳՊՀ ուսանողների մասնակցությունը: Հաղթող ճանաչվեցին ԳՊՀ տարբեր ֆակուլտետների 9 ուսանողներ:
- «Բարեպաշտ սերունդ» հիմնադրամի 2011-2012 ուսումնական տարվա առաջին և երկրորդ կիսամյակների ուսման վարձերի և կրթաթոշակների վերաբերյալ հայտարարության մասին տեղեկացվել են ԳՊՀ ուսանողները, և կազմակերպվել է նրանց մասնակցությունը հիմնադրամի հայտարարած մրցույթին: Հաղթող են ճանաչվել ԳՊՀ 4 ուսանողներ:
- «Թրփանձեան ընտանեկան» և «Ազեան» հիմնադրամների կրթաթոշակների մրցույթի վերաբերյալ հայտարարության մասին տեղեկացվել են ԳՊՀ ուսանողները, և կազմակերպվել է նրանց հանդիպումը հիմնադրամների ներկայացուցիչների հետ, ապահովվել է ուսանողների մասնակցությունը հիմնադրամների հայտարարած մրցույթին: Հաղթող են ճանաչվել ԳՊՀ 30 ուսանողներ:
- Հայ կրթական հիմնարկության 2011-2012 ուսումնական տարվա ուսման վարձավճարների և կրթաթոշակների վերաբերյալ հայտարարության մասին տեղեկացվել են ԳՊՀ ուսանողները, և կազմակերպվել է նրանց մասնակցությունը հիմնադրամի հայտարարած մրցույթին:
- ՀՀ կրթության եւ գիտության նախարարության ու ԵԱՀԿ երեւանյան գրասենյակի կազմակերպած «Բուհերում հակակոռուպցիոն ռազմավարություններ» թեմայով աշխատաժողովում ներկայացվել են ԳՊՀ հակակոռուպցիոն ծրագրերն ու Ակադեմիական ազնվության հայեցակարգի դրույթները:
- «ՎիվաՍելլ-ՄՏՍ» ընկերության և Նախագծերի կառավարման հայկական ասոցիացիայի հայտարարած «Նախագծերի կառավարում» դասընթաց-սեմինարին մասնակցել են ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի դասախոսներ Աստղիկ Հովեյանը և Սոնա Բագոյանը:
- ՀՀ կենտրոնական բանկի նախագահի նամակ-առաջարկին ընդառաջելով՝ ԳՊՀ-ում կազմակերպվել է դասընթացների շարք, ինչպես նաև www.gsu.am պաշտոնական ինտերնետային կայքի «Հղումներ» բաժնում տեղադրվել է Կենտրոնական բանկի կողմից ստեղծված ֆինանսական ծառայություններ սպառողների համար կրթական եւ տեղեկատվական ինտերնետային կայքի հղումը (www.abcfinance.am):
- «Քաղաքացիական նախաձեռնություններ» ծրագրի շրջանակներում Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության կենտրոնի Գեղար-

քունիքի մասնաճյուղի գրասենյակում ապահովվել է ԳՊՀ ուսանողների մասնակցությունը Կենտրոնի կողմից կազմակերպված ուսուցումներին:

- ԳՊՀ հիմնադիր ռեկտորի եւ պատվո բարերարների անուններով պատրաստվել են հուշատախտակներ և փակցվել ԳՊՀ կենտրոնական մասնաշենքի նախասրահում:

- Տպագրվել են ԳՊՀ տարբերանշանով թղթապանակներ, այցեքարտեր, թերթոններ, գրիչներ, ինչպես նաև «ԳՊՀ-ն դեմ է կոռուպցիային» վերտառությամբ «հակակոռուպցիոն» գրիչներ և կոռուպցիայի դեմ պայքարի վերաբերյալ տեղեկատվական բուկլետներ:

Դիմորդների հետ տարվող աշխատանքներ.

- «Դասը վարում են համալսարանականները» ծրագրի շրջանակներում ԳՊՀ դասախոսական կազմն այցելել է մարզի ավագ դպրոցներ և պատասխանել աշակերտներին հետաքրքրող հարցերին:

- «World Vision. Հայաստան» միջազգային բարեգործական կազմակերպության աջակցությամբ տպագրվել է «ԳՊՀ դիմորդի ուղեցույց»-ը, որի էլեկտրոնային տարբերակը տեղադրվել ԳՊՀ պաշտոնական ինտերնետային կայքում: «Դասը վարում են համալսարանականները» ծրագրի շրջանակում Գեղարքունիքի մարզի դպրոցներ այցելած համալսարանականները ուղեցույցը բաժանել են մարզի ավարտական դասարանի աշակերտներին:

- «Թափանցիկ կրթությունը Հայաստանում» ծրագրի շրջանակում ԳՊՀ ուսանողները Գավառի եւ Սեւանի ավագ դպրոցներում պարբերաբար հանդիպումներ են ունեցել աշակերտների հետ և անցկացրել հակակոռուպցիոն թեմաներով սեմինարներ: Նույն ծրագրի շրջանակում աշակերտները այցելել են ԳՊՀ և ծանոթացել համալսարանում իրականացվող ծրագրերին:

Շրջանավարտների միության

և կարիերայի կենտրոնի հետ կապված աշխատանքներ.

- Կազմվել է կենտրոնի գործունեությունը ներկայացնող տեղեկատվական բուկլետ:

- Նախագծվել և մշակվել է Շրջանավարտների միության և կարիերայի կենտրոնի կայքը (www.career.gsu.am), որում ներկայացված է շրջանավարտների առցանց բազա՝ որոնման ու դասակարգման բազմազան հնարավորություններով: Մշտապես կատարվել է շրջանավարտների առցանց բազայի համալրման աշխատանքներ (ներկայումս կայքում առկա են ավելի քան 50 շրջանավարտի տվյալներ):

- Կայքում կարևոր նշանակություն ունի «Հղումներ» բաժինը, որտեղ տեղադրված են աշխատանք առաջարկող կայքերի հասցեները:

- Ստեղծվել է Շրջանավարտների միության և կարիերայի կենտրոնի պաշտոնական վիդեոբլոգը՝ www.youtube.com/user/careergsu հասցեով, որտեղ տեղադրված են ավարտական կուրսերի վերաբերյալ նկարահանված 5 տեսանյութ:

- Առցանց բուհի շրջանավարտների հետ քննարկումներ կազմակերպելու համար «Facebook» սոցիալական ցանցում ստեղծվել է հատվածամաս (<https://www.facebook.com/groups/373163172745612/>), որտեղ պարբերաբար

տեղադրվում են աշխատանքի ընդունման վերաբերյալ հայտարարություններ, օգտակար հղումներ և անցկացվում են քննարկումներ:

- Կազմվել է Շրջանավարտների միության և կարիերայի կենտրոնի գործողությունների պլանը:
- ԳՊՀ ֆակուլտետների հետ համագործակցության արդյունքում համալրվել է ԳՊՀ շրջանավարտների բազան,
- Բուհ-գործատու կապն ամրապնդելու նպատակով կազմվել է հավանական գործատուների ցուցակը, որոնց հետ համագործակցության պայմանավորվածություն է ձեռք բերվել:
- Կազմվել է շրջանավարտների գրանցման հարցաթերթիկ, որոնք լրացնում են ԳՊՀ շրջանավարտները, ինչպես նաև բակալավրի եւ մագիստրատուրայի ավարտական կուրսերի ուսանողները:
- Կազմակերպվել է ԳՊՀ բանասիրական ֆակուլտետի շրջանավարտների միության հիմնադիր ժողով, այն լուսաբանվել է, և այդ դրական օրինակը ներկայացվել է մյուս ֆակուլտետներին՝ շրջանավարտների համաժողովներ կազմակերպելու նպատակով:

Ծրագրավորման, տեղեկատվական համակարգերի զարգացման և սպասարկման աշխատանքներ.

- www.gsu.am կայքում ներդրվել է որոնման համակարգ, ինչը թույլ է տալիս որոնում կազմակերպել նաև կայքում օգտագործվող ֆայլերի տիրույթում (կանոնադրություններ, հաշվետվություններ, գիտական հոդվածներ, դասացուցակներ և այլն):
- Կատարվել է ֆակուլտետային էջերի համալրում (ամբիոնների, մասնագիտությունների ենթաէջերի ստեղծում):
- Ստեղծվել է «Գիտական հոդվածների ժողովածուներ» բաժնի նոր տարբերակը, որտեղ ներկայացված են ժողովածուների հղումները՝ վիզուալ եռաչափ գրքերի պատկերանշաններով:
- Կատարվել է կայքի եռալեզու տարբերակի ծրագրային ապահովման մշակում:
- Ստեղծվել է «ԳՊՀ շնորհանդեսներ» էջը, որտեղ տեղադրվում են ԳՊՀ-ի վերաբերյալ տարբեր շնորհանդես-ցուցադրություններ:
- Իրականացվել են կայքի դիզայնի ձևափոխություններ, SMO (առաջխաղացում սոցիալական ցանցերում) առցանց գործիքների և ծառայությունների կապակցում կայքի էջերին:
- Ստեղծվել է «Տեսասրահ» էջի նորացված տարբերակը:
- Մշակվել է «Չեռախոսահամարների տեղեկատու» կայքի հատվածամասը (www.phone.gsu.am), ստեղծվել է ԳՊՀ աշխատակիցների «Չեռախոսահամարների տեղեկատու» Desktop ծրագրային հավելվածը:
- Ստեղծվել է www.gsu.am և www.career.gsu.am կայքերի համար առցանց գործող «Չետաղարձ կապ» բաժինը (մշակվել է ադմինիստրատորի ղեկավարման մոդուլը),
- Կատարվել են կայքի CMS (Content Management System)՝ ադմինիստ-

րատորի տիրույթի, կայքի բովանդակային ղեկավարման համակարգի զարգացման աշխատանքներ:

- Իրականացվել են կայքի SEO-ի՝ առաջխաղացում որոնողական համակարգերում և SMO-ի ուղղությամբ աշխատանքներ:

- Ապահովվել է ԳՊՀ պաշտոնական կայքում (www.gsu.am) նորությունների, հայտարարությունների, լուսանկարների բաժնի օպերատիվ թարմացումը:

- Կատարվել են տեսանյութերի ֆայլերի ձևաչափերի ձևափոխություններ, և դրանք տեղակայվել են ԳՊՀ պաշտոնական վիդեոբլոգում:

- Իրականացվել են ԳՊՀ կենտրոնական մասնաշենքի էլեկտրոնային էկրանի նյութերի համակարգչային մշակում, ամենօրյա օպերատիվ թարմացումների կազմակերպում (շնորհավորանքներ, հայտարարություններ) և տեխնիկական սպասարկում:

- Մշակվել են ԳՊՀ տարբերանշանով համակարգչի աշխատասեղանի հետնապատկերի (Desktop wallpaper), օրացույցերի, ցուցադրության-ձևանմուշ ֆայլերը (presentation):

- Կատարվել են ԳՊՀ միջոցառումների համակարգչային տեխնիկայի սպասարկում, անհրաժեշտ նյութերի համակարգչային մշակում, համակարգչային տեխնիկայի և ծրագրային ապահովման սպասարկման հարցերում օժանդակության իրականացում և խորհրդատվությունների տրամադրում ԳՊՀ աշխատակիցներին և ուսանողներին:

- ԳՊՀ աշխատակիցների և ուսանողների համար ստեղծվել են էլեկտրոնային փոստեր:

- Կազմվել է «Examination-GSU» համակարգի զարգացման նախագիծը, և «Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա» բաժնի 2 ուսանողների մասնակցությամբ ձևավորվել է աշխատանքային խումբ:

- Կենտրոնական մասնաշենքի համակարգչային լսարանում «Examination-GSU» համակարգի գործարկման համար առանձնացվել է անհրաժեշտ ցանցի սերվերային համակարգիչ, տեղադրվել են սերվերային օպերացիոն համակարգ և ծրագրային ապահովում, կատարվել են ցանցի կարգաբերման աշխատանքներ, տեղակայվել և գործարկվել է «Examination-GSU» համակարգը:

- Ապահովվել են «Examination-GSU» համակարգի ծրագրային մոդուլների զարգացումը, ցանցային կենտրոնացված ռեժիմում թեստային առաջադրանքներ մուտքագրելու և խմբագրելու հնարավորություն ընձեռող մուդուլի ստեղծումը, տվյալների բազայի օպտիմիզացման աշխատանքների իրականացումը, «Examination-GSU» համակարգի ձևափոխված տարբերակի գործարկումը:

- Կազմակերպվել են խորհրդատվություն-ցուցադրություններ թեստային առաջադրանքների կազմման և համակարգ թեստեր մուտքագրելու վերաբերյալ: Աջակցություն է ցուցաբերվել առարկայական թեստերի բազայի ստեղծման աշխատանքներին:

- Իրականացվել են քննությունների նախապատրաստման և կազմակերպման աշխատանքներ (հաշվետու ժամանակահատվածում անցկացվել են 7 առարկայի քննություն՝ 8 խմբերի համար և 1 օլիմպիադա):

- Հաշվետու ժամանակահատվածում հրապարակվել են աշխարհի համալսարանների վեբոմետրիքս դասակարգման («Webometrics Ranking of World Universities»: www.webometrics.info) արդյունքները, որոնք վերաբերում են աշխարհի շուրջ 20.000 համալսարանների, այդ թվում եվրոպական՝ 5000, ամերիկյան՝ 7000, ասիական՝ 6000 բուհերի: Գավառի պետական համալսարանը Հայաստանի Հանրապետության մարզերում գործող բուհերի շարքում առաջինն է, ինչը հավաստում է, որ ԳՊՀ-ի ինտերնետային կայքն ունի պատշաճ վարկանիշ:

Համացանցային տիրույթում ԳՊՀ-ի վերաբերյալ տեղեկատվության և տեսանյութերի տարածման աշխատանքներ.

- ՀՀ բարձրագույն կրթության համակարգը ներկայացնող անգլալեզու կայքում (www.amhe.am) ԳՊՀ-ի վերաբերյալ անգլերեն լեզվով տեղեկատվություն տեղադրելու նպատակով՝ տրամադրվել են բուհի վերաբերյալ անգլերեն լեզվով տեղեկատվություն և մի շարք լուսանկարներ ու տեսանյութ: ԳՊՀ-ում տեղի ունեցող հիշարժան միջոցառումների վերաբերյալ պարբերաբար պատրաստվել են անգլերեն լեզվով լուրեր և տրամադրվել www.amhe.am կայքի խմբագրությանը:

- www.gphhakakorpcion.blogspot.com բլոգում պարբերաբար տեղադրվել է ԳՊՀ հակակոռուպցիոն գործունեությանը վերաբերող տեղեկատվություն:

«Facebook» սոցիալական ցանցի Գավառի պետական համալսարանի էջը ակտիվորեն գործարկվել է: Ցանցում եղած խելամիտ առաջարկությունները քննարկվելուց հետո ստացել են համապատասխան լուծումներ:

**ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐԻ ԵՎ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ
2012-2013 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ**

Ժամանակակից տեղեկատվական հասարակությունում ցանկացած կազմակերպության արդյունավետ գործունեության հիմնական գրավականներից մեկը հանրության շրջանում դրական կարծիք ձևավորելը և այդ կարծիքը պահպանելն է:

ԳՊՀ հանրության հետ կապերի և լրատվության բաժնի զարգացման հայեցակարգում ներառված են այն գերակա խնդիրները, որոնք արդի գիտակրթական հաստատությունների գործունեության անօտարելի բաղադրամասն են կազմում: ԳՊՀ-ն, լինելով մարզում գործող գիտակրթական կարևոր հաստատություն, հանրային կապերի ոլորտում գործունեությունը պետք է ուղղի ոչ միայն իր հեղինակության բարձրացմանը, այլև գիտելիքի ու կրթության հանրայնացմանը:

Համալսարանի հանրային կապերի արդյունավետ իրականացումը ենթադրում է համալսարանական բոլոր ստորաբաժանումների ակտիվ մասնակցություն, ներդաշնակ և համակարգված աշխատանք: Հանրային կապերի խնդիրները, առնչվելով համալսարանի աշխատակիցների և ուսանողների իրավունքներին և ազատություններին (մամուլում կարծիք հայտնելու իրավունք, արտաքին շփումների ազատություն և այլն), միաժամանակ նրանցից պահանջում են նաև

ԳՊՀ 2011-2012 ուսումնական տարվա գործունեության հաշվետվություն

դրսևորել համալսարանական (կորպորատիվ) համերաշխություն և փոխադարձ հարգանք, համալսարանի հանրային կապերի խնդիրների ըմբռնում և համագործակցություն համապատասխան կառույցների հետ:

Համալսարանի հանրային կապերի աշխատանքների իրականացման գործընթացում էապես կարևորվում է ուսանողների ներգրավվածությունը համապատասխան աշխատանքներին, որը կարող է կազմակերպվել ինչպես սահմանված կրթական գործընթացների, այնպես էլ կամավոր աշխատանքների և պրակտիկաների շրջանակներում:

Հանրային կապերի ոլորտում միջոցառումներն ուղղված են համալսարանի առջև ծառայած մի շարք խնդիրների լուծմանը.

- ✓ համալսարանի հեղինակության (դրական իմիջի) ձևավորում և պահպանում,
- ✓ համալսարանի գործունեության հրապարակայնության ու թափանցիկության ապահովում,
- ✓ ներհամալսարանական տեղեկատվական հաղորդակցության ապահովում,
- ✓ ներհամալսարանական (կորպորատիվ) մշակույթի և ավանդույթների ձևավորում ու զարգացում,
- ✓ համալսարանի՝ որպես կարևոր կրթական, գիտական, մշակութային և հասարակական առաջատար կառույցի, առաքելության արդյունավետ և տեսանելի իրականացում,
- ✓ համալսարանի գործունեության վերաբերյալ հանրային կարծիքի մասին ճշգրիտ տեղեկատվության ապահովում և աջակցություն բուհի սոցիալական կորպորատիվ պատասխանատվության ծրագրի մշակմանն ու իրականացմանը:

2012-2013 ուսումնական տարվա ընթացքում նախատեսում ենք իրականացնել հետևյալ գործառույթներն՝ ըստ ոլորտների.

- Աշխատանքներ կատարել համալսարանի մասին դրական հասարակական կարծիքի ու բարձր վարկանիշի ձևավորման ուղղությամբ՝ ներհամալսարանական ընթացակարգերի, աշխատառճի, ներքին էթիկական նորմերի, վարվելակերպի և այլ խնդիրների վերաբերյալ մեթոդական ուղեցույցերի մշակմանն ու ներդրման և այլ աշխատանքների միջոցով:

- ԳՊՀ մասին պատրաստել տեսանյութեր ու աուդիոնյութեր, ապահովել դրանց տարածումը:

- Պատրաստել ԳՊՀ ֆակուլտետներն ու ուսանողական կառույցները ներկայացնող տեղեկատվական թերթոններ (հայերեն և անգլերեն):

- Կազմակերպել մամուլի ասուլիսներ, ինչպես նաև թեմատիկ քննարկումներ լրատվամիջոցների բազմաթիվ աշխատակիցների հետ՝ ԳՊՀ 20-ամյակի շրջանակում:

- Աշխատանքներ իրականացնել ԳՊՀ խորհրդանշանները (օրհներգ, ֆակուլտետային տարբերանշաններ) մշակելու և մասսայականացնելու ուղղությամբ:

- Մշակել ԳՊՀ ձևաթղթերի նոր տարբերակներ և հրատարակել «ԳՊՀ ձևաթղթերի օգտագործման ուղեցույց»-ը:
- Կազմակերպել կայքում տեղեկատվության օպերատիվ տեղադրումը, առցանց հետադարձ կապի ապահովումը:
- Մշակել և վերլուծել էլեկտրոնային փոստով ստացված նամակները, ԳՊՀ գիտխորհրդին ներկայացնել ամփոփ զեկուցում մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ:
- Նկարահանել Գավառի պետական համալսարանի անցած ավելի քան 20-ամյա ուղին ներկայացնող փաստավավերագրական ֆիլմ:
- Հրատարակության ներկայացնել ԳՊՀ հիմնադիր ռեկտոր, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ վաստակավոր մանկավարժ Հրանտ Հակոբյանի կյանքին ու գիտամանկավարժական գործունեությանը վերաբերող հուշապատում-ժողովածու:
- Քանակական և որակական վերլուծության ենթարկել ԳՊՀ-ին վերաբերող բոլոր հրապարակումները, հեռուստատեսային և ռադիո նյութերը, լրատվական գործակալությունների և ինտերնետային պարբերականների անդրադարձերը:
- Անցկացել ԳՊՀ արտաքին իմիջի վերաբերյալ Գեղարքունիքի մարզի բնակչության պատկերացումների բացահայտմանն ուղղված հեռախոսային հարցման մեթոդով հետազոտություն: Հետազոտությունը կունենա շարունակական բնույթ և կանցկացվի վեց ամիսը մեկ անգամ:
- Անցկացնել ԳՊՀ արտաքին վարկանիշի հետազոտություն:
- Անցկացնել ԳՊՀ ներքին իմիջի հետազոտություն:
- ԳՊՀ ուսանողների շրջանում անցկացնել հարցում՝ մատուցվող կրթական ծրագրերի և դասավանդման որակի վերաբերյալ:
- Նախագծել և մշակել ԳՊՀ էլեկտրոնային ուսուցման «E-learning GSU» ինֆորմացիոն համակարգը:
- Նախագծել և մշակել առանձնացված ԳՊՀ ուսանողական կայք-պորտալ, որտեղ ներկայացված են լինելու ուսանողական ինքնակառավարման մարմինները, գործող ակումբները և այլն:
- Վերամշակել ԳՊՀ պաշտոնական կայքի «Նորություններ» մոդուլը՝ ներդնելով նորությունների արխիվի հատված և դասակարգման, ընդլայնված որոնման, ինչպես նաև բաժանորդագրման հնարավորություններ:
- Ստեղծել ԳՊՀ պաշտոնական կայքում «Հարց և պատասխան» բաժինը:
- Ստեղծել ԳՊՀ պաշտոնական կայքի «Հայտարարություններ» արխիվի հատվածամաս և դասակարգման, որոնման հնարավորություններ:
- Համալրել եւ մշտապես թարմացնել ԳՊՀ պաշտոնական կայքի ռուսերեն և անգլերեն էջերը:
- Ձարգացնել կայքի CMS համակարգը, աշխատանքներ իրականացնել SEO-ի և SMO-ի ապահովման ուղղությամբ:
- Մշակել կայքի նոր դիզայնի տարբերակը:
- Կազմակերպել ԳՊՀ պաշտոնական կայքի թարմացումները, էջերի համալրումը, շրջանավարտների բազայի համալրումը, տեսանյութերի տեղակայումը:

ԳՊՀ հանրային կապերի ուղղությամբ իրականացված ծրագրերի վերաբերյալ թվային տվյալներ

Գործունեության ոլորտները	2011-2012
www.gsu.am կայքի նորություններ	138
www.gsu.am կայքի այցելուների քանակը (այցելություններ, դիտումներ)	82889/244402
infogsu@mail.ru, info@gsu.am (հայերեն, ռուսերեն, անգլերեն) հարցերի քանակը (բոլոր հարցերին տրվել են պատասխաններ)	392
«Գեղամա աշխարհ» թերթում ԳՊՀ-ի մասին հրապարակված նյութերի քանակը	23
Տպագիր և էլեկտրոնային լրատվամիջոցներում ԳՊՀ-ին վերաբերող հրապարակված նյութերի քանակը	72
Լուսանկարահանված միջոցառումներ /լուսանկարների քանակը/	153/4690
«Գեղամա» հեռուստաընկերության «Լուրեր» լրատվական ծրագրով եթեր հեռարձակված ԳՊՀ-ին վերաբերող տեսանյութերի քանակը և տեսանկարահանման տևողությունը (րոպեներով)	28/88
ԳՊՀ-ին վերաբերող գովազդային տեսանյութերի քանակը և տեսանկարահանման տևողությունը (րոպեներով)	3/40
«Գեղամա» հեռուստաընկերությամբ «Համալսարանական ժամ» հաղորդաչափի շրջանակում եթեր հեռարձակված տեսանյութերի քանակը և տեսանկարահանման տևողությունը (րոպեներով)	24/515

Վեբոմետրիքսի (Webometrics Ranking of World Universities) հրապարակած բուհական համաշխարհային վարկանշային աղյուսակի ԳՊՀ-ին վերաբերող թվային տվյալներ

2012 հունվար	2012 հուլիս
16134	17325

Վեբոմետրիքսի (Webometrics Ranking of World Universities) հրապարակած բուհական համաշխարհային վարկանշային աղյուսակի բաղադրիչների դինամիկան

Պասակարգիչ	2012 հունվար	2012 հուլիս
Ներկայություն Presence	17802	16531
Ազդեցություն Impact	16124	17019
Թափանցիկություն Openness	12138	9809
Գերազանցություն Excellence	9576	5230

Պ. Օ. ՄՈՒՐԱԴՅԱՆ
Հանրության հետ կապերի և լրատվության բաժնի վարիչ

ԳՊՀ ԱՐԻԵՍՏԱԿՑԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Հաշվետու ուսումնական տարում ԳՊՀ արիեստակցական կազմակերպությունը իր կանոնադրական խնդիրներին համապատասխան շարունակում էր նախորդ տարիներին ավանդույթ դարձած սոցիալական հասցեագրված ծրագրերի իրականացումը:

Շարունակվել է ակտիվ համագործակցությունը ինչպես ՀՀ պետական բուհերի արիեստակցական կազմակերպությունների հանրապետական խորհրդի, այնպես էլ պետական բուհերի արհկոմիտեների հետ:

2011 թվականի դեկտեմբերին ուսանողական խորհուրդը կազմակերպել էր ուսանողական ամանօրյա միջոցառումների շարք Գավառի պետական համալսարանի չորս ֆակուլտետներում, ինչին աջակցել է ԳՊՀ արիեստակցական միությունը:

2012 թվականի գարնանը կազմակերպվել են ֆակուլտետային սպորտային միջոցառումներ, ինչպես նաև համալսարանական մինի ֆուտբոլի առաջնություն:

Ապրիլին Գավառի պետական համալսարանի պրոֆեսորադասախոսական անձնակազմը, ուսանողների հետ համատեղ, անցկացրել է «ԳՊՀ-ն ընդդեմ ցեղասպանության» միջոցառումների շարք, որի ընթացքում ուսանողները ոչ միայն իրենց հարգանքի տուրքն են մատուցել Մեծ Եղեռնի զոհերի հիշատակին, այլև Հայոց ցեղասպանության ճանաչման հարցի շուրջ կատարել են ակտիվ ճանաչողական, քարոզչական գործունեություն Գեղարքունիքի մարզի երիտասարդության և դպրոցականների շրջանում:

Հաշվետու ժամանակահատվածում արհկոմիտեն առավել ուշադրություն է դարձրել համալսարանի աշխատակիցների և ուսանողների սոցիալական աջակցության խնդիրներին: Այդ նպատակով արհկոմիտեն իր միջոցներից օգնության կարգով համալսարանի 96 աշխատակիցների հատկացրել է 1 մլն 677 հազար դրամ:

Համալսարանի աշխատակիցների ժամանցը արդյունավետ անցկացնելու նպատակով գարնանը և ամռանը կազմակերպվել են էքսկուրսիաներ դեպի Սարդարապատ, Աղավնավանք և Մակարավանք:

Համալսարանի աշխատակիցների աշխատանքային և դրա հետ կապված սոցիալական շահերն ու իրավունքները ներկայացնելու ու պաշտպանելու նպատակով արհկոմիտեի և ԳՊՀ-ի ռեկտորատի միջև կնքվել է համալսարանի կոլեկտիվ պայմանագիր:

ԳՊՀ 2011-2012 ուսումնական տարվա գործունեության հաշվետվություն

Համալսարանի արհեստակցական կազմակերպությունը իր կանոնադրական գործառույթներին համապատասխան՝ այսուհետև ևս հետամուտ կլինի համալսարանի աշխատակիցներին և ուսանողներին աջակցության ցուցաբերմանը, իր առջև կանգնած խնդիրների պատշաճ լուծմանը:

Լ. Գ. ՍԻՐՈՒՅԱՆ
ԳՊՀ արհեստակցական կազմակերպության նախագահ

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Հաշվետու ժամանակահատվածում ԳՊԴ Ուսանողական գիտական ընկերությունը և ուսանողական խորհուրդը կազմակերպել են ուսանողական գիտաժողովներ, տարբեր թեմաներով քննարկումներ, սեմինարներ, գիտական ու կրթական ուղղվածություն ունեցող բազմաթիվ միջոցառումներ, սատարել են ուսումնական, հետազոտական ոլորտներում ուսանողության նախաձեռնություններին, նպաստել ուսանողների իմացական, ստեղծագործական, կազմակերպական և հաղորդակցական կարողությունների զարգացմանը:

ԳՊԴ ուսանողական ինքնակառավարման մարմիններն ակտիվորեն փոխգործակցում են ՀՀ այլ բուհերի ուսանողական կառույցների հետ:

2011 թվականի հոկտեմբերի 17-ին ԳՊԴ ուսանողներն ու դասախոսները ուղևորվեցին մշակութային հարուստ ավանդույթներ ունեցող Գյումրի քաղաք՝ «Ուսանողական աշուն» փառատոնն անցկացնելու համար:

«Ուսանողական աշուն» փառատոնի նպատակը ԳՊԴ ստեղծագործող ուսանողների բացահայտումն էր: Մրցույթի առաջին փուլն անցկացվել էր Գավառի պետական համալսարանում, որտեղ մասնակից ուսանողներից ընտրվել էին լավագույն 10 ստեղծագործող ուսանողները: Նրանք Գյումրիում՝ Հովհաննես Շիրազի հուշատուն-թանգարանում, մասնակցեցին երկրորդ փուլին: Մասնակիցներից յուրաքանչյուրի երեքական ստեղծագործությունները տպագրվեցին «Առաջին քայլեր. ստեղծագործում են ուսանողները» խորագիրը կրող ժողովածուում:

2012 թվականի փետրվարի 16-ին ՈւԳԸ նախաձեռնությամբ կազմակերպվեց հանրապետական և համահայկական տարբեր մրցույթներում հաղթող ճանաչված ԳՊԴ ուսանողներին նվիրված միջոցառում, որտեղ վերջիններս ներկայացրին հաջողության իրենց բանաձևը:

Փետրվարի 22-ին տեղի ունեցավ գիտաժողով՝ նվիրված մայրենի լեզվի տոնին: Գիտաժողովի ընթացքում ԳՊԴ բանասիրական ֆակուլտետի մագիստրատուրայի ուսանողները հանդես եկան գիտական զեկուցումներով՝ նվիրված մայրենի լեզվի ու գրականության արդի հիմնախնդիրներին:

Փետրվարի 23-ին Գավառի պետական համալսարանի պրոֆեսորադասախոսական, վարչական անձնակազմը և ուսանողները Հայոց անկախ պետության հաղթական բանակի 20-ամյակը տոնեցին ՀՀ պաշտպանության նախարարության երկրորդ բանակային կորպուսի զինծառայողների հետ միասին:

Մարտի 8-ին Գավառի պետական համալսարանի ուսանողական ինքնակառավարման մարմինները նախաձեռնել էին գեղեցիկ և բազմաբովանդակ միջո-

ԳՊՀ 2011-2012 ուսումնական տարվա գործունեության հաշվետվություն

ցառում՝ նվիրված կանանց, մայրության և գեղեցկության տոնին:

ԳՊՀ Հրաչյա Աճառյանի անվան լսարանը վերածվել էր հեռուստատեսային յուրօրինակ տաղավարի. հյուրերը ԳՊՀ ուսանողներն ու դասախոսներն էին, բարենաղթանքներն էլ ուղղված էին բուհում աշխատող և սովորող կանանց ու աղջիկներին:

Միջոցառման ընթացքում ներկայացվեց տոնի պատմությունը, և հնչեցին շնորհավորանքի ու բարենաղթանքի գեղեցիկ խոսքեր՝ ուղղված նուրբ ու քնքուշ, գեղեցիկ ու խելացի հայ կանանց և աղջիկներին:

Մարտի 25-ին Գավառի պետական համալսարանի ուսանողները ներկա գտնվեցին «Խաղաղության մեղեդիներ» խորագրով ծրագրի շրջանակում ձևավորված միջազգային երիտասարդական սիմֆոնիկ նվագախմբի համերգին, որը տեղի ունեցավ Գյումրու Վարդան Աճեմյանի անվան պետական դրամատիկական թատրոնում: Ուսանողներն այցելեցին Գյումրու պատմամշակութային վայրեր, եկեղեցիներ և թանգարաններ:

Ապրիլի 1-ին՝ ծիծաղի եւ հումորի համաշխարհային օրը, կազմակերպվեց հումորային միջոցառում: ԳՊՀ ուսանողները մեղմ հումորով ներկայացրին «Ի՞նչ կարող են անել միայն քյավառցիները» էջը, անդրադարձան այն արտահայտություններին, որոնք երբեք չեն ասում ԳՊՀ պրոֆեսորադասախոսական անձնակազմի ներկայացուցիչները, հետաքրքիր մատուցմամբ ներկայացրին նաև ԳՊՀ տարբեր ֆակուլտետների դեկանների մասնակցությամբ նկարահանված հումորային տեսանյութերը:

Ապրիլի 7-ին Գավառի պետական համալսարանի ուսանողական մարմինները նախաձեռնել էին գեղեցիկ միջոցառում՝ նվիրված մայրության և գեղեցկության տոնին: Բեմականացմամբ ցուցադրվեց Սուրբ կույս Մարիամին Գաբրիել հրեշտակի երևան գալը և նրան մայրանալու ավետիսը հայտնելը: Միջոցառման ընթացքում ցուցադրվեց տոնի վերաբերյալ գեղեցիկ շնորհանդես, հնչեցին մայրիկներին նվիրված հուզիչ բանաստեղծություններ ու երաժշտական կատարումներ:

Ապրիլի 14-ին Գավառի պետական համալսարանի ուսանողական գիտական ընկերությունը կազմակերպել էր կինոդիտում՝ նվիրված աշխարհահռչակ «Տիտանիկ» զբոսանավի խորտակման 100-ամյակին: Կինոդիտման ընթացքում ցուցադրվեց «Տիտանիկ»-ի խորտակման պատճառի հնարավոր վարկածների մասին պատմող վավերագրական ֆիլմ:

Ապրիլի 20-ին Գյումրու Միքայել Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտում տեղի ունեցավ հանրապետական ուսանողական գիտաժողով: Գիտաժողովին մասնակցեցին նաև Գավառի պետական համալսարանի ուսանողները՝ ներկայացնելով գիտական զեկուցումներ արդի թեմաներով, որոնք երաշխավորվեցին տպագրության:

Ապրիլի 24-ին կազմակերպվեց «Աղմկում է անցյալը, պահանջում է ներկան» ցերեկույթը՝ նվիրված Մեծ եղեռնի անմեղ զոհերի հիշատակին և Հայոց պահանջատիրությանը:

Մայիսի 11-ին ԳՊՀ ուսանողները մասնակցեցին Վանաձորի Հովհաննես Թու-

մանյանի պետական մանկավարժական ինստիտուտի ուսանողական գիտական ընկերության կազմակերպած երրորդ համրապետական գիտաժողովին: Նրանց ներկայացրած զեկուցումները երաշխավորվեցին տպագրության:

Մայիսի 18-ին ԳՊԴ հասարակական գիտությունների ամբիոնի և ուսանողական գիտական ընկերության համատեղ ջանքերի շնորհիվ տեղի ունեցավ ուսանողական գիտաժողով, որի ընթացքում ներկայացվեցին ու քննարկվեցին զեկուցումներ՝ նվիրված մանկավարժության արդի հիմնախնդիրներին:

2011-2012 ուսումնական տարվա ընթացքում ԳՊԴ ՈւԳԸ նախաձեռնությամբ և դեկանատների անմիջական օժանդակությամբ կազմակերպվեց գիտական հոդված և ավարտական աշխատանք, մագիստրոսական թեզ գրելու մասին դասընթացների շարք:

Ավանդույթի համաձայն՝ ՀՀ Սահմանադրության օրը ԳՊԴ մեծ դահլիճում տեղի ունեցավ Գավառի պետական համալսարանի շրջանավարտների դիպլոմների հանձնման հանդիսավոր արարողությունը: Հայաստանի Հանրապետության ամենաերիտասարդ բուհը կյանք ճանապարհեց շրջանավարտների 15-րդ սերնդին:

Միջոցառման սկզբին ներկաները մեկ րոպե լռությամբ հարգեցին փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ վաստակավոր մանկավարժ, Գավառի պետական համալսարանի հիմնադիր ռեկտոր, Գավառի պատվավոր քաղաքացի Հրանտ Խաչատուրի Հակոբյանի հիշատակը:

Գեղարքունյաց թեմի հոգևոր առաջնորդ Մարկոս Եպիսկոպոս Հովհաննիսյանը կատարեց ԳՊԴ շրջանավարտների օրհնության կարգ:

Միջոցառման վերջում տեղի ունեցավ ԳՊԴ մագիստրոսների երդման հանդիսավոր արարողությունը:

2012 թվականի սեպտեմբերի 1-ին համալսարանում կազմակերպվեց միջոցառում՝ նվիրված գիտելիքի, գրի և դպրության օրվան: Միջոցառումը համեմված էր գիտելիքին նվիրված ասույթներով, ուսանողներին հղված բարեմաղթանքներով:

Հոկտեմբերի 3-ին տեղի ունեցավ միջոցառում՝ նվիրված գրագիտության միջազգային օրվան, Մեսրոպ Մաշտոցի ծննդյան 1650-ամյակին և ԳՊԴ ուսանողական գիտական ընկերության գործող կազմի աշխատանքի 2-ամյակին:

Միջոցառման ընթացքում հնչեցին Հայոց աշխարհին, հայոց գրին ու դպրությանը նվիրված երգեր ու բանաստեղծություններ:

Հոկտեմբերի 5-ին՝ ժպիտի միջազգային օրվա կապակցությամբ, ԳՊԴ ուսանողական մարմինները հանդես եկան հետաքրքիր նախաձեռնությամբ. ՈւԳԸ և ՈւԼՏ անդամները, շրջելով ԳՊԴ բոլոր կուրսերով և կառուցվածքային ստորաբաժանումներով, համալսարանականներին բաժանեցին «Ժպտացող փուչիկներ»՝ կոչ անելով կյանքում միշտ ժպտալ և ժպտալով հաղթահարել դժվարությունները:

2012-2013 ուսումնական տարվա ընթացքում նախատեսվում է անցկացնել սեմինարներ՝ հետևյալ թեմաներով.

- «Ծրագրի նախագծում և կառավարում»,

ԳՊՀ 2011-2012 ուսումնական տարվա գործունեության հաշվետվություն

- «Համացանցը՝ տեղեկատվության աղբյուր»,
- «Համակարգչային գրագիտություն»,
- «Զանգվածային լրատվության ոլորտում առկա հիմնախնդիրները»,
- «Որտեղ անցկացնել պրակտիկան»:

Ծրագրվում է կազմակերպել տնտեսագիտական բովանդակության ֆիլմերի դիտում-քննարկումներ:

Տնտեսագիտական ֆակուլտետի դասախոսների հետ համատեղ նախապես կընտրվեն թեմատիկ ֆիլմեր, այնուհետև յուրաքանչյուր ֆիլմին համապատասխան կկազմվեն հարցեր, որոնք կտրվեն ուսանողներին ֆիլմի դիտումից հետո, կինչեն կարծիքներ ու համապատասխան եզրահանգումներ:

Շարունակելով նման միջոցառումների շարքը՝ կկազմակերպվեն նաև Հայոց ցեղասպանության 98-րդ տարելիցին և կինոռեժիսոր Ֆրունզե Դովլաթյանի 85-ամյակին նվիրված կինոդիտում-քննարկումներ:

2012-2013 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակից կվերսկսվի «Տեսակետների խաչմերուկում» ծրագրերի շարքը, որի շրջանակում կկազմակերպվեն քննարկումներ տարբեր թեմաներով:

2013 թվականի փետրվարի երկրորդ կեսից կկազմակերպվեն գրքի քննարկումներ ԳՊՀ բոլոր ֆակուլտետների ուսանողների համար:

Ուսանողներին նախապես կհանձնարարվի մեկ գեղարվեստական կամ մասնագիտական գիրք, կտրվի որոշակի ժամանակահատված՝ գիրքը կարդալու և նախապատրաստվելու համար: Նախապես կմշակվեն գրքի բովանդակությանը և հեղինակին մտահոգող հիմնախնդիրներին վերաբերող հարցեր, որոնց ուսանողները կպատասխանեն քննարկման ընթացքում:

ԳՊՀ ֆակուլտետներում կկազմակերպվեն միջկուրսային թիմային աշխատանքներ՝ միջառարկայական թեմաներով:

ԳՊՀ ֆակուլտետներում կկազմակերպվեն մասնագիտական արդի հիմնախնդիրներին նվիրված քննարկումներ, որոնց շրջանակում կներկայացվեն նաև գիտական թեզիսների թեմաները:

Դեկտեմբերի 20-ին կկազմակերպվի փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ վաստակավոր մանկավարժ, ԳՊՀ հիմնադիր ռեկտոր Հրանտ Խաչատուրի Հակոբյանի ծննդյան 85-ամյակին նվիրված հանրապետական ուսանողական գիտաժողով:

Գ. Լ. ԱԹԵՅԱՆ
ԳՊՀ ուսանողական գիտական ընկերության նախագահ,
Պ. Յ. ԶՈՉԱՐՅԱՆ
ԳՊՀ ուսանողական խորհրդի նախագահ

ԳՊՀ ԻՐԱՎԱՔԱՆԱԿԱՆ ԿԼԻՆԻԿԱ

Գավառի պետական համալսարանի իրավաբանական կլինիկան 9 տարի շարունակ ծավալում է իր գործունեությունը՝ նպատակ ունենալով խորացնել իրավաբան ուսանողների մասնագիտական գիտելիքները, գործնական հմտությունները, ինչպես նաև Գեղարքունիքի մարզի բնակչությանը մատուցել անվճար իրավաբանական խորհրդատվություն:

Հաշվետու ժամանակահատվածը նշանավորվեց ԳՊՀ իրավաբանական կլինիկայի ութամյա գործունեության ամփոփմամբ, որի կապակցությամբ իրավաբանական կլինիկայի հիմնադրման օրը՝ դեկտեմբերի 10-ին, կազմակերպվեց իրավաբան ուսանողների գիտաժողով՝ «Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները» խորագրով: Ձեկույցներով հանդես եկան 14 իրավաբան ուսանողներ: Գիտաժողովին մասնակցեցին հյուրեր Ամերիկյան իրավաբանների ընկերակցության հայաստանյան գրասենյակից, ԳՊՀ դասախոսներ, ուսանողական խորհրդի և ուսանողական գիտական ընկերության անդամներ:

ԳՊՀ-ի իրավաբանական կլինիկայում ուսանողներն ուսումնասիրում են կանանց և երեխաների իրավունքներ, փաստաբանական գործունեության հմտություններ, սովորում են մասնագիտական էթիկայի նորմեր, ընդունում են հաճախորդների, յուրացնում են իրավաբանական գործերի կազմման և վարման կանոնները, կազմում հայցադիմումներ, նամակներ և այլ պաշտոնական փաստաթղթեր, ծանոթանում են իրավաբանական խորհրդատվության փուլերին: ԳՊՀ Բնագիտական ֆակուլտետի ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա բաժնի և Բանասիրական ֆակուլտետի անգլերեն լեզու և գրականություն բաժնի մագիստրատուրայում սովորող ուսանողների կողմից իրավաբանական կլինիկայի ուսանողների համար 2012 թվականի փետրվար ամսից կազմակերպվեցին անգլերեն լեզվի և համակարգչային հմտությունների դասընթացներ:

Արդեն երրորդ տարին է, ի թիվս այլ առարկաների, իրավաբանական կլինիկայում ներդրվել է նաև «Իրավաբանական գրագրություն» դասընթացը, որի դասավանդմանն աջակցում է Ամերիկյան իրավաբանների ընկերակցության հայաստանյան գրասենյակը՝ յուրաքանչյուր ուսանողի տրամադրելով նաև դասընթացի դասագիրք:

2011-2012 ուսումնական տարվա ընթացքում իրավաբանական կլինիկայի ուսանողները ՀՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի, վարչական և քաղաքացիական վերաքննիչ դատարաններում մասնակցել են դատաքննությունների՝ քննված գործերի մասին իրենց կարծիքը ներկայացնելով իրավաբանական կլինիկայի «Փաստաբանական հմտություններ» դասընթացին:

ԳՊԴ 2011-2012 ուսումնական տարվա գործունեության հաշվետվություն

Հաշվետու ժամանակահատվածում իրավաբանական կլինիկայում խորացված ուսուցում են անցել 17 ուսանողներ, որոնք 152 քաղաքացիների տրամադրել են անվճար իրավաբանական խորհրդատվություն:

2011 թվականի հոկտեմբեր - 2012 թ. ապրիլ ամիսներին իրավաբանական կլինիկայի ուսանողները «Շրջիկ կլինիկա» ծրագրի շրջանակներում հանդիպումներ են կազմակերպել նաև ՀՀ Գեղարքունիքի մարզի 10 գյուղական համայնքներում, տեղի բնակիչներին հուզող բազմաթիվ իրավաբանական խնդիրների մասին տվել պարզաբանումներ, պետական մարմիններին ուղարկել համապատասխան հարցումներ և գրություններ:

ԳՊԴ իրավաբանական կլինիկայի բոլոր ուսանողները Ձորագետ գյուղական համայնքում և Ծաղկաձոր քաղաքում մասնակցել են Ամերիկյան իրավաբանների ընկերակցության կողմից կազմակերպված «Աշնանային դպրոց 2011»-ին և «Գարնանային դպրոց 2012»-ին՝ ստանալով վկայականներ, ակտիվ մասնակցության հավաստագրեր:

«Իրավունք բոլորի համար» ծրագրի շրջանակում իրավաբանական կլինիկան 2011-2012 ուսումնական տարում «Աշխատանքային իրավունք» և «Ընտրական իրավունք» թեմաներով կազմակերպել է բազմաթիվ քննարկումներ, սեմինարներ, որոնց մասնակցել են շուրջ 190 քաղաքացիներ:

2012 թվականի ապրիլին Գավառի պետական համալսարանի իրավաբանական կլինիկայում տեղի ունեցավ սեմինար-քննարկում «Ընտրական իրավունք» թեմայով: Սեմինարը վարում էին ՀՀ ԿԸՀ անդամ, ծրագրի դասախոս, փորձագետ Գեորգի Սարտիրոսյանը և Ամերիկյան իրավաբանների ընկերակցության (ABA/ROLI) ընտրական ծրագրի համակարգող Արման Խաչատրյանը:

2012 թվականի փետրվարի 17-ին մեկնարկեց Գավառի պետական համալսարանի իրավաբանական կլինիկայի «Իրավունք բոլորի համար» ծրագրի նոր փուլը, որի շրջանակում իրավաբանական կլինիկայի 17 ուսանողներ մարզի երեխաների համար կազմակերպեցին «Իրավունքի այբուբեն» մուլտաշարի դիտումներ և քննարկումներ: Առաջին հանդիպումը կազմակերպվել է ՀՀ Գեղարքունիքի մարզի Առևտրաարդյունաբերական պալատի շահերի պաշտպանության և աջակցության կենտրոնի (ՇՊԱԿ) գրասենյակում, որին մասնակցել են ավելի քան 25 դպրոցահասակ երեխաներ:

Գավառի պետական համալսարանի իրավաբանական կլինիկայի ուսանողները շարունակաբար սեմինար-քննարկումներ են անցկացնում Գավառի մանկատան սաների համար՝ «Իմ իրավունքը» խորագրով:

Գավառի պետական համալսարանի իրավաբանական կլինիկան փորձում է լուծել կարևոր խնդիր՝ օժանդակելով սոցիալապես անապահով քաղաքացիներին, անվճար խորհրդատվություն մատուցելով առաջին հերթին կանանց և երեխաներին, ինչպես նաև անվճարունակ անձանց:

Հատկանշական է, որ իրավաբանական կլինիկան փորձում է սովորողների տեսական գիտելիքները հարստացնել պրակտիկ հմտություններով՝ ուսանողներին տալով անհրաժեշտ իմացություն՝ գործնական աշխատանքով զբաղվելու համար:

ԳՊԴ 2011-2012 ուսումնական տարվա գործունեության հաշվետվություն

Իրավաբանական կլինիկայում դասավանդում են ժամանակակից դասավանդման մեթոդներին տիրապետող և տարբեր ծրագրերով արտերկրում վերապատրաստում անցած դասախոսներ:

Հաշվետու ժամանակաշրջանում իրավաբանական կլինիկայում տարբեր թեմաներով սեմինարներ են անցկացրել ՀՀ-ում ԱՄՆ դեսպանատան, ՄԱԿ-ի Երևանյան գրասենյակի և այլ կազմակերպությունների փորձառու իրավաբաններ ու փորձագետներ:

Իրավաբանական կլինիկայի դասախոսները մասնակցել են նաև ABA/ROLI հայաստանյան գրասենյակի, ՄԱԿ-ի Փախստականների գործերով հանձնակատարի հայաստանյան գրասենյակի և այլ կազմակերպությունների կողմից կազմակերպված սեմինար-քննարկումների, որակավորման բարձրացման դասընթացների:

Իրավաբանական կլինիկան համագործակցում է «Գավառի զարգացման կենտրոն» հասարակական կազմակերպության, Շահերի պաշտպանության և աջակցության կենտրոնի և Մարդու իրավունքների պաշտպանի մարզային գրասենյակների, ինչպես նաև «Գեղամա» հեռուստաընկերության «Վեկտոր» հաղորդաշարի հետ, որի հեռուստատեսային բանավեճերին, բաց քննարկումներին իրենց ակտիվ մասնակցությունն են ցուցաբերում նաև իրավաբանական կլինիկայի դասախոսներն ու ուսանողները:

Իրավաբանական կլինիկան շարունակում է համագործակցել Հայաստանի իրավաբանական կլինիկաների, Գավառի մանկատան հետ և ակտիվորեն մասնակցում է Գավառի պետական համալսարանի ուսանողական խորհրդի և ուսանողական գիտական ընկերության աշխատանքներին:

Ա. Բ. ԱՊՐՈՅԱՆ

ԳՊԴ իրավաբանական կլինիկայի կոորդինատոր

ՏՆՏԵՍԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

2011թ. սեպտեմբերին հաստատվեց համալսարանի տնտեսական գործունեության տարեկան պլանը, որը ներառում էր 2011-2012 ուսումնական տարվա համար նախատեսված գործողությունների ժամանակացույցը: Ըստ պլանի՝ կազմակերպվել է ավելի քան 22 աշխատանքային հանդիպում տնտեսատեխնիկական աշխատակիցների հետ, քննարկվել են աշխատանքային գործունեության հիմնական ուղղությունները, ծագած խնդիրները, դրանց օպերատիվ լուծման միջոցները: Ներբուհական տնտեսությունը կազմակերպելիս՝ օգտագործվել է ինչպես համալսարանի տնտեսական աշխատակիցների, այնպես էլ այլ կազմակերպությունների մասնագիտացված աշխատակիցների ներուժը:

Հաշվետու ուսումնական տարում տնտեսատեխնիկական անձնակազմն իրականացրել է իր առջև դրված խնդիրների լուծմանն ուղղված միջոցառումներ, ԳՊԴ ղեկավարությանն առաջարկություններ է ներկայացրել համալսարանի տնտեսական, տեխնիկական և սպասարկման ոլորտում տարվող քաղաքականության և ծրագրերի վերաբերյալ, աջակցել է համալսարանի զարգացման ռազմավարական հայեցակարգի համապատասխան դրույթների իրականացմանը, ապահովել է ներհամալսարանական տնտեսական աշխատանքը, սպասարկել և արդիականացրել է համալսարանի համակարգչային տեխնիկան, ստորաբաժանումներում ապահովել է ինտերնետ կապը, ինչպես նաև իրականացրել է իր կանոնակարգով նախատեսված այլ գործառույթներ:

Համալսարանի տնտեսատեխնիկական գործունեությունն իրականացվել է հետևյալ բաժինների ուժերով.

- տեխնիկական և անվտանգության ապահովման բաժին (համակարգչային տեխնիկայի շահագործման մասնագետներ, ճարտարագետ, էլեկտրիկ, հյուսն, հնոցապաններ, սանտեխնիկ, բուժքույր և այլն),
- տնտեսական բաժին (պահեստապետ, գնորդ, պարետներ, տնտեսուհիներ, բանվոր),
- սպասարկման բաժին (հսկիչներ, վարորդներ):

Աշխատանքների արդյունավետ կազմակերպման նպատակով յուրաքանչյուր աշխատակցին առաջադրվող խնդիրները պարզաբանվել են, համակարգվել է նրանց կոլեկտիվ աշխատանքը:

2012 թվականի հունվարից 10-20%-ով բարձրացվել են տնտեսատեխնիկական անձնակազմի աշխատավարձերը: Բոլոր աշխատակիցների աշխատավարձերը վճարվել են ժամանակին, կիրառվել են աշխատակիցների բարոյական և նյութական խրախուսման միջոցներ:

2012 թվականի Ամանորի և Սուրբ Ծննդյան տոների առթիվ դրամական

պարզևատրույթներ են ստացել տնտեսական աշխատակազմի բոլոր անդամները: Սահմանված կարգով վարձատրվել են նաև նրանք, ովքեր մասնակցել են համալսարանում իրականացված մասնակի վերանորոգման աշխատանքներին:

Հարկ է նշել, որ, համաձայն ԳՊՀ գնումների պլանի, անհրաժեշտ նյութերով և սարքերով ապահովվել են համալսարանի բոլոր կառուցվածքային ստորաբաժանումները՝ ուսումնագիտական գործընթացն անխափան ապահովելու համար:

Հաշվետու ժամանակաշրջանում համալսարանի նյութատեխնիկական բազայի հարստացման ուղղությամբ իրագործվել են բազմաբնույթ միջոցառումներ:

Ձեռք են բերվել համակարգիչներ, համակարգչային պահեստամասեր, տպիչներ, պատճենահանող սարքեր, կահույք (ուսանողական նստարաններ, սեղաններ, աթոռներ, պահարաններ, գրատախտակներ և այլն), գրենական պիտույքներ, մարզական գույք: Գնվել է կենցաղային տեխնիկա (գազօջախներ, հեռուստացույց, տեսախցիկ, ձայնագրման սարքեր, հեռախոսներ) և այլն: Գնվել է նաև շինանյութ, տնտեսական ապրանքներ, գրադարանում տեղադրվել են հարմարավետ, նորացված դարակաշարեր:

Լայնածավալ աշխատանքներ են իրականացվել շենքերի ու շինությունների վերանորոգման ուղղությամբ: Ներքին հարդարման աշխատանքներ են տարվել ԳՊՀ բոլոր մասնաշենքերում: Համալսարանում շարունակական բնույթ են կրում մասնաշենքերի լսարանների, լաբորատորիաների, աշխատասենյակների, միջանցքների, տանիքների, ինժեներական կոմունիկացիաների, դռների, պատուհանների, հատակների ընթացիկ վերանորոգման աշխատանքները, որոնք իրականացվում են համալսարանի տնտեսատեխնիկական աշխատակիցների ուժերով:

Ընդհանրապես, վերջին երեք տարում կատարված աշխատանքների համեմատական բնութագրերը ցույց են տալիս, որ համալսարանում իրականացվում է հետևողական աշխատանք շինվերանորոգման աշխատանքների պլանավորման և կատարման ուղղությամբ: Միաժամանակ, հարկ է նշել, որ ֆինանսական վիճակի բարելավման դեպքում անհրաժեշտ է ավելի մեծացնել վերանորոգվող օգտակար մակերեսների ծավալները:

Մեծ ուշադրություն է դարձվում համալսարանի մասնաշենքերի պահպանման և բնականոն կենսագործունեության ապահովման հարցերին, այդ իսկ պատճառով վերանորոգման աշխատանքների մեջ ամեն տարի ընդգրկվում են տանիքների վերանորոգման, ջրագծերի և ջերմագծերի փոփոխման աշխատանքները: Համալսարանի տնտեսատեխնիկական ծառայությունների ուժերով իրականացվել են նաև մասնաշենքերի ջեռուցման ցանցերի և ջրագծերի մասնակի վերանորոգումներ, վերանորոգվել են բազմաթիվ հանգույցներ՝ ինչպես ջեռուցման, այնպես էլ ջրամատակարարման ցանցերում: Համալսարանի կաթսայատան միջոցով ջեռուցվում են բոլոր մասնաշենքերը, այդ թվում՝ հանրակացարանը: Ջեռուցման ներքին ցանցի վերանորոգման աշխատանքներ են կատարվել բոլոր մասնաշենքերում և կաթսայատանը: Վերակառուցվել և վերանորոգվել են ջրատաքացուցիչ կաթսաները, նորացվել են ինքնաաշխատ (ավտոմատ) հսկման

համակարգերը:

Հետևողական աշխատանքներ են իրականացվել համալսարանի մասնաշենքերում սանիտարական մաքրության պահպանման նպատակով: Սանհիգիենիկ պայմանների պահովումը և տարածքի բարեկարգումը գտնվում է համալսարանի ղեկավարության անմիջական հսկողության ներքո: Մասնաշենքերին հարող պուրակներում կատարվել են ծառատունկ, ծառերի խնամքի, տարածքի կանաչապատման և ծաղկազարդման ծավալուն աշխատանքներ:

Համալսարան էլեկտրաէներգիայի անխափան մատակարարումն ապահովելու համար կատարվել են մեծ ծավալի աշխատանքներ ինչպես տրանսֆորմատորային ենթակայաններում, այնպես էլ բուհի մասնաշենքերում՝ լսարաններում, լաբորատորիաներում ու միջանցքներում նորմալ լուսավորություն ապահովելու և լաբորատոր դասընթացների անցկացման համար անհրաժեշտ սարքերն աշխատանքային բնականոն վիճակում պահելու ուղղությամբ:

2013 թվականի գարնանը կավարտվեն համալսարանի տարածքի լուսավորությունը պատշաճ կերպով ապահովելու ուղղությամբ տարվող աշխատանքները:

Զնայած համալսարանի հեռախոսային ներքին ցանցի և ավտոմատ հեռախոսակայանի բացակայությանը՝ տարվա ընթացքում համալսարանի հեռախոսակապն աշխատել է անխափան, որն աշխատակիցների հետևողականության արդյունք է: Համալսարանում ներքին և արտաքին որակյալ ու անխափան կապն իրականացնելու համար, ֆինանսական միջոցների առկայության դեպքում, անհրաժեշտ է ներդնել նոր, ժամանակակից թվային ավտոմատ հեռախոսակայան և ներքին հեռախոսացանց:

ԳՊՀ տեխնիկական աշխատակիցների կողմից այս տարի կատարվել են նաև մեծ ծավալի աշխատանքներ համալսարանում իրականացված կառուցվածքային փոփոխությունների հետևանքով նոր ստեղծված վարչական մարմինների աշխատասենյակները և կենտրոնները հեռախոսակապով ապահովելու համար:

Համալսարանի փաստաշրջանառությունը ներկայումս կազմակերպվում է “Mulberry” ծրագրով, որն ապահովում են ԳՊՀ տեխնիկայի շահագործման բաժնի աշխատակիցները:

Հաշվետու ժամականահատվածում

1. կահավորվել և բացվել է ԳՊՀ պատմահնագիտական թանգարանը,
2. փոխվել են ԳՊՀ երրորդ մասնաշենքի, հանրակացարանի բոլոր պատուհանները,
3. «Վիվա-Սել ՄՏՍ» կազմակերպության աջակցությամբ ԳՊՀ երկրորդ մասնաշենքում շահագործման է հանձնվել նոր՝ համակարգչային նորագույն տեխնիկայով զինված, կահավորված համակարգչային լսարան,
4. ԳՊՀ ակադեմիական քաղաքականության վարչությանը, որակի ապահովման բաժնին, ամբիոններին տրամադրվել են նոր կահույք և տեխնիկա,
5. ամառային արձակուրդների ընթացքում մասնակի վերանորոգման աշխատանքներ են իրականացվել ԳՊՀ բոլոր մասնաշենքերում, մեծ դահլիճում,
6. վերանորոգվել են բոլոր առաջին կուրսերի լսարանները, ինչպես նաև հան-

րակացարանի մի քանի սենյակ և միջանցքը, տեղադրվել են եվրոպատուհաններ և դռներ,

7. ԳՊՀ կենտրոնական մասնաշենքի նախասրահում տեղադրվել է հեռուստակրան, որը տեղեկատվություն է ապահովում համալսարանում ընթացող միջոցառումների մասին,

8. WiFi անլար ցանցով ապահովվել է ԳՊՀ 3-րդ նորաստեղծ համակարգչային լսարանը,

9. «Վորդ Վիժն Հայաստան» կազմակերպության կողմից համալսարանում բացվել է էկոլոգիական ուսումնական «գերազանցության» կենտրոն՝ կահավորված 10 նոր համակարգիչներով, էլեկտրոնային գրատախտակով և անհրաժեշտ կահույքով,

10. ԳՊՀ համակարգչային ցանցին, ինչպես նաև ինտերնետ ցանցին են միացվել շուրջ 70 համակարգիչներ, վերականգնվել է վերանորոգված սենյակների ինտերնետ ցանցը, ինչպես նաև համակարգչային մի քանի նորաստեղծ լսարաններում ստեղծվել է համակարգչային ցանց, որը միացվել է ԳՊՀ համակարգչային ցանցին,

11. կատարվել են համակարգչային տեխնիկայի ընթացիկ վերանորոգման և ցանցի սպասարկման աշխատանքներ (ըստ մակագրված զեկուցագրերի՝ վերանորոգվել են շուրջ 300 համակարգիչներ, տեղադրվել են նաև ծրագրային ապահովումներ), միաժամանակ տրամադրվել է համակարգչային ծրագրերի և տեխնիկայի հետ աշխատելու խնդիրների հետ կապված խորհրդատվություն, տարվել են անվտանգության ապահովման հետ կապված բացատրական աշխատանքներ,

12. «Վորդ Վիժն Հայաստան» կազմակերպության աջակցությամբ համալսարանի բնագիտական ֆակուլտետի տարածքում տեղադրվել է 96 ք.մ. ընդհանուր չափսով գործնական և լաբորատոր աշխատանքների համար նախատեսված ջերմոց, իսկ հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի մասնաշենքում բացվել է ժամանակակից սարքավորումներով զինված կարի արտադրամաս:

Համալսարանի զարգացման նոր խնդիրներն ու ծրագրերը պահանջում են կատարելագործել նաև համալսարանի կրթական միջավայրը և բարձրացնել նրա արդյունավետությունն ու ծառայությունների որակը: Այդ նպատակով, համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում, անհրաժեշտ է՝

- բոլոր մասնաշենքերի գլխավոր մուտքերի և շրջակա տարածքների անվտանգությունն ապահովելու համար տեղադրել ժամանակակից տեսախցիկներ,
- շարունակել մասնաշենքերի ներքին հարդարման, ջեռուցման, ջրամատակարարման և հակահրդեհային համակարգերի վերակառուցման աշխատանքները,

- ընդառաջ գնալով 2013թ. համալսարանի հիմնադրման 20-ամյակին՝ վերակառուցել, վերանորոգել համալսարանի գլխավոր մասնաշենքի շքամուտքը,

- անել հնարավոր առավելագույնը՝ մարզադահլիճները կահավորելու, հանգստի պայմաններն առավել հարմարավետ դարձնելու համար,

ԳՊՀ 2011-2012 ուսումնական տարվա գործունեության հաշվետվություն

- համալրել համալսարանի ավտոտնտեսությունը՝ ուսանողների համար ձեռքբերելով միկրոավտոբուս,
- շարունակել տարածքի բարեկարգման, մասնավորապես, որոշ հատվածների ասֆալտապատման աշխատանքները,
- ստեղծել համալսարանի միասնական տեղեկատվական համակարգ, որը հասանելի կլինի բոլոր ուսանողներին և դասախոսներին,
- ստեղծել գիտահետազոտական և կրթական միջոցների միասնական էլեկտրոնային համակարգ,
- իրականացնել աշխատանքներ՝ ստեղծելու գրադարանի համացանցային կայքէջը,
- կատարել ուսումնական տարածքի և լսարանային ֆոնդի վիճակի բարելավում և արդիականացում,
- բարելավել պայմանները սննդի համալիրի կետերում,
- շարունակել փնտրել հնարավորություններ իրականացնելու համալսարանի հյուրերի տան կամ հեռավոր վայրերում ապրող ուսանողների հանրակացարանի շինարարության նախագիծը,
- հայթհայթել միջոցներ՝ ստեղծելու համալսարանի տպարանը,
- ապահովել լսարանային և լաբորատոր բազայի վերազինումն ու արդիականացումը՝ համալրելով նորագույն լաբորատոր սարքերով և սարքավորումներով,
- թարմացնել գույքային բազան, եղածը փոխարինել առավել ժամանակակից գույքով, ձեռք բերել նոր սարքավորումներ, ուսումնական գույք, գրատպատակներ և նստարաններ,
- համալսարանի բոլոր աշխատակիցների, ուսանողության ջանքերը ներդնել վերանորոգված և բարեկարգված տարածքները պատշաճ վիճակում պահելու և բարեխղճորեն շահագործելու գործում:

Ա. Զ. ԱՊՐՈՅԱՆ
ԳՊՀ տնտեսական գծով պրոռեկտոր

2011-2012 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԳՎԱՆՈՒԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ՀԻՇՎՐԺԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻՑ

01.09.2011թ. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՄԵԿՆԱՐԿԸ ԳՊՀ-ՈՒՄ՝ ՄԱՐԹԵՆ ՅՈՐԳԱՆՍԻ ՀԱՄԵՐԳՈՎ

Սեպտեմբերի մեկին Գավառի պետական համալսարանը հանդիսավորությամբ նշեց նոր ուսումնական տարվա մեկնարկը: Գիտելիքի, գրի և դպրության օրը ԳՊՀ-ում նշանավորվեց հանրաճանաչ երգիչ, ֆրանսահայ երգահան Մարթեն Յորգանսի «Համերգ փոքրիկներու» գեղեցիկ երաժշտական ծրագրով:

20.09.2011թ. ՏԵՂ ԵՎ ՏԻԿԻՆ ՆԻՇԱՆՅԱՆՆԵՐԸ ԳՊՀ-ՈՒՄ

Գավառի պետական համալսարանը հյուրընկալեց ԳՊՀ պատվավոր բարերարներ տեր և տիկին Ժիրայր և Անահիտ Նիշանյաններին:

Ժիրայր և Անահիտ Նիշանյանների և ուսանողների հանդիպմանը ներկա էին նաև Հայ Առաքելական Եկեղեցու Արևելյան թեմի միջեկեղեցական հարաբերությունների պատասխանատու Վիգեն արքեպիսկոպոս Հայկազյանը և «Ժիրայր Նիշանյան» հիմնադրամի խորհրդի անդամ Տեր Վրթանես ավագ քահանա Քալաջյանը, երեցկին Անահիտ Քալաջյանը:

Հանդիպման ընթացքում նիշանյանական կրթաթոշակառուներն իրենց շնորհակալական խոսքը հղեցին պատվավոր բարերարներին՝ բարձրագույն կրթություն ստանալու հնարավորություն ընձեռելու համար:

20.09.2011թ. ԻՄ ԱՆԿԱՆ ՀԱՅՐԵՆԻՔԸ 20 ՏԱՐԵԿԱՆ Է

Գավառի պետական համալսարանը հայտարարել էր «Իմ անկախ հայրենիքը 20 տարեկան է» խորագրով ուսանողական աշխատանքների մրցույթ՝ նվիրված Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 20-ամյակին:

Ցուցահանդեսին ներկայացված էին Գավառի պետական համալսարանի բոլոր ֆակուլտետների ուսանողների լուսանկարչական, գեղանկարչական և ձեռարվեստի աշխատանքները:

23.09.2011թ. ԳՊԴ-ՈՒՄ ԱՆԸՆԴՈՒՆԵԼԻ ԵՆ ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԸ

Գավառի պետական համալսարանի ռեկտորի, պրոֆեսորադասախոսական անձնակազմի և ուսանողների հետ հանդիպում ունեցավ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության Վաշինգտոնյան գրասենյակի Եվրոպայի և Եվրասիայի բյուրոյի կրթական ոլորտի խորհրդատու Լյուբա Ֆայֆերը, ով նաև «Թափանցիկ կրթությունը Հայաստանում» ծրագրի պատասխանատուն է Վաշինգտոնում: Հանդիպման ընթացքում տեղի ունեցավ քննարկում կոռուպցիոն երևույթների, ծնող պատճառների և դրանց հետևանքների մասին: Քննարկվեցին կոռուպցիոն երևույթների կանխման կառուցակարգերը: Համալսարանականները ներկայացրին բուհի հակակոռուպցիոն դիրքորոշումը:

24.09.2011թ. ԳՊԴ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

ԳՊԴ-ում կազմակերպվել էր միջոցառում՝ նվիրված ՀՀ անկախության 20-ամյակին: Միջոցառման սկզբում ԳՊԴ ուսանողներն անդրադարձան Հայաստանի առաջին, երկրորդ և երրորդ Հանրապետությունների պատմությանը, կարևորեցին անկախությունը, ինքնիշխանությունն ու ազատ ապրելու և զարգանալու հնարավորությունը ժողովրդի ու պետության համար:

Միջոցառման ընթացքում տեղի ունեցավ «Լավագույն ուսանող» մրցանակաբաշխությունը: ԳՊԴ յուրաքանչյուր ֆակուլտետից մեկ ուսանող ճանաչվեց լավագույնը, միաժամանակ ուսանողական ինքնակառավարման մարմինների աշխատանքներին ակտիվ մասնակցություն ցուցաբերած և հանրապետական մրցույթներում հաղթող ճանաչված ուսանողներին հանձնվեցին հավաստագրեր:

Գավառի պետական համալսարանի լավագույն ուսանող ճանաչվեց Բնագիտական ֆակուլտետի Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա բաժնի մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանող Վարդադատ Ավետիսյանը, ում հավաստագիր հանձնեց ԳՊԴ ռեկտոր Ռուզաննա Հակոբյանը:

28.09.2011թ. ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԹԻՄԸ 6 ՏԱՐԵԿԱՆ Է

Գավառի պետական համալսարանի Հրաչյա Աճառյանի անվան լսարանում տեղի ունեցավ հաշվետու հանդիպում ԳՊԴ ուսանողական ծրագրային թիմի հետ: Թիմի անդամները ԳՊԴ ուսանողներին և դասախոսներին ներկայացրին 2010-2011թթ. ուսումնական տարվա ընթացքում իրենց կատարած աշխատանքները, ինչպիսիք են՝ ««Նոր շունչ» միջհամայնքային սեղանի թեմիսի մրցաշար ԳՊԴ-ում» ծրագիրը, Արմավիրի և Գեղարքունիքի մարզեր կատարած ուսուցողական այցերը, «Տաք կոշիկներ սոցիալապես անապահով երեխաներին» ակցիան և այլ ձեռնարկներ:

01.10.2011թ. ԱՄՓՈՓՎԵՑԻՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Ամփոփվեցին «Իմ անկախ հայրենիքը 20 տարեկան է» ձեռարվեստի, լուսանկարչական, արձակ և չափածո ստեղծագործությունների մրցույթի արդյունքները:

Հաղթողներին հանձնվեցին պատվոգրեր և խրախուսական մրցանակներ:

01.10.2011թ. ՄԵՆՔ ՀՊԱՐՏ ԵՆՔ, ՈՐ ՀԱՅ ԵՆՔ

ԳՊԴ հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետը կազմակերպել էր Հայաստանի Հանրապետության 20-ամյակին նվիրված միջոցառում:

ՀՄՖ ուսանողները հանդես եկան զեկուցումներով: Ներկայացվեցին 1990թ. օգոստոսի 23-ի անկախության հռչակագրի և սեպտեմբերի 21-ի անկախության հանրաքվեի պատմական նշանակությունը և իրավաքաղաքական հետևանքները:

02.10.2011թ. ԳՊԴ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏԱՐԵՂԱՐՁԸ

Գավառի պետական համալսարանի ուսանողական գիտական ընկերության գործող կազմը նշեց իր գործունեության միամյակը:

Ֆակուլտետային ուսանողական գիտական ընկերության նախագահները հանդես եկան մեկ տարվա ՈՒԳԸ գործունեության հաշվետվությամբ:

05.10.2011թ. ՀՀ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՏԱՐԱՐԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

Գավառի պետական համալսարանում տեղի ունեցավ հանդիպում ՀՀ ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակի պահանջները քննող մասնագետ Լիլիթ Սիմոնյանի և պահանջները ընդունող հանձնաժողովի անդամ Տաթևիկ Ավետիսյանի հետ: Հանդիպման ընթացքում հյուրերը ԳՊԴ ուսանողներին ներկայացրին ֆինանսական հաշտարարի գործառնությունները: Հանդիպման նպատակը ֆինանսական ոլորտում սպառողների շահերի պաշտպանությանը նպաստելն է և սպառողների պահանջներն արագ, արդյունավետ և անվճար քննելը:

12.10.2011թ. ԿՈՌՈՒՊՑԻԱՆ՝ ՈՐՊԵՍ ԹԱՓԱՆՑԻԿ ԵՎ ՈՐԱԿՅԱԼ ԿՐԹՈՒԹՅԱՆԸ ԽՈՉԸՆԴՈՏՈՂ ԵՐԵՎՈՒՅԹ

«Թափանցիկ կրթությունը Հայաստանում» ծրագրի շրջանակում ԳՊԴ ուսանողներն այցելել էին Գավառի ավագ դպրոց:

Սեմինարին ներկա էին դպրոցի տարբեր հոսքերի 12-րդ դասարանի աշակերտներ, ինչպես նաև դպրոցի վարչական ու մանկավարժական կազմի ներկայացուցիչներ:

ԳՊՀ 2011-2012 ուսումնական տարվա գործունեության հաշվետվություն

Ծրագրի համակարգողներ Չայարփի Սկրտչյանը, Գեղամ Աթեյանը և Վաղինակ Տեր-Չովհաննիսյանը ներկայացրին կոռուպցիայի հասկացությունը, դրսևորման ձևերը, պատճառները, հետևանքները և սոցիալական կյանքի տարբեր ոլորտներում ունեցած ազդեցությունները:

Սեմինարի մասնակիցներին բաժանվեցին «ԳՊՀ-ն դեմ է կոռուպցիային» վերտառությամբ «հակակոռուպցիոն» գրիչներ և կոռուպցիայի դեմ պայքարի վերաբերյալ տեղեկատվական թերթիկներ:

15.10.2011թ. ԱՇԱԿԵՐՏՆԵՐՆ ԸՆԴԴԵՍ ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ

Չոկտեմբերի 15-ին Գավառի պետական համալսարանի Չրաչյա Աճառյանի անվան լսարանում «Թափանցիկ կրթությունը Չայստանում» ծրագրի շրջանակում ԳՊՀ ուսանողները Սևան քաղաքի Խաչատուր Աբովյանի անվան ավագ դպրոցի աշակերտների համար կազմակերպվել էին հակակոռուպցիոն թեմայով սեմինար-քննարկում:

17.10.2011թ. «ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԱՇՈՒՆ» ՓԱՌԱՏՈՆ ԳՊՀ-ՈՒՄ

ԳՊՀ ուսանողներն ու դասախոսները ուղևորվեցին մշակութային հարուստ ավանդույթներ ունեցող Գյումրի քաղաք՝ «Ուսանողական աշուն» փառատոնի անցկացնելու նպատակով:

«Ուսանողական աշուն» փառատոնի նպատակը ԳՊՀ ստեղծագործող ուսանողների բացահայտումն էր: Մրցույթի առաջին փուլն անցկացվել էր Գավառի պետական համալսարանում, որտեղ մասնակից ուսանողներից ընտրվել էին լավագույն 10 ստեղծագործող ուսանողները, ովքեր արդեն Գյումրիում՝ Չովհաննես Շիրազի հուշատուն-թանգարանում, մասնակցեցին երկրորդ փուլին:

20.10.2011թ. ԳՐԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ ԳՊՀ-ՈՒՄ

ԳՊՀ բանասիրական ֆակուլտետի Ուսանողական գիտական ընկերությունը ընթերցասրահում կազմակերպել էր գրքի քննարկում:

Քննարկման ընթացքում զուգահեռներ անցկացվեցին Ակսել Բակունցի «Միրհավ» պատմվածքի և Չրանտ Մաթևոսյանի «Այս կանաչ կարմիր աշխարհը» կինովիպակի միջև: Ուսանողներն անկաշկանդ ներկայացրին իրենց տեսակետները և դիտարկումները նյութի վերաբերյալ:

21.10.2011թ. ԳՊՀ-ՈՒՄ ԿԱՐԵՎՈՐՎՈՒՄ ԵՆ ԳԻՏԵԼԻՔՆ ՈՒ ՉՍՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Չամաշխարհային բանկի երևանյան գրասենյակի նախաձեռնությամբ տեղի ունեցավ «Չմտություններ և ոչ միայն դիպլոմ» գրքի շնորհանդեսը:

Շնորհանդեսին մասնակցում էին հայկական պետական բուհերի ներկայացուցիչներ: Գավառի պետական համալսարանից մասնակցում էր Չանրության

ԳՊՀ 2011-2012 ուսումնական տարվա գործունեության հաշվետվություն

հետ կապերի եւ լրատվության բաժնի վարիչ Պապին Մուրադյանը:

Համաշխարհային բանկի ավագ տնտեսագետ ու գրքի հեղինակ Լարս Սոնդերգաարդը ներկայացրեց զեկույցի հիմնական արդյունքներն ու մատնանշեց այն ուղիները, որոնք կարող են նպաստել գիտելիքների ու հմտությունների արժևորմանը, կրթություն-աշխատաշուկա կապին:

21.10.2011թ. ՊՐՈՖԵՍՈՐԻ ԳՐՔԻ ՇՆՈՐՀԱՆԴԵՍԸ

ԳՊՀ Հրաչյա Աճառյանի անվան լսարանում տեղի ունեցավ Գավառի պետական համալսարանի Կենսաբանության, Էկոլոգիայի և առողջ ապրելակերպի ամբիոնի վարիչ, Ռուսաստանի Դաշնության բնական գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս, կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Արմեն Սիմոնյանի «Հայերեն-ռուսերեն-անգլերեն կենսաբանական բառարան»-ի շնորհանդեսը:

22.10.2011թ. ԾԱՌԱՏՈՒՆԿ ԳՊՀ ԲԱԿՈՒՄ

Գավառի պետական համալսարանում կազմակերպվեց ծառատունկ, որն ինքնանպատակ չէր. ծառերով «գրվեց» ԳՊՀ հապավումը: Նախաձեռնությունը Գավառի պետական համալսարանում Ջինիշյան հիշատակի հիմնադրամի կողմից իրականացվող «Քաղաքացիական երկխոսություն և գործնական քայլեր» ծրագրի երիտասարդներինն էր: Ակցիան մեկն էր այն տասներկու ակցիաներից, որոնք պետք է իրականացնի ուսանողական ծրագրային թիմը «Համալսարանից մինչև հրապարակ» ծրագրի շրջանակում՝ «Քաունթերփարթ Հայաստան» կազմակերպության ֆինանսավորմամբ:

22.10.2011թ. ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԶԱՐԳՑՄԱՆ ՍՈՂԵԼԸ

ԳՊՀ Հրաչյա Աճառյանի անվան լսարանում տեղի ունեցավ գյուղական համայնքների զարգացման մոդելներին նվիրված դասախոսություն:

Դասախոսությունը կարդաց «Հայաստանի մանուկներ» հիմնադրամի տնօրեն, կրթության ազգային ինստիտուտի աշխատակից, դասախոս Սերոբ Խաչատրյանը:

Դասընթացավարը ներկայացրեց գյուղական համայնքների զարգացման ծրագրերը, ինչպես նաև անդրադարձավ «Հայաստանի մանուկներ» հիմնադրամի նպատակներին և առաքելությանը:

22.10.2011թ. ԳԻՏԱԺՈՂՈՎ՝ ՆՎԻՐԿԱԾ ԻՂԱ ԲԱՏԻԿՅԱՆԻ ՀԻՇԱՍԱԿԻՆ

Գավառի պետական համալսարանի Սամվել Քոչարյանի անվան լսարանում տեղի ունեցավ ուսանողական գիտաժողով՝ նվիրված կենսաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ, ԳՊՀ պրոֆեսոր Իդա Հրանտի Բատիկյանի հիշա-

տակին:

Ուսանողները հանդես եկան գիտական զեկուցումներով:

28.10.2011թ. ԳՊԴ-ՈՒՄ ՂԱՏԱՊԱՐՎՈՒՄ Է ԳՐԱԳՈՂՈՒԹՅՈՒՆԸ

«Խաչմերուկ» բանավիճային ակումբը «Եվրասիա» համագործակցության հիմնադրամի եւ Շվեդիայի միջազգային զարգացման գործակալության աջակցությամբ հայկական բուհերում հետազոտություն է իրականացրել գրագողության վերաբերյալ:

Հոկտեմբերի 28-ին ծրագրի ղեկավար Տիգրան Մաթեոսյանը ներկայացրեց «Գրագողությունը հայաստանյան բուհերում. ինչպե՞ս քանդել թնջուկը» խորագրով հետազոտության արդյունքները:

05.11.2011թ. ԿՈՎԵԼ ՁԵՆՔՈՎ ՈՒ ԳՐԶՈՎ

Հայաստանի գրողների միության Գեղարքունիքի մարզային կենտրոնի հետ համագործակցության շրջանակում ԳՊԴ-ն հյուրընկալել էր բանաստեղծ, Արցախյան գոյամարտի մասնակից, մեր հայրենակից Հովհաննես Միրիբյանին:

Բանասիրական ֆակուլտետի հայոց լեզու և գրականություն բաժնի 2-րդ կուրսի ուսանողները նախ ներկայացրին պարոն Միրիբյանի կենսագրությունը, ապա անդրադարձան նրա ստեղծագործություններին՝ վերլուծելով ազատամարտիկ-բանաստեղծի պոեզիան:

11.11.2011թ. ՀԱՇՄԱՆԴԱՄՆԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ՝ ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ

Ֆիզիկական խնդիրներ ունեցող անձինք հասարակության լիիրավ անդամներն են:

Գավառի պետական համալսարանում «Աստղացույք» հասարակական կազմակերպության նախագահ Իրինա Հովհաննիսյանը անցկացրեց սեմինար՝ «Հաշմանդամ անձանց իրավունքների պաշտպանություն և ներառական կրթության զարգացում» թեմայով:

Բանախոսը ներկայացրեց ներառական կրթության էությունը, հանրության վերաբերմունքը հաշմանդամների նկատմամբ, նրանց իրավունքների պաշտպանության հիմնախնդիրները:

16.11.2011թ. ՀԱՄԱԿՈՂՄԱՆԻ ԶԱՐԳԱՅԱԾ ՏՆՏԵՍԱԳԵՏՆԵՐ

Տնտեսագիտական ֆակուլտետի ուսանողական խորհուրդը կազմակերպել էր միջոցառում՝ «Ունիվերսալ տնտեսագետ» խորագրով:

Միջոցառման նպատակն էր ուսանողների համատեղ աշխատելու կարողությունների և հմտությունների ստուգումն ու այդ ուղղությամբ գիտելիքների հարստացումը:

17.11.2011թ. ՏՈՆԴ ՇՆՈՐՀԱՎՈՐ, ՍԻՐԵԼԻ ՈՒՍԱՆՈՂ

Գավառի պետական համալսարանի ուսանողական գիտական ընկերությունը կազմակերպել էր միջոցառում՝ նվիրված ուսանողների միջազգային օրվան:

Տոնական միջոցառման շրջանակում տեղի ունեցավ «Առաջին քայլեր. ստեղծագործում են ուսանողները» գրքի շնորհանդեսը, որտեղ ներկայացված էին «Ուսանողական աշուն» մրցույթ-փառատոնի մասնակիցների ստեղծագործությունները:

19.11.2011թ. ՍՈՎՈՐԵՑՆԵԼԻՍ ՍՈՎՈՐՈՒՄ ԵՆ ԿՐԿՆԱԿԻ

ԳՊԴ-ում կազմակերպվել էր սեմինար-քննարկում՝ «Ուսուցման նորագույն մեթոդները» թեմայով: Քննարկմանը մասնակցում էին ԳՊԴ պրոֆեսորադասախոսական կազմը և ուսանողները:

Բանասիրական ֆակուլտետի դասախոսները ներկայացրին ոչ միայն հայտնի մեթոդները, այլև դրանց հավելեցին իրենց մշակած և Գավառի պետական համալսարանում կիրառվող նոր տեխնոլոգիաները:

Ֆակուլտետի դեկան Վիկտոր Կատվայանը ներկայացրեց գրաքարի ուսուցման իր մշակած նոր մեթոդը:

Օտար լեզուների ամբիոնի դասախոս Սաթենիկ Հայթյանը ներկայացրեց «ԽԻԿ (խթանում, իմաստի ընկալում, կշռադատում)», «պրիզմայի», «մտազրոհի» և «ծնագնդի» նախագծային աշխատանքի, «խճանկարի» մեթոդները:

30.11.2011թ. ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԻ ՓՈԽԱՆԱԿՈՒՄ

«ԱՄՆ-ում կրթության վերաբերյալ դասախոսությունների շարք» ծրագրի շրջանակում կազմակերպվեցին դասախոսություններ ԳՊԴ բանասիրական ֆակուլտետի անդերեն լեզու բաժնի ուսանողների համար:

Դասախոսությունները վարեցին ԱՄՆ Ֆուլբրայթ կրթաթոշակառուներ Տերրա Միքայլովսկին և Ջաք Գոլդսմիթը, ովքեր ներկայացրին ուսանողական կյանքն ու սովորողների կրթական-հասարակական ակտիվությունը Փիթցեր քոլեջում և Միչիգանի համալսարանում:

30.11.2011թ. ՈՒՍԱՆՈՂՈՒԹՅԱՆՆ ԻՐԱԶԵԿՈՒՄ ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՄԱՍՆԱԳԵՏԻ ԿՈՂՄԻՑ

Գավառի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետի ուսանողների համար դասախոսություն կարդաց ՀՀ կենտրոնական բանկի սպառողների շահերի պաշտպանության և շուկայի վարվելակերպի բաժնի վերլուծաբան Սևակ Միքայելյանը:

Դասախոսության թեման էր ՀՀ ֆինանսական համակարգը: Հաջորդ երկու օրերին քննարկվեցին հետևյալ թեմաները՝ «Սպառողների շահերի պաշտպան»

նության համակարգը» և «Դրամավարկային քաղաքականությունը»:

**05.12.2012թ. ԳՊՀ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԸ՝ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ
ԿՈՆՖԵՐԱՆՍԻ ՄԱՍՆԱԿԻՑ**

Դեկտեմբերի 5-ից 6-ը Ուկրաինայի Կիև քաղաքում տեղի ունեցավ կոնֆերանս՝ «Տեմպուս և Էրազմուս Մունդուս. արևելյան համագործակցության հնարավորություններ» թեմայով:

Կոնֆերանսին մասնակցում էին շուրջ 300 ներկայացուցիչներ Հայաստանից, Վրաստանից, Ադրբեջանից, Մեծ Բրիտանիայից, Ֆրանսիայից, Գերմանիայից և այլ երկրներից: Ներկա էին նաև Եվրահանձնաժողովի 12 անդամներ:

Ծրագրի հայաստանյան գրասենյակի հրավերով, որպես ԳՊՀ-ի ներկայացուցիչ, Կիև էր մեկնել ԳՊՀ-ի արտաքին կապերի պատասխանատու Մարինե Բաղայանը:

Սեմինար-աշխատանքների ընթացքում քննարկվեցին «Տեմպուս և Էրազմուս Մունդուս» ծրագրի շրջանակում միջբուհական կոնսորցիումներ ստեղծելու, դեկավարելու, ինչպես նաև՝ դրանց անդամակցելու վերաբերյալ բազմաթիվ հարցեր:

05.12.2011թ. ՀԱՂԹԵՑԻՆ ԳՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

ՀՀ կրթության և գիտության նախարարության և «Finance.am» պորտալի համատեղ հայտարարած ուսանողական մրցույթում երեք մրցանակային տեղերից երկուսը զբաղեցրել են Գավառի պետական համալսարանի ուսանողները:

«Բիզնես գրավչության իմ բանաձևը» խորագրով ուսանողական մրցույթին մասնակցած ՀՀ տարբեր բուհերի շուրջ 40 ուսանողներից հաղթող են ճանաչվել 7-ը:

1-ին տեղը զբաղեցրել է ԳՊՀ ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում բաժնի 3-րդ կուրսի ուսանող Խաչիկ Բոստանջյանը, իսկ 3-րդ տեղը՝ նույն բաժնի մագիստատուրայի 1-ին կուրսի ուսանող Էդվարդ Ղազարյանը: Մյուս 4 մասնակիցները արժանացան հավաստագրերի. նրանց շարքում է ԳՊՀ տնտեսագիտության ֆակուլտետի ուսանողուհի Նունե Ամիրխանյանը:

09.12.2011թ. ՌՈՒՍԱՑ ԼԵԶՎԻ ՕՐԵՐ ԳՊՀ-ՈՒՄ

ԳՊՀ-ում մեկնարկեց «Ռուսաց լեզվի օրեր» ծրագիրը, որի շրջանակում կազմակերպվեցին տարաբնույթ միջոցառումներ:

Ծրագրի շրջանակում անցկացվեց օլիմպիադա ռուսաց լեզու և գրականություն առարկայից՝ ոչ մասնագիտական կուրսերի համար:

Օլիմպիադայի նպատակը ռուսաց լեզվի գերազանց իմացությամբ ուսանողների բացահայտումն է:

Այս ծրագրի շրջանակում կազմակերպվեցին նաև գրքերի քննարկումներ,

մասնագիտական կուրսերում սեմինարներ, «կլոր սեղաններ»:

09.12.2012թ. ԳԻՏԱԺՈՂՈՎ ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ

ԳՊՀ բնագիտական ֆակուլտետի աշխարհագրություն բաժնի նախաձեռնությամբ տեղի ունեցավ «Իմ մոլորակը» ուսանողական գիտաժողով, որի ընթացքում ապագա աշխարհագրագետները հանդես եկան գիտական զեկուցումներով:

**14.12.2011թ. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ
ԳՊՀ-Ի ԵՎ «ՕՐԱՆԺ ՀԱՅԱՍՏԱՆ» ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ**

Գավառի պետական համալսարանի և «Օրանժ Հայաստան» ընկերության միջև կնքվեց համագործակցության հուշագիր:

«Օրանժ Հայաստան» բարեգործական կառույցի՝ «Օրանժ» հիմնադրամի կողմից ընկերության տնօրեն Բրունո Դյուբուան ԳՊՀ ութ սոցիալապես անապահով ուսանողների հանձնեց դրամական պարգևներ և նվերներ:

**16.12.2011թ. ԳՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ՝ «ԲԱՐԵՊԱՇՏ ՍԵՐՈՒՆԴ»
ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՂԹՈՂՆԵՐ**

ԳՊՀ ուսանողները մասնակցեցին «Բարեպաշտ սերունդ» հիմնադրամի հայտարարած ուսման վարձերի և կրթաթոշակների տրամադրման մրցույթին:

«Հայության հարատևման գրավականները» թեմայով շարադրության մրցույթի հաղթողների ընտրությունը կատարվեց մրցութային կարգով:

Գավառի պետական համալսարանից շարադրությունների մրցույթին մասնակցեցին տարբեր բաժինների 12 ուսանողներ: «Բարեպաշտ սերունդ» հիմնադրամի գրասենյակում ուսանողները ներկայացրին իրենց աշխատանքները, և հաղթողները որոշվեցին մրցութային կարգով:

17.12.2011թ. ՀՐԱՆՏ ՀԱԿՈՒՅԱՆԸ՝ ՀԱՎԵՐԺԻ ՃԱՓՈՐԴ

Գավառի պետական համալսարանում տեղի ունեցան ԳՊՀ խորհրդի նախագահ, ԳՊՀ հիմնադիր ռեկտոր, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հրանտ Խաչատուրի Հակոբյանի ծննդյան 84-ամյակին նվիրված հուշ-ցերեկույթ և պարոն Հակոբյանին նվիրված հուշատախտակի բացման արարողություն:

Ցերեկույթին ներկա էին Գավառի պետական համալսարանի պրոֆեսորադասախոսական, վարչական անձնակազմի ներկայացուցիչներ, ուսանողներ, Հրանտ Հակոբյանի ընկերներն ու մտերիմները, ընտանիքի անդամները:

24.12.2011թ. ԳՊՀ ԳԻՏԱԺՈՂՈՎ՝ ՆՎԻՐՎԱԾ ՀՀ ԱՆԿԱՆՈՒԹՅԱՆ 20-ԱՄՅԱԿԻՆ

Գավառի պետական համալսարանում մեկնարկեց 14-րդ հոբելյանական գիտաժողովը՝ նվիրված Հայաստանի Հանրապետության անկախության 20-ամյակին:

Գիտաժողովն ընթացավ բնական և հումանիտար գիտություններին նվիրված առանձին բաժանմունքներով:

Գիտաժողովի նյութերը հրատարակվեցին ԳՊՀ ամենամյա «Գիտական հոդվածների ժողովածու»-ում:

**18.01.2012թ. ԳՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ՝ «ԿՏՈՐ ՍԸ ՀԱՅՐԵՆԻՔ»
ՀԱՍԱՀԱՅԿԱԿԱՆ ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹՅԱՆ ՀԱՂԹՈՂՆԵՐ**

Տեղի ունեցավ ՀՀ սփյուռքի նախարարության և Համաշխարհային հայկական կոնգրեսի կողմից կազմակերպված «Հայապահպանության գործում ունեցած նշանակալի ավանդի համար» համահայկական 2011թ. մրցանակաբաշխության հաղթողների պարգևատրման հանդիսավոր արարողությունը:

Ներկա էին ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը, Համաշխարհային հայկական կոնգրեսի փոխնախագահներ Արամ Սարգսյանը և Վլադիմիր Աղայանը, գիտնականներ, դասախոսներ, լրագրողներ, մրցույթի մասնակիցներ և այլք:

Մրցանակաբաշխության նպատակն էր նպաստել Սփյուռքի համայնքներում հայ ազգային ինքնության պահպանմանն ու զարգացմանը, զնահատել այդ հույժ կարևոր գործում կազմակերպությունների և անհատների ունեցած ներդրումը:

«Կտոր մը հայրենիք» երիտասարդական հայագիտական հետազոտությունների, շարադրությունների, ստեղծագործությունների մրցույթի արդյունքում 1-ին կարգի 6 մրցանակային տեղերից մեկը զբաղեցրել է ԳՊՀ ներկայացուցիչ Ալինա Ջոհրաբյանը, 2-րդ կարգի 8 մրցանակային տեղերից մեկը՝ Մարիաննա Մուսոյանը, 3-րդ կարգի 10 մրցանակային տեղերից 5-ը զբաղեցրել են ԳՊՀ ուսանողներ Մարինե Տոնոյանը, Նարինե Ասատրյանը, Ռուզան Ասատրյանը, Սաթենիկ Ավագյանը և Օվսաննա Նադարյանը:

Տիկին Հակոբյանը դիպլոմներ, դրամական և խրախուսական մրցանակներ հանձնեց մրցույթի հաղթողներին:

**08.02.2012թ. ԳՊՀ-Ն ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՐԶԵՐՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԲՈՒՀԵՐԻ
ՇԱՐՔՈՒՄ ԱՌԱՋԱՏԱՐՆ Է**

Հրապարակվեցին աշխարհի համալսարանների վերամետրիքս դասակարգման («Webometrics Ranking of World Universities», www.webometrics.info) արդյունքները, որոնք վերաբերում են աշխարհի շուրջ 20.000 համալսարանների, այդ թվում՝ եվրոպական 5000, ամերիկյան 7000, ասիական 6000 բուհերի ինտերնետային կայքերի ցուցանիշներին:

ԳՊԴ 2011-2012 ուսումնական տարվա գործունեության հաշվետվություն

Գավառի պետական համալսարանը Հայաստանի Հանրապետության մարզերում գործող բուհերի շարքում ճանաչվել է առաջինը, ինչը վկայում է, որ ԳՊԴ-ի ինտերնետային կայքն ունի պատշաճ վարկանիշ:

Վարկանիշը սահմանելիս՝ հաշվի են առնվել 4 հիմնական չափանիշներ՝ պաշտոնական կայքէջերի քանակը Google, Yahoo, Live(msn), Exalenq որոնողական համակարգերում, այլ ռեսուրսներից դեպի բուհի պաշտոնական կայք կատարված արտաքին հղումների քանակը, կայքում առկա փաստաթղթերի քանակն ու գիտական աշխատանքների հղման ինդեքսը:

15.02.2012թ. ՄԵԿՆԱՐԿԵՑ ՆՈՐ ԾՐԱԳԻՐ

Պաշտոնապես մեկնարկեց ԱՄՆ ՄԶԳ-ի կողմից ֆինանսավորվող «Ձեռնարկությունների զարգացման և շուկայի մրցունակության (ՁԶՄ) հնգամյա ծրագիրը»՝ ուղղված Հայաստանի տնտեսական մրցունակության բարձրացմանը:

Ծրագրի իրագործման նպատակով իրականացվել էին հետազոտություններ և հարցումներ բարձրագույն ուսումնական հաստատություններում, այդ թվում՝ Գավառի պետական համալսարանում:

Գավառի պետական համալսարանից ծրագրի մեկնարկին մասնակցեց Տնտեսագիտական ֆակուլտետի դեկան Սամվել Ամիրխանյանը:

16.02.2012թ. ԳՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՒՄ ԵՆ ԻՐԵՆՑ ՀԱՋՈՂՈՒԹՅԱՆ ԲԱՆԱԶԵՎԸ

Գավառի պետական համալսարանն իր 19-ամյա պատմության ընթացքում ունեցել է բազմաթիվ ձեռքբերումներ և հաղթանակներ, որի վկայությունն են հանրապետական և համահայկական մրցույթներում ԳՊՀ տարբեր ֆակուլտետների ուսանողների հաղթանակները:

Համալսարանի ուսանողական գիտական ընկերության նախաձեռնությամբ մրցույթներում հաղթող ճանաչված ուսանողները ներկայացրին հաջողության իրենց բանաձևը:

17.02.2012թ. «ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՅԲՈՒԲԵՆ» ԵՐԵՒԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Գավառի պետական համալսարանի իրավաբանական կլինիկայում մեկնարկեց «Իրավունք բոլորի համար» ծրագիրը, որի շրջանակում իրավաբանական կլինիկայի 15 ուսանողներ մարզի երեխաների համար կազմակերպեցին «Իրավունքի այբուբեն» մուլտաշարի դիտումներ և քննարկումներ:

18.02.2012թ. ԿԱՅԱՑԱՎ ԳՊՀ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԸ

Գավառի պետական համալսարանի գիտխորհրդի դահլիճում տեղի ունեցավ ԳՊՀ կառավարման բարձրագույն մարմնի՝ խորհրդի նիստը:

ԳՊՀ 2011-2012 ուսումնական տարվա գործունեության հաշվետվություն

ԳՊՀ խորհրդի նախագահ միաձայն ընտրվեց ՀՀ սփյուռքի նախարար, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հրանուշ Հակոբյանը:

Խորհուրդը լսեց ԳՊՀ ռեկտոր Ռուզաննա Հակոբյանի հաշվետվությունը 2010-2011 ուսումնական տարվա ԳՊՀ գործունեության վերաբերյալ:

Ներկայացվեցին 2011-2012 ուսումնական տարվա ընթացքում ԳՊՀ զարգացման հիմնական ուղղությունները, հաստատվեց հաշվետվությունը:

19.02.2012թ. ԳԻՐՔ ՆՎԻՐԵԼՈՒ ԱՎԱՆՂՈՒՅԹԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է

Փետրվարի 19-ը` Հովհաննես Թումանյանի ծննդյան օրը, ամենայն հայոց բանաստեղծից մեզ ժառանգություն է մնացել որպես գիրք նվիրելու ավանդույթ:

Գավառի պետական համալսարանի գրադարանը ստեղծվել է գրքերի նվիրատվության շնորհիվ, իսկ բուհի ուսանողներն այսօր շարունակում են պահպանել այդ գեղեցիկ ավանդույթը:

Այս տոնին անմասն չմնաց նաև Հայաստանի գրողների միությունը: Այն` ի դեմս ՀԳՄ նախագահ Լևոն Անանյանի, ԳՊՀ գրադարանին նվիրեց 220 անուն մասնագիտական, գեղարվեստական բազմալեզու գրականություն:

19.02.2012թ. ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՅՑԸ ԳՊՀ

Փետրվարի 19-ին ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանն այցելեց Գավառի պետական համալսարանի նորաստեղծ պատմագիտական թանգարան:

Այստեղ վարչապետն ու ՀՀ Ազգային ժողովի ներկա պատգամավորներն ու կառավարության անդամները ծանոթացան հնագիտական ու պատմագիտական արժեքներ ներկայացնող ցուցանմուշներին, եղան նորաբաց համակարգչային լսարանում:

22.02.2012թ. ԱՆԱՂԱՐՏ ՊԱՅԵՆՔ ՄԱՅՐԵՆԻՆ

Ժամանակին ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հրանուշ Հակոբյանի օրենսդրական նախաձեռնության շնորհիվ Հայաստանի Հանրապետության տոների և հիշատակի օրերի մասին օրենքում կատարվեց լրացում, և փետրվարի 21-ը հռչակվեց որպես մայրենի լեզվի օր:

Մայրենի լեզվի տոնի առթիվ Գավառի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի մագիստրատուրայի ուսանողները այս անգամ պատրաստել էին գիտական զեկուցումներ` նվիրված մայրենի լեզվի ու գրականության արդի հիմնախնդիրներին:

23.02.2012թ. ՆՇՎԵՑ ՀԱՅՈՑ ԲԱՆԱԿԻ 20-ԱՄՅԱԿԸ

Գավառի պետական համալսարանի պրոֆեսորադասախոսական, վարչական

ԳՊԴ 2011-2012 ուսումնական տարվա գործունեության հաշվետվություն

անձնակազմը և ուսանողները Հայոց անկախ պետության հաղթական բանակի 20-ամյակը տոնեցին ՀՀ պաշտպանության նախարարության երկրորդ բանակային կորպուսի զինծառայողների հետ միասին:

25.02.2012թ. ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ ԳՊՀ-ՈՒՄ

ԳՊՀ-ում տեղի ունեցավ ուսանողական գիտաժողով՝ նվիրված Միխայիլ Վասիլևիչ Լոմոնոսովի ծննդյան 300-ամյակին:

Գիտաժողովը կազմակերպել էին Բանասիրական ֆակուլտետի ռուսաց լեզվի և գրականության ամբիոնը՝ 2-րդ և 3-րդ կուրսերի ուսանողների մասնակցությամբ: Ուսանողները ներկայացրին Մ. Վ. Լոմոնոսովի կյանքին և ստեղծագործություններին նվիրված գեկուցումներ:

Գիտաժողովի ընթացքում տեղի ունեցավ Լոմոնոսովի «Անակրեոն» ստեղծագործության բեմականացումը, որտեղ ուսանողներն անդրադարձան Անակրեոնի կերպարի առանձնահատկություններին:

26.02.2012թ. ԱՐԺԵՔՆԵՐԻ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ ՄԱՐՔԵԹԻՆԳ

Գավառի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետի դասախոս Նարինե Թադևոսյանը բովանդակալից և հետաքրքիր բաց դասախոսություն կարդաց՝ նվիրված արժեքների վրա հիմնված մարքեթինգին՝ հիմք ընդունելով Ֆիլիպ Կոտլերի առաջարկած տեսությունը:

02.03.2012թ. ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐ

ԳՊՀ Ակադեմիական քաղաքականության վարչության մեթոդիստ Լիլիթ Թոռչյանը ներկայացրեց հետաքրքիր շնորհանդես՝ «Արդյունավետ ուսուցման մեթոդները» թեմայով: Նա անդրադարձավ թեմայի 3 բաժիններին՝ դասընթացի բովանդակություն և խմբային դինամիկայի (շարժընթացի) կառավարում, շնորհանդեսի պատրաստում և մատուցում, մասնագիտական խորհրդատվություն, որտեղ կարևորեց դասընթացի բովանդակությունը, նպատակի սահմանումը, լսարանում դերերի բաշխումը, դիտարկումը, հետադարձ կապի հաստատումը և ամրապնդումը:

03.03.2012թ. ԸՆՏՐՎԵՑ ՈՒՄ ՆՈՐ ՆԱԽԱԳԱՀ

Գավառի պետական համալսարանում տեղի ունեցավ ուսանողական խորհրդի նախագահի ընտրություն:

Ընտրությանը մասնակցում էին ֆակուլտետային ՈՒՄ պատվիրակները:

Ուսանողական խորհրդի նախագահի թեկնածուներն առաջադրվեցին ընտրողների կողմից, ինչպես նաև ինքնաառաջադրման սկզբունքով:

Ընտրությունն անցկացվեց փակ, գաղտնի քվեարկությամբ: Ամփոփելով արդ-

ԳՊԴ 2011-2012 ուսումնական տարվա գործունեության հաշվետվություն

յունքները՝ ձայների մեծամասնությամբ ԳՊԴ ուսանողական խորհրդի նախագահ ընտրվեց Զուհանիտար մասնագիտությունների ֆակուլտետի իրավագիտություն բաժնի 3-րդ կուրսի ուսանողուհի Պայծառ Քոչարյանը:

04.03.2012թ. ՀԱՆԴԻՊՈՒՄ ԳՊԴ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՀԵՏ

Գավառի պետական համալսարանի խորհրդի նախագահ, ՀՀ սփյուռքի նախարար Զրանուշ Հակոբյանը հանդիպեց ուսանողական խորհրդի և ուսանողական գիտական ընկերության անդամների հետ:

Տիկին Հակոբյանը կարևորեց որակյալ կրթության ապահովումը, ուսանողների ակտիվությունը, միջազգային համագործակցությունը: Նա ԳՊԴ ՈՒԳԸ նախագահ Գեղամ Աթեյանին և ՈՒԽ նախագահ Պայծառ Քոչարյանին հանձնարարեց սերտորեն համագործակցել միջազգային ուսանողական կառույցների հետ:

08.03.2012թ. ԿԱՆԱՆՑ ՄԻԱՄՍՅԱԿԻ ՄԵԿՆԱՐԿԸ ԳՊԴ-ՈՒՄ

Մարտի 8-ին Գավառի պետական համալսարանի ուսանողական գիտական ընկերությունը նախաձեռնել էր գեղեցիկ և բազմաբովանդակ միջոցառում՝ նվիրված կանանց, մայրության և գեղեցկության տոնին:

ԳՊԴ Աճառյան լսարանը վերածվել էր հեռուստատեսային յուրօրինակ տաղավարի. հյուրերը ԳՊԴ ուսանողներն ու դասախոսներն էին, բարենաղթանքներն էլ ուղղված էին բուհում աշխատող և սովորող կանանց ու աղջիկներին:

Միջոցառման ընթացքում ներկայացվեց տոնի պատմությունը և հնչեցին շնորհավորանքի ու բարենաղթանքի գեղեցիկ խոսքեր՝ ուղղված մուրբ ու քնքուշ, գեղեցիկ ու խելացի հայ կանանց ու աղջիկներին:

09.03.2012թ. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԵԶՐԵՐ

Գեղարքունիքի մարզի հեռուստաընկերության տնօրեն Արմեն Գալստյանը և գլխավոր խմբագիր Վահագն Դաբադյանը հանդիպեցին համալսարանականների հետ:

Պարոն Գալստյանը ներկայացրեց հեռուստաընկերության կազմավորման ու կայացման պատմությունը և հավելեց, որ արդեն մեկ տարի է, ինչ այն Սևանի և Մարտունու հեռուստաընկերությունների հետ համատեղ գործում է «Գեղամա» հոլդինգ հեռուստաընկերության կազմում:

Ուսանողներն ու դասախոսները հանդես եկան կառուցողական առաջարկություններով:

10.03.2012թ. ԳՊԴ-ՈՒՄ ՄԵՎԱԿՅԱՆ ՄԹՆՈԼՈՐՏ ԷՐ ՏԻՐՈՒՄ

ԳՊԴ Ռուսաց լեզվի և գրականության ամբիոնը «Ռուսաց լեզվի օրեր» ծրագրի շրջանակում կազմակերպել էր միջոցառում, որի ժամանակ հայոց լեզու և

գրականություն բաժնի երկրորդ կուրսի ուսանողուհիները հայերեն և ռուսերեն լեզուներով ներկայացրին հայ մեծանուն բանաստեղծ Պարույր Սևակի բանաստեղծությունները:

18.03.2012թ. ԲՈՒՈՐ ՃԱՆԱՊԱՐՅՆԵՐԸ ՏԱՆՈՒՄ ԵՆ ԴԵՊԻ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԳՊԴ-ում տեղի ունեցավ գրական քննարկում բանասեր և իրավաբան ուսանողների մասնակցությամբ: Քննարկման արդյունքում որոշվեց կազմակերպել միջոցառումների շարք, որի նպատակն է ԳՊԴ տարբեր ֆակուլտետների ուսանողներին ներգրավել գրական ընթերցումներում: Ընթերցումների շարքը կվերաբերի հայ և համաշխարհային գրականության գոհարների, և միևնույն սյուժետային իրողությունները կմեկնաբանվեն իրավաբանի, տնտեսագետի կամ պատմաբանի հայեցակետերով:

20.03.2012թ. ԳՊԴ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ՍՏԱՑԱՆ ԿՐԹԱԹՈՇԱԿՆԵՐ

Հայաստանի երիտասարդական հիմնադրամը կրթաթոշակի հավաստագրեր հանձնեց պետական բուհերի առկա ուսուցման առաջին և երկրորդ կուրսերի՝ անվճար համակարգում չընդգրկված ուսանողների, այդ թվում՝ ԳՊԴ 9 ուսանողների:

21.03.2012թ. ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՎԱՃԱՌՔԻ ԳԱՂՏՆԻՔՆԵՐԸ

Գավառի պետական համալսարանում տեղի ունեցավ դասընթաց՝ «Արդյունավետ վաճառքի հմտությունները» թեմայով, որը վարում էին «Օրանժ Հայաստան» ընկերության վաճառքի ուսուցման պատասխանատուներ Անուշ Մանուչարյանը և Աշոտ Սարգսյանը:

Դասընթացի նպատակն էր ծանոթացնել ուսանողներին արդյունավետ վաճառքի գաղտնիքներին, ներկայացնել և քննարկել վաճառքի գործիքները, դրանք առօրյայում կիրառելու համար անհրաժեշտ հմտություններն ու կարողությունները:

22.03.2012թ. ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԸ ՀԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ ԵՆ

ԳՊԴ դասախոսական կազմի վերապատրաստման դասընթացներ անցկացրեց մանկավարժական գիտությունների թեկնածու, ԳՊԴ դասախոս Թամարա Ալեքսանյանը:

Տիկին Ալեքսանյանը քննարկեց ուսումնառության երկու համակարգ՝ դասախոսակենտրոն և ուսանողակենտրոն: Ժամանակակից պատկերացումների համաձայն՝ ուսուցման գործընթացը դասախոսների և ուսանողների ներդաշնակ գործունեությունն է, որի ընթացքում իրականանում են որոշակի գիտելիքներ ձեռք բերելու, դրանց համապատասխան՝ կարողություններ, հմտություններ

ձևավորելու նպատակադրումները:

23.03.2012թ. «ՄՇԱԿՈՒՅԹԸ ԵՎ ՀԱՆԴՈՒԹՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ»

ԳՊՀ Ուսանողական ծրագրային թիվը Ջինիշյան հիշատակի հիմնադրամի «Քաղաքացիական երկխոսություն և գործնական քայլեր» ծրագրի շրջանակում կազմակերպել էր սեմինար-քննարկում: Քննարկման համար նախապես առաջադրված 15 թեմաներից ուսանողներն ընտրել էին «Մշակույթ և հանդուրժողականություն. հանդուրժողականությունը որպես քաղաքացիական հասարակության հիմք» թեման: Սեմինարը վարում էր Երևանի պետական համալսարանի սոցիոլոգիայի ֆակուլտետի դասախոս Արմեն Ղազարյանը:

23.03.2012թ. ԳՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՒՄ ԵՆ ԱՐՏԵՐԿՐՈՒՄ ՈՒՍԱՆԵԼՈՒ ԻՐԵՆՑ ՓՈՐՁԸ

Ուսուցման փոխներգործուն մեթոդներին նվիրված հերթական դասընթացը վարում էր ԳՊՀ Տնտեսագիտական ֆակուլտետի ֆինանսներ բաժնի մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանողուհի Շուշան Խաչատրյանը, ով «ERASMUS MUNDUS. Արտաքին համագործակցության պատուհան» ծրագրի շրջանակում 10 ամիս սովորել էր Հունաստանի Սալոնիկի քաղաքի Ալեքսանդր Մակեդոնացու անվան համալսարանում:

Ուսանողուհին իր շնորհանդեսի ընթացքում ներկայացրեց վերոհիշյալ ծրագրի էությունը, նրա նպատակները, պատմեց Սալոնիկի համալսարանի, այնտեղ կիրառվող ուսուցման մեթոդների մասին՝ համեմատական զուգահեռներ անցկացնելով Գավառի պետական համալսարանում կիրառվող մեթոդների հետ:

24.03.2012թ. ՑԵՐԵԿՈՒՅԹ՝ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՄԵԾ ԲԱՐԵԿԱՍ ԱԼԵՔՍԱՆԴՐ ԳՐԻՔՅԵԴՈՎԻՆ

Գավառի պետական համալսարանի Ռուսաց լեզվի և գրականության ամբիոնը կազմակերպել էր գրական-երաժշտական ցերեկույթ՝ նվիրված ռուս մեծանուն գրող Ալեքսանդր Գրիբոյեդովին:

Ռուսաց լեզու և գրականություն բաժնի 2-րդ կուրսի ուսանողները հետաքրքիր շնորհանդեսով ներկայացրին մեծ գրողի և մտածողի կյանքն ու գործունեությունը՝ վկայակոչելով հետաքրքիր փաստեր նրա անձնական կյանքից: Գրիբոյեդովը ներկայացվեց որպես դիվանագետ և տնտեսագետ, պատմաբան և լեզվաբան, երաժիշտ և կոմպոզիտոր:

25.03.2012թ. ԳՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐՆ ՈՒՆԿՆԴՐԵՑԻՆ «ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՄԵՂԵԴԻՆԵՐ»

Գավառի պետական համալսարանի ուսանողները ներկա գտնվեցին «Խա-

ղաղության մեղեդիներ» խորագրով ծրագրի շրջանակում ձևավորված միջազգային երիտասարդական սիմֆոնիկ նվագախմբի համերգին, որը տեղի ունեցավ Գյումրու Վարդան Աճեմյանի անվան պետական դրամատիկական թատրոնում:

**28.03.2012թ. ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԳՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ՝
ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆ**

Գավառի պետական համալսարանի համակարգչային տեխնիկայի սպասարկման բաժնի մասնագետները դասընթաց անցկացրին ԳՊԴ աշխատակիցների համար: Դասընթացի ընթացքում մանրամասն ներկայացվեց համակարգչային «Power point» ծրագրի գործիքակազմը, որի միջոցով համալսարանի դասախոսներն իրենց տեսական նյութերը, գործնական աշխատանքների, սեմինարների առաջադրանքները վերածում են շնորհանդեսների և ներկայացնում ուսանողների ուշադրությանը:

**28.03.2012թ. ՌՈՒՍԱՑ ԼԵԶՈՒՆ՝ ՈՐՊԵՍ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ
ԵՐԿԻՆՍՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ**

Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանում մեկնարկեց «Ռուսաց լեզուն՝ որպես մշակույթների երկխոսության, գիտական համագործակցության, ազգամիջյան և միջամձնային շփման երաշխիք XXI դարում» խորագրով գիտագործնական միջազգային գիտաժողովը՝ նվիրված ռուս մեծ գրող Նիկոլայ Կարամզինի 250-ամյակին:

Գիտաժողովը կազմակերպվել էր Ռուսաստանի Դաշնության դեսպանատան և Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության հովանավորությամբ:

Գիտաժողովին մասնակցում էին Գավառի պետական համալսարանի Ռուսաց լեզվի և գրականության ամբիոնի վարիչ Արուսյակ Մուխսիխաչոյանը, դասախոսներ Գայանե Միրիբյանը, Նինա Պոտապովան և Ռուզաննա Միքայելյանը:

Ամբիոնի ասիստենտ Գայանե Միրիբյանը հանդես եկավ ուշագրավ զեկուցումով՝ նվիրված հայկական և ռուսական հարսանեկան գովերգերի ժանրային առանձնահատկությունների համեմատական վերլուծությանը:

29.03.2012թ. ՄԵՆՔ ԳԻՏԵՆՔ ՄԵՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

Նորվեգիայի կառավարության կողմից իրականացվող «Քաղաքացիական երկխոսություն և գործնական քայլեր» ծրագրի շրջանակում Գավառի պետական համալսարանում տեղի ունեցավ սեմինար՝ «Աշխատանքային օրենսդրություն, մենք գիտենք մեր իրավունքները» թեմայով, որը վարում էր Քաղաքացիական զարգացման հիմնադրամի աշխատակից Ռուբինա Առաքելյանը:

Սեմինարի ընթացքում ուսանողները քննարկեցին ՀՀ աշխատանքային օրենսդրության կարևոր դրույթները, անդրադարձան Հայաստանում և հատկա-

ԳՊԴ 2011-2012 ուսումնական տարվա գործունեության հաշվետվություն

պես Գեղարքունիքի մարզում հաճախակի հանդիպող աշխատանքային օրենսդրության խախտումներին: Ուսանողներին ներկայացվեցին այն մեթոդները և կառուցակարգերը, որոնց միջոցով նրանք կարող են պաշտպանել իրենց իրավունքները:

29.03.2012թ. ԲՈՒՅԵՐԻ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԴՐԱՍԱՇՆՈՐՅԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

Գավառի պետական համալսարանում տեղի ունեցավ IREX-ի՝ համալսարանների կառավարման աջակցության դրամաշնորհային ծրագրի շնորհանդեսը:

Տարածաշրջանային կրթական ծրագրերի տնօրեն Արինա Զոհրաբյանը և IREX-ի կրթական ծրագրերի ավագ պատասխանատու Ժաննա Խաչատրյանը համալսարանականներին տեղեկացրին ծրագրի նպատակների և խնդիրների մասին:

**29.03.2012թ. ԿԱՆԱՆՑ ԻՐԱՎԱՅՆՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ
ԳՊԴ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ**

Գավառի պետական համալսարանում տեղի ունեցավ սեմինար-քննարկում՝ «Կանանց իրավահավասարությունը» թեմայով: Սեմինարը վարում էին Գեղարքունիքի մարզի կանանց իրավունքների կենտրոնի համակարգողներ Կարինե Մոմչյանը և Իրինա Ասատրյանը:

29.03.2012թ. ԿՆՔՎԵՑ ՀԱՍԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՀՈՒՇԱԳԻՐ

Գավառի պետական համալսարանի և Գեղարքունիքի մարզի հեռուստաընկերության միջև կնքվեց համագործակցության հուշագիր:

Համաձայն հուշագրի՝ հեռուստաընկերությունը պարտավորվում է պարբերաբար հեռարձակել «Համալսարանական ժամ» հաղորդաշարը, հանրությանն իրազեկել ԳՊԴ մասնագիտությունների և ծրագրերի, աշխատանքի սկզբունքների մասին: Իսկ համալսարանը պարտավորվում է կազմակերպել հաղորդումներ «Դասը վարում է համալսարանի պրոֆեսորը» խորագրով, ուսանողների և դասախոսների ուժերով իրականացնել հեռուստաընկերության հաղորդումների լեզվական մշտադիտարկումներ:

30.03.2012թ. ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՍԱՅՆՔ-ԲՈՒՅ ԿԱՊՈՂ ՕՂԱԿՆԵՐԸ

ԳՊԴ տնտեսագիտության ֆակուլտետի դեկան Սամվել Ամիրխանյանը ներկայացրեց «Ձեռնարկությունների զարգացման և շուկայի մրցունակության ծրագիրը», ՀՀ-ում ուսումնական հաստատությունները և գործարար համայնքը միմյանց կապող օղակների գնահատման բաղադրիչի ուսումնասիրության արդյունքները:

31.03.2012թ. «ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ԳՊԴ-ՈՒՄ

Գավառի պետական համալսարանի Բնագիտական ֆակուլտետի բնապահպանական բաժնում տեղի ունեցավ «Էկոլոգիական գերազանցության կենտրոնի» բացման հանդիսավոր արարողությունը:

Այս ծրագրի շրջանակում «Վորլդ Վիժն Գերմանիա», «Panasonic Եվրոպա» կազմակերպությունները և «Վորլդ Վիժն» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի Գավառի տարածքային զարգացման ծրագիրը համատեղ իրականացնում են «Կրթություն երեխաների համար» խորագրով ծրագիրը, որի շրջանակում համալսարանում վերանորոգվեց լսարան, համալրվեց համակարգչային նորագույն տեխնիկայով, ինտերակտիվ գրատախտակով: Այն ԶԳ Գեղարքունիքի մարզում պետք է գործի որպես «Էկոլոգիական գերազանցության կենտրոն»:

31.03.2012թ. ԻՄ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ

Գավառի պետական համալսարանի իրավաբանական կլինիկայի ուսանողները սեմինար պարապմունք անցկացրեցին Գավառի մանկատան սաների հետ՝ «Իմ կրթության իրավունքը» թեմայով:

Սեմինարը վարում էր Հունանիտար մասնագիտությունների ֆակուլտետի իրավագիտություն բաժնի 3-րդ կուրսի ուսանողուհի Արմինե Աղոյանը, ով ներկայացրեց երեխաների կրթության իրավունքի իրականացման կառուցակարգերը:

01.04.2012թ. ԳՊԴ-ՈՒՄ ԺՊԻՏՆ ԷՐ ԹԵՎԱԾՈՒՄ

Ապրիլի 1-ին Գավառի պետական համալսարանի ուսանողական գիտական ընկերությունը կազմակերպել էր միջոցառում՝ նվիրված ծիծաղի եւ հումորի համաշխարհային օրվան: ԳՊԴ ուսանողները մեղմ հումորով ներկայացրին, թե ինչ կարող է անել «Միայն քյավառցիները» էջը, անդրադարձան այն արտահայտություններին, որոնք երբեք չեն ասում ԳՊԴ պրոֆեսորադասախոսական անձնակազմի ներկայացուցիչները, հետաքրքիր մոտեցմամբ ներկայացրին նաև ԳՊԴ տարբեր ֆակուլտետների դեկանների մասնակցությամբ նկարահանված հումորային տեսանյութերը:

05.04.2012թ. ԳՊԴ ԹԱՆԳԱՐԱՆԸ ՀԱՄԱԼՐՎՈՒՄ Է ՆՈՐ ՑՈՒՑԱՆՄՈՒՇՆԵՐՈՎ

Գավառի պետական համալսարանի բնագիտական ֆակուլտետի դեկան Մարտին Ավազյանը ԳՊԴ հնագիտական և պատմագիտական թանգարանին նվիրեց միջնադարյան Դվին մայրաքաղաքի Հնաբերդի տարածքի պեղումների ժամանակ հայտնաբերված կավե խեցեղենի բեկորներ:

Թանգարանին իրենց նվիրատվությունը կատարեցին նաև Բնագիտական

ԳՊԴ 2011-2012 ուսումնական տարվա գործունեության հաշվետվություն

Ֆակուլտետի փոխդեկան Մելանյա Գարեյանը և Տնտեսագիտական ֆակուլտետի փոխդեկան Մարիամ Չերգնյանը:

06.04.2012թ. ՕԼԻՄՊԻԱԴԱ՝ «EXAMINATION-GSU» ՀԱՄԱԿԱՐԳՈՎ

Գավառի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի ռուսաց լեզու և գրականություն բաժնի ուսանողները մասնակցեցին օլիմպիադայի, որն անցկացվեց քննությունների ավտոմատացման և թեստավորման «Examination-GSU» համակարգի միջոցով:

06.04.2012թ. ԴԻՆԱՄԻԿ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ «ՎՈՐՔՇՈՓՈՒՄ»

Գավառի պետական համալսարանի ռեկտորի օգնական Անուշ Մայիլյանը ներկայացրեց «Վորքշոփում» դինամիկ ուսուցման սկզբունքները՝ ըստ Կլաուս Ֆոպելի:

Նա կարևորեց «Վորքշոփի» կիրառումը բուհական համակարգում՝ որպես մեթոդների, տեխնիկայի, խաղերի և վարժությունների միագումար, որպես հնարավորությունների բազմազանություն՝ որոշելու յուրաքանչյուր սովորողի ձեռքբերած գիտելիքի չափը:

07.04.2012թ. ԱՄՓՈՍՓՎԵՑ ԿԱՆԱՆՑ ՄԻԱՄՍՅԱԿԸ

Գավառի պետական համալսարանի ուսանողական խորհուրդը նախաձեռնել էր գեղեցիկ միջոցառում՝ նվիրված մայրության և գեղեցկության տոնին:

Բեմականացմամբ ցուցադրվեց Սուրբ կույս Մարիամին Գաբրիել հրեշտակի երևան գալը և նրան մայրանալու ավետիսը հայտնելը:

Միջոցառման ընթացքում ցուցադրվեց տոնի վերաբերյալ գեղեցիկ շնորհանդես, հնչեցին մայրիկներին նվիրված հուզիչ բանաստեղծություններ ու երաժշտական կատարումներ:

07.04.2012թ. ԿԱՏԱՐՎԵՑ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԳ

Ապրիլի 7-ը Հայոց երկրում նշվում է որպես Մայրության ու գեղեցկության օր, որը 2012 թվականին համընկավ Տիրոջ Հարության տոնի հետ:

Ավանդույթի համաձայն՝ այս տարի ևս Գավառի պետական համալսարանի պրոֆեսորադասախոսական, վարչական, ուսանողական համակազմի ներկայացուցիչները երթ կազմակերպեցին դեպի Գավառի Սուրբ Աստվածածին եկեղեցի, որտեղ կատարվեց մայրության բերկրանքին սպասող կանանց օրհնության կարգ:

**11.04.2012թ. ԱՐՏԱՍԱՀՄԱՆՈՒՄ ՍՈՎՈՐՈՂ ԳՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐՆ
ՕԳՆՈՒՄ ԵՆ ԿԱՐԻՔԱՎՈՐ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ**

Գավառի պետական համալսարանի տնտեսագիտության ֆակուլտետի ֆինանսներ բաժնի երրորդ կուրսի ուսանող Բաբկեն Ղարաբաղյանը՝ «Erasmus Mundus. Action 2» ծրագրի շրջանակում իր կրթությունը շարունակել է Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության Սուանսեի Մետրոպոլիտենի համալսարանի «Բիզնես և ֆինանսներ» բաժնում:

Բաբկեն Ղարաբաղյանը ուսման ընթացքում մասնակցել է «SMUDGE enterprise» կազմակերպության նախաձեռնությամբ անցկացվող ծրագրին: Ունենալով սահմանափակ ռեսուրսներ, սակայն ցուցաբերելով նորարարական մտքեր ու գաղափարներ՝ թիմերը պետք է մեկ օրում, որքան հնարավոր է, շատ փող վաստակեին կարիքավոր երեխաների համար:

Այն թիմը, որն ամենաքիչ միջոցներով վաստակել էր ամենաշատ գումարը, ճանաչվեց հաղթող: Լավագույն թիմի անդամ էր նաև ԳՊՀ ուսանող Բաբկեն Ղարաբաղյանը, ում գաղափարի շնորհիվ կարողացել էին մեծ քանակությամբ կոնֆետներ վաճառել և ամենաշատ գումարը վաստակել:

12.04.2012թ. ԲՈՒՅԵՐԻ ՀԱՍԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գավառի պետական համալսարանի ռեկտորատի ընդլայնված նիստում տեղի ունեցավ հանդիպում «Տեմպուս» ծրագրի ազգային գրասենյակի համակարգող Լանա Կառլովայի և գործընկեր բուհերի ներկայացուցիչների հետ:

Գավառի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի փոխտեղական Մարինե Բաղալյանը ներկայացրեց ԳՊՀ միջազգային գործունեության հիմնական ուղղությունները:

Լանա Կառլովան ներկայացրեց «Տեմպուս» ծրագիրը, ծրագրի շրջանակում բուհերի համագործակցության, միջհամալսարանական համագործակցության խթանման, համալսարանների միջև փորձի փոխանակման հնարավորությունները:

**13.04.2012թ. ԹԵՍՏԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ՝ «EXAMINATION-GSU»
ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԱՄԱՐ**

Գավառի պետական համալսարանի նիստերի դահլիճում տեղի ունեցավ «Examination-GSU» քննությունների ավտոմատացման և թեստավորման համակարգի թեստային առաջադրանքների կազմման առանձնահատկություններին նվիրված սեմինար:

Սեմինարի ընթացքում «Examination-GSU» համակարգի ծրագրավորողներ Արշակ Կռոյանը, Ռուստամ Նավոյանը և Վարազդատ Ավետիսյանը ծանոթացրին թեստային առաջադրանքների կազմման ձևաչափերին և տիպերին:

14.04.2012թ. «ԻՆՉՈՒՒ ԽՈՐՏԱԿՎԵՑ ՏԻՏԱՆԻԿԸ»

Գավառի պետական համալսարանի ուսանողական գիտական ընկերությունը կազմակերպել էր կինոդիտում՝ նվիրված աշխարհահռչակ «Տիտանիկ» զբոսանավի խորտակման 100-ամյակին: Կինոդիտման ընթացքում ցուցադրվեց «Տիտանիկ»-ի խորտակման պատճառի հնարավոր վարկածների մասին պատմող վավերագրական ֆիլմ:

14.04.2012թ. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱՆ՝ ԺԱՄԱՆԱԿԻ ՊԱՅԱՆՁ

Գավառի պետական համալսարանի բնագիտական ֆակուլտետում տեղի ունեցավ ուսանողական գիտաժողով՝ «Սոցիալական ինֆորմատիկան՝ ժամանակի պահանջ» խորագրով:

Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա բաժնի ուսանողները ներկայացրին հետաքրքիր զեկուցումներ, ծավալվեց ուսանելի քննարկում:

15.04.2012թ. ՄԱՍՈՒԼԻ ԱՍՈՒԼԻՍ ԶՅ ՍՓՅՈՒՈՔԻ ՆԱԽԱՐԱՐԻ ԶԵՏ

Գավառի պետական համալսարանի «Տպագիր և էլեկտրոնային ժուռնալիստիկայի հիմունքներ» դասընթացի մասնակիցները հանդիպեցին ԶԶ սփյուռքի նախարար, ԳՊՀ խորհրդի նախագահ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Զրանուշ Զակոբյանի հետ:

Մամուլի ասուլիսի ընթացքում տիկին Զակոբյանը մասնակիցներին ներկայացրեց Սփյուռքի նախարարության գործունեության գերակա ուղղությունները՝ անդրադառնալով Զայրենիք-Սփյուռք գործակցության շրջանակում իրականացված մասնագիտական համաժողովներին, հայապահպանությանը միտված ձեռնարկներին:

20.04.2012թ. ԳՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ՄԱՍՆԱԿՑԵՑԻՆ ԶԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ

Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտում տեղի ունեցավ հանրապետական ուսանողական գիտաժողով: Գիտաժողովին մասնակցեցին նաև Գավառի պետական համալսարանի ուսանողները՝ ներկայացնելով գիտական զեկուցումներ արդի թեմաներով:

20.04.2012թ. ԵԼՔԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՁԵՈՔԲԵՐՍԱՆԸ ՄԻՏՎԱԾ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

ԳՊՀ տնտեսագիտության ֆակուլտետի փոխդեկան, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Մարիամ Զերգնյանը հետաքրքիր ձևաչափով ներկայացրեց

«Մենեջմենթի հիմունքներ» դասընթացի դասավանդման մեթոդները: ԳՊԴ ֆինանսներ բաժնի 3-րդ կուրսի ուսանողները ներկայացրին այն գիտելիքներն ու հմտությունները, որոնք ստացել են տվյալ դասընթացի ընթացքում: Ուսանողներն անդրադարձան կառավարման էությանը և մեթոդաբանությանը, ռազմավարական պլանավորմանը, ապրանքների և ծառայությունների ներկայացմանը և այլ հետաքրքիր թեմաների: Կարևորվեցին մոտիվացիայի էությունը և շահագրգռման ձևերը:

20.04.2012թ. ԴԻՄՈՐԴՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՂՄՈՐՈՇՈՒՄ

Գեղարքունիքի մարզի Գանձակ գյուղի դպրոցների շրջանավարտների մասնագիտական կողմնորոշման նպատակով դպրոցներ էին այցելել Գավառի պետական համալսարանի ուսումնագիտական գծով պրոռեկտոր Նելլի Կուտուզյանը և ԳՊԴ ուսանողները, ովքեր ներկայացրին ԳՊԴ ֆակուլտետներն ու բաժինները, պատասխանեցին աշակերտներին հուզող հրացերին:

21.04.2012թ. ՀԱՐՅՈՒՐ «ՆՈՐ ՇՈՒՆՉ»

Գավառի պետական համալսարանում կազմակերպվել էր ծառատունկ և շաբաթօրյակ:

Համալսարանի մասնաշենքերի հարակից տարածքներում տնկվեցին «Օրիուս» բնապահպանական տեղեկատվական կենտրոնի կողմից տրված 50 սոճի և 50 հացենի՝ «Նոր շունչ» ծրագրի շրջանակում:

21.04.2012թ. ԻՐԱՋԵԿՈՒՄ ԳՊԴ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ

«Լրագրողներ հանուն ապագայի» հասարակական կազմակերպության իրավաբան Գևորգ Հայրապետյանը և ծրագրի համակարգող Անուշիկ Ավետյանը ԳՊԴ ուսանողներին ներկայացրին երկու նոր վեբ-կայքեր՝ Irazek.am և Ditaket.am, որոնք ստեղծվել և մշակվել են հասարակության անդամներին իրազեկելու նպատակով:

25.04.2012թ. «ԱՂՄԿՈՒՄ Է ԱՆՑՅԱԼԸ, ՊԱՅԱՆՋՈՒՄ Է ՆԵՐԿԱՆ»

«Աղմկում է անցյալը, պահանջում է ներկան»․ այս խորագիրն էր կրում ցեղասպանության ճանաչման ու դատապարտման արդար պահանջի օրվան՝ ապրիլի 24-ին նվիրված ցերեկույթը՝ կազմակերպված ուսանողական խորհրդի նախաձեռնությամբ:

Միջոցառման ընթացքում ուսանողները դատապարտեցին ոճրագործներին և ևս մեկ անգամ փաստեցին, որ թեև հայը եղեռնազարկ է եղել, սակայն անհնար է նրան ծնկի բերել, հայը շարունակում է ապրել ու ստեղծագործել:

27.04.2012թ. ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՈՒՍՈՒՑՍԱՆ ՄԵԹՈԴՆԵՐ

«ՎիվաՍել-ՄՏՍ» ընկերության կողմից կազմակերպված «Նախագծերի կառավարում» դասընթացի մասնակից Սոնա Բագոյանը համալսարանականներին ներկայացրեց դասախոսություն՝ նվիրված «Նախագծերի կառավարում և վերահսկում» թեմային:

Միաժամանակ Հասարակական գիտությունների ամբիոնի դասախոս Ռիտա Սիդեյնիկովան ներկայացրեց «Փոխակերպվող հասարակությունում որբերի անբարենպաստ փոխհարաբերությունների օբյեկտիվ պատճառականությունը և կարգավորման ուղիները» թեմայով զեկուցում:

27.04.2012թ. ԻՆՉՈՒՐ՝ ՉՕԳՆԵԼ, ԵԹԵ ԿԱՐՈՂ ԵՍ

ԳՊՀ բանասիրական ֆակուլտետի հայոց լեզու և գրականություն բաժնի 3-րդ կուրսի ուսանողուհիներն այցելեցին Գավառի թիվ 1 հատուկ դպրոց՝ ծանոթանալու, շփվելու և իրենց օգնությունն առաջարկելու այնտեղ սովորող աշակերտներին:

27.04.2012թ. ՍԵՄԻՆԱՐ-ՔՆՆԱՐԿՈՒՄ ԳՊՀ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԿԼԻՆԻԿԱՅՈՒՄ

ԳՊՀ իրավաբանական կլինիկայում տեղի ունեցավ սեմինար-քննարկում՝ «Ընտրական իրավունք» թեմայով:

Սեմինարը կազմակերպվել էր Ամերիկյան իրավաբանների ընկերակցության (ABA ROLI) հայաստանյան գրասենյակի և ԳՊՀ իրավաբանական կլինիկայի կողմից:

Ուսանողների ակտիվ մասնակցությամբ քննարկվեցին ՀՀ ընտրական օրենսգրքի հիմնական դրույթները, ընտրելու իրավունքի իրացման, իրավական պաշտպանության, ինչպես նաև՝ հանրության իրավագիտակցության բարձրացման խնդիրների հետ կապված բազմաթիվ հարցեր:

27.04.2012թ. ԳՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ԾԻԾԵՆԱԿԱԲԵՐԴՈՒՄ

ԳՊՀ բնագիտական և հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետների ուսանողները մասնակցեցին Ծիծեռնակաբերդի հուշահամալիրի Ամնար կրակի շուրջ դրված ծաղիկների վերամշակման աշխատանքներին:

Ծաղիկներին երկրորդ կյանք պարգևելու նպատակով ԳՊՀ ուսանողները ծաղիկների գլխիկներից խնամքով առանձնացրին ցողունները՝ Ծիծեռնակաբերդի հուշահամալիրի այգու համար պարարտանյութ ստանալու նպատակով, իսկ ծաղկի թերթիկները հատուկ պայմաններում կչորացվեն, որոնցից կպատրաստվեն վերամշակված թղթեր՝ Ցեղասպանության թանգարան-ինստիտուտի կողմից հայոց Եղեռնն ընդունած երկրներին ուղղված շնորհակալագրերի և հուշաթերթիկների համար: Թղթի վրա նշված է լինելու՝ «Պատրաստված է Եղեռնի հուշա-

համալիրի ապրիլ 24-յան ծաղիկներով»:

ԳՊԴ ուսանողները հանդիպեցին Ցեղասպանության թանգարան-ինստիտուտի տնօրեն Հայկ Դեմոյանին, ծավալվեց հետաքրքիր քննարկում:

28.04.2012թ. ՄԵՐ ՕՐԵՐԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԸ

ԳՊԴ բնագիտական ֆակուլտետում տեղի ունեցավ հետաքրքիր քննարկում՝ «Ինչպիսի՞ն է երիտասարդությունը», «Ի՞նչ կարծրատիպեր կան», «Կոտրենք կարծրատիպերը» թեմաներով:

Ուսանողները ներկայացրին իրենց կարծիքները, ծավալվեց հետաքրքիր և ուսուցողական քննարկում: Նրանք տեսակետներ էին հայտնում մարզային երիտասարդության շրջանում առկա խնդիրների վերաբերյալ՝ բերելով կոնկրետ օրինակներ, որոնք խոչընդոտ են հանդիսանում Գավառում ապրող երիտասարդի առօրյան ճիշտ կազմակերպելու համար:

28.04.2012թ. ՎԵՐՆՏՐՎԵՑԻՆ ԳՊԴ ՖԱԿՈՒԼՏԵՏՆԵՐԻ ԴԵՎԱՆՆԵՐԸ

Գավառի պետական համալսարանում տեղի ունեցավ գիտխորհրդի հերթական նիստ:

Օրակարգում քննարկվեցին ԳՊԴ բանասիրական, հումանիտար մասնագիտությունների, բնագիտական և տնտեսագիտության ֆակուլտետների դեկանների ընտրության հարցերը:

Տեղի ունեցավ փակ, գաղտնի քվեարկություն: Հանձնաժողովը ամփոփեց քվեարկության արդյունքները, ըստ որի՝ Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի դեկան վերընտրվեց Համլետ Ղաջոյանը, Բանասիրական ֆակուլտետի դեկան՝ Վիկտոր Կատվալյանը, Բնագիտական ֆակուլտետի դեկան՝ Մարտին Ավագյանը և Տնտեսագիտության ֆակուլտետի դեկան՝ Սամվել Ամիրխանյանը:

11.05.2012թ. ԱՎԱՆԴՈՒՅԹԻՆ ՀԱՎԱՏԱՐԻՄ

Գավառի պետական համալսարանում տեղի ունեցավ հանդիպում «Կենաց տուն» հասարակական կազմակերպության մշակութային ծրագրերի պատասխանատու Լալա Մնեյանի հետ:

Տիկին Մնեյանը համալսարանի վարչական անձնակազմի ուշադրությանը ներկայացրեց «Ավանդույթին հավատարիմ»՝ ձեռարվեստի նմուշների պատրաստման առաջադրանքների ձեռնարկը:

Այս գիրքը ձեռարվեստի տարբեր ճյուղերի ավանդույթների պահպանման ոլորտում առկա բացը լրացնելու, հայ ժողովրդի կողմից դարերով ստեղծված ու կիրառված արժեքները մատաղ սերնդին փոխանցելու, ստեղծագործական նոր մտահղացումներ հուշելու և ուղիներ առաջադրելու փորձ է:

**11.05.2012թ. ԳՊԴ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ՝ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ
ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՄԱՍՆԱԿԻՑ**

Վանաձորի Հովհաննես Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտում տեղի ունեցավ ուսանողական գիտական ընկերության 3-րդ հանրապետական գիտաժողովը:

Գիտաժողովին մասնակցեցին նաև Գավառի պետական համալսարանի ուսանողները՝ ներկայացնելով զեկուցումներ:

16.05.2012թ. ԿԱՐԵՎՈՐՎՈՒՄ ԵՆ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎՆԵՐԸ

ԳՊԴ-ում կարևորվում է ուսանողների մասնակցությունը հանրապետական թեմատիկ գիտաժողովներին: Երևանի Վալերի Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանում տեղի ունեցավ «Կրթության արդի հարացույցում ռուսաց լեզուն՝ որպես միջառարկայական կապերի իրականացման միջոց» թեմայով գիտաժողով:

Գիտաժողովի ընթացքում Գավառի պետական համալսարանի ուսանողները ներկայացրին գիտական զեկուցումներ:

16.05.2012թ. ՍԵՄԻՆԱՐ ԳՊԴ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԿԼԻՆԻԿԱՅՈՒՄ

Գավառի պետական համալսարանի իրավաբանական կլինիկայում տեղի ունեցավ սեմինար-քննարկում՝ «Մարդու իրավունքների պաշտպանի դերը Հայաստանի Հանրապետությունում» թեմայով:

Սեմինարը կազմակերպվել էր ԳՊԴ իրավաբանական կլինիկայի և ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի Գեղարքունիքի մարզի տարածքային գրասենյակի կողմից:

Ուսանողների ակտիվ մասնակցությամբ քննարկվեցին ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի լիազորությունները, պաշտպանին դիմելու կարգը և նրա գործունեությանը վերաբերող բազմաթիվ հարցեր:

17.05.2012թ. ՀՈԳԵՐԱՆԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ

Գավառի պետական համալսարանի շրջանավարտ, ԳՊԴ աշխատակից Վիկտորյա Խաչատրյանը ներկայացրեց «Հոգեբանական պաշտպանության մեխանիզմները» թեմայով զեկուցում:

Կարևորելով մարդու հոգեբանական պաշտպանության մեխանիզմները՝ Վ. Խաչատրյանը հանգամանալից ներկայացրեց դրանց տեսակները, ինչպես նաև՝ այդ մեխանիզմների դրական և բացասական ազդեցությունը մարդու հոգեկան աշխարհի վրա:

18.05.2012թ. ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ ԳՊԴ-ՈՒՄ

Գավառի պետական համալսարանի հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետում հասարակական գիտությունների ամբիոնի և ուսանողական գիտական ընկերության նախաձեռնությամբ տեղի ունեցավ ուսանողական գիտաժողով, որի ընթացքում ներկայացվեցին ու քննարկվեցին զեկուցումներ՝ նվիրված մանկավարժության արդի թեմաներին:

26.05.2012թ. ԳԵՐՄԱՆԵՐԵՆԸ՝ ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԼԵԶՈՒ

ԳՊԴ բանասիրական ֆակուլտետի անգլերեն լեզու և գրականություն բաժնի 2-րդ կուրսի ուսանողները շնորհանդեսների ձեռով՝ գերմաներեն ներկայացրին հայտնի նկարիչների, երաժիշտների կյանքին եւ ստեղծագործություններին վերաբերող աշխատանքներ, անդրադարձան նաև գերմանական թատրոններին, մշակութային այլ հաստատություններին, ավանդույթներին, նորածնությանն ու խոհանոցին:

Ուսանողների անհատական աշխատանքները կատարվել էին յուրօրինակ ձևաչափով, ինքնուրույն աշխատանքը միևնույն ժամանակ հանդիսացել էր որպես թիմային աշխատանք մի քանի ուսանողների համար: Յուրաքանչյուր ուսանող կատարել էր իր աշխատանքը, և խումբը համատեղ պատրաստել էր գունագեղ ու հետաքրքիր շնորհանդես-ներկայացում:

26.05.2012թ. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆՆԵՐԸ ԶՈՐԱՄԱՍՈՒՄ

Գավառի պետական համալսարանի և ՀՀ պաշտպանության նախարարության երկրորդ բանակային կորպուսի համագործակցության շրջանակում բուհի պրոռեկտոր Արսեն Ապրոյանը, տնտեսագիտության ֆակուլտետի դեկան Սամվել Ամիրխանյանը և հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի դեկան Համլետ Ղաջոյանն այցելեցին 2-րդ բանակային կորպուսի զորամաս:

Հանդիպման ընթացքում համալսարանականները ներկայացրին ԳՊԴ գործունեության հիմնական ուղղությունները, ֆակուլտետներն ու մասնագիտությունները:

Շուրջ մեկ ամիս ԳՊԴ-ում իրականացվող «Նամակ գինվորին» ակցիայի շրջանակում հավաքագրված նամակները համալսարանականները հանձնեցին գինծառայողներին:

30.05.2012թ. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՈՒՆՎԵԼՈՒ ԿԱՐԵՎՈՐ ԳՐԱՎԱԿԱՆԸ

ԳՊԴ Հրաչյա Աճառյանի անվան լսարանում տեղի ունեցավ դասընթաց՝ «Ինչպե՞ս գրել ռեզյումե և մասնակցել հարցազրույցի» թեմայով, որը վարում էր «Օրանժ Արմենիա» ընկերության մարդկային ռեսուրսների բաժնի հավաքագրման գծով մասնագետ Մարիաննա Բրոյանը:

ԳՊՀ 2011-2012 ուսումնական տարվա գործունեության հաշվետվություն

Դասընթացին մասնակցում էին ԳՊՀ բակալավրիատի և մագիստրատուրայի տարբեր բաժինների ուսանողներ, ովքեր շուտով ավարտելու են բուհը և կանգնելու են աշխատանքի ընդունվելու խնդրի առջև:

Մարիաննա Բրոյանը ներկայացրեց ռեզյումե գրելու հարմար և ընդունված տարբերակները:

01.06.2012թ. ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՓՈԽՅԱՏՈՒՑՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Գավառի պետական համալսարանի գիտխորհրդի նիստերի դահլիճում տեղի ունեցավ հանդիպում Հայաստանի ամերիկյան համալսարանի ուսանողական և ուսումնական հարցերի տնօրենի օգնական Շադիկ Արծրունի-Շահինյանի և Թրփանճեան ու Ազեան հիմնադրամների կրթաթոշակների հավակնորդ ուսանողների հետ:

ԳՊՀ ուսանողներին ներկայացվեց Թրփանճեան և Ազեան հիմնադրամների հայտածևի լրացման կարգը:

06.06.2012թ. ԿՐՏԱՆԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԱԼԳՈՐԻԹՄԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ

Գավառի պետական համալսարանի հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի մանկավարժություն և մեթոդիկա բաժնի մագիստրատուրայի առաջին կուրսի ուսանողները ներկայացրին իրենց կատարած գիտահետազոտական աշխատանքները՝ շնորհանդես-ներկայացման ձևով՝ «Կրտսեր դպրոցականների տրամաբանական և ալգորիթմական մտածողության զարգացումը մաթեմատիկայի ուսուցման ընթացքում» դասընթացի շրջանակում:

07.06.2012թ. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ՔՆՆԱՐԿՈՒՄ ԵՆ ԱՐՏԱԳԱՂԹԻ ԹԵՄԱՆ

Գավառի պետական համալսարանում տեղի ունեցավ սեմինար «Էմիգրացիա» թեմայով, որը վարում էր ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական հարցերի ազգային ինստիտուտի ներկայացուցիչ Ամալյա Պապիկյանը:

Սեմինարի ընթացքում դասընթացավարն անդրադարձավ արտագաղթի այն հիմնական պատճառներին, որոնց հետևանքով հատկապես երիտասարդներն են մեկնում արտագնա աշխատանքի:

10.06.2012թ. ՊՐԱԿՏԻԿԱ ԱՇԿԵՐՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ

«Վորլդ Վիժն. Հայաստան» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան գրասենյակի նախաձեռնությամբ «Սևան» ազգային պարկի տարածքում անցկացվեց ուսուցողական սեմինար, որը վարում էր ԳՊՀ բնագիտական ֆակուլտետի դեկան Մարտին Ավագյանը: Սեմինարը վերաբերում էր Սևանի

ավագանի էկոլոգիական համակարգի կառուցվածքային առանձնահատկություններին, ինչպես նաև՝ Սևանա լճի էկոլոգիական հիմնախնդիրներին:

Պրակտիկային մասնակցում էին Գավառի և Վարդենիսի տարածաշրջանների դպրոցների ավելի քան 60 աշակերտներ:

13.06.2012թ. ՀԱՍԱՐԱՎՈՒԹՅԱՆ ԻՐԱԶԵԿՈՒՄ «ՖՈՐՈՒՄ» ԹԱՏՐՈՆԻ ՄԻՋՈՑՈՎ

Գավառի պետական համալսարանում տեղի ունեցավ «Ֆորում» թատրոնի ներկայացում, որի բեմադրող ռեժիսորն էր Սուրեն Շահվերդյանը:

Ներկայացումը դիտեցին Հեռակա ուսուցման ֆակուլտետի ուսանողները: Ներկայացման նպատակն էր դատապարտել գեներեյային բռնությունը և նպաստել բռնություններից զերծ, առողջ և իրավահավասար քաղաքացիական հասարակության ձևավորմանը:

19.06.2012թ. ԹԱՓՈՆՆԵՐԻ ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ՆՈՐ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«ԳՊՀ էկոլոգիական գերազանցության կենտրոնում» կազմակերպվեց «Թափոնների վերամշակման նոր հնարավորությունները» թեմայով բնապահպանական դասընթաց Վարդենիսի և Գավառի 60 դպրոցահասակ երեխաների համար:

Թափոնների վերամշակման արդյունավետ ղեկավարման հիմնախնդիրներին նվիրված քառօրյա սեմինարները վարեց «Panasonic Եվրոպա» կազմակերպության թափոնների վերամշակման բաժնի ղեկավար Սվեն Գրեգերը:

Սեմինարների նպատակը թափոնների վերամշակման գործընթացների կազմակերպման փուլերի, տարբեր երկրներում աղբի հավաքման ու վերամշակման ձևերի մասին տեղեկատվության տարածումն է, երեխաների էկոլոգիական գրագիտության ապահովումը:

21.06.2012թ. ՆՈՐ ԿՐԹԱԿԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ ԳՊՀ-ՈՒՄ

«ՎիվաՍել-ՄՏՍ» ընկերության գլխավոր տնօրեն Ռալֆ Յիրիկյանի մասնակցությամբ Գավառի պետական համալսարանում բացվեց կրթական լաբորատորիա, որն ապահովված է ինտերնետ հասանելիությամբ 20 համակարգչով, բազմագործառնությային լազերային տպիչով, «Home-Zone Turbo» փաթեթի շրջանակներում գործող 3G երթուղիչով, փոխանցատիչներով և Wi-Fi անկյունով: Համալսարանի նորաբաց կրթական լաբորատորիան կնպաստի ուսման տեխնոլոգիական հիմքերի ամրապնդմանը:

05.07.2012թ. ԳՊՀ-Ն ԿՅԱՆՔ ՃԱՆԱՊԱՐՅՑ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ 15-ՐԴ ՍԵՐՆԴԻՆ

Ավանդույթի համաձայն՝ ՀՀ Սահմանադրության օրը ԳՊՀ մեծ դահլիճում տեղի ունեցավ Գավառի պետական համալսարանի շրջանավարտների դիպլոմներ

ԳՊՀ 2011-2012 ուսումնական տարվա գործունեության հաշվետվություն

րի հանձնման հանդիսավոր արարողությունը: Հայաստանի Հանրապետության ամենաերիտասարդ բուհը կյանք ճանապարհեց շրջանավարտների 15-րդ սերնդին:

Միջոցառման սկզբին ներկաները մեկ րոպե լռությամբ հարգեցին փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ վաստակավոր մանկավարժ, Գավառի պետական համալսարանի հիմնադիր ռեկտոր, Գավառի պատվավոր քաղաքացի Հրանտ Խաչատուրի Հակոբյանի հիշատակը:

Գեղարքունյաց թեմի հոգևոր առաջնորդ Մարկոս եպիսկոպոս Հովհաննիսյանը կատարեց ԳՊՀ շրջանավարտների օրհնության կարգ:

Միջոցառման վերջում տեղի ունեցավ ԳՊՀ մագիստրոսների երդման հանդիսավոր արարողությունը:

08.08.2012թ. ԳՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՃԱՆԱԶԿԵՑ ԼԱՎԱԳՈՒՅՆԸ

Հուլիսի 24-27-ը Աղվերանում կայացավ միջբուհական 2-րդ ուսանողական գագաթնաժողովը:

«Ջինիշյան» հիշատակի հիմնադրամի կողմից իրականացվող «Քաղաքացիական երկխոսություն և գործնական քայլեր» ծրագրի շրջանակում Գավառի պետական համալսարանի նախաձեռնող խմբի «Իրազեկվեմք, որպեսզի կիրառենք» նախաձեռնությունը ճանաչվեց որպես «լավագույն ծրագրային գաղափար»:

Ծրագիր-առաջարկի հիման վրա նկարահանված հաղորդման մեջ ներկայացվում են ինքնակենսագրության և բնութագրի կազմման առանձնահատկությունները և աշխատանքի ընդունմանը նախորդող հարցազրույցին ճիշտ պատրաստվելու և պատշաճ ներկայանալու սկզբունքները: Նախաձեռնության նպատակն էր տեղեկատվական հաղորդման հեռարձակման և իրազեկող փաթեթների տարածման միջոցով բարձրացնել Գավառ քաղաքի բնակիչների իրազեկվածությունը՝ աշխատանքային փաստաթղթերի կազմման և գործատուին պատշաճ ներկայանալու, ՀՀ աշխատանքային օրենսդրության պահանջների իմացության, ինչպես նաև քաղաքացիական ծառայության ոլորտում աշխատանքի ընդունվելու չափանիշների վերաբերյալ:

19.08.2012թ. ԳՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ՝ ՀԱՅ ԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԹՈՇԱԿԱՌՈՒՆԵՐ

Հայ կրթական հիմնարկության երևանյան գրասենյակում հարցազրույցի միջոցով ընտրվեցին 2012-2013 ուսումնական տարվա կրթաթոշակառուները:

Նախապես Հայ կրթական հիմնարկությունը հայտարարել էր կրթաթոշակների մրցույթ 2012-2013 ուսումնական տարվա համար: Կրթաթոշակները տրամադրվելու էին տվյալ ուսումնական տարվա վարձավճարի չափով՝ բարձր առաջադիմություն ցուցաբերած և միևնույն ժամանակ ֆինանսական խնդիրներ ունեցող ուսանողներին խրախուսելու նպատակով:

ԳՊՀ 2011-2012 ուսումնական տարվա գործունեության հաշվետվություն

Մրցույթին կարող էին մասնակցել ՀՀ պետական բուհերի վճարովի համակարգում սովորող 2-րդ և բարձր կուրսերի ուսանողները:

Հայտ ներկայացրած ուսանողներից մրցութային կարգով ընտրվեցին 37-ը:

Այնուհետև անցկացվեց լրացուցիչ փուլ՝ հարցազրույցի ձևով, որի արդյունքում 37 ուսանողներից ընտրվեցին 26-ը: Հաղթողների շարքում էին նաև Գավառի պետական համալսարանի ուսանողները:

20.08.2012թ. ԳՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ «ԲԱԶԵ»-ԻՑ ՎԵՐԱԴԱՐՁԱՆ ՀԱՂԹԱՆԱԿՆԵՐՈՎ

Օգոստոսի 13-19-ը Ծաղկաձոր քաղաքի Հայաստանի երիտասարդական հիմնադրամի հանգստյան տանը անցկացվեց «Բազե-2012» հորեյանական տասներորդ հավաքը:

Այս տարի հավաքին մասնակցեց նաև Գավառի պետական համալսարանի 7 հոգուց բաղկացած թիմը:

Հավաքի ընթացքում Հայաստանի, Արցախի, Ջավախքի և Սփյուռքի 18-30 տարեկան երիտասարդներ, համախմբվելով ՀՀ պետական դրոշի գույների ներքո, ուժերը չափեցին մարզական տարբեր խաղերում, ինտելեկտուալ ու մշակութային մրցույթներում, ինչպես նաև հանդիպումներ ունեցան ՀՀ պետական, քաղաքական և հասարակական գործիչների հետ: ԳՊՀ ուսանողները նվաճեցին 2 արծաթե և մեկ բրոնզե մեդալներ:

26.08.2012թ. ՀԱՆԴԻՊՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԿՈՒՐՍԵՑԻՆԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ԾՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ

Օգոստոսի 25-ին և 26-ին Գավառի պետական համալսարանում տեղի ունեցավ հանդիպում 2012-2013 ուսումնական տարում ԳՊՀ հումանիտար, տնտեսագիտական, բնասիրական և բնագիտական ֆակուլտետներ ընդունված առաջին կուրսեցիների և նրանց ծնողների հետ, ներկայացվեցին բուհի հիմնական պահանջները: ԳՊՀ վարչական անձնակազմը պատասխանեց ծնողներին և ուսանողներին հետաքրքրող հարցերի:

31.08.2012թ. ԳՊՀ ԳԻՏԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏՈՒՄ

Գավառի պետական համալսարանում տեղի ունեցավ գիտխորհրդի նիստ:

Նիստն սկսվեց մեկ ժամ լռությամբ. ներկաները հարգեցին ԳՊՀ պրոֆեսոր, համալսարանի հնագիտական և պատմագիտական թանգարանի հիմնադիր Վարչան Ավետյանի հիշատակը: Գիտխորհուրդը որոշում կայացրեց թանգարանն անվանակոչել պարոն Ավետյանի անվամբ:

Նիստի օրակարգում էր ԳՊՀ աշխարհագրության, ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա ամբիոնների վարիչների ընտրությունը:

Փակ, գաղտնի քվերակության արդյունքում աշխարհագրության, ինֆորմա-

ԳՊՀ 2011-2012 ուսումնական տարվա գործունեության հաշվետվություն

տիկա և հաշվողական տեխնիկա ամբիոնների վարիչների պաշտոններում վերընտրվեցին համապատասխանաբար Բորիս Մնացականյանը և Հենրիկ Մելիքյանը:

**31.08.2012թ. ՀԱՆԴԻՊՈՒՄ ԳՊՀ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ
ՀՐԱՆՈՒՇ ՀԱԿՈՔՅԱՆԻ ՀԵՏ**

Գավառի պետական համալսարանի վարչական անձնակազմի հետ հանդիպեց համալսարանի խորհրդի նախագահ, ՀՀ սփյուռքի նախարար տիկին Հրանուշ Հակոբյանը: Քննարկվեցին Գավառի պետական համալսարանի 2012-2013 ուսումնական տարվա հիմնական անելիքները:

Ն. Վ. ՄՈՒՐԱԴՅԱՆ
ԳՊՀ հանրության հետ կապերի և լրատվության բաժնի մասնագետ,
Վ. Կ. ԱՎԵՏԻՍՅԱՆ
ԳՊՀ www.gsu.am կայքի ծրագրավորող

**ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ
ՀԵՌԱԽՈՍԱՀԱՄԱՐՆԵՐԻ ԵՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՍՑԵՆԵՐԻ
ՏԵՂԵԿԱՏՈՒ**

<i>Ազգանուն, անուն, հայրանուն</i>	<i>Ճառադրական 0-264</i>	<i>Էլեկտրոնային փոստի հասցե</i>
ԳՊԴ-ի կառավարման խորհրդի նախագահ Հակոբյան Հրանուշ Հրանտի	010-28-20-75 0264-2-57-75	minister@mindiaspora.am
ԳՊԴ ռեկտոր Հակոբյան Ռուզաննա Խաչիկի	2-57-75 2-55-75 0-10-28-20-75	ruzanna.hakobyan@mail.ru
Ուսումնագիտական գծով պրոռեկտոր Կուտուզյան Նելլի Ալբերտի	3-05-05	nkutuzyan@ggu.am
Տնտեսական գծով պրոռեկտոր Ապրոյան Արսեն Հրաչիկի	2-55-01	aproyan@list.ru
Բանասիրական ֆակուլտետի դեկան Կատվալյան Վիկտոր Լիպարիտի	2-45-24	viktor-katvalyan@mail.ru
Բնագիտական ֆակուլտետի դեկան Ավագյան Սարտին Պատվականի	2-62-50	avagyanmartin@rambler.ru
Հումանիտար ֆակուլտետի դեկան Ղաջոյան Համլետ Գրիշայի	2-70-09	ghajoyan1953@mail.ru
Տնտեսագիտական ֆակուլտետի դեկան Ամիրխանյան Սամվել Գրիգորի	2-36-51	samvelamirkhanyan@rambler.ru
Հեռակա ուսուցման ֆակուլտետի դեկանատ Ակադեմիական քաղաքականության վարչություն	2-84-54 2-81-15	nkutuzyan@ggu.am alinagharibyan@rambler.ru
Ղարիբյան Ալինա Ամբիկի		
Ուսանողական խորհրդի նախագահ Քոչարյան Պայծառ Հովհաննեսի	2-70-09	paycar.qocharyan@mail.ru
Բանասիրական ֆակուլտետի դեկանի տեղակալ Բաղալյան Սարինե Սիքայելի	2-45-24	mbadalyan@rambler.ru
Տնտեսագիտական ֆակուլտետի դեկանի տեղակալ Հերզոյան Սարիամ Նորիկի	2-36-51	dhergmar@rambler.ru
Հումանիտար մասն. ֆակուլտետի դեկանի տեղակալ Գևորգյան Գոհար Վոլոդյայի	2-70-09	gohar.geworgyan@mail.ru
Բնագիտական ֆակուլտետի դեկանի տեղակալ Գարեյան Սելանյա Վոլոդյայի	2-84-36	gareyanmelanya@mail.ru
Գլխավոր հաշվապահ Սուրադյան Գուրգեն Գևորգի	2-42-43	muradyan@gmail.com
Ռեկտորի օգնական Մայիլյան Անուշ Տոլիկի	2-57-75	mayil-an@rambler.ru
Կադրերի և հատուկ բաժնի պետ Սաֆարյան Խաչատուր Ժորայի	2-81-02	safaryanxachik@rambler.ru
Արհմիության նախագահ Սիրունյան Լյովա Գուրգենի	2-81-02	lyovasirunyan@mail.ru
Ավագ պարետ Ջաքոյան Տարիել Հրաչիկի	2-84-41	zakoyant@mail.ru

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ծրագրեր, զարգացումներ, արդյունքներ	3
Ընդհանուր տեղեկություններ համալսարանի մասին	10
Միջազգային համագործակցություն	33
Դասախոսների գործուղումներ	43
Ուսումնագիտական աշխատանքներ	49
Բանասիրական ֆակուլտետ	68
Բնագիտական ֆակուլտետ	94
Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետ	115
Տնտեսագիտական ֆակուլտետ	134
Հեռակա ուսուցման ֆակուլտետ	156
Ակադեմիական քաղաքականության վարչություն	164
ԳՊՀ գրադարան	169
Հանրության հետ կապերի և լրատվության բաժին	173
ԳՊՀ արհեստակցական կազմակերպություն	183
Ուսանողական խորհուրդ և ուսանողական գիտական ընկերություն	185
ԳՊՀ իրավաբանական կլինիկա	189
Տնտեսատեխնիկական գործունեություն	192
ԳՊՀ հիշարժան միջոցառումներից	197
Տեղեկատու	229

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

**2011-2012 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԿԱ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

ԳՊՀ

**Գեղարքունիքի մարզ,
քաղաք Գավառ, Ազատության 1,
հեռ. (3710) 28-20-75
կայք. www.GSU.am**

Տպագրված է «Օրենք և իրականություն»
ՄՊԸ տպարանում:
Երևան, Աճեմյան (Անդրֆեդերացիա)18,
հեռ. 57-29-90